

Укърлѣ

✓

263

3  
12 0 03



История османов. Повествование о  
государстве, правлении султанов  
и императоров с 1299 по 1838 год  
Историк И. Абрахам

# ԿԵԱՆՔԻ ԴՊՐՈՅԸ

Վ Ի Պ

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՒՄՆԱԿԱՆ ԶԵՄԵՐ

Դիպլոմատիկ «ՄԱՐՏԻՆ ԶՈՒԶԼՂԻՑ» ղեկավար

հրատարակող Վորխով:



ԹՆԳՎՈՒՄ ԳՐԱՆԻՑՆԵՐ ԵՎ ԵՂԵՆԵՆԵՐ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձեի. || Тип. М. Шарадзе.

1892

Թ ա ղ մ ա ն ու թ ի լ ն ն ե ռ ը

1	Հաւատարմութիւնն ամեն արգելքների յաղ- թում է Ֆ. Հոֆմանի. 1877 . . . — 40
2	Խաւարից դէպի լըս. Ֆ Հոֆմանի 1877 . . . — 40
3	Դօն Բիշօթ լամանչեցի. Մ. Սէրվանտէսի 1878 (սպառուած) . . . . . — 70
4	Գէորգ Ռօլլէստուն. վէպ 1879. . . . . — 60
5	Երրորդ ոսկի առակ Լակիդէի (պարգևա- տրուած Ս Պ. Ֆրէօբէլեան ընկ. կողմից) 1879 . . . . . — 15
6	Ռօբինզօն (Հրատ. Թիֆլ տպագր. ընկերու- թեան) 1881 . . . . . — 60
7	Չէստէրտօնի ժառանգը. պատկ. 1882 . . . 1 —
8	Ակտէա. տ. Սիսօեվայի 1885. . . . . — 50
9	Եան Էրնստ Սմօլեար ն. Եանչուկի 1885 — 20
10	Արծուի մտածմունքը պրօֆ. Մ. Բօգդանովի 1892 . . . . . — 05
11	Գիւղի սուրբը, Սվեատօպօլկ չէխի 1892. — 10
12	Կեանքի դպրոցը, Դիկկէնսի 1892 . . . 1 —

Ա շ խ ա տ ու թ ի լ ն ն ե ռ ը

13	Աղօթատետր, բ. տպ. 1889 . . . . . — 10
14	Կրօնի դասագիրք ա. տ. 1888 . . . . . — 15
15	„ „ բ. տ. Դ. տպ. 1891 . . . . . — 25
16	„ „ գ. տ. Գ. տպ. 1890 . . . . . — 25

82  
48  
uy

ԿԵԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ

Վ Է Պ

ԵՐԲՏԱՍԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Դիկկէնսի «ՄԱՐՏԻՆ ՉՈՒՉԼԻՒՑ» վեպից  
համառօտեց ն. Բօրիսով:

220

XII.

Թ. ԱՐԳՄ. ԳԻՒՏ ԲԵՏ. ԱՂԱՆԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի. || Тип. М. Шарадзе.  
1892

162

1891 1 1 1

4483 41 2

Дозволено ценз. Тифлисъ, 1-го Мая 1891 г.

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.



(4483 41 2) 263-2003

აქ. 262



2արև Գիկկէսը ճնուեցաւ 1812 թուի փետրուարի 7-ին Անգլիայի ծովեզրեայ Պորտսմութ քաղաքում: Նորա հայրը, մի խեղճ ծովային աստիճանաւոր, չկարողացաւ որդուն մեծ ուսում տալ: Փոքրիկ Գիկկէսի անդրանիկ ուսուցիչը մի քահանայ էր: Այս բարի ծերունին մանուկների սիրահար էր և մեծ ազդեցութիւն ունէր պատանի սանիկի մտքի ու սրտի զարգացման վերայ: Այնուհետև 2արսը մտաւ Ածնդօնի ուսումնարաններից մէկը: Այնտեղ մանուկների հետ շատ խիստ էին վարուում: Շատ ցաւեր բաշեց այդտեղ ինքը Գիկկէսն էլ, ահանատես եղաւ իւր փոքրիկ ընկերներից շատերի տանջանքներին, և այն ամենը, ինչ որ նա տեսաւ ու դիտեց այդ ուսումնարանում՝ ժամանակով երբ սկսեց գրել, նկարագրեց իւր վէպերի մէջ: Այն ինչ նորա հօր գործերը հետզհետէ դէպի վասն էին գնում: Նորա միջոցները հազիւ թէ բաւական էին ամենաանհրաժեշտ պիտոյքներին, և տղան ահամայից ստիպուած եղաւ բաւականանալ լոկ դպրոցական կրթութեամբ, որովհետև ժամանակակից համալսարանը միայն ունևոր մարդկանց էր մատչելի:

Ուսումնարանում ուսման ընթացքն աւարտելուց յետ, Գիկկէսը ստիպուեցաւ մի պարապմունք գտնել հացի կտոր ձեռք բերելու: Նա գրագրի պաշտօն ընդունեց մի փաստաբանի մօտ, որ անապահով և միևնոյն ժամանակ

ծոյլ մարդ էր: Նորան խորհրդի դիմում էին գլխաւորապէս չքաւորներ և այլ մութն անձնաւորութիւններ: Այս գրասենեկում է՝ դատարանում նորատի գրագիրը ծանօթացաւ բազմազան մարդկանց հետ, ինչպիսի են՝ մուրացիկներ, ծառաներ, հասարակ բանուորներ, նաւաստիներ: Գիկկէնսը մի աննշան վարձ ստանալով, պարագմունքից շատ փոքր ազատ ժամերում սովորեց սղագրութեան արուեստը և շուտով Լօնդօնի մի լրագրի էմբագրատանը լրատուի պաշտօն ստացաւ: Լրագրին նորութիւններ հաղորդելու համար նա լինում էր քաղաքի ամենաբաղմամարդ տեղերում, դիտում էր մարդկանց բնաւորութիւնը ուրախութեան և տրտմութեան մէջ և մայրաքաղաքի ամենակասկածելի խորշերում ծանօթացաւ ժողովրդի անսահման պիտոյքներին և խիստ արմատացած յանցաւորների հետ: Լրագրական պարագմունքը բարւոքեց Գիկկէնսի գրութիւնը և միջոց տուեց նորան մտնել Լօնդօնի բարձրագոյն ուսումնարաններից մէկը իբրև ազատ ունկնդիր: 1836 թուին լոյս տեսաւ նորա առաջին մեծ աշխատութիւնը «Լօնդօնի բարբերի նկարագիր» անունով: Այս հետաքրքրական գրքոյկը կարճ ժամանակում սպառուեց: Նոյնպիսի յաջողութիւն ունեցան նաև նորա հետևեալ աշխատութիւնները, որոնցից շատերը թարգմանուեցան օտար լեզուների և մեծ քանակութեամբ տարածուեցան ամբողջ Եւրոպայում: Այսպիսով Գիկկէնսը ձեռք բերեց թէ փող և թէ ընդհանուր յարգանք:

Իւր գրքերի արագ վաճառումով ապահոված՝ նա անձանձիր շալունակ սովորում էր և աշխատում. ձեռ-

նարկեց մի շարք ճանապարհորդութիւնների, շրջեց հայրենիքի բազմաթիւ քաղաքներն ու գիւղերը, այցելեց Եւրոպա ցամաքի քանի մի քաղաքները, գնաց նաև Ամերիկա, ուր անուն հանեց իբրև իւր սեպհական աշխատութեանց ընտիր ընթերցող: Աերին աստիճանի սէր ունենալով դէպի երեխաները, որոնց նա մտցրեց իւր վէպերի մեծագոյն մասի մէջ (օրինակ Գոմբի և որդի, Գաւիթ Կոպպէրֆիլդ, Գորրիտ մանուկը և այլն), նա 1850 թուին սկսեց առանձին լրագիր հրատարակել ընտանեկան ընթերցանութեան համար (Household Words):

Ընտանեկան կեանքում երջանիկ և հարստութեան ու փառքի հասած՝ Չարլս Գիկկէնսը չէր մոռանում և իւր մերձաւորին: Նա օգնում էր չքաւորներին, որոնցից շատերին դաստիարակում էր և ուսում տալիս իւր հաշուով: Սեպհական փորձից գիտենալով, թէ մասաւորապէս աշխատել կարող է միայն ապահոված մարդը, նա 1851 թուին հիմնեց կարօտեալ հեղինակներին ու գեղարուեստներին օգնող ընկերութիւնը: Այս ընկերութեան մասնակից եղան Անգլիայի բոլոր զարգացած և արժանաւոր մարդիկ, և այս ընկերութեան միջոցներն արագ կերպով աճեցին Գիկկէնսի տարին մի քանի նուագ կազմած երեկոների և ներկայացումների շնորհիւ, որոնցում նա մասնակցում էր որպէս դերասան: Հասարակութիւնը խոնւում էր իւր սիրելի հեղինակին տեսնելու, իսկ ընկերութիւնը մեծ գումարներ էր վաստակում:

Չարլս Գիկկէնսը վախճանուեցաւ 1870 թուի Յունիսի 9-ին ուղեղի կաթուածից և թաղուեցաւ Աեստ-

մինիստրեան արբայութեան մէջ, Անգղիայի բոլոր նշա-  
նաւոր մարդկանց դամբարանում:

Իւր հեղինակութիւնների մէջ նկարագրելով կեան-  
քի փայլուն կողմերը, ցոյց տալով և մութ կողմերը  
և թափանցիկ գոյներով նկարելով աղքատութեան ու  
մոլութեան մռայլ պատկերները, այս հանձարաւոր հե-  
ղինակը ցոյց տուեց մեզ, թէ որն է իսկական մեծահո-  
գութիւնը, մաքուր սիրան ու անշահասիրութիւնը, և  
թէ մինչև անգամ ամենավատ և բիրտ մարդկանց մէջ  
յաճախ ծածկած է լինում մի բարի և ազնիւ սիրտ,  
արժանի մեր ուշադրութեան, ներման և կարեկցու-  
թեան:

Սոյն վէպի բովանդակութիւնը, որ փոխադրուած է  
Գիկկէնսի «Մարտին 2-րդ վիտ» մեծ վէպից, առաջին  
անգամ պատանիների համար համառօտեց շվեդական  
հեղինակ Օ. Գէօկկէրը «J odets skola» վերնագրով:  
Սորա կազմողը ընդհանուր կէտերում հետեւելով վէպի  
ուղղութեան՝ հարկ համարեց ամենազխաւոր տեղերը  
լրացնել այդ վէպի միակ թարգմանութիւնից, որ տպուեցաւ  
„Отечественныя Записки“ ամսագրի 1844 թուի հա-  
մարներում, և թոյլ է տուել իրան տեղ տեղ, ներկայ  
աշխատութեան նպատակի և դիրքի համեմատ, պահ-  
պանել այն գեղեցիկ թարգմանութեան բնագիրը:

Ա.



աւատն, Թովմաս, նա կեղծաւոր է  
և այնպիսի անպիտան, որ շատ  
քիչ կգտնես աշխարհումս:

—Շատ ցաւում եմ, Զօն,  
որ դու այդպէս խիստ ես դէպի  
այդ մարդը. այդպէս չի կարելի,  
պէտք է դէռ մօտիկ ճանաչել և լետոյ խօ-  
սել. ես նորան միշտ համարել եմ իմ բարե-  
կամը, և այժմ էլ նոյն համոզմունքի եմ:

—Բարերար: Ծիծաղս շարժում ես, Թովմաս:  
Ի՞նչ բարերարութիւն կայ այդտեղ: Առաւօտից  
մինչև մութ աշխատում ես, ի՞նչով է վարձատրում  
քեզ: Դեռ, իմ կարծիքով, փորդ էլ օրինաւոր չէ  
կշտացնում:

—Զէ, Զօն, այդ մի ասիլ: Ախր ինձ կերակրե-  
լու համար դու գիտես որ...

—Թող, վերջապէս, խնդրում եմ, այդ խօսքե-  
րը և մի կեղծիք: Դու շարունակ պնդում ես,  
թէ հոգւով մարմնով պարտական ես այդ Պէկանի-  
ֆին, — ես առ հասարակ հետաքրքիր չեմ, բայց

շնորհ արն ինձ ասել, ինչքն ստիպուած ես այդ-  
պէս խօսում:

—Ահա թէ ինչից. առաջին՝ նա շատ չնչին  
վճարով ինձ աշակերտ վերցրեց, և երկրորդ՝ նորա  
տանը մեծացել եմ, իր օգնականն եմ, վայելում  
եմ նորա հաւատարմութիւնը և նորա հացն եմ  
ուտում:

Լռութիւն տիրեց: Զօնը նայեց իւր բարեսիրտ  
բարեկամին, թօթուեց նորա ուսը զգացուած սրը-  
տով և չկարողացաւ զսպել իւր հրճուանքը:

—Դու մի լաւ տղայ ես. դու շատ բարի սիրտ  
ունիս:

—Ի՞նչ ասեմ, ընդհատեց Թովմասը.—եթէ  
դու աւելի լաւ ծանօթ լինէիր Պէկսնիֆի հետ,  
անշուշտ կը համաձայնէիր ամեն ասածիս և միան-  
գամայն իրաւացի կլինէիր:

—Անկասկած, ժպտաց Զօնը:—Թո՛ղ այդ յար-  
գելի մարդը ցանկացածիդ պէս լինի: Միայն մի  
բան կասեմ: Ի հարկէ նա մեծահոգութեամբ իւր  
զրպանը չի դնիլ այն փշրանքները, որ ծանր աշ-  
խատանքով ժողովել է քո բազմատանջ տատը, որի  
միակ մխիթարութիւնն ու հպարտութիւնը դու  
էիր: Ի՞նչ ես կարծում, Թովմաս, խեղճ պառաւի այս  
զգացմունքներից արդեօք նա այնպէս չէ շահուել,  
ինչպէս օգուտի մի միջոցից, հա՛:

—Ի հարկէ չէ, պատասխանեց Թովմասը, մի  
հայեացքով ցոյց տալով Թովմասին, թէ լաւ չէ  
հասկանում նորա ասածը:

—Ես էլ հէնց այդ եմ ասում: Ուրեմն քեզ սո-  
վորցնելու համար փոքր վարձ վերցնելու նպատա-  
կըն այն չէր արդեօք, որ այդքան էր խեղճ պա-  
ռաւի ամբողջ կարողութիւնը: Իսկ եթէ քեզ օգ-  
նական ընտրեց, պատճառն այն է, որ գործի մէջ  
դու նորա աջ ձեռքն ես, և քո վայելած ընդհա-  
նուր յարգանքի շնորհիւ է, որ մարդիկ հաւատում  
են միտտէր Պէկսնիֆին: Այո՛, սիրելի Թովմաս,  
սրտով ցանկանում եմ, որ քո հաւատը դէպի մար-  
դիկ երբէք չսասանուի:

Այս խօսակցութիւնը տեղի ունէր աշնան մի վատ  
երեկոյ Սէլիսբիւրի քաղաքի մօտ գտնուած Վայտ-  
շիր գիւղի խաչփողոցներից մէկում: Այն խօսակցը,  
որ այդպէս եռանդով պաշտպանում էր իւր վար-  
պետին, կոչուում էր Թովմաս Պինչ: Նա շատ նիհար  
տեսք ունէր, մի փոքր կորացած, շէկ ցանցառ մա-  
զերով և փոքր ինչ էլ ճաղատ, որ այնքան էլ չէր  
սագում նորա առանց այն էլ տգեղ դէմքին, բայց  
նորա խորունկ կապոյտ աչքերում այն աստիճան  
բարեհոգութիւն էր ծածկուած, որ դժուար կարող  
էր մարդ մոռանալ, եթէ երբ և իցէ առանց ակ-  
նոցի տեսած լինէր Պինչին: Նորա տարիքը, արտա-  
քինին նայելով, հեշտ չէր որոշել. բայց իրօք երե-  
սուն տարեկան էր:

Նորա ընկեր Զօն Վեստլօկն արտաքին տես-  
քով անհամեմատ աւելի հաճոյական տպաւորու-  
թիւն էր թողնում: Նա ընդամենը քսան տարե-  
կան էր. միջին հասակ, ամուր կազմուածք, փոք-

րիկ սև բեղեր, մոյգ շագանակագոյն թափանցիկ աչքեր—այս բոլորը տալիս էին նորան անվեհեր երիտասարդի համարձակ կերպարանք, որ մուտ է գործում կեանքի մէջ վստահ իւր ոյժերի վերայ և կատարեալ հաւատով դէպի անպզան:

Խօսակիցներն ընկերներ էին, նոքա մինչև այդ օրը բնակուում էին միևնոյն տանը, անգամ մի սենեկում, սիրում էին միմեանց անկեղծ սրբտով, ուստի և առաջիկայ բաժանումը միօրինակ ծանր էր թւում երկուսին էլ:

Վեստլօկը գեռ նոր էր կռուել իւր ուսուցիչ և վարպետ ճարտարապետ Պէկսնիֆի հետ, և այդ պատճառով յանկարծ դուրս էր եկել նորա մօտից: Թէ ով էր նոցանից ճշմարիտը՝ դժուար չէ գուշակել երկու բարեկամների վերոյիշեալ խօսակցութիւնից: Միտէր Պէկսնիֆն ահագին ազդեցութիւն ունէր գիւղական ազգաբնակութեան վերայ և յայտնի էր ամբողջ շրջակայքում որպէս ամենաբարեպաշտ, ամենաազնիւ և ամենաբարի մարդ: Նորա ճարտարապետական արուեստի յիշատակարանների մասին, սակայն, ոչ ոք որոշ բան չէր կարողանում ասել,—ընդհակառակն, յայտնի էր, որ իւր կեանքում նա չէր շինել ոչ մի մակարդակ, չէր կառուցել ոչ մի շինուած, թէպէտ, ինչպէս ասում են, նորա հայեացքները արուեստի վերայ ընդհանուր յարգանք էին վայելում և յայտնի էին իրանց արտասովոր խորութեամբ և հիմնաւորութեամբ: Եւ ճշմարիտ որ նորա բոլոր գործունէութիւնը պարու-

նակում էր այն բանի մէջ, որ աշակերտներ էր ընդունում սովորցնելու համար: Նորա բոլոր հանձարը լոկ այն բանի մէջ էր կայանում, որ ծնողներին ու խնամակալներին որսայ իւր ցանցի մէջ և փող ժողովէ նոցանից: Ամբողջ տարուայ վարձը ծնողներից կանխիկ ստանալուց յետոյ Պէկսնիֆը նուրիկ աշակերտին տեղաւորում էր իւր տան վերին յարկի մի ընդարձակ սենեկում երկու երեք երիտասարդ մարդոց ընկերակցութեամբ, որոնք տարին տասներկու ամիս առաւօտից մինչև երեկոյ զբաղուած էին ամենահիանալի և ամենափառաւոր շինութիւնների նախահաշիւներն ու մակարդակները կազմելով: Եթէ նորեկ աշակերտն ունենում էր գրծագրութեան գործիքներ արծաթէ պատենով, բան էր ուզում նորանից կարճ ժամանակով իւր պարամունքի համար, այնուհետև աշակերտի ծնողներին նամակ էր գրում, որով հաղորդում էր, թէ նոցա որդին գերբնական աշխատասիրութիւն է ցոյց տալիս և չափազանց մեծ յառաջադիմութիւն ճարտարապետութեան արուեստի մէջ: Շատ աշակերտներ և օգնականներ փոխեց Պէկսնիֆը. բայց այդ բոլորից միայն Թովմաս Պինչը դիմացաւ այնտեղ:

Շատ ընկերներ էր ճանապարհ դրել Թովմասը Պէկսնիֆի տանը գտնուած միջոցին, բայց ոչ մէկի հրաժեշտը այնքան ծանր չէր թուացել այդ բարի մարդու սիրող սրտին, որքան այս վերջինը:

Հեռուից լսուեցաւ փոստային փողի ձայնը: Թովմասն արտասուալից աչքերով գրկախառնուեց ըն-

կերոջ հետ: Մօտեցաւ փոստային կառքը: Սուրհան-  
դակը ցած թռաւ կառքից, վերցրեց ճանապարհոր-  
դի պալուսակն և գցեց կառքի կտրանը:

— Միտդ բեր ինձ, Թովմաս, ասաց Վեստլօկը,  
զգացուած սեղմելով բարեկամի ձեռքը:— Առաջին  
նամակս Լօնդօնից կլինի:

— Ձեմ մոռանայ, շշնջաց Թովմասը արտասուքն  
աչքերին:— Կարծես անհաւատալի է թւում ինձ մեր  
բաժանումը: Բարի ճանապարհ, իմ հին, անգին բա-  
րեկամ: Յտեսութիւն:

Կառքն առաջ շարժուեց. լապտերները դալ-  
ձեալ քանի մի անգամ լոյս արձակեցին և անյալ-  
տացան մթութեան մէջ: Փոստային փողի ձայնը  
խուլ կերպով հնչում էր հեռուից, իսկ Թովմասը  
գլխաբաց տակաւին անշարժ կացած էր իւր տե-  
ղում:

Վերջապէս երեսը թաշկինակով մաքրեց, շշն-  
ջաց. — «բարեկամ ունէի, — այլ ևս չունիմ» խօսքե-  
րը և գնաց տուն:

Ընտանիքի մեծը իւր աղջիկների հետ ընթ-  
րիքի նստած խօսակցում էր նոր ընդունած աշա-  
կերտի մասին:

— Իսկ թնջքան կվերցնենք նորանից, հարցրեց  
Սառան, որ մի գործնական աղջիկ էր:

— Ես նորանից որոշեալ վարձ չեմ կարող ստա-  
նալ, պատասխանեց հայրը:

Գուստրներն աչքները ձգեցին հօր վերայ և  
սառած մնացին:

— Տեսնում էք, սիրելի գուստրներս, բանն ինչ  
տեսակ է, սկսեց Պէկսնիֆը քաղցր ու ցած ձայ-  
նով, որ սենեակը մտնող օգնականը չլսէ իւր խօս-  
քերը: Նոր աշակերտս ահագին ժառանգութիւն  
ունի ստանալու: Այս պատճառով ամենքս աշխա-  
տենք սիրով լինել նորա հետ, որպէս զի այդ թան-  
կագին հիւրը ընդ միշտ մեզ մօտ մնայ: Ո՛վ գիտէ,  
սիրելիք, գուցէ երբ և իցէ հասնենք այն ըրպէին,  
երբ ես նորան փեսայ անուանեմ:

— Ի՞նչ տեսակ մարդ էք դուք, հայրիկ, — վի-  
րաւորուած ձայնեցին երկու գուստրները, որոնցից  
մէկն երեսուն և մի ւաարեկան էր, իսկ միւսն ար-  
դէն երեսուն և չորս: — Ի՞նչ վատ մարդ էք դուք,  
աւելացրին երկուսն էլ, դէմքները ծածկելով թաշ-  
կինակների մէջ:

Սնցաւ մի քանի վայրկեան: Պէկսնիֆը վերս-  
տին սկսեց խօսակցութիւնը:

— Այս երեկոն, սիրելի զաւակներս, մեզ ա-  
ռանձնապէս հաճելի է: — Սրբազան խաղաղութիւ-  
նը հանգել է մեզ վերայ: Ո՞րտեղից են այս բոլոր  
շնորհները: Խաղաղութիւն տիրեց այստեղ, որով-  
հետեւ այլ ևս մեր մէջ չէ չար ոգին, Ջօն Վեստ-  
լօկը:

— Սակայն, հայրիկ, ընդհատեց Գրացիան, ինչ-  
պէս էք միտէր Պինչի մօտ այդպիսի բաներ ասում  
նորա բարեկամի մասին: Ա՛խ, թնջապէս կարմիր են

ձեր անբերը, միտտեր Պինչ. անշուշտ շատ էք լաց եղել:

— Լաւ բան չէ այդպէս ծաղրել, բարեկամներ, խիստ նկատեց Պէկսնիֆը. — ամեն մարդ ազատ է, և եթէ միտտեր Պինչը իւր համակրութիւնն է ցոյց տալիս այն անձին, որ մեզ այնպէս սպաստիկ վիրաւորեց, այդ իր գործն է:

— Միտտեր Պէկսնիֆ, աղաղակեց Թովմասը. — միթէ դուք կարծում էք, որ...

— Ես ոչինչ չեմ կարծում, ընդհատեց նորա խօսքը յարգելի վարպետը, ցանկալով խօսակցութիւնն արգելել, բայց այդ միջոցին սենեակը մտաւ Կապոյտ Վիշապ հիւրանոցի գունապան Մարկ Տէպլին: Սա մի քսանհինգամեայ բարձրահասակ երիտասարդ էր, որ իրան ամենաուրախ ջահիլն էր համարում ամբողջ թաղում:

— Վստահանում եմ ցանկալ ձեզ, պարոններ, ամենահաճելի ուրախ երեկոյ, — սկսեց նա, կանխապէս մի հայեացք ձգելով ամբողջ խմբի և ընթրիքի մնացորդների վերայ:

— Է՛, ինչ նոր բան, հարցրեց Պէկսնիֆը նորեկին: — Անշուշտ դարձեալ ողջոյն էք բերել ձեր պանդոկի տէր միտտրիս Լիւպէնից, կամ գուցէ մի ուրիշից: Ի՞նչ ես լռել:

— Ես, եթէ թոյլ կտաք ասեմ, այսօր ձեզ համար բոլորովին այլ տեսակ նորութիւն ունիմ: Երկու ժամ առաջ մի հին ու ժանգոտած կառքով եկաւ այստեղ մի ծերունի և նորա հետ մի նորատի օրիորդ և իջան Վիշապ հիւրանոցը:

— Սյդ ինչ իմ գործն է, մէջ մտաւ Պէկսնիֆը:

— Սյդ ծեր պարոնը, շարունակեց Մարկոսն, ամենեւին ուշադրութիւն չդարձնելով ճարտարապետի հարցին, — կէս ժամ դեռ չանցած շատ վատ դառաւ. — այժմ դողում է ամբողջ մարմնով. հեծում է, անկապ անկապ մնջմնջում է և կտրական կ'սով մերժեց բժիշկներն ու դեղերը:

— Այնուամենայնիւ չեմ հասկանում, ազդու կերպով նկատեց Պէկսնիֆը, թէ այդ ամենն ինչ վերաբերութիւն ունի ինձ հետ:

— Սպասեցէք, շարունակեց Մարկոսը. դուք, միտտեր Պէկսնիֆ, շատ զարգացած մարդ էք և շատ էլ փորձուած: Դուք բարի սիրտ ունիք (Մարկոսն աջ անջը կկոցեց), — դուք կարող էք հիւանդին մեծ մխիթարութիւն պատճառել: Այս բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով՝ միտտրիս Լիւպէնն ինձ ուղարկեց ձեզ մօտ խնդրելու, որ մասնակցել բարեհաճիք այս խեղճին օգնելու գործին:

Միտտեր Պէկսնիֆը վերին աստիճանի յափըշտակուած, որ իրան այդքան մեծ նշանակութիւն են տալիս, շտապով հագաւ իւր երկայն սև համազգեստը, որի մէջ քահանային էր նման, կապեց երկայն սալիտակ փողպատը, երկայն վերնազգեստը ձրգեց ուսին և մի տեսակ կոպիտ վեհանաձուլութեամբ հետևեց հրաւիրակին դէպի Կապոյտ Վիշապ հիւրանոցը:

Հիւրանոցի ներքնայարկի մի փոքրիկ սենեկում փոքրիկ սեղանի առջև նստած էր Հիւրանոցի տիրուհին, միստրիս Լիւպէնը, մի հաստիկ գեղեցկուհի, որ սև փայլուն աչքեր և սաթի պէս սև ծամեր ունէր: Երբ նա տեսաւ ճարտարապետին՝ առաջ վազեց:

— Ի՞նչքան ուրախ եմ, որ չմերժեցիք իմ խնդիրը:

— Ներեցէք, յարգանքով նկատեց Պէկսնիֆը, ես միայն պարտքս կատարեցի: Ինչ կայ, քնչ դրութեան մէջ է այժմ ձեր հիւանդը:

— Փոքր ինչ լաւ է, և առհասարակ հանգիստ է, բայց մի ինչ որ արտասովոր հոգսի մէջ է: Ունի արդեօք որևէ ցաւ՝ ճշմարիտ որ չեմ հասկանում. միայն այնպիսի օտարոտի բաներ է ասում, որ ոչինչ հասկանալ կարելի չէ: Թուղթ ու թանաք պահանջեց. մի ամբողջ տետրակ գրեց և լցրեց, իսկ յետոյ պատուտեց:

— Չարմանք է, փնթփնթաց Պէկսնիֆը, վերին աստիճան զարմանալի: Պէտք է տեսնել ձեր հիւանդին:

Նա վերցրեց իւր վերնագգեստը, քաղաքավարութեամբ խնդրեց տիկնոջն առաջ ընկնել, իսկ ինքը գնաց ետևից:

Երբ երկրորդ յարկին հասան՝ տիկինը բացեց մի փոքրիկ դուռը և ճարտարապետի հետ կամացուկ ներս մտաւ: Հիւանդը քնած էր, իսկ վառարանի մօտ գիրքը ձեռքին նստած էր իւր նորատի

ուղեկցուհին. սա շտապով վերկացաւ և ցոյց տալով ճարտարապետին, հարցրեց տիկնոջ. — այս պարոնն ո՞վ է:

— Հիւանդների ու վշտացածների բարեկամը, տիկնոջ փոխարէն պատասխանեց ինքը Պէկսնիֆը և ուղղակի մօտենալով հիւանդի անկողնին՝ խիստ յաջողակ կերպով տեղաւորուեց բազկաթոռի մէջ, հիւանդի գլխավերևը, խիստ ու տրտում կերպարանք ընդունելով:

Գրեթէ կէս ժամ անցաւ, բայց ծերունին ամենևին չէր շարժուում: Վերջապէս շուռ եկաւ աջ կողքի վերայ, աչքերը բաց արաւ և մի անտարբեր հայեացք ուղղեց շրջապատողների վերայ, Պէկսնիֆը զարմանքից ապշած էր. նա աչքերը լայն բաց էր արել, մինչև անգամ կարծես մագերը մթութեան մէջ ցցուել էին, իսկ բերանը բացել էր որ խօսի, բայց չէր կարողանում: Մեծ ջանք գործ դնելուց յետոյ հազիւ կարողացաւ աղաղակել.

— Այդ դ՞ուք էք, Մարտին Չուզլվիտ:

— Այո՛, Մարտին Չուզլվիտն եմ, դառնութեամբ, սակայն առանց զարմանքի, պատասխանեց ծերունին. իսկ դ՞ուք...


— Ձեր հօրեղբորորդին եմ, խօսքը կտրեց ճարտարապետը, համեստութեամբ ձեռները ծալելով: Ես ձեր հաւատարիմ եղբայրն եմ, սիրելի Մարտին:

— Հո՛, ի հարկէ, ճչաց հիւանդը և գլուխը վեր քաշեց. շատ չի անցել և անմիջապէս ազգակ-

263-2003

220

4483/41



ցումթեան ձգտում: Գիտեմ, ամենքն էլ այդպէս են վարւում— թէ մերձաւորները և թէ հեռաւորները: Ամեն մէկը ցանկանում է ծեր Մարտինի ժառանգութիւնից օգուտ քաղել. այս պատճառով երեսին շողոքորթում են, իսկ գաղտնի մտածում, թէ մի շուտով Մարտինը գլորուի: Ա.ի դու թշուառ օձալեզու:

— Խօսելիս հիւանդը ձեռներն առաջ մեկնեց, կարծես պաշտպանուելու, բայց շուտով գլուխը դրեց բարձի վերայ:

— Այդպէս շտապով մի դատէք ինձ, համեստութեամբ նկատեց Պէկսնիֆը. ես ձեզ շողոքորթելու համար չեմ եկել այստեղ: Ինձ հրաւիրեցին իմ կարեաց չափ օգնելու մի հիւանդի, և ես եկայ առանց ամենեւին սպասելու թէ ազգակցիս պիտի պատահեմ: Եթէ ես միտք ունենայի մի բան ստանալ ձեզանից շողոքորթութեամբ, այդպէս չէի խօսի ամենեւին: Ես վաղուց գիտեմ, որ դուք այդ չէք սիրում:

Ծերունին լռեց և կարծես չէր կարողանում խօսքի պատասխանը գտնել: Երկար մտածելուց լետ նա օրիորդին նշանացի հասկացրեց, որ դուրս գնայ, որը իսկոյն կատարեց, դուրս տանելով իւր հետ և՛ տիկնոջ: Երբ մենակ մնացին՝ հիւանդն երկար նայեց իւր խօսակցին և խզեց լուութիւնը.

— Աւրեմն կամենում էք, մեղմ ձայնով սկսեց նա, որ ես ձեր այստեղ գալու վերայ այնպէս նայեմ, ինչպէս մի կողմնակի մարդու. լսւ, ես ձեզ

հետ կիսուեմ, ինչպէս մի օտար մարդու հետ: Ասում են, թէ ես հարուստ եմ,— դա ճշմարիտ չէ. ես այնքան էլ հարուստ չեմ, ինչպէս շատերը կարծում են. բայց ես միջոցներ ունիմ, և լաւ միջոցներ: Ես ժլատ չեմ, թէպէտ ամեն կողմից այդ եմ լսում: Ես չեմ սիրում դիզել, բայց չեմ էլ ցանկանում իմ կարողութիւնս վատնել, թէպէտ ատում եմ նորան. նա ինձ ուրախութիւն չպարգևեց ծերութեանս մէջ, նա իմ ողջ կեանքս թունաւորեց: Դաւաճանութիւն, խաբէութիւն, նախանձ, բարեկամութեան պատրուակի տակ, ստորութիւն, ազահութիւն— ահա հարստութեան ինձ տուած գանձերը: Ես լաւ ճանաչեցի մարդկանց, և իւրաքանչիւրի սիրտը ես գիտեմ: Հաւատացած եղէք, որ եթէ կրկնէք ձեր այցելութիւնը, միւսնոյն է ոչինչ օգուտ չէք կարող տեսնել:

Հիւանդը շունչ առաւ և ակնապիշ նայել սկսեց հիւրին, բայց սա հեզ և խոնարհ նստած էր, աչքերը բաց ու խուփ անելով, կարծես ուզում էր ասել. Մարտին, իմ թշուառ եղբայր, ինչպէս սխալւում ես իմ վերաբերութեամբ:

— Այն օրիորդը, որին այստեղ տեսաք,— շարունակեց ծերունին,— որը է: Ե՛ս դատարարակեցի նորան: Մի տարուց աւելի է, որ նա է իմ միակ և մշտական ուղեկիցս: Նա գիտէ, որ ես երդուած եմ ոչ մի կոպէկ չթողնել նորան մահիցս լետ. բայց քանի որ ես կենդանի եմ, միջոց եմ տալիս նորան ապրելու, ճշմարիտ է ոչ շատ փարթամ,

բայց ոչ էլ այնքան անպաճոյճ: Այժմ էս ձեզ ամեն ինչ ասացի: զնացէք այստեղից և այլ ևս չետ չգաք:

— Ես կերթամ, պատասխանեց Պէկանիֆը, տեղից վերկենալով. բայց առաջ թող տուէք, որ էս էլ իմն ասեմ: Դուք ինձ անպատուեցիք, դուք ինձ կասկածեցիք ամենաստոր հրապոյրներում: Ես դորան այնքան էլ մեծ նշանակութիւն չեմ տալիս. բայց ըստ պարտաւորութեանս և խղճիս պարտական եմ ձեզ ասել, որ ձեր վարմունքը տարօրինակ է և ձեզ բոլորովին անխայել: Դուք մոռացել էք, որ մի թոռն ունիք—Մարտինը: Ձեր պարտքն է հոգալ այն երիտասարդի ապագայի մասին, և էս հաւատացած եմ, որ կանէք այդ: Ես մինչև անգամ կարծում եմ, աւելացրեց Պէկանիֆը, նայելով կաղամարի վերայ, որ դուք արդէն թագուն մի որ և է կարգադրութիւն արած կը լինիք այդ առթիւ: Աստուած ինքն օրհնէ ձեզ դորա համար, օրհնէ և ձեր ունեցած ատելութեան համար դէսլի ինձ: Բարի գիշեր:

Այս խօսքերից յետ ճարտարապետը յարգանքով ողջունեց ծերունուն և իւր արժանապատուութիւնն անպատուած զգացմունքով հաստատուն քայլերով դուրս գնաց սենեակից:

—Այ ինչումն է եղել բանը, շնչաց հիւանդ ծերունին այդ միջոցին: Մի՞թէ այն խորամանկ անպիտան թոռս միջնորդ է ընտրել այս մարդուն: Դարձեալ դաւադրութիւն: Դարձեալ շահախնդրու-

թիւն. ամեն մի քայլափոխում շահախնդրութիւն: Նորա հայեացքն ընկաւ աշտանակի և այրուած թղթի մնացորդների վերայ:

—Դարձեալ ոչնչացրել եմ կտակս. էլի ոչինչ չ'ընեցի, սակայն կարող է պատահել, որ հէնց այս գիշեր մեռնեմ: Պարզ տեսնում եմ, թէ ինչ ողորմելի նպատակների են ծառայում փողերս,—փրնթփրնթաց հիւանդը և փռուեցաւ անկողնի մէջ: Շատ ցաւ ու տանջանք եմ կրել էս կեանքումս նոցա պատճառով, իսկ սրբան ցաւ ու չարիք տակաւին բաժին է մնում ժառանգներիս, երբ էս այլ ևս չեմ լինի:

Շատ հեծեց ծերունին այդ գիշեր: Հազիւ թէ թողել էր նա իւր յարմարաւոր տունը Լօնդօնում, ազատուելու այն բազմաթիւ ազգակիցներից, որոնք օրն ի բուն խոսնուած նորա բնակարանում, սպասում էին նորա մահուան, հազիւ թէ իջևանել էր այդ խաղաղ խուլ անկիւնում հանգստութիւն գրտնելու, հեռու մեծ քաղաքներից, երբ արդէն շփուեցաւ Պէկանիֆի հետ, որ առաջին այցելութիւնից յետ ամեն օր քաշ էր գալիս Կապոյտ Վիշապի շուրջն, այն նպատակով, որ ինչ էլ լինէր, մի կերպ կարողանար նորից տեսնուել: Բայց միայն Պէկանիֆը չէր, որ հետևում էր հիւանդ ծերունուն,— լոյս ընկաւ և ծեր Մարտինի քեռորդին՝ Փօքսը, մի յայտնի անպիտան Տիգգ Սօնտէգիւի հետ, որ Լօնդօնից սկսած հետևում էր այն օրհասական կառքին, որի մէջ ի զուր տեղը Չուզլվիան ու իւր ուղեկ-

ցուհին աշխատում էին թագչիլ անկուշտ ազգականների աչքից: Մի քանի օրից լետոյ Փօքսի ցուցմամբ Վայոշիր եկան նաև միւս ազգականները, որոնց թուումն և Չուզլվիտի մեծ եղբայրը, որ մի ունևոր մարդ էր և ներկայացուցիչ էր «Ե. Չուզլվիտ» առևտրական տան: Յանկարծ գիւղը կենդանութիւն ստացաւ երևեցան օրինաւոր հագնուած քաղաքացիներ, առևտուրը սկսաւ եռալ խանութներում, Կապույտ Վիշապում էլ տեղ չըկար բոլոր եկաւորների համար: Սակայն, ինչքան էլ աշխատեցին ազգականները հիւանդի հետ տեսնուելի, ոչ մէկին չընդունեց: Ոչ աղաչանքը, ոչ էլ դռներ բաղխելը չօգնեց: Ազգականները մտածմունքի մէջ ընկան. բայց մի գեղեցիկ առաւօտ յանկարծ դուռը բացուեց, և երբ եկաւորները խրամովին ներս թափուեցին՝ բունը դատարկ գտան. ոսկէ թուշիկը թուել էր. թէ ո՛ր յայտնի չէր:

**Բ.**

Աշնան մի գեղեցիկ արև օր էր, բայց բաւական ցուրտ: Թովմաս Պինչն առաւօտը վաղ նիհար, գործածական ձին լծեց երկանիւ սալակի մէջ և դէպի Սէլիսբիւրի ուղևորուեցաւ նոր աշակերտին զիմաւորելու:

Ճանապարհին, շրջփողոցներից մէկում, նա նրկատեց մի հետևակ, որ բարձր ձայնով և ուրախ երգում էր: Երգողը երբ դէպի ինքը սահող սալ-

լակի թխթխկոցը լսեց՝ երգն ընդհատեց և այս ուկողմ նայեց: Դա Մարկոս Տէպլին էր, Կապույտ Վիշապի յայտնի դռնապանը:

— Բարև ձեզ, Մարկոս, գոչեց Թովմասը, ձին լետ պահելով:— Ի՞նչ բաղդաւոր հանդիպումն է: Կը կամենա՞ք միասին գնանք:

— Սիրով, բայց դուք Սէլիսբիւրի՞ էք գնում, զլիարկը վերքաշելով ասաց Մարկոսը:

— Գուշակեցիք, ժպտաց Թովմասը:— Բարձրացէք սալակը: Շատ ուրախ եմ. ընկերովի մարդ աւելի ուրախ է ճանապարհ գնում:

Դռնապանը տեղաւորուեց Թովմասի կողքին, որ այժմ միայն նկատեց, թէ իւր ուղեկիցը տօն օրուայ շորեր ունէր հագին:

— Այժմ հասկանում եմ, ծիծաղեց Թովմասը, թէ ինչո՞ւ դուք այդքան ուրախ էք:

— Այդտեղ ինչ մեծ փիլիսոփայութիւն կայ, տհաճութեամբ պատասխանեց նա. — ով լաւ է հագնուած՝ նա միշտ ուրախ է լինում տրամադրուած, բայց զիտէք ինչ, եթէ ես պատուած ցնցոտիներ ունենամ հագած, և դարձեալ ուրախ լինեմ, դա չիրաւի զարմանալի կլինէր:

— Գործով էք գնում Սէլիսբիւրի:

— Ո՛չ, տեղ պէտք է որոնեմ, ժամանակ է որ գիւղից ձեռք վերցնեմ:

— Ուրեմն դուք անշուշտ ցանկանում էք հեռանալ մեզանից, հարցրեց Թովմասը շուարած:

— Մի՞թէ ես պարտաւորուած եմ Վիշապումը

մնալ, իւր հերթին հարցրեց Մարկոսը, այնպէս չը-  
նելով աչքերը, որ կարծես մի բան էր միտք ա-  
նում:

Եւ աւերացրեց.

— Այդ տեղը խելքիս չէ գալիս, Վայտշիր գա-  
լիս ենթադրում էի, որ այս երկիրը Անգլիայի ա-  
մենաձանձրալի խորշերից մէկն է: Ես մտածում  
էի, որ դժուար է այստեղ ուրախ ժամանակ անց-  
նել: Սակայն բանից երևաց, որ սխալ է ենթա-  
դրութիւնս: Երբեմն կոնախաղ են խաղում, երբեմն  
վէգ: Երեկոները ծանօթները խմբուում են ու նըս-  
տում վառարանի մօտ, պուճն էն խմում, խօսում  
ու ծիծաղում: Ո՞վ կը ձանձրանայ այնտեղ:

— Բայց քնչ կասի այժմ միտորիս Լիւպէնը,  
գլուխը շարժելով նկատեց Թովմասը: — Ես, ճշմա-  
րիտ, միշտ կարծում էի, թէ դուք երբ և իցէ կը  
պսակուէք նորա հետ:

— Ե՛հ, չէ, պատասխանեց Մարկոսը: — Որ ինչ  
է Վիշապի տէրը դառնայի: Դա հօ ամեն մարդ էլ  
կարող է: Մեծ բան չէ:

— Ուրեմն դուք կամենում էք ձեզ փորձել,  
այսինքն կարող էք ուրախ և գոհ մնալ նոյն իսկ  
երբ աշխարհիս ամեն տեսակ ձախորդութիւնները  
կը պաշարեն ձեզ:

— Այո՛, կցանկալի: Այսօր միտք ունիմ քաղա-  
քում տեղեկանալ, չի՞ կարելի արդեօք մի այլ յար-  
մար պարապմունք գտնել:

— Մի՞թէ արդէն աչքի առաջ մի որոշ գործ չունիք:

— Մտածում եմ գերեզմանափորի պաշտօն ըն-  
դունել:

— Ի՞նչ էք ասում, Աջն ու Խնչը ձեզ, Մար-  
կոս, զարհուրած գոչեց Թովմասը:

— Ոչինչ: Վատ արհեստ չէ, ճշմարիտ է մի  
քիչ խոնաւ է և փոքր էլ որդնալից: Եթէ մարդ այս  
պարապմունքով գոհ մնայ, այդտեղ էլ մի բան բա-  
ժին կմնայ իւր ինքնասիրութեան: Սակայն, ուրիշ  
յարմար պարապմունքներ էլ կան, օրինակ՝ յուղար-  
կաւորութեան կարգադրիչի պաշտօնը: Բայց քնչ  
կասէք դուք պարտապահանջ ոստիկանական սպայի  
պաշտօնի, կամ, օրինակ, բանտապետութեան մա-  
սին: Ի՞նչքան ցաւերի պէտք է ականատես լինի  
մարդ այդ պաշտօնները վարելիս: Կարելի է գոհ  
և ուրախ լինել այդպիսի տեղերում: Ահա՛ թէ սր-  
տեղ պէտք է մարդ իրան ցոյց տայ:

Թովմաս Պինչն այնպէս էր ապշել ուղեկցի  
օտարոտի մտքերի վերայ, որ չկարողացաւ խօսքը  
վերջացնել: Չանապարհը շարունակեցին լուռ ու  
մունջ: Թովմասը ժամանակ առ ժամանակ նայելով  
իւր ուղեկցի կարմիր, բայց բոլորովին խաղաղ դէմ-  
քին, առաջարկում էր նորան այլ և այլ աննան  
հարցեր: Եւ այսպէս հասան նոքա Սէլիսբիւրի աւանը:  
Սաչփողոցներից մէկում Մարկոսը ցած թռաւ սայ-  
լակից:

— Տէ՛ր Աստուած, աղաղակեց Թովմասը, երբ  
նկատեց որ Մարկոսի բաճկոնի կոճակները բա-  
ցուած և ցուրտ քամին ազատ խաղում էր նորա

շապկի ծալերում:—Այսպիսի ցրտում ինչո՞ւ էք առանց բաճկոնակի դուրս եկել:

—Ինչքն է պէտք բաճկոնակը:

—Որ կուրծքդ չմըսի, զարմացած պատասխանեց Թովմասը:

—Ինչ լաւ չէք ճանաչում, նկատեց Մարկոսը:

—Իմ կուրծքս ջերմութեան պէտք չունի, բայց եթէ կարիք էլ գգար՝ի՛նչ մի առանձին հետեանք կ'առաջացնէր բաճկոնակի բացակայութիւնը: Շատ շատ... թսքերի մի չնչին բորբոքում, չէ: Ահա հէնց այդտեղ պէտք է մարդ իրան ուրախ և երջանիկ ցոյց տայ:

Որովհետև Թովմասն այս խօսքերի պատասխանը չը գտաւ, այլ միայն խորը հառաչեց և մըտածմունքի մէջ ընկաւ, ուստի Մարկոսին ուրիշ բան չէր մնում, բայց միայն շնորհակալ լինել սայլակով բերելուն համար: Նա հրաժեշտ տուաւ Թովմասին և ուրախ ուրախ շուրջանելով գնաց իւր բանին, իսկ քամին փրփրացնում էր նորա վզի ալկարմիր թաշկինակի երկայն ծալերը: Մի քանի քայլ անելուց լետ նա շուռ եկաւ և միանգամ էլ, ինչպէս յատուկ է աշխարհիս անհոգ զուարճասերներին, գլուխը շարժեց և ծածկուեց մօտակալ շրջփողոցում:

Թովմասը շարունակեց ճանապարհը և վերջապէս, մտաւ այն հիւրանոցի բակը, ուր միտտէր Պէկսնիֆը նշանակել էր նոր աշակերտին հանդիպելու երեկոյին եօթն ժամին:

Իե՞ռ վաղ էր, այս պատճառով սայլակն ու ձին յանձնելով հիւրանոցի ձիապանի խնամքին՝ Պինչը գնաց քաղաքը մանգալու: Երբեմն երբեմն նա կանգ էր առնում կրպակների առաջ և զուարճանում էր լուսամուտներում դարսած թանկագին իրերով: Շուտով մայր եկեղեցու զանգի ձայնը լըսուեցաւ: Թովմասը շտապեց եկեղեցի, ուր տեսաւ իւր մի բարեկամ նուագողին, որին և առաջարկեց թոյլ տալ իրան նուագարանի փուքսը փչելու: Երբ ժամերգութիւնը վերջացաւ, նուագողն առաջարկեց Թովմասին, որ նստէ և մի բան նուագէ: Նա գիտէր, որ երաժշտութիւնը ամենամեծ զուարճութիւն էր պարգևում Թովմասին, և որ վերջինս դեռ մանկութիւնից սիրում է նուագարանը և շատ յաջող նուագում է: Սկսել էր արգէն միջնել. մայր մտնող արևի վերջին ոսկէգոյն ճառագայթները գոթական լուսամուտների գոյնզգոյն ապակիների միջով ներս էին թափանցում տաճարը, լուսաւորելով հինաւուրց տաճարի կոպիտ կոճղերը, իսկ Թովմասը տակաւին նուագում էր: Բարձր մտքեր, քաղցր յոյսեր ալեկոծում էին նորա սիրտը. նա նուագում էր, մոռանալով թէ իրան, Պէկսնիֆին և թէ նոր աշակերտին: Եւ կնուագէր մինչև կէս գիշեր, յափշտակուած այն սքանչելի և վսեմ ձայներով, որոնցով արբած էր նորա պալածառ հոգին, միշտ բարի և ազնիւ արձագանքներ տալով: Սակայն առաւել ու առաւել մութը կոխում էր, և ժամկոչը յայտնեց, որ ժամանակ է եկեղեցին փակելու և տուն գնալու: Այդ

ժամանակ միայն խելքի եկաւ Պինչը, շնորհակալ եղաւ նուազողից իրան պատճառած զուարճութեան համար, ողջունեց և գնաց հիւրանոցը:

Ընդհանուր դահլիճում նա փոքրիկ սեղանը մօտ տարաւ վառած վառարանին և ուրախ ուրախ սկսաւ վայելել մօտ բերած հիւթալից բիւֆշտէքսը տաք տաք գետնախնձորով և մի ըմպանակ վայտշիբեան պատուական գարեջուր: Դեռ ճաշը չէր վերջացրել, երբ մի ուրիշ այցելու մտաւ, ներս բերելով իւր հետ խիստ ցուրտ և քամի, որ քիչ էր մնում կրակը հանգցնէր:

— Սյուր դուրսը ցուրտ է, սաստիկ ցուրտ է, ասաց այցելուն և ողջունեց. Թովմասը սեղանը ետ քաշեց, որպէս զի միջոց տալ նորեկին տաքանալու: Խնդրեմ, մի նեղանաք, ասաց նա, նստելով, սակայն, նոյն իսկ կրակի մօտ դրուած լալն բազկաթուռի մէջ, և ոտները մեկնեց վառարանի վանդակակալի կողմը:

— Ոտներս բոլորովին սառել են: Ա՛հ, ի՛նչ սառնամանիք է:

— Երևի դուրսը շատ էք մնացել, հարցրեց Թովմասը:

— Ամբողջ օրը, այն էլ կառքի գլխին:

Անձանօթը լուեց, վերցրեց փողկապն ու վերարկուն, որ, հարևանցի նկատենք, շատ աւելի հաստ էր և տաք, քան Պինչի վերարկուն, լետոյ նորից նստեց և սկսեց եղունգները կրծել: Դա մի պիրուն երիտասարդ էր. քսան տարեկան, սև, սուր

աչքերով և շատ վճռական տեսքով, որ ստիպեց Թովմասին զգուշ վարուել նորա հետ: ժամանակ առ ժամանակ երիտասարդը նայում էր պատի ժամացուցին: Նոյնը անում էր և Թովմասը, մասամբ դէպի անձանօթը տածած համակրութիւնից, և մասամբ նորա համար, որ սպասուած նոր աշակերտը եօթի կէսին պէտք է գար, իսկ վալրկենացոյց սլաքըն արգէն ցոյց էր տալիս եօթից հինգ ըռպէ անց: Ամեն անգամ, երբ անձանօթը նկատում էր Թովմասին ժամացուցին նայելիս՝ վերջինս վիրաւորոււմ էր, և դա այն հետևանքն ունեցաւ, որ երիտասարդը ժպտալով հարցրեց.

— Մենք երկուսս էլ, կարծես, չափազանց գնահատում ենք ժամանակը: Ինչ վերաբերում է ինձ՝ ես մարդու եմ սպասում:

— Ես էլ, պատասխանեց Պինչը:

— Եօթի կէսին:

— Եօթի կէսին, գրեթէ միաժամանակ արտասանեց Թովմասը, զարմացած նայելով իւր խօսակցին:

— Արարի՛չ Աստուած, ազազակեց նա և տեղից վեր թռաւ.— արգեօք դ՞ուք էք միստէր Պինչը: Շատ գեղեցիկ: Իսկ ես Մարտինս եմ, որին դուք սպասում էք: Ի՛նչպէս էք: Մօտ եկէք խնդրեմ կրակին:

— Շատ շնորհակալ եմ, ես չեմ մրսում, պատասխանեց Պինչը:— Դուք կարող էք տաքանալ, ճանապարհներս հեռու է, դուրսն էլ ցուրտ է:

—Շատ ուրախ եմ, որ ձեզ պատահեցի, քաղցրութեամբ շարունակեց թովմասը.— մանաւանդ որ այժմ իսկ մի ցանկութիւն ծնաւ իմ մէջ, ես ցանկացայ, որ այն մարդը, որին ես սպասում էի, ձեզ նման լինէր:

—Եւ շատ էլ լաւ, պատասխանեց Մարտինը, թովմասի ձեռքը սեղմելով.— ես էլ, հաւատացնում եմ ձեզ, ցանկանում էի, որ միտէր Պինչը դուք լինէիք: Ես առհասարակ շուտ չեմ մտերմանում մարդու հետ, իսկ ձեզ հետ, ինչպէս տեսնում եմ, լաւ կ'կառավարուենք: Վճռուած բան է: Այժմ, բարի եղէք և զանգեցէք:

—Թովմասը խնդիրը կատարեց, և ժպիտն երեսին նայում էր նոր բարեկամին ու սպասում թէ դարձեալ ինչ կասի:

—Եթէ դուք պունջ սիրում էք, չէք թույլ տալ ինձ որ մի մի բաժակ թունդից պատուիրեմ, որպէս զի առաջին ծանօթութեան և բարեկամական կապ հաստատելու միջոցին՝ հին սովորութիւնից դուրս չգանք: Ես մի գաղտնիք ունիմ, որ կցանկայի ձեզ յայտնել, բայց մինչև հիմայ լռեցի, որովհետև չգիտէի, թէ ով էք, իսկ յայտնի է որ մարդու մասին առաջին տպաւորութիւնը միշտ երկար է տեւում:

Թովմասը Մարտինի խօսքերը բոլորովին հիմնաւոր համարեց և պունջ պատուիրուեց: Փոքր ժամանակից յետոյ ըմպելիքը բերին և նոր բարեկամները թունդ խմիչքը կուլ տալուց յետ՝ անձնատուր

եղան ամենաանկեղծ խօսակցութեան:

—Գիտէ՞ք, որ ես Պէկանիֆին ազգական կը հասնեմ, հարցրեց Մարտինը:

—Մի՞թէ:

—Ի՛նչպէս չէ: Պապս նորան հօրեղբօր որդի է ընկնում:

—Ուրեմն Մարտին ձեր անունն է, իսկ ես կարծում էի, թէ դա ձեր ազգն է:

—Նիշտ այդպէս է. բայց ես կցանկայի, որ ազգըս լինէր, որ թէ երկար է և թէ տգեղ: Իմ ազգս Չուզլվիտ է:

—Նշմարիտ, գոչեց թովմասն ապշած:

—Սակայն ձեզ, երևի, զարմացնում է, որ ես անուն էլ ունիմ, ազգ էլ, ասաց Մարտինը, բաժակը շրթունքին մօտեցնելով: Դա շատերի հետ է պատահում աշխարհում:

—Ո՛չ, պատասխանեց Պինչը.— դա ինձ ամենեւին չէ զարմացնում, այլ...

Սակայն թովմասը լիշեց, որ Պէկանիֆը արգելել էր նորան խօսել այն հիւանդ ծերունու մասին, որ իջևանել էր Կապոյտ Վիշապում: ուստի իւր յուզմունքը ծածկելու համար նա շտապեց բաժակից մի փոքր կուլ տալ: Խօսակիցները լուռ նայում էին միմեանց:

—Վաղուց արդէն պատուիրել եմ լծել, լռութիւնն ընդհատեց Պինչը, ժամացուցին նայելով: — Ժամանակը չէ՞ գնալու:

— Բոլորովին պատրաստ եմ ձեզ ծառայելու, համաձայնեց Մարտինը:

Նանապարհորդները վճարեցին դրստուեցան, ծանրոցը ժողովեցին, դուրս գնացին և կառք նրստան, Պինչը ամեն ջանքով աշխատեց, որ իւր ուղեկիցը որքան կարելի է յարմար լինի նստած, ինքն էլ մի կերպ կողքանց տեղաւորուեց Մարտինի կողքին և նեղուածքից մի ոտը սալակից դուրս հանելով սանձն առաւ ձեռքին և ձիապանին հրաժեշտ տալով՝ քշեց գէպի փողոց:

Պուրսը ցուրտ էր, բայց խաղաղ: Ամբողջ երկիրը լուսաւորուած էր լուսնի արծաթափայլ լուսով: Նանապարհորդներն զմայլում էին իրանց առաջ բացուող տեսարաններով, և բնութեան խորին լուութեան ազդեցութեան ներքոյ՝ լուիկ շարունակում էին իրանց ճանապարհը. բայց շուտով ներսից պուռնջի և դրսից թարմ օդի ազդեցութեամբ սկսեցին խօսել ու խօսել: Խօսակցութեան առարկան, անկասկած, ինչպէս ինքը միտտէր Պէկսնիֆն էր, այսպէս էլ նորա ընտանիքը, որոնց համակրելի կողմերը Թովմա Պինչը արտասուքն աչքերին, աշխատում էր այնպիսի փայլուն գոյներով նկարագրել, որ աշխարհիս ամենից սառնարիւն մարդու մէջ անգամ կարող էր համակրութիւն յարուցանել գէպի նա:

Նեռուից լուս էր փալփլում, գիւղը երևում էր: Շուտով սալակը մօտեցաւ եկեղեցուն, որ Պինչի կեանքի համար միշտ առաջնակարգ նշանակութիւն

ունէր, ոչ թէ միայն նորա հեղ և ջերմեռանդ բնաւորութեան պատճառով, այլ և նորա համար, որ այդ տաճարում բարեհաճ թոյլտուութիւն ստացաւ աստուածապաշտութեան ժամանակ երգեհոն նուազել:

— Սիրուն եկեղեցի է, նկատեց Մարտինը:

— Այդպէս է, չէ, հպարտ ձայն տուեց Թովմասը:— Եւ ինչ դեղեցիկ երգեհոն ունի: Ես այդտեղ ամեն կիւրակի նուագում եմ: Եւ ինչքան ախորժ ժամեր եմ անցրել այս փոքրիկ եկեղեցում, ցնծութեամբ շարունակեց նա:— Ես սիրում եմ պարայ ժամերին երգեհոն ածել: Անցեալները մի երեկոյ նուագում էի, մէկ էլ տեսնեմ եկեղեցում մի նորատի տիկին կանգնած լսում է: Սկզբում ինձ թուաց թէ նա մի չնաշխարհիկ արարած է, բայց լետոյ տեսայ, որ նա շատ թարմ կերպարանք ունէր, և վերջին տարազով էր հազնուած: Ես ինձ ձեւացրի որպէս թէ չեմ նկատում նորան և շարունակեցի նուագել: Այնուհետև նա դարձեալ երեք անգամ եկաւ եկեղեցի. բայց լետոյ անյայտացաւ չգիտեմ ուր:

— Ուրեմն այնուհետև էլ չէք տեսել:

— Ո՛չ. չտեսայ:

Նանապարհորդներն արդէն հասան իրանց ուղևորութեան նպատակատեղը: Ազնիւ ճարտարապետն այդպէս վաղ չէր սպասում նոցա, ուստի և դեռ նստած էր բազմաթիւ գրքերի առջև, զանազան նկարներ էր թերթում և խորը մտածման մէջ կրծոնում էր մատիտի ծայրը: Չէր սպասում նաև միսս

Սառան: Գրացիան անգամ չհասցրեց շորերը փոխել պատուական հիւրին ընդունելու համար:

— Բարի եկաք, սիրելի բարեկամ, գոչեց Պէկսնիֆը նորեկի առաջ վագելով: — Մտի՛ր իմ անշուք տունը: Եւ փառաւորապէս մի քանի անգամ գըրկեց հիւրին ու բարեկամաբար ձեռքն ուսին դնելով՝ տարաւ նորան ծանօթացնելու իւր աղջկանց հետ: Այս հանդիսից յետ հիւրին ամբողջ տունը ցոյց տուին, ընդունարանից մինչև նոյն իսկ ճարտարապետի ննջարանը:

— Այս սենեակում, բացատրում էր տանտէրը, ցոյց տալով իւր մենարանը. — այս փոքրիկ սենեակում, ասում եմ, գիշերուան խաղաղութեան մէջ կատարելագործուել են շատ ճարտարապետական գաղափարներ, որոնք ապագայում մարմնանալով իրապէս, այժմ մեր հայրենիքի բազմաթիւ քաղաքներին ծառայում են որպէս զարդ: Ինչպէս տեսնում էք, այստեղ ամեն յարմարութիւններ կան պատսպարելու այգպիսի գաղափարներ, երբ գիշերուայ խորքում յանկարծակի ոգևորում են նոքա ինձ: Եւ ցոյց տուեց մի սեղան, որի վերայ դրուած էր լամպար, թափուած էին մի քանի գրքեր, թղթեր, մատիտ և ռետինի կտոր:

Հասան և՛ նոր աշակերտի համար նշանակած բնակարանին: Դա մի ընդարձակ սենեակ էր, և շատ պարզ կահաւորած, երևի միջի օդը մաքուր պահելու համար: Պատերի մօտ շարուած չորս մահճակալները պարզ ցոյց էին տալիս, որ տանտէրը հաս-

տատ միտքը դրել էր իւր աշակերտներին թիւը մահճակալների թուին հասցնել:

Երբ միտէր Պէկսնիֆը իւր պատուական հիւրի և Պինչի ուղեկցութեամբ յետ դարձաւ սեղանատուն՝ սփռոցը գցած պատրաստ էր, որն երբ տեսաւ բարեհոգի Թովմասը՝ սիրտն ուրախութիւնից սկսաւ դողալ: Սակայն այդ բաղտաւորութիւնը շատ մեծ բան չէր. սեղանի վերայ, բացի երկու շիշ չամչից շինած ջրալի գինուց մի քանի պնակ էր դարսած. մէկի վերայ մանր կտրտած փոքր ինչ իւղահաց, միւսի վերայ նարինջ (ամենքին մի հատ), բացի դորանից մի տեփուրով բարակ պաքսիմատ, իսկ սեղանի մէջ տեղը զարդարում էր հասարակ բոմբի հաց: Սակայն այս համեստ պաշարը խիստ հազուադիւր բան էր ճարտարապետի տանը, որ յայտնի էր միտէր Պինչին երկարամեայ փորձից:

Սեղան նստեցին: Տանտէրը մի շատ կենդանի խօսակցութիւն սկսեց, որին սիրով միացաւ և Մարտինը, որովհետև սեղան դրուած կերակուրները նորա ճաշակի չէին: Բայց դորա փոխարէն Թովմասն սկսեց եռանդով աշխատել: Յանկալով հաւատտիանալ, թէ սեղանի վերայ դրուածները իրականութիւն են և ոչ լոկ զարմանալի երազ, նա ամեն ինչ շտապով կերաւ, ժամանակ առ ժամանակ իւր բոլոր ուշադրութիւնը, ՚ի զարհուրանս երկու օրիորդների, լարելով բացառապէս իւղահացերի վերայ: Վերջապէս ժամը հասաւ հիւրին հանգիստ տալու: Ամենքը ցրուեցան: Միտէր Պէկսնիֆը Մարտինին

տարաւ նորա համար նշանակած սենեակը: Ետեկց մոմը ձեռքին բարձրանում էր Պինչը: Սանդուխքի կիսին չհասած՝ նա մտաբերեց, որ մոմի ունելիքը մոռացել է ներքև և լետ դարձաւ: Այս հանգամանքից օգուտ քաղելով յարգելի ճարտարապետը՝ մի քանի մտքեր յայտնեց իւր նոր աշակերտին Թովմասի կրթութեան անբաւարարութեան մասին, որով ուզում էր նորան հասկացնել, թէ խեղճուկին պաշում են լոկ կարեկցելով նորա վիճակին:

Գիշերը վրայ հասաւ: Ամբողջ տնեցիք խոր քուն մտան: Պինչը քաղցր քնած էր. երազում մերթ կախարդական հանդէսներ էր տեսնում, մերթ երգեհոնի ձայներ լսում. իսկ երբեմն էլ այնպէս էր թւում, թէ իւր գլխավերևը բնակուում էր սերովբէն, որ շուտով մի տեսակ հրաշքով ամենայարգելի միտէր Պէկանիֆի կերպարանքն զգեցաւ:

**Գ.**

Միւս առաւօտ ճարտարապետը նոր աշակերտին յայտնեց, թէ Լօնդօն պէտք է գնայ շինութեան գործերով և աղջկանցն էլ տանում է իւր հետ: Այս հանգամանքը մեծ վիշտ պատճառեց Պինչին, որովհետև որքան որ նա Պէկանիֆի մօտ էր, դեռ այդպիսի բան չէր պատահել այնտեղ:

— Երեկոյեան կուղևորուենք և, երևի, մի ամբողջ շաբաթ կմնանք մայրաքաղաքում, ասաց Պէկանիֆը, փնտուելով սեղանի վերայ ցրուած

թղթերը: Իրաւ, ինչ զբաղմունք տամ ձեզ մինչև վերադառնալս, սիրելի Մարտին: Իուք կարծեմ լաւ գծում էք, — ահա ձեզ լատինացոց ուսումնարանի շինութեան նախահաշիւը, զբաղուեցէք սորանով, յատակագիծ կազմեցէք. ես հաւատացած եմ, որ մինչև գալս դուք այս խնդիրը ամենագեղեցիկ կերպով կը վճռէք, ասաց ճարտարապետը, ցնծութեամբ թօթուելով աշակերտի ուսը:

— Իսկ այժմ իջնենք, գործիքներն ու նիւթեղէնը տամ, աւելացրեց նա, և Մարտինի ձեռքը բռնելով դուրս տարաւ սենեկից:

Թովմասը մնաց վերևը միայնակ: Մարտինը մի ամբողջ ժամ գաղտնի խօսակցութիւն ունեցաւ իւր ազգակցի հետ և լետ դարձաւ տխուր և լուռ: Այսպէս մնաց նա ամբողջ օր: Բարեսիրտ Թովմասն ուզեց զուարճացնել, բայց միջոց չգտաւ. Պէկանիֆ ընտանիքը դադար չէր տալիս նորան: Առաջ՝ ինքն ընտանիքի պետը հրաւիրեց նորան թուչկոտել լիքը լցուած պայուսակի վերայ, որ անհնար էր ուրիշ կերպ փակել: Այնուհետև, օրիորդների խնդրին զիջանելով, ստիպուած եղաւ մի քանի կողով ու սնդուկ թոկերով կապկպել և բոլոր ծանրոցի մանրամասն ցուցակը կազմել, բացի դորանից, յանձնուած էր նորան նաև բոլոր ծանրոցը գլխաւոր փողոցը հասցնել, և պահել մինչև փոստային կառքի գալը:

Երբ Թովմասն ու Մարտինը մեծաւորներին ճանապարհ գրին՝ անխօս տուն դարձան: Մթնում

էր, սեղանատանը՝ Գրացիայի Հեռատեսութեամբ դեռ ուղևորութիւնից առաջ ընթրիք էր գցած, որ բաղկացած էր նախաճաշի և նախընթաց օրուան ճոխ խնճուղքի մնացորդներէից: Մարտինը սեղանի վերայի փառաւոր կերակրներին առաջուայ պէս խիստ անտարբեր վերաբերուեց, այն ինչ դիւրահաւան Պինչն սկսեց ընթրել առանձին փութաջանութեամբ: Կատարեալ բաւականութիւնը, որով նա ոչնչացրեց քարթու իւղահացերը, և այն մեծ գոհունակութիւնը, որ թափուում էր նորա երեսից, երբ սուս ու փուս կաթիլ կաթիլ ծծում էր ջրալի գինին, այնքան զուարճալի էին, որ մինչև անգամ առաւօտանց անխօս ու տխուր Մարտինը չկարողացաւ զսպել իրան ու փորը բռնած ծիծաղում էր:

—Վաղուց պէտք է այդպէս լինէիր, խրախուսում էր նորան Թովմասը:—Ս'յ էդ սիրում եմ: Միշտ այդպէս ուրախ եղէք: Փքուելու ոչինչ չունիք: Բաջալերուած այս խօսքերից՝ Մարտինը դարձեալ ծիծաղեց ու սասց.

—Նշմարիտ, երբէք աշխարհումս քեզպիսի այլանդակ մարդու պատահած չեմ, Պինչ:

—Իրաւ, Հարցրեց Թովմասը: Սակայն, ես սիրով կհաւատամ, որ ձեզ օտարոտի եմ երևում,— ես գրեթէ դեռ ոչինչ չեմ տեսել աշխարհում: Ս'յ դուք, կարծեմ, շատ բան պէտք է լինիք տեսած:

—Ս'յո՛, հասակիս համեմատ բաւական շատ: Սակայն պէտք է վերջապէս բաց խօսեմ, մանաւանդ ձեզ հետ, սիրելիդ իմ Պինչ:

—Շատ էլ լաւ կանէք, նկատեց Թովմասը. ես այդ ձեր կողմից առանձին յարգանք կհամարեմ:

—Կարճ կ'սսեմ, սկսեց Մարտինը. դեռ երեխայ ժամանակս ես իմ մասին շատ մեծ համարմունք ունէի և երևակայում էի, որ ժամանակով հարուստ մարդ պիտի լինիմ: Կարող էր և այդպէս լինել, եթէ չլինէր պապս, որ ինձ կրթեց և ժառանգութիւնից զրկեց:

—Տէր իմ Աստուած, գոչեց Թովմասը ջերմ կարեկցութեամբ: Ի՞նչպէս:

—Ս.հո՛ կիմանաք, շարունակեց Մարտինը, իւր սրտում իւր աւելացնելով կրակի վերայ: Պապս շատ ընտիր յատկութիւններ ունի, բայց միևնոյն ժամանակ ունի և այնպիսի անյաղթելի կամակորութիւն և եսականութիւն, որ միանգամայն գերազանցում են ամեն նման յատկութիւններին: Ս.հո՛ թէ ինչու նա սկսեց արտասովոր պահանջներ դնել. նա ինձանից պահանջում էր անպայման հնազանդութիւն, մինչև անգամ անձնուրացութիւն: Ես ամեն ինչ համբերութեամբ տարայ, վասն զի ինչեւիցէ ես նրան անկեղծ սիրում եմ. չնայելով սորան ես չկարողացայ տանել ծերունու բոլոր հաճույքները, մենք յաճախ վիճում էինք, թէպէտև ամեն անգամ լանցաւորը ես չէի լինում. բայց որովհետև...

Մարտինը շփոթուեցաւ: Պինչը կարեկցութեամբ նայեց նորան և այդ կարեկցութիւնը շարունակ աւելանում էր:

—Սակայն դուք ինձ կհասկանաք, շարունակեց

Մարտինը, սակաւ լռութիւնից յետ: Այժմ անցնում եմ գլխաւոր բանին և կը պարզեմ, թէ ինչ եղանակով ընկալ այստեղ: Պապս դաստիարակում էր մի նորատի, խիստ գրաւիչ և բարեսիրտ աղջիկ: Ես նորան բոլոր սրտով սիրում էի և ցանկանում էի երբևիցէ պսակուել նորա հետ, երբ դրութիւնս կը բարուռքուէր: Ծերունին նկատեց իմ համակրութիւնը և սկսեց յանգիմանել ինձ, որ ես անազնիւ և ետական եմ և որ ցանկանում եմ խլել նորա ծերութեան օրերի միակ ուրախութիւնը, զրկելով նորան բարեյոյս հաւատարիմ բարեկամից և խնամատարից. բացի այդ նա ինձ հասկացրեց, թէ ինքը կպսակէ ինձ իւր բարեհայեցողութեամբ, իսկ այդ պսակը գլուխ գալու բան չէ: Իսկ եթէ դու իմ կամքի հակառակ կ'վարուիս, ասաց նա, այն ժամանակ բոլորովին յոյսդ կտրիր ինձանից: Պէտք է իմանաք, սիրելի Պինչ, որ ես նորան գժուած սիրում եմ, և բացի դորանից բնութիւնս չափազանց...

— Կամակոր է, պարզմտութեամբ վրայ բերեց թովմասը:

— Ի՞նչ էք ինձ հետ կամակորութեան մասին խօսում, բարկացած պատասխանեց Մարտինը: Դա պապիս յատկանիշն է, — ես հաստատուն բնաւորութիւն ունիմ:

— Շատ ճիշտ էք ասում, համաձայնեց թովմասը, ցանկալով իւր սխալն ուղղել: Մինչև անգամ, վստահանում եմ կարծել, յամառ:

— Իսկ բնաւորութեանս հաստատութիւնը թող չէր տալիս ինձ ամենեւին զիջող լինել:

Եւ Մարտինը ցոյց տուեց ճկուն թի մի ամենաաննշան մասը:

— Եւ որքան աւելի յամառ կերպով էր յարձակում պապս ինձ վերայ, շարունակեց Մարտինը, այնքան աւելի մեծանում էր իմ դիմադրութիւնը:

— Ի հարկէ:

— Այս է ահա՛ դրութեանս վախճանն ու պատճառը, և թէ ինչո՞ւ այստեղ եմ, եզրափակեց Մարտինը, անտարբերութեամբ օրօրուելով աթոռի վերայ:

Պինչն սուշած քանի մի վայրկեան խառնեց վառարանի կրակն ու հարցրեց.

— Անշուշտ դուք առաջուց ծանօթ կլինէիք Պէկանիֆի հետ:

— Անունով միայն: Ես նորան երբէք չեմ տեսած, որովհետև պապս ոչ միայն իրան, այլ ինձ էլ կարելոյն չափ հեռու էր պահում բոլոր ազգականներից: Ծերունուս ես հրաժարական տուի տեղիցս ոչ շատ հեռու և եկայ Սէլիսբերի: Այստեղ իմացայ, որ Պէկանիֆը աշակերտներ է ընդունում: Եւ որովհետև պապս նորա անունը չի ուզում լսել, իսկ ես մեր մէջ պատահած անբաւականութիւնից յետոյ որոշեցի ամեն բանում նորան դէմ զնալ, ուստի և, կրկնում եմ, մտայ այստեղ: Իսկ նորատի կինը, որ լսում էր ձեր նուագելը, — նա էր:

Եւ մտախոհ՝ մի փոքր խմեց բաժակից:

— Նա էր, կրկնեց Մարտինը: Նորա անունը Մէրի է: Այժմ նա, ինչպէս լսում եմ, ուղևորուել է պապիս Հետ: Ե՛հ բաւական է որքան խմեցիք այս զկուաջուրը, այնքան կխմես մինչև ուշաթափուես:

Թովմասը, լի լուզմունքով, մօտեցաւ լուսամուտին, տեսնելու թէ ինչպիսի եղանակ է...

Միւս առաւօտ Մարտին Չուզլվիտ կրտսերը եռանդով ձեռնարկեց լատինական ուսումնարանի յատակագիծը կազմելուն: Պինչը հիացած գիտում էր ընկերոջ, որ բոլորովին անձնատուր էր իւր զբաղմունքին: Մարտինն այնպէս հմուտ և արագ էր գործածում գծագրութեան գործիքները, որ Թովմասն ապուշ էր կրթել և Հէնց որ ուզում էր իւր զարմանքը յայտնել ընկերոջ նորա տաղանտի մասին, ահարկու տեսքով մի մարդ ներս մտաւ, մազերը գզգզուած և ներկայացաւ Տիգգ Օճնտէգիւ անունով:

Դա այն անպիտանն էր, որ մեզ ծանօթ Փօքսին էր ուղեկցում, երբ սա Հետևում էր ծերունի Չուզլվիտին:

— Միտէր Պինչը չէք հրամանքդ, հարցրեց խառնահեր անծանօթը, համբուրելով իւր ձեռքը: Եկել եմ ձեզ մօտ մի նամակի առթիւ:

— Ի՞նչ նամակի:

— Որ թողել է իմ բարեկամ Պէկսնիֆը միտէր Փօքսին յանձնելու համար:

— Նա ինձ մօտ ոչ մի նամակ թողած չէ:

— Պ. Պէկսնիֆի կողմից դա մի փոքր անվայելուչ է... Հապա փողերը:

— Ի՞նչ փողեր, վախեցած գոչեց Թովմասը:— Միտէր Պէկսնիֆը ոչինչ յանձնարարութիւն չէ արել ինձ:

— Թոյլ տուէք ինձ, տեսրք, պարզ յայտնել միտքս: Անշուշտ ճանաչում էք իմ բարեկամ Փօքսին: Այս մարդը մեծ հմտութիւն ունի և ճոխացած է դասական կրթութեամբ: Բարեկամս ու ես կապույտ Վիշապ հիւրանոցումն ենք բնակւում: Երկուսս էլ ժամառ ժամ փողի ենք սպասում տանից, որ, զարմանք է, անյայտ պատճառով ուշացաւ: Պ. Պէկսնիֆը բարի եղաւ ու խոստացաւ մեզ օգնել: Իսկ հիւրանոցի տիկինը, երևակայեցէք, մի չնչին, ամենաաննշան հաշուի պատճառով չի թողնում, որ հիւրանոցից դուրս գանք:

— Չափազանց ցաւում եմ, մի փոքր լռելուց լետոյ ասաց Թովմասը,— սակայն մ. Պէկսնիֆն ինձ մի խօսք անգամ չի ասել, և ես առանց նորան ոչինչ չեմ կարող անել:

Պարոն Տիգգը մի քիչ միտք արեց, լետոյ որպէս թէ ինչ-որ մտաբերեց:

— Թոյլ կտո՞ք լուսամուտը բանամ, դարձաւ նա Թովմասին:

— Ի՞նչդրեմ:

—Շատ լաւ, այժմ նայեցէք. տեսնու՞մ էք դուրսը կարմիր փողպատով և առանց բաճկոնակի մարդուն:

—Ի՛նչպէս չէ, նա Մարկոս Տէպլին է:

—Նա մեզ պահպանում է,— և երևակայեցէք ի՛նչ մարդավարութիւն, բերեց ինձ այստեղ և այժմ էլ աչքը չէ հեռացնում ինձանից:

Թովմասը կասկածանքով գլուխը շարժեց, ապա կանչեց Մարկոսին, որ ձեռաց ներս վազեց սե- նեակը:

—Ի՛նչ է պատահել, Մարկոս, միտորիս Լիւ- պէնի և այս պարոնի մէջ:

—Առանձին ոչինչ, պատասխանեց դռնապա- նը:—Ես ու տիկինը նկատեցինք միայն, որ այս պա- րոնն ու իր բարեկամը սիրով ուտում են ու խմում ուրիշի հաշուով, իսկ փող վճարել չեն սիրում,— մենք դոցա փոքր ինչ լեռ պահեցինք, իսկ դոքա արդէն մտադրուել էին բոլորովին գնալ:

Միտէր Տիգզը կատաղած գլուխը թափ տուեց և ձեռքը խփեց կրծքին:

—Շատ է պարտքը, հարցրեց Մարտինը:

—Լոկ երեք Փունտ, բայց բանը դորանում չէ...

—Լա՛ւ, լա՛ւ: Միտէր Պինչ, երկու խօսք ու- նիմ ձեզ ասելու:

Ընկերները հեռացան սենեակի դիմացի ան- կիւնը:

—Ես ձեզ պէտք է ասեմ, շշնջաց Մարտինը

իւր ընկերոջ, որ Ֆօքսը ազգականս է և, ճիշտը խօստովանած, անպիտան մարդ է: Ցանկալի է, որ նա ինչքան կարելի է շուտ հեռանայ այստեղից: Ձէք կարող գտնել ինձ համար երեք ֆունտ:

Թովմասը գլխով բացասական նշան տուաւ:

—Ի՛նչ անբաղտութիւն, շարունակեց Մար- տինը.— ես էլ ոչինչ չունիմ: Գիտէք ինչ կայ. լաւ չի՛ լինիլ փորձենք երաշխաւոր կանգնել այս պա- րոնների տեղ:

—Լա՛ւ, ես համաձայն եմ. Վիշապի տիկինը, փառք Աստուծոյ, վաղուց ճանաչում է ինձ, ասաց Թովմասը:

—Ուրեմն ժամանակ չ'կորցնենք, գնանք: Որ- քան շուտ պրծնենք սոցանից, այնքան լաւ:

Վիշապի քաղցրաբարոյ տիկինը սաստիկ ուրա- խացաւ Թովմասի և նորա ընկերոջ երաշխաւորու- թեան համար, որովհետեւ ամեն տեսակ պայման- ներով պատրաստ էր ազատուել այդ ձանձրալի վար- ձաբնակներից: Երբ գործն աւարտեցին՝ երաշխա-ւորները պատրաստուելյան դուրս գալ, բայց միտ- տէր Տիգզը խնդրեց սպասել:

—Ես սաստիկ զգացուած եմ ձեր բարի վար- մունքից, ասաց Տիգզը Պինչին.— դուք ազա- տութիւն պարգևեցիք ինձ և ուսումնական ըն- կերիս, որ ներկայումս այնքան էլ առողջ չէ: Բայց, ձեզ եմ հարցնում, մեզպէս ջէնտլմէններին հնա- րաւոր է առանց մի հատ փողի Լօնդօն հասնել, ուր մենք առատ միջոցներ ունինք: Ձէք ցանկալ

ուրեմն երեք կէսկրօննոց փոխ տալ ինձ: Այս փողը ես պատիւ կուեննամ անկեղծ շնորհակալութեամբ ուղարկել ձեզ ճիշտ մի շաբաթից յետոյ: Այս չնչին բանը ես ինձ համար չեմ խնդրում, այլ իմ հանձարեղ, բայց քիչ ճանաչուած բարեկամիս:

Թովմասը հանեց գրպանից հնաձև կարմիր կաշուէ քաղը, որ թերևս մի ժամանակ նորա հանգուցեալ պապինն էր եղած, և հանեց միջից կէսգինէյ, իւր միակ հարստութիւնը, որից աւելի ոչինչ չունէր նա մինչև քառամսեկի ռոճիկ ստանալը:

—Շնորհակալ եմ, եռանդով գոչեց միստէր Տիգզը, փողն ստանալիս.—սրտանց շնորհակալ եմ: Ուրեմն ես ձեր հասցէն կը գրեմ ուղղակի. «միստէր Պինչին միստէր Պէկանիֆի մօտ», և կարծեմ նամակս կհասնի ձեզ:

—Ճիշտ այդպէս, միստէր Պէկանիֆի մօտ, տէր իմ:

—Այդպէս, այդպէս, կրկնեց Տիգզը, կրծած մատիտով հասցէն գրելով: Մեր պայմանը կարծեմ այս շաբաթ է:

—Այո՛, կամ, եթէ կամենաք, երկուշաբթի, նկատեց Թովմասը:

—Ո՛չ, տէր, ներեցէք. երբ արդէն ասել ենք այս շաբաթ, վերջին օրը շաբաթն է, և ոչ երբէք, երկուշաբթին:

Միստէր Տիգզը այս պայմանն էլ գրեց: Ապա խիստ կնճռոտած յոնքերով կարգաց բոլոր գրածը և իւր անուներ ստորագրելով յայտնեց Պինչին, որ

բանը վերջացած է, որից յետոյ սաստիկ զգացմունքով սեղմեց նորա ձեռքն ու դուրս գնաց:

Թովմասը վախեցաւ որ ծաղրի ենթակայ լինի Մարտինի կողմից Տիգզի հետ ունեցած խօսակցութեան համար, ուստի և այն ժամանակ միայն դարձաւ ընկերոջ մօտ, որ դռնապանի հետ էր խօսում, երբ վարձաբնակներն արդէն թողել էին հիւրանոցը: Մարկոս Տէպլին և երիտասարդ Չուզլվիտը լուսամուտից աչք էին ածում նոցա ետևից:

—Հենց էն է ուզում էի ասել, նկատեց Մարկոսը՝ Տիգզին ու նորա գիտնական բարեկամին ցոյց տալով.—որ եթէ ինձ յանձնուած լինէր այսպիսի պարոններին հետազօտել, այդ պարսպմունքը կարծեմ գերեզմանափորի պաշտօնից լաւ կլինէր:

—Իսկ աւելի լաւ կ'լինի, եթէ Վիշապում մնաք, ասաց Թովմասը:

—Այժմ ուշ է, տէր. ես նախկին պաշտօնիցս հրաժեշտ տուի և վաղն և եթ զնում եմ:

—Ո՛ւր:

—Լօնդօն:

Մարկոսն էլ չխօսեց: Միւս առաւօտ նա վաղ վերկացաւ. այն ինչ ամբողջ գիւղն արդէն ոտի վրայ էր. տղայքը, շները, ամենափոքրիկ երեխաները, ծերերը, աշխատասէր մարդիկ, յետին ծոլերը—ամենքն էլ հաւաքուել էին Մարկոս Տէպլին ճանապարհ գնելու և նորա ետևից գողում էին. «գնաս բարեաւ, Մարկոս»: «Բարի ճանապարհ» և ամենքն էլ ցաւում էին նորա գնալու վերայ: Նա

հաւատացած էր, որ տիկինն էլ լուսամուտից նայում է, բայց ոչոք չունէր յետ նայելու:

— Մնաք բարեաւ, բարեկամներս, ամենքդ միասին և ամեն մէկդ առանձին, աղաղակում էր. նա՛ ձեռնափայտի վերայ հագցրած գլխարկը ծածանելով օդի մէջ: Մնաք բարև: Ահա՛ վերջապէս այն պարագաները, որոնցից սովորական մարդիկ ականջով կտխրէին, բայց ես չափազանց ուրախ եմ, այսինքն, այնքան էլ չէ, ինչքան ես ուզում եմ. բայց սակայն, բաւական մօտ: Գարձեալ ցտեսութիւն, սիրելի բարեկամներս: Մնաք բարեաւ, եղբայրներս. կեցցէք:

Դ.

Հռչակաւոր ճարտարապետը իւր գուետորների ուղեկցութեամբ ճանապարհի մեծ մասը կտրեց խիստ յաջող և ուրախ, որովհետև ուրիշ ուղևորներ չլինելու պատճառով ամբողջ կառքը մնացել էր միայն նոցա իրաւունքի տակ, սակայն իջևաններից մէկում կառքի դուռը ուժգին բացուեց և երկու ուղևորներ մտան մէջը՝ մէկը ծեր, միւսը երեսուն տարեկան: Բանից երևաց, որ առաջինը Մարտին Չուզլվիտ աւագի եղբայր Էնտօնի Չուզլվիտն էր, իսկ միւսը՝ նորա որդին Ջօնսը: Երկուսն էլ, ինչպէս յայտնի է, ջերմ գործակցում էին այն ազգականներին, որոնք Կապոյտ Վիշապ հիւրանոցում պաշալել էին ծեր հիւանդին: Միտէր Պէկանիֆը

ծանօթացրեց նոցա իւր աղջիկներին, իբրև ազգականներ:

— Մենք այս կողմերը մի քանի օր անցկացրինք առևտրական գործերով, ասաց Ջօնսը. — իսկ դուք Լօնդօն էք գնում:

— Այո՛, դէպի մայրաքաղաք, պատասխանեց ճարտարապետը. — յոյս ունիմ, որ պատիւ կունենանք ձեր ցանկալի ընկերութիւնը վայելել ամբողջ ճանապարհին:

— Շատ ուրախ եմ: Ձէք կամենայ հայրիկիս հետ խօսակցել. աւելի լաւ է տեղներս փոխենք, ես տիկիններին կզբաղեցնեմ: Այս խօսքի հետ միաժամանակ Ջօնսն անշնորհք կերպով թաւալուեց միսս Գրացիայի կողքին: Նորա կրթութիւնը օրօրոցից սկսած հիմնուած էր հաշուէգիտութեան ամենախիստ օրէնքների վերայ. առաջին խօսքը, որ հայրը սովորցրեց նորան, էր «փող» երկրորդը «շահ»: Այս պատճառով որդին տարիքն առնելով այնպէս գերազանցեց հօրը վաճառականական գործերում, և շահասիրութիւնն այն աստիճան գրաւեց նորան, որ սրտատրոփ սպասում էր, թէ երբ պիտի ծերունու վերջին ժամը հնչէ:

Ջօնսը ճարտարապետի աղջկանց հետ կարճատև ու խիստ անմեղ խօսակցութիւն ունենալուց յետ՝ հետևեց ծերերի օրինակին ու քնի պատրաստուեց: Օրիորդներն ամբողջ գիշեր աչք չկայցրին, մասամբ նորա համար, որ ծերունի ջէնտլմէնները զարհուրելի խումփոց էին բարձրացրել, մասամբ էլ

որ միստէր Զօնսն այս ու այն կողմ օրօրուելով՝ երբեմն մէկ քրոջն էր բրգուում ուսով, երբեմն միւս: Լոյսն սկսեց բացուիլ, երևացին տներ, այգիներ, լսուում էին կառքերի ձայներ, և ճանապարհորդները մայրաքաղաք մտան: Կառքը կանգ առաւ փոստայի բակում: Միստէր Պէկսնիֆը փոստի պաշտօնեային յայտնեց, որ երեկոյին մարդ կուղարկէ ծանրոցը տանելու, իսկ ինքը շտապով հրաժեշտ տուեց ուղեկիցներին ու թև թևի տալով իւր աղջկանց՝ ճանապարհ ընկաւ: Լօնդոնի լայն ու նեղ փողոցներում երկար բարակ թափառելուց յետ՝ ճարտարապետը կանգ առաւ մի հին մրտած տան առջև, որի ճակատին մի փոքրիկ մակագիր կար (Սոււտրական հիւրանոց տիկին Տօջէրսի), և հնչակը քաշեց: Ըստ երևութիւն տանը դեռ ամենքը քնած էին, վասն զի Պէկսնիֆը մի քանի անգամ զանգեց ու բաղխեց, բայց հիւրանոցի բնակիչների վերայ մազի Յափ չազդեց: Վերջապէս սողնակների շարժելու ձայն լսուեցաւ, զօղանջեց ժանգոտած փականքը: Դուռը բաց եղաւ և դուրս եկաւ ահագին շէկ գլխով մի տղայ, ցեխոտ կոշիկները ոտներին, ձախ թևը կիսատ հագնուած. իսկ աջ ձեռքին կօշիկ խոզանակ բռնած, դաժան կերպով քիթն էր քորում:

— Ի՞նչ էք կամենում, խստութեամբ հարցրեց նա Պէկսնիֆին:

— Մեզ սեղանատուն տար, իսկ այս իսկոյն տուր տիկին Տօջէրսին, պատասխանեց ճարտարապետը՝ այցետումսը տղայի օձիքը կոխելով:

Սեղանատանը սիրուն վառած էր վառարանը, և ամեն ինչ պատրաստ էր նախաճաշի համար: Սեղանի վերայ դրած էր պատուական ըոստբիֆ, շուրջը հաց, կարագ, ձու, բազմաթիւ բաժակներ ու ամաններ, միով բանիւ անգլիական նախաճաշի ամեն տեսակ պարագաներ:

Միստէր Պէկսնիֆը իւր աղջկանց հետ, որոնք ցրտից դողում էին, մօտեցաւ վառարանին: Տասը ըոստբիֆ դուռը բաց եղաւ և ներս մտաւ մի նիհար կին, խցահանի նման խոսրոպիկներով, որի գլխակալը սև սարդի էր նմանեցնում նորան: Նա հիւրանոցի տէրն էր: Մի ձեռքում բանալիների կապ, միւսում վառած հարպի մոմ, ունէր բռնած: Մի հայեացք ձգելով Պէկսնիֆի վերայ՝ նա մոմը վայր դրեց սեղանի վերայ, օրպէս զի սիրով ընդունէ հիւրին:

— Միստէր Պէկսնիֆ, աղաղակեց նա: Ե՛վ կը մտածէր: Տէր իմ Ստուած: Քանի տարի է: Ինչպէս է ձեր առողջութիւնը, մ. Պէկսնիֆ: Այս չքնաղ օրիորդներն էլ անշուշտ ձեր աղջկերքը կլինին:

Ճարտարապետը քաղցր ժպիտ արձակեց և ՚ի նշան համաձայնութեան գլուխը շարժեց: Միստրիս Տօջէրսը գլկեց օրիորդներին:

— Դուք ինչպէս էք, սիրելի միստրիս Տօջէրս, քնչպէս են ընթանում ձեր գործերը, — սկսեց միստէր Պէկսնիֆը: Թոյլ կտա՞ք մեզ իջևանել ձեր հիւրասէր տանը:

— Դա ի՞նչ հարցնելու բան է, գոչեց տանտի-

կինը, թոթուելով վաղեմի ծանօթի ուսը: Եթէ իմ տուես նկուղից մինչև նոյն իսկ տանիքը լիքը լինէր վարձաբնակներով, այն ժամանակ էլ իմ բնակարանում տեղ կգտնուէր ձեզպէս թանկագին հիւրերի համար:

Մի անգամ էլ գրկելով օրիորդներին նա հիւրերին տարաւ նոցա համար նշանակած սենեակները, նոյն իսկ յարկում, ուր էր սեղանատունը, և որի լուսամուտները դուրս էին նայում դէպի մի նեղ ու մութ փողոց:

Այդ տաճարներից մէկում մի շէկ տղայ, որի անունը Բէյլի էր, կամ ինչպէս հեշտութեան համար կոչում էին վարձաբնակները՝ Բէն, իսկոյն վառարանը վառեց: Այս անվրդով մարդու գործողութիւնը վառարանի մօտ թէպէտ չափած ու ձևած էր, սակայն այնպէս դանդաղ, որ վերջապէս տանտիկինը համբերութիւնից դուրս գալով՝ յանկարծ մի շրխկալի ասպտակ հասցրեց վառողին:

Ճշմարիտ էր արդեօք, որ ճարտարապետական գործերն էին Պէկանիֆին Լօնդօն քաջել բերել, ինչպէս նա հաւատացնում էր իւր աշակերտ Մարտինին, և թէ ինչո՞ւմն էին դոքա կայանում, իւր տեղը կը պատմենք:

Պէկանիֆների կեանքը շատ միակերպ էր անցնում մայրաքաղաքում: Սրիորդներն ամբողջ օրն անց էին կայնում Տօջէրսի հիւրանոցում. իսկ նոցա պատուելի հայրիկը առաւօտունից ուր-որ ան-

չայտանում էր, պատճառ բերելով թէ փոստ է գնում նամակների համար:

Այսպէս անցաւ չորս թէ հինգ օր: Մի առաւօտ մ. Պէկանիֆը սովորականից վաղ վերադարձաւ հիւրանոց յոգնած ու հեւալով և իսկոյն փակուեցաւ դուստրների հետ ու երկու ժամ շարունակ դադտնի խորհուրդ ունեցաւ: Թէ ինչ էր խորհրդածութեան առարկան՝ դժուար է ճշտիւ որոշել. բայց այս եզրակացութեամբ նա դիմեց դուստրներին.

— Հարկ չկայ այժմ որոնել այն պատճառները, որոնք այսպիսի մեծ փոփոխութիւն են առաջացրել ձերունու մէջ: Յամենայն դէպս պէտք է հպարտանանք ու պարծենանք նորա առջև, և եթէ նա մեր սիրոյ ու բարեկամութեան կարիքն զգում է մենք չպէտք է մերժենք: Յոյս ունիմ, սիրելիք, հասկացաք ասածներս:

Նոյն օրը տիկին Տօջէրսի հիւրանոցի առաջ մի կառք կանգնեց, որից դուրս եկաւ մի ծեր ջէնտլմէն: Այս պարոնի դէմքը, քայլերն ու բազմաճիւղ ձեռնափայտը վստահ ու անդրդուելի արտայայտութիւն էին տալիս նորան, սակայն երբեմն երբեմն փոքր ինչ գայրանում և կարծես սկամայից էր գնում: Վերջապէս նա կանգ առաւ «Առևտրական հիւրանոցի» դռանը, և մի քիչ մտածելուց յետ հնչակը պինդ քաշեց:

Միտէր Պէկանիֆը նստած էր տանտիկնոջ փոքրիկ սենեկում, և ծեր ջէնտլմէնը հանդիպեց

նորան ճիշտ այն ժամանակ, երբ նա միանգամայն պատահաբար, մի ընտիր աստուածաբանական գիրք էր կարդնում:

— Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, աղջիկներդ քնչպէս են, հարցրեց ծեր Մարտին Չուզլվիտը, գլխարկն ու ձեռնափայտը դնելով կողքի աթոռի վերայ: Յոյս ունի՞մ որ ամենքդ էլ լաւ էք:

— Գոհութիւն Սասուճոյ, պատասխանեց Պէկսնիֆը. — երբ մարդս առողջ է՝ էլ ուրիշ բան չպէտք է ցանկայ: Նստեցէք, խնդրեմ... այդտեղ չէ — այդ կողմը քամին փչում է:

Ծերունին նստեց առաջարկուած բաղկաթոռի վերայ:

— Սմենից առաջ, կարճատև լուութիւնից յետ սկսեց ծերունին, — պէտք է շնորհակալութիւնս յայտնեմ, որ խնդիրս կատարեցիք և այդպէս շուտ Լօնդօն եկաք: Շատ եմ ցաւում մեր վերջին տեսակցութեան միջոցին ունեցած խօսակցութեան վերայ: Ես այժմ կարծիքս փոխեցի ձեր մասին, և այժմ դիմում եմ ձեզ, իսպառ լքուած և խաբուած այն ամենքից, որոնց ես սիրում էի ու հաւատում: Ես իմ դաշնակից եմ համարում ձեզ և յոյս ունիմ, որ ինձ հետ բարեկամութիւն անելով՝ ժամանակին լիովին կվարձատրուիք, և ինձ կ'օժանդակէք պատժել աշխարհիս ամենաստոր, նենգաւոր մարդուն:

— Ի՞նչ ազնիւ մարդ էք, հիացած դուջեց Պէկսնիֆը պատկառանքով, և արտասուակից աչքերով եռանդազին սեղմեց ծերունու ձեռքը:

— Գոհութեամբ ուր են, սակաւ լուութիւնից յետ հարցրեց Չուզլվիտը. — ես նոցա ամենեւին չեմ ձանաչում: Կցանկայի ծանօթանալ:

— Իսկոյն կը կանչեմ:

Օրիորդներն այս բոլոր խօսակցութեան դռան ետեւից ականջ էին դնում, բայց երբ ծերունու վերջին խօսքերը լսեցին՝ իսկոյն յետ փախան դռան մօտից: Պէկսնիֆն արաւանուէնքերից մաքրեց թուլութեան ակամայ նշանները և միջոց տալով օրիորդներին փոքր ինչ ուղղուելու՝ դուռը բաց արեց ու քնքոյշ ձայնով կանչեց.

— Ո՛ւր էք, իմ գանձեր:

— Սյատեղ ենք, սիրելի հայրիկ, հեռուից լսուեց միսս Սառայի ձայնը:

— Ներս արի, զաւակս, քրոջդ էլ կանչիր:

— Իսկոյն կգամ, մի ուրիշ կողմից ձայն տուեց Գրացիան, և երկուսն էլ, երեխայի նման հնազանդ, ժպտալով ներս մտան:

Ի՞նչքան մեծ եղաւ նորատի օրիորդների յուզմունքը, երբ տեսան մի անձանօթ մարդ, որին իրանց հայրը «Միստէր Չուզլվիտ» էր անուանում: Բայց երբ հայրը նոցա պատմեց, թէ նա իւր հին բարեկամն է ու ազգականը, և թէ նա այդ այցելութեամբ թափանցել է մինչև իւր սրտի խորքը, — իսկոյն երկուսն էլ միաձայն «Ի՞նչ բաղտաւոր ենք, տէր» աղաղակեցին և գրկախառնուեցին ծերունուն: Եւ այդպէս անպատում ցնծութեամբ գրկած՝ կանգնեցին Չուզլվիտի բաղկաթոռի աջ ու ձախ, երկու

Հրեշտակների պէս, միանգամայն պատրաստ ծերունի Մարտինի ցաւալի կեանքի մնացորդը սիրով ու քնքշութեամբ լիտցնելու:

—Շնորհակալ եմ, շնորհակալ, ասաց ծերունին:—Երջանիկ եմ, որ վերջապէս ըմբռնեցի ճշմարտութիւնը, մասնաւորապէս ուրախ եմ դուստրներիդ բարութեանը վերայ,—ես դոցա չեմ մոռանալ, խօսեց նա ցած, բայց այնքան լսելի ձայնով, որ բոլոր ընտանիքին հիացում պատճառեց: Ես ձեզ վշտայրի, խեղճ Պէկսնիֆ, չափազանց վիրաւորեցի:

—Ե՛հ, սիրելիս, մեծահոգի բարեկամս, քաղցրալիը ազաղակեց ճարտարապետը... մոռացէք այդ բոլորը: Դա լոկ մի սխալմունք էր, ուրիշ ոչինչ:

—Ես բոլորովին վստահ եմ ձեր ազնուութեան վերայ, փոքր ինչ մտածելուց յետ ասաց Չուզլվիտը.—իսկ այժմ խնդրեմ բոլորովին անաչառութեամբ խօսենք այն... անունը չեմ տալիս. արդէն գիտէք, թէ ո՛ւմ մասին է խօսքս:

Մի փոքր լռելուց յետ ծերունին շարունակեց:—Մի նոր աշակերտ էք ընդունել...

Պէկսնիֆը գլխով համաձայնութեան նշան տուեց:

—Նա պէտք է հեռանայ ձեր տնից:

—Որպէս զի ձեզ մօտ գայ, խոնարհութեամբ հարցրեց Պէկսնիֆը:

—Թող իւր համար տեղ գտնի ուր որ կամենայ, պատասխանեց ծերունին:—Նա ձեզ խաբել է:

—Մի՛թէ, տաքացած գոչեց Պէկսնիֆը:—Չեմ կարողանում հաւատալ: Են շատ սիրեցի այդ երիտասարդին և ցաւում եմ, որ անարժան է եղել իմ խնամքին. բայց եթէ չիրաւի նա ինձ խաբել է, սիրելի միտտէր Չուզլվիտ, նորա այդ վարմունքն ամեն բան պարզում է.—սրբազան պարտքս լինի առանց մի վայրկեան ուշացնելու հեռացնել նորան իմ տանից, խիստ, բայց յուզուած ձայնով վերջ դրեց ճարտարապետը:

Ծերունին, որ շարունակ օրիորդներին էր նայում, ասաց.

—Թերևս դուք, սիրելի Պէկսնիֆ, հաշուում էք, որ ժամանակով նա փեսայ կդառնայ ձեզ: Թողէք այդ յոյսը,—նա վաղուց արդէն ընտրել է իւր համար հարսնացու:

—Աստուած իմ, ազաղակեց Պէկսնիֆը գլուխը երկու ձեռքով բռնած և մտահոգ նայելով աղջրկանց.—և առանց ձեր կամքի: Զարհուրելի բան է:

Այն անախորժ տպաւորութիւնը, որ ծերունու հաղորդած լուրը գործեց ճարտարապետի վերայ, անցաւ նաև իւր դուստրներին, որոնք իրանց կողմից կատարեալ զայրոյթ յայտնեցին երիտասարդ Մարտինի դէմ: Դորանով չվերջացաւ ամբողջ ընտանիքը միաբան ու անհամբեր սպասում էր, թէ երբ պէտք է դաւաճան երիտասարդը հեռանար իրանց տնից:

—Շատ ուրախ եմ, որ այդպէս համակրում

էք ինձ, գոհ դէմքով ասաց ծերունին. — Երբ էք մտադիր տուն վերադառնալ:

— Երբ որ ձեր կամքը լինի, սիրելի եղբայր, պատասխանեց Պէկանիֆը: — Կամեն՞ք՝ Հէնց այս երեկոյ:

— Այդ շատ շուտ է, նկատեց ծերուկը. — լաւ չէ, որ այս շաբաթն անցնի, յետոյ գնանք:

— Շատ լաւ է, համաձայնեց Պէկանիֆը:

— Շաբաթ օրը գնանք, հայրիկ, ձայն տուին օրիորդները: Ի՞նչ ունինք ձանձրալի Լօնդօնում:

— Շատ կարելի է աւելի էք ծախսել, շարունակեց ծերունին և հանելով քսակից մի դրամատոմս՝ տուեց ճարտարապետին: Երբ դարձեալ տեսնուինք՝ յիշեցրէք, մնացեալն էլ կվճարեմ: Ի սէր Աստծու, խնդրում եմ, որ այս բոլոր խօսակցութիւնը մեր մէջ մնայ: Այժմ, սիրելիք, ցտեսութիւն:

Այս խօսքերից յետ այնքան գրկախառնուեցան ու համբուրուեցան, որ քիչ էր մնում խեղատէին Չուզլվիտին: Իսկ Պէկանիֆը ձեռքերը դրեց ծերունու գլխին, որպէս թէ նախախնամութեան օրհնութիւնն էր հայցում իւր անչափ սիրելի եղբօր վերայ: Ամենքը ճանապարհ գրին ծեր Մարտինին մինչև փողոց և դեռ երկար, նորա հեռանալուց յետ, մնաս բարեաւ էին ձայնում ետեկից: Յետոյ ամենքը տուն դարձան և օրիորդները մի լաւ նայելով մէկմէկու՝ սիրոյ ծիծաղ բարձրացրին:

— Եթէ գոնէ մի չնչին սլատճառ լինէր ուրախանալու, ազգու կերպով նկատեց հայրը. — չէի դատապարտի ձեզ. բայց հաւատացէք, որ ուրախանալու հիմք չկայ ամենևին:

Այդ օրուանից Պէկանիֆի գործերն ուրիշ կերպարանք ստացան. նեղութիւնն անցել էր: Ծարտարապետը մի վեհանձն աղա դարձաւ և այն՝ շատ հեշտութեամբ, որովհետև բոլոր ծախքերն իւր վերայ էր առել ծեր Մարտինի: Օրիորդներն ընկան մայրաքաղաքի գուարճութեանց ետեկից. մէկ բաւականութեան միւսն էր հետևում, ժամանակն անցնում էր, իսկ գնալու օրը մօտենում: Մի առաւօտ, երբ օրիորդները փնթփնթում էին, թէ ինչո՞ւ այդպէս կարճ միջոց նշանակեցին Լօնդօնից դուրս գնալու, ով-որ դուռը բաղխեց, և դռան շէմքում կատաղի ոտնաձայներով երևաց Բէնը: Երբ ներս մտաւ՝ այնպիսի զգուելի կերպարանք ունէր, որ օրիորդներն ուղղակի յայտնեցին նորան, որ եթէ նա իւր ծամածուութիւնները չի թողնի, անմիջապէս կրկանչեն տանտիկնոջ: Երիտասարդը կարճես բոլորովին կոտրուեց այս սպառնալիքից, և ձևացրեց թէ աչքերից արտասուքն է մաքրում, միևնոյն ժամանակ գոգնոցը սաստիկ ոլորեց, կամենալով ցոյց տալ, թէ մինչև որ աստիճան թրջուել էր արտասուքի առատ հոսանքից: Վերջապէս նա հանդիսապէս բաց արեց երկու կիսադռները, որտեղից ներս մտաւ Ջօնս Չուզլվիտը, որ ցանկացել էր այցելել իւր հօրեղբօր աղջիկներին:

Ողջունուելուց յետ միստէր Ջօնսը իւր համակրելի բնաւորութեան նոր ապացոյցեր տուեց, նա կատարեալ արհամարհանքով խօսեց իւր հօր մասին: Այնուհետև հաղորդեց, որ եկել է քօլրիկներին զբօսանքի հրաւիրելու:

— Պէտք է, վերջապէս, մայրաքաղաքի նշանաւոր տեղերը տեսնէք, աւելացրեց նա:— Յետոյ կերթանք մեզ մօտ ճաշելու: Յոյս ունիմ, որ լաւ ժամանակ կանցկացնենք: Ես ձեր հօրը պատահեցի. նա խոստացաւ երեկոյին գալ ձեզ բերելու: Այս էլ ձեզ գրաւոր ապացոյց:

— Սիրուն բան է, չէ՞, աւելացրեց Ջօնսը, տալով նոցա իրանց հօր այցետոմսը, որի վերայ նա գրել էր. «գնացէք ձեր եղբայրակցի հետ զբօսնելու, և թող ձեր մէջ աճէ, սիրելի զաւակներս, բարեկամական սէրը»:

— Ի՞նչպէս վստահացաք մտածել անգամ, որ մենք ձեզ նման խրտուելակի հետ զբօսնելու կը գանք, — ծիծաղելով աղաղակեց Գրացիան:— Ուզում ես ամբողջ Լօնդօնում ծաղր ու ծանակ լինի՞նք: Դո՛ւ ասա, Սառա՛, դիմեց նա քրոջ. — աշխարհիս երեսին կա՛յ մի մարդ, որ աւելի անդուրեկան լինի, քան այս պարօնը:

Ձեմ կարծում թէ այդպէս լինէք մտածելիս, նկատեց Ջօնսը:

— Ի՞նչպէս ձեր կամքն է. բայց ես պնդում եմ, որ դուք հրէշ էք, վերջ տուեց իւր խօսքին Գրացիան և ինքնագոհ ու բարձրաձայն ծիծաղ արձակեց:

Ի՞նչ սրամիտ աղջիկ էք, ասաց Ջօնսը. — սակայն ժամանակ չկորցնենք. — գնանք:

Երբ փողոց դուրս եկան՝ միստէր Ջօնսը օրինաւոր տղամարդուն վայել ձևով թև թևի տուեց օրիորդներին: Այս սիրային վարմունքը անյայտ չը մնաց շէկ Բէնի աչքից, որ վերնայարկի երդկից դիտում էր Ջօնսին: Հաստագլուխ տղայի բարձրաձայն քրքիջն ուղեկից էր այդ խմբին, մինչև որ վերջինս ծածկուեց հարևան փողոցում:

Սե՛ծ փորձանք էր երկու քօլրերի համար այդ զբօսանքը. իրանց ուղեցոյցի թախանձանքով այնքան կամուրջներ, արձաններ և այլ հազուադէպ բաներ տեսան, որ վերջ ի վերջոյ յոգնեցան, և երբ վերջապէս իրանց ուղեկցի բնակարանին հասան, էլ ոտներն իրանցը չէր:

«Էնտօնի Չուզլվիտ և Որդի: Հին վաճառատունը, որ ձեռագործի ապրանքներով էր առուտուր անում, զետեղուած էր մի խուլ նեղ փողոցի միջին ու կեղտոտ հին տան մէջ: Վերից վայր ամեն տեսակ ապականութեամբ ողողուած այս տան ներքինը բոլորովին համապատասխան էր արտաքինին: Մինչև անգամ նորա կացած սենեկում բազմաթիւ սնդուկներ ու արկղներ էին կիտած և թափուած էին անհամար փոշոտած անպէտք թղթեր ու խճճուած թուկեր: Բացի այս ամենից փոքր ՚ի շատէ լաւ սենեկում ճանապարհի հէնց մէջ տեղը դրած էր մի անտաշ գրասեղան և նորա վերայ առևտրական հաստափոր գրքեր: Սենեկում մի փոքր

Հացի սեղան կար, սիւռոցով ծածկած, իսկ վառարանի մօտ աթոռի վերայ նստած էր ինքը Կնտօնի Չուզլվիտը: Վաճառատան Հինաուուրց տնօրէնը ոտի կանգնելով յարգական ողջոյն նուիրեց որդուն և պատուական օրիորդներին:

— Ճաշը պատրաստ է, ծերո՞ւկ, վստահ Հարցրեց Ջօնսը:

— Պէտք է որ պատրաստ լինի, պատասխանեց Հայրը:

Մի աղտոտ պառաւ սուսուփուս ներս մտաւ և սեղանի վերայ մի սկուտղով տաք դառան միս դրեց գետնախնձորի Հետ խաշած և անխօս դուրս գնաց:

— Համեցէք խնդրեմ, ասաց Ջօնսը. բայց Հէնց որ Հիւրերը սեղան նստան՝ բարկայած աղաղակեց.

— Չօֆֆին ուր է, ծեր չիմարը: Ե՛յ, դուք, Հին շերեփ. ո՞ւր էք թախ կացել, անունդ մոռացել ես կարելի է:

Թուի թէ այսպիսի նշանաւոր եղանակով կանչած անձնաւորութիւնն արդարեւ իւր անունը չգիտէր, վասն զի այն ժամանակ միայն մօտ եկաւ, երբ Հարեան սենեկից ձեռքը բռնած դուրս բերեց նորան ինքն Կնտօնի Չուզլվիտը: Նա մի նիհար ծեր էր փոքրիկ կնճռոտ գէմքով և աչքերը ճպուտ: Հագած էր մի շատ Հնաձև Հանդերձ, և կարելի էր կարծել, որ չիսուն տարի գետնափորում ապրելուց լետ՝ նոր էր դուրս եկել:

Ծերուկը դանդաղ քայլերով մօտեցաւ սեղա-

նին և ահուգողով նստեց: Նա անտարբեր աչքերով նայում էր այս և այն կողմ, նորա կերպարանքը ոչ մի արտայայտութիւն չունէր:

Մեր գործակատարն է, ծեր Չօֆֆին Ջօնսը ծանօթացրեց օրիորդների Հետ:

— Խուլ Հօ չէ, Հարցրեց օրիորդներից մէկը:

— Կարծեմ չէ: Հայրիկ, ծերուկը խո՞ւլ է թէ ոչ:

— Ինքը երբէք ոչինչ չէ ասել ինձ դորա մասին, ասաց վաճառատան պետը:

— Կամ գուցէ կո՞յր է, դարձեալ Հարցրին օրիորդները:

— Չեմ կարծում, պատասխանեց Ջօնսը:

— Ի՞նչ բան է դա ուրեմն:

— Իսկոյն կասեմ, շշնչաց Ջօնսն օրիորդներին. — առաջինը խիստ ծեր է, որ ինձ ամենեւին դուր չէ գալիս. երկրորդ՝ ոչ ոքին չէ լսում, բացի նորանից, աւելացրեց Ջօնսը՝ պատառաքաղով հօր վերայ մատնացոյց անելով:

— Տարօրինակ բան է, նկատեցին օրիորդները:

— Բացի դորանից մարդիութեան բոլոր շնորհքը կորցրել է, բոլոր կեանքը անցնելով Հաշուէզրքերում: Սակայն, վատ գործակատար չէ, իսկ գլխաւորը՝ արժան է, կատակով աւելացրեց երիտասարդ Չուզլվիտը:

— Ինչո՞ւ Հաց չէ ուտում, Հարցրեց Գրացիան:

— Որովհետեւ դեռ Հրաման չէ ստացել: Ե՛յ, Չօֆֆի, պատրաստ էք Հաց ուտելու:

Ծերուկը նստած էր անշարժ և անխօս:

— Ուզո՞ւմ ես ճաշել, Զօֆֆի, հարցրեց ծերունի Էնտօնին:

— Ի՞նչպէս չէ, քնչպէս չէ, փոքր ինչ աշխոյժ ստանալով պատասխանեց ծերուկը. — միանգամայն պատրաստ եմ, տէր: Թոյլ տուէք ծեր Զօֆֆինին որ ուտի:

— Խիստ զուարճալի պատկեր է, չէ՞, ժպիտը բերնին զուարճանում էր Ջօնսն, օրիորդներին նայելով: — Լաւ հին թասակ է:

Ջարմանք է, որ որդու խայտառակ ծաղրը անպաշտպան խղճուկին՝ մի փոքր զուարճութիւն պարգևեց նաև իրան Էնտօնին, թէպէտ արգարութիւնը պահանջում է նկատել, որ ծերունի Զուզլվիտին անպիտան գործակատարի ցաւալի դրութիւնն այնքան չէր զբաղեցնում, որքան որդու կեղծ սրամտութիւնը: Պետք զուարճութեամբ ձեռքերը շփեց և աչքի տակ ծիծաղելով շնչաց ինքն իրենից գոհ. «Ես եմ դորա ուսուցիչը, ես եմ դաստիարակել: Ի՞նչ խորամիտ գլուխ է»:

Ծեր գործակատարն այնքան երկար մլուլ աբաւ, որ Ջօնսին համբերութիւնից հանեց, սա խնդրեց հօրը ծերունուն նշանացի հասկացնել, որ վերջացնի ու սեղանից վերկենայ գնաց:

— Շատ ուղիղ էք հրամայում, տեղից վերկենալով նկատեց ծերուկը, շատ ուղիւ: Իսկ ձեր որդին է, միտէր Զուզլվիտ, և շատ սրամիտ. բայց Աստուած բարի տայ դորան, Աստուած բարի տայ:

Ասաց ու հեռացաւ Զօֆֆին մի մթին անկիւն և նստեց աթոռի վերայ: Իսկ այն տեղն էր, ուր անպատասխան ծերուկը վաղուց արդէն տարիների ընթացքում սովոր էր երեկոները նստել, առանց վրդովելու ում և իցէ խաղաղութիւնը և խառնուելու նոցա խօսակցութեան մէջ: Երբ թէյ տուին՝ նա հնազանդ ու խոնարհ սկսեց պաքսիմատը թրջել բաժակի մէջ:

Ճաշից յետոյ հիւրերն ու տնեցիք թէյ խմեցին: Ջօնսը ցանկալով զուարճացնել օրիորդներին, իւղոտած խաղաթղթով սկսեց զանազան աչքակապութիւններ անել: Երբեմն երբեմն նա երկու քոյրերի հետ գրագ էր գալիս, կյաջողէր իրան այս կամ այն ձեռնածութիւնը թէ ոչ, իսկ օրիորդների տարած փողն առանց քաշուելու դնում էր գրպանը:

Մութը կոխել էր արդէն. իսկ միտէր Պէկսնիֆը դեռ չկար, ուստի օրիորդները, որոնք շատուց ձանձրացել էին այս ուրախ տնից, ցանկացան տուն գնալ: Ջօնսն աղաչեց, որ գոնէ մի քանի րոպէ ևս պատուեն՝ իրանց ցանկալի ներկայութեամբ, սակայն քոյրերը վճռապէս մերժեցին, պատճառելով ուշ լինելը և ճանապարհի հեռաւորութիւնը: Ջօնսը յայտնեց իւր սիրալիր յօժարութիւնը օրիորդներին ճանապարհ դնելու, յայտնելով միանգամայն, որ անշուշտ բարեօք կհամարեն ռաքով գնալ, քան երերուող կառքով, և որ ինքը Ջօնսն ևս համաձայն է այդ բանին: Օրիորդները գլխարկները ծածկեցին և շալերն ուսերին գցեցին:

— Բարի գիշեր, օրիորդներ, բարի գիշեր, լը-  
սուեցաւ ծեր Էնտօնիի ձայնը. — Հէ, Հէ, Հէ: Ող-  
ջունեցէք իմ կողմից ձեր պատուական հայրիկին:

Ջօնսը դարձեալ թեւանցուկ և դարձեալ կատակ-  
ներով գիտամաբ անցկացրեց նոցա Լօնդօնի ամենա-  
խուլ փողոցների անեզը լաբիւրինթոսներով և օրի-  
որդներին բնակարան հասցրեց բոլորովին նուազած:

Հասաւ վերջապէս ճարտարապետի և իւր աղ-  
ջրկանց մեկնելու օրը: Առաւօտը վաղ նախաճաշի  
նստան: Դուռը բացուեց և ներս մտաւ ծերունի  
Էնտօնին որդու հետ միասին:

— Ահա, մենք էլ եկանք, ասաց նա ու նըս-  
տեց Պէկսնիֆի կողքին, իսկ Ջօնսը ոտները գետնին  
քսելով խոնարհեց օրիորդների առաջ: — Այո, այո,  
պնդում էր ծերունին — եկանք հրաժեշտ տալու  
ձեզ, բարի ճանապարհ մաղթելու:

Խօսքը փոխուեց եղանակի ու այլ առարկա-  
ների մասին:

— Երևակայեցէք, շոնչաց Էնտօնին, ցոյց տալով  
իւր որդուն. որդիս այնպէս շփոթուած է, որ ճա-  
նաչել չի կարելի:

— Իրան, լուզուած է երևում, համաձայնեց  
Պէկսնիֆը:

— Ես ու դու ազգական ենք, շարունակեց Էն-  
տօնին. բայց կարող է պատահել որ աւելի սերտ  
կապուենք ձեզ հետ, սիրելի Պէկսնիֆ: Դուք ու-  
նեւոր մարդ էք, ես էլ լաւ կամ ինձ համար, այդ-  
պիսով մեր ջահիլները տաք բուն կշիներն իրանց

Համար... այս գործը երկուսիս էլ շահաւետ է:

Ճարտարապետը քաղցր ժպիտ արձակեց և  
ուզում էր պատասխանել. բայց խօսքը բերանում  
մնաց, որովհետև միտորիս Տօջէրսը մտաւ ու յայտ-  
նեց, թէ կայարանը գնալու ժամանակ է:

Եւ ճշմարիտ, երբ կայարան գնացին, կառքը  
պատրաստ գտան: Սրտաշարժ գրկախառնութիւն  
տեղի ունեցաւ նոցա ու տիկին Տօջէրսի մէջ, ար-  
տասուքը երկուստեք աղբիւրի պէս հոսում էր. ար-  
տասուեցան նաև «է. Չուզվիտ և որդի» առև-  
տրական տան ներկայացուցիչները: Միս Գրացիան  
մի անգամ էլ դուրս նայեց կառքի լուսամտից, միս-  
տէր Ջօնսին յայտնեց, թէ նա խրտուիլակ է և թէ  
նորա նման հրէշ դեռ աշխարհս չէ ծնել: Այս կա-  
տակը մեծ հիացում պատճառեց Ջօնսին:

Վերջապէս կառքը սահեց: Օրիորդները տիրե-  
ցան, իսկ Պէկսնիֆը իւր բոլոր առաքելնի խորհր-  
դածութիւնները կենտրոնացրել էր նորա մէջ, թէ  
ինչպէս շուտով ճանապարհ դնէ երիտասարդ Սար-  
տինին, այս անարժան խաբեբային և հրէշային  
սպերախտ դաւաճանին, որ սրբապղծութեամբ մուտ  
է գործել իւր խաղաղ ու բարեպաշտ տունը:

**Ե.**

Պինչն ու Սարտինն առանց կասկածելու թէ  
ինչ փոթորիկ էր գալու նոցա գլխին, անց էին կաց-  
նում իրանց օրերը հանգիստ և օրէցօր աւելի ու

աւելի մտերմանում: Ուսումնարանի յատկագիծը, որ պատրաստում էր Մարտինը, սորա գեղեցիկ ընդունակութեանց շնորհիւ, զգալի կերպով առաջ էր գնում, որի վերայ ոչ սակաւ ուրախանում էր և թովմասը, և առհասարակ ամեն ինչ յաջող էր ընթանում: Պինչը նամակ էր ստացել Ջօն Վէստլօկից, ուր սա յայտնում էր, թէ արբունքին հասած լինելով ստանում է ժառանգութեան կառավարութեան ղեկը, և եկել է Սէլիսբիւրի իւր վաղեմի բարեկամ թովմասին տեսնելու:

— Ես ու նա վաղուց բարեկամ ենք, ասաց Պինչը, Մարտինին յայտնելով նորա նամակի մանրամասնութիւնները: Ջօնը միշտ ասում էր.— տես, թովմաս, հէնց որ ժառանգութիւնը ստանամ, իսկոյն կգամ Սէլիսբիւրի և ճաշ կշինեմ քեզ համար: Սյդպէս էլ լինում է. նոյն օրը, երբ Պէկսնիֆն ուղևորուեցաւ, Ջօնն ինձ գրել էր, որ իւր ժառանգութեան գործերը վերջացած են և խնդրում էր գրեմ իրան, թէ երբ կարող եմ Սէլիսբիւրի գնալ. պատասխանեցի թէ՛ այս շաբաթ, մի և նոյն ժամանակ գրեցի, որ մեզ մօտ մի նոր աշակերտ էլ կայ, ինձ բարեկամ՝ մի պատուական տղայ. նա գըրում է, վաղը կսպասէ, ողջունում է ձեզ և յոյս է յայտնում, որ պատիւ պիտի ունենայ ձեզ հետ միասին ճաշելու Սէլիսբիւրի մի լաւ հիւրանոցում:

— Ետո շնորհակալ եմ, ասաց Մարտինը բոլորովին անտարբեր:

Թովմասը կուգէր Մարտինին աւելի զարմացած

և ուրախացած տեսնել այսպիսի դիպուածի վերայ, բայց նա հոգեկան մի առանձին փոփոխութիւն ցոյց չտուեց, այլ շուացնելով շարունակեց դպրոցի մակարդակը գծել, որպէս թէ ոչինչ չէր պատահած:

Միւս առաւօտ ընկերները Սէլիսբիւրի ուղևորուեցան ոտով, որովհետև թովմասը չուզեց Պէկսնիֆի ձին հեծնել, որ յատկացրած էր միայն նշանաւոր ճարտարապետին և այն անձանց, որոնք նորա առանձին համակրութիւնն էին վայելում: Յուրտ քամին փչում էր իսկ վերջը սկսեց ձիւնել:

Երբ ուղևորները դողդոջուն ու յոգնած մարմնով տաք ու լոյս սենեակը մտան, ուր նոցա սպասում էր պատրաստակամ տանտէրը, ամեն ինչ պատրաստ գտան. սեղանը բաց և հիւրերին էր մընում, և ի՛նչ ասես չկար: Սառն հնդկահաւեր, հաւեր, ահագին ըոստբիֆ, մեծմեծ ձկներ, քաղցր կարկանդակներ և ամենից այնքան, որ երեսուն լաւ քաղցած մարդիկ հեշտ կ'կշտանային: Տանտէրը սիրով ընդունեց հիւրերին և գրկախառնուեց հին բարեկամին:

— Սո՛ է միստէր Չուզլիտը, ասաց Ջօնն ու Մարտինի ձեռքը սեղմեց. շատ ուրախ եմ:

Ճաշի նստան: Սկսուեցաւ բարեկամական ազատ խօսք ու զրոյց: Թովմասն անդադար խօսում էր և ուրախ ծիծաղում, իսկ խօսակիցները նորան ի սրտէ պաշտպանում էին, կոնծելով պատուական խէրէսն ու բաժակները մէկմէկու զարկելով: Ճաշից յետ թովմասը մտաբերեց, որ անշուշտ հարկաւոր

էր տեսնուել իւր նուագող—բարեկամի հետ: Ուստի ներողութիւն խնդրելով խոստացաւ շուտ լետ դառնալ:

Ջօն Վէստլօկն ու Մարտինը մենակ մնացին: Վէստլօկը բացակայ բարեկամի կենացը խմելուց լետ ընտիր գովասանքներ շուտից իւր բարեսիրտ բարեկամ Թովմաս Պինչին մասին:

—Անկարելի է Պինչին չը սիրել, հաստատեց Մարտինը.—նա մի շատ բարի և կամակատար մարդ է:

—Այո՛, չափազանց կամակատար, նկատեց Վէստլօկը.—և այդ է կարծէք նորա միակ պակասութիւնը:

—Ճշմարիտ է. անցեալ շաբաթ միտտէր Տիգգ անունով մէկը վերջին կողէկն առաւ ձեռքից—կէսգինէյ, որ 'ի հարկէ, երբէք լետ չէ ստանալու:

—Խեղճ մարդ, ասաց Ջօնը, ուշադրութեամբ լսելով Մարտինի խօսքերը:—Եւ ո՞վ չէ խարել այս պարզամիտ բարի մարդուն:

Լուութիւն տիրեց, որ սակայն շուտով խզուեցաւ Մարտինի հետեւեալ հարցով.

—Ի դէպ. միտտէր Վէստլօկ, դուք ինչ կարծիք ունիք Պէկանիֆի մասին: Անցկացած բան է և դուք կարող էք բոլորովին վստահ ձեր կարծիքը յայտնել նորա վարմունքի մասին դէպի ձեզ:

—Ուղիղն ասեմ, նա այն խաբեբան է, որ դեռ աշխարհս չէ ծնել:

—Սակայն դա չափազանցութիւն է, նկատեց Մարտինը:

—Ոչ թէ չափազանցութիւն, այլ դեռ աւելին արժանի է: Իւր երեսին էլ կասեմ: Հէնց նորա վարմունքը Պինչի հետ բաւական է: Աստուած իմ, որքան ստորութիւն ու կեղծաւորութիւն կայ այդ մարդու մէջ: Ես զգուում եմ, երբ միտքս է գալիս, թէ ինչ բաների ականատես եմ եղել այդ Պէկանիֆի մօտ: Սակայն թողնենք, խնդրում եմ, էլի մեր խէրէսը:

—Շնորհակալ եմ, ասաց Մարտինը.—սակայն, կարծում եմ, որ ես նորա հետ կվարուեմ. նա շատ է գնահատում իմ ընդունակութիւնները, մինչև անգամ հաճոյանում է ինձ:—Ձեր կենացը:

—Եւ ձեր կենացը լինի, Աստուած տայ, որ ձեզ դուր գայ Պէկանիֆի նոր աշակերտը:

—Ի՞նչ աշակերտ:

—Միթէ չէք իմացել, որ նա յայտարարել էր լրագիրներում, թէ աշակերտ է ընդունում: Ի՞նչպէս չէ. երէկ էլ տպուած կար: Ահա՛ Թովմասն էլ եկաւ: Կտրենք այս խօսակցութիւնը, թէ չէ խեղճիք թից կհանենք այս երեկոյի քեֆը:

Ուրախութեան Ժպիտըր երեսին ներս մտաւ Թովմասն և իւր տեղը նստեց բազմոցի յարմար անկիւնում, ձեռքերը շփելով, որ գոհունակութեան նշան էր: Նա այնքան երջանիկ էր զգուում իրան, ինչպէս կարող էր երջանիկ լինել երկրիս վերայ միմիայն Թովմաս Պինչը:

Շատ երկար տևեց նոցա ցնծալից խօսակցութիւնը, մինչ մոմերը գրեթէ այրուեցան պրծան և

բարեկամները յաջողութիւն մաղթելով միմեանց՝  
գնացին Հանգստանալու իրանց Համար որոշած սե-  
նեակներում:

Թովմասը փողպատը ձեռքին նստած էր մահ-  
ճակալի վերայ և մէկ մէկ թւում էր յիշողութեան  
մէջ իւր վաղեմի բարեկամի բարի բարի յատկու-  
թիւնները, որ սակայն ընդհատուեցաւ դռան բաղ-  
խումով և Ջօնի ձայնից:

— Քնած Հօ չէս, Թովմաս:

— Դեռ չէ, պատասխանեց Թովմասն ու դու-  
ռը բաց արաւ.— ներս արի:

— Քեզ չէի խանգարի, բայց քիչ էր մնում  
մոռանալի ինձ տուած մի լանձնարարութիւն: Հօ  
չէս ճանաչում Տիգգ անունով մարդուն:

— Միտէր Տիգգին, ինչպէս չէ. նա ինձանից  
փող պարտք առաւ:

— Հէնց այդ եմ հարցնում, շարունակեց Ջօ-  
նը.— նա խնդրեց ինձ իր կողմից ձեզ ողջունել և  
շնորհակալութեամբ վերագարձնում է իւր պարտ-  
քը, — ահա փողը:

Միտէր Պինչին չափազանց հաճույ թուաց իւր  
պարտապանի կէտ առ կէտ ճշտութիւնը:

— Սակայն նա միշտ այդպէս պարտաճանաչ  
չէ, ասաց Ջօնը. ես քեզ խորհուրդ կտայի Թով-  
մաս, այդ մարդուց հեռու փախչել և այսուհետև  
պարտք չտաս, որովհետև նա շատ հազիւ է վճա-  
րում իւր պարտքերը: Առհասարակ նա այնպիսի  
անձնաւորութիւն է, որի հետ չարժէ կապուել:

Մթթէ, աղաղակեց Պինչը, փողն ընդունե-  
լով.— սակայն յոյս ունենամ, որ դու, Ջօն, վատ  
ընկերութեան մէջ չես:

— Ի հարկէ, պատասխանեց ժպտալով Ջօնը:

— Հապա ինչպէս դու ծանօթ ես նորան, ե-  
թէ վատ մարդ է:

— Անհոգ կացիր, Թովմաս. ազնիւ խօսք եմ  
տալիս քեզ, որ ես նորան ամենևին մօտ չեմ,  
գիպուածով միայն պատահեցանք:

— Հէնց այդ է, է, նկատեց Թովմասը. լաւ  
էր փողս կորչէր, քան թէ դու վատ մարդկանց  
հետ ծանօթ լինէիր:

Մի անգամ ևս բարի գիշեր ցանկացան և  
հրաժեշտ տուին իրար՝ Ջօնը բոլորովին գոհ յա-  
ջողած հնարագիտութեան վերայ, իսկ Պինչը վերջ-  
նապէս բաւարարուած հին ընկերի բացատրութիւ-  
նից: Սակայն, անկողնի մէջ շուռ ու մուռ դալով,  
միամիտս ինքն իրան փնթփնթում էր:

— Այնուամենայնիւ լաւ կլինէր, եթէ գիպուա-  
ծով էլ չպատահէր Տիգգին:

Առաւօտը վաղ նախաճաշից լետ հիւրերը տուն  
դարձան: Ջօն Վէստլօկը, որ ստիպուած էր մինչև  
երեկոյ սպասել Լօնդօնի փոստակառքին, ճանա-  
պարհ դրեց նոցա մինչև քաղաքից դուրս, ուր  
հրաժեշտ տալով լետ դարձաւ, բայց երբեմն ակ-  
նապիշ լետ էր նայում դէպի արագ հեռացող բա-  
րեկամները: Նա նկատեց, որ Մարտինն իւր հաստ  
շորը հանեց և ձգեց թւի վերայ, իսկ քիչ լետոյ,

այդ շորը, մի թեթև ընդդիմութիւնից յետ տիրոջ կողմից, վերցրեց Պինչը, ծածկեց իւր կապալի վրայից և այսպիսով կրկնապատկեց իւր բեռը: Այս չնչին հանգամանքը սաստիկ հետաքրքրեց նախկին աշակերտին. մի անգամ էլ կանգ առաւ և երկար ժամանակ դիտեց ընկերներին, մինչև որ ծածկուեցան նորա աչքից: Յետոյ, անշուշտ այդ անհաճոյ տպաւորութեան ազդեցութեան տակ, գլուխը շարժեց և տուն դարձաւ:

Ճանապարհորդները շտապեցրին իրանց քայլերը և բարեյաջող հասան տուն, ուր ստացան Պէկանիֆի նամակը, որ գրում էր Թովմասին, թէ այդ երեկոյ տուն պէտք է դառնայ:

Երբ օրն ուրախ է անցնում՝ յաճախ վիշտ է հետևում նորան: Նոյնը պատահեց և փառաւոր խնճուքից վերադարձող ընկերներին: Մարտինն ամբողջ օրը մտատանջում էր և տրտնջում. նա Ջօն Վէստլոկի վիճակը համեմատում էր իրենի հետ, և ցաւով նկատում, որ բոլոր պակասութիւնը իւր կողմն է: Թովմասն էլ տխուր էր: Օրը ծանր էր. ընթանում: Արդէն լաւ մութն էր, երբ հեռուից փոստակառքի փողը հնչեց: Թովմասն ու ընկերն առաջ դնացին վարպետին գիմաւորելու: Չարմանալի է, որ այս անգամ ճարտարապետն առանձին քաղցրութեամբ էր վարում Պինչի հետ, այն ինչ Մարտինի վրէժն էլ չէր նայում: Նորա այսպիսի փոփոխութիւնը Թովմասին անգամ զարմացրեց, որը մանաւանդ յուսահատուեց, երբ Պէկ-

նիֆը, հիւրասենեկում միայնակ նստած թէյի առջև, փոխանակ նորատի ազգակցով հետաքրքրուելու, ուղղակի և շատ քաղաքավարի կերպով իրան ուղղեց իւր խօսքերը.

— Խնդրեմ թէյ խմեցէք, միտէր Պինչ. տաքացէք, բաւական մրսել էք մեզ սպասելիս: Ի՛նչպէս անցան գործերը մեր բացակայութեան ժամանակ:

— Շատ գոհ կը մնաք դպրոցի յատակազօով, գրեթէ պատրաստ է:

— Այդպիսի չնչին բաներ մի լիշէք խնդրեմ, կատակով պատասխանեց Պէկանիֆն իւր օգնականին. — Ես փոքր ինչ յոգնած եմ: Իսկ դ՛ուք, Թովմաս, ի՛նչով էիք պարապած:

Պինչը դէմ ընկաւ: Այն ինչ Պէկանիֆը, որ անտարբեր ձևացած խառնում էր բաժակի շաքարը, շատ լաւ զգում էր, թէ ինչ նախանձոտ հայեացքով Մարտինն իւր աչքերը յառել էր դէպի նա: Ճնշող լուութիւն հետևեց: Ճարտարապետը եռանդով թէյ էլ խսլտում:

— Միտէր Պէկանիֆ, ասաց Մարտինը բոլորովին հանդարտ. եթէ արդէն բաւական հանգստացած էք ու ճանապարհից ջարդուածներն անցել են, թոյլ տուէք խնդրել ձեզ, որ բացատրէք, թէ ի՛նչ է նշանակում ձեր օտարոտի վարմունքը դէպի ինձ:

— Ե՛լ ինչպէս է ձեր առողջութիւնը, սիրելի Թովմաս, քնքշութեամբ հարցրեց ճարտարապետը Պին-

չին, դարձեալ ուշադրութիւն չընծայելով Մարտինին:

Թովմասն արձան կտրուեց, կորցնելով պատասխանելու ամբողջ ընդունակութիւնը: Սակայն Մարտինն օգնութեան հասաւ նորան, նորից յարձակուելով ճարտարապետի վերայ:

— Միտէր Պէկսնիֆ, ասաց նա: — Դուք կարծեմ լսեցիք իմ հարցը: Ծնորհ արէք պատասխանել:

— Ձեզ հետ, պարոն, յետոյ կխոսեմ, մի ամբարտաւան հայեացք ձգելով աշակերտի վերայ, կուպտութեամբ պատասխանեց Պէկսնիֆը:

— Սյդ պատասխանից գոհ չեմ ամենեւին, շարունակեց Մարտինը. — չէք կամենալ այժմէն իսկ պատասխանել: Հասկացո՞ք ասածս: Հէնց այժմ:

— Դուք սպառնում էք ինձ, հա, գայրացաւ ճարտարապետը: Ծատ գեղեցիկ. ես ձեզ ամեն ինչ կրպարգեմ: Դուք իմ հաւատարմութեանը դաւաճանեցիք, դուք սլքուեցաք իմ տանս...

— Այժմ հասկանում եմ ձեզ, արհամարհանքով ժպիտ արձակեց Մարտինը. — էլ ինչ ունիք ասելու: Ծարունակեցէք:

— Էլի, մինչև սրտի խորքը յուզուած աղաղակեց Պէկսնիֆը: Յանկանում էք, որ ամեն բան ասեմ ձեզ մի երրորդ անձի ներկայութեամբ: Համեցէք. դուք անպատուել էք և ստոր կերպով խաբել մի բարի, յարգելի և ազնիւ ծերունու: Ձեր ներկայութեամբ պղծեցիք իմ խղճուկ համեստ տունը: Յաւոււմ եմ ձեզ վերայ, պարոն և ՚ի սրտէ

կարեկցում: Դուքս այստեղից, ո՞վ երիտասարդ—ես օտար եմ ձեզ, և բ՛լոր ձեզ ճանաչողների պէս յայտարարում եմ, որ մեր մէջ ամեն հաշիւ վերջացած է:

Թէ իսկպպէս ինչ նպատակով Մարտինն յանկարծ առաջ վազեց այդ վայրկենին, — դժուար է գոշակել. բաւական է ասել, որ Պինչը երկու ձեռքով բռնեց նորան, իսկ Պէկսնիֆն այնպէս արագ յետ թռաւ, որ ոտը սլլուեց, գլորուեց աթոռի վերայից և վայր ընկաւ յատակի վերայ նստած դրութեամբ, առանց ջանք գործ դնելու որ վերկենայ՝ դէմքը դարձրեց դէպի անկիւնը ամենից յուսալի պատուար այդ վայրը համարելով թշնամու յարձակմունքի դէմ:

— Խնդրեմ թողէք, Պինչ, աղաղակեց Մարտինը՝ մէկ կողմ հրելով Թովմասին: Մի բռնէք: Մի լաւ ապտակ բան չի պակսեցնի այդ անպիտանին: Նայեցէք խնդրեմ այդ կեղտոտ արարածին:

Թովմասն ակամայ նայեց իւր հովանաւորին, որ դեռ անշարժ նստած էր յատակի վերայ և կարեկցեց նորան:

— Յիշեցէք իմ խօսքերը, չարացած շարունակեց Մարտինը. — կգայ ժամանակ, Թովմաս, և ինքներդ կվորձէք, թէ ինչ անզգամին էք այդպէս մեծ յարգանք մատուցել:

Ասաց ու գլխարկը ծածկեց երիտասարդ Չուզլվիտը և դուրս փախաւ: Նա այնպէս էր վազում որ արդէն մեծ փողոցին մօտ էր, երբ հեռուից լը-

սեց Պինչի ձայնը, որ բոլոր ուժով զոռոււմ էր ընկերոջ ետեւից:

— Ի՞նչ կայ, դառնութեամբ հարցրեց նա, երբ Պինչը հասաւ նորան:

— Աստուած իմ, ի՞նչ էք անում, դռնէց նա: Գո՛ւրս էք գնում:

— Այո՛, դուրս եմ գնում, ընդհատեց Մարտինը. և հեռու տեղ եմ գնում:

— Վերջապէս այժմ հօ չի կարելի գնալ. ո՛ր կարող էք գնալ այս գարհուրելի եղանակին, առանց հագուստի ու գրամի, այն էլ ոտով:

— Միւննոյն է— կերթամ, լօնքերը կիտած վերայ բերեց Մարտինը:

— Ո՛ւր վերջապէս, հարցրեց Թովմասը համարեան արտասուելով: Ասացէք, խնդրում եմ, դէպի ո՛ւր:

— Ինքս էլ չգիտեմ, — սակայն գուցէ Ամերիկա գնամ:

— Ի՞նչ էք ասում, Աստուած մի սրասցէ, ազաղակեց Պինչը: Ի՞նչ Ամերիկա: Մի գնաք խնդրեմ, լսեցէք բարեկամիդ: Աղաչում եմ, ուրիշ բան մը տածեցէք: Ամերիկան թողէք:

— Հաստատ միտքս գրել եմ որ գնամ: Մնաք բարեաւ, Պինչ. ամեն բարիք ցանկանում եմ ձեզ:

— Վեր առէք այս, և Թովմասն զգացուած մի գիրք տուեց ընկերոջ. — կարգացէք այն երեսը, որ ծալած է: Յաջողութիւն եմ ցանկանում ձեզ:

Տէրը լինի ձեզ պահպան: Բարեսիրտ միամիտս պինդ սղմեց ընկերոջ ձեռ-

քը, աշխատելով անվրդով երևալ: Վերագարձին նա յաճախ թաշկինակը հանում էր գրպանից և մօտեցնում աչքերին:

Ապաբաղտ Մարտինի հոգու տխուր տրամադրութիւնը բոլորովին համապատասխան էր անտանելի եղանակին: Պինչի գիրքը կռան տակ, շորերն անգամ չկոճկած, չնայելով յորդ անձրևին, Մարտինը բարկացած առաջ էր գնում, մինչև որ հասաւ սահմանացոյց սիւնին: Քայլերի արագութիւնը նա չփոխեց: Սակայն նորա լուզմունքը քիչ քիչ պակասեց, արդէն կարողանում էր հանդարտ մտածել և ապագան պատկերացաւ նորան ամենաանյաջող դոյներով: Նա իրան տեսնում էր կեանքի յորձանքի մէջ առանց փողի և բարեկամի: Այս տխուր մտածմունքների մէջ չիճեց Պինչի տուած գիրքը: Կազմին նայեց և տեսաւ որ դա «Սալամանքի ուսանողի» մի հին կեղտոտ հատոր էր Փրանսերէն լեզուով: Նա անիծեց խեղճ Պինչի անմտութիւնը և ուզեցաւ գիրքը դէն շարտել, բայց չիճելով ընկերոջ խնդիրը, նայեց ծալած թերթին ու նկատեց, որ նորա վերայ քորոցով ամրացած էր թղթում շտապով փաթրթած մի ոսկէ կէսգինէյ— աննշան գումար, որ սակայն բարեսիրտ Թովմասի ամբողջ կարողութիւնն էր կազմում: Թղթի ներսի կողմից Թովմասը գրել էր մատիտով, սա ինձ պէտք չէ, եթէ պահէի անգամ չգիտեմ ի՞նչ բանի կարող էր ծառայել:

Թովմասի մեծահոգի վարմունքը սիրտ տուեց Մարտինին. նա մտաբերեց, որ ինքն էլ ոսկէ ժամա-

ցոյց ունի շղթայով, — հետևապէս շատ նեղ տեղը չէ, և մի փոքր հանգիստ առնելուց յետ՝ շարունակեց իւր ճանապարհը: Մ. Պէկանիֆի տանից ութն մղոն <sup>1)</sup> անցնելուց յետոյ՝ հասաւ մի բանջարավաճառի, որին մի վղի թաշկինակ ընծայ տալով՝ համոզեց, որ իրան Լօնդօն հասցնի: Ճանապարհից և նախընթաց դէպքերից յոգնած՝ Մարտինը միւս առաւօտ մայրաքաղաք հասաւ և մի էփանազին հիւրանոցում ապաստան գտաւ, ուր և քնեց ինչպէս մեռած: Մութը կոխել էր՝ երբ վերկացաւ. առջին գործն եղաւ շուտ հագնուել ու մի լուծալափոխ գտնել: Մտաւ մի խանութ, որի գլխին գրած էր «փոխատուութեան տուն»: Այստեղ մի քանի բաժանմունք կար, թատրոնի օթեակների նման, անսովորների ու ամօթխածների համար, որոնք չէին ցանկանում ուրիշներին երևալ: Այս արգելանոցներից մէկը մտնելով Մարտինը ժամացոյցը հանեց և դրեց առջևի տախտակի վերայ:

— Սրևս վկայ, ասաց կողքի բաժանմունքից մի ճնշուած ձայն. — պէտք է աւելցնէք:

Մարտինն ականջները սրեց. նորան ծանօթ էր այդ ձայնը:

— Այնքան եմ տալիս, ինչքան միշտ տուել եմ, պատասխանեց լուծալափոխը. — երկու շիլլինգին մի պէնս չեմ կարող աւելցնել:

<sup>1)</sup> Անդդեական մղոնը. հաւասար է ոռոսական մօտ 1 <sup>3</sup>/<sub>4</sub> վերսախն:

— Կէս շիլլինգ էլ աւելցրէք:

— Եւ ոչ մի պէնս, ասաց լուծալափոխը, շուռ ու մուռ տալով շապկի նման մի բան: Անունը և նախկին հասցէդ:

— Միւսնոյնն է, սիրելի Գէլիդ, պատասխանեց ծանօթ ձայնը, որ միտէր Տիգզինը պէտք է լինէր: Սակայն, կարծեմ, տունս շուտով կփոխեմ, որովհետև այն բնակարանը, ուր կրտսեր սեղանապետս ու հինգերորդ սենեկապետս են կենում, բաւական անյարմար է: Յոյս ունիմ նոր բնակարանումս կըտեսնուինք:

Լուծալափոխը ծիծաղեց, իսկ ինքը միտէր Տիգզը ցանկալով իմանալ թէ իւր խօսքերն ինչ տպաւորութիւն գործեցին հարեան բաժնում, գրլուխը երկարացրեց դուրս տարաւ միջնորմից և զազային լուսի տակ անմիջապէս ճանաչեց Մարտինին:

— Ս. չ քեզ անակնկալ հանդիպումն, գուցե Տիգզը: — Ի՞նչ նորութիւն կայ Վայտշիրում: Ի՞նչ են անում մեր բարեկամ Պէկանիֆները: Լսում էք, Գէլիդ, դարձաւ նա լուծալափոխին. — խնդրեմ որքան կարելի է ուշադրութիւն ընծայէք այս պարոնին — հին բարեկամս է:

— Ի՞նչ կտաք սորան, ժամացոյցը լուծալափոխին տալով՝ անհամբերութեամբ հարցրեց Մարտինը:

— Ո՛րքան կարելի է աւելի տուէք, ասաց Տիգզը կարեկցելով: Փողի մեծ կարիք ունի — տեսնում էք ինչ ընտիր ժամացոյց է:

—Այս ժամացուցին երեք Փունտ կտամ, ասաց լուծայափոխը: Հին ձևի է—աւելի տալ չեմ կարող:

Մարտինը ստիպուած էր ժամացոյցը տալ ու փողերն առնել: Փողոցում մօտեցաւ Տիգգը, բռնեց նորա ձեռքն ու շնորհաւորեց, որ գործն այդպէս յաջող ելք ունեցաւ. բայց Մարտինն ուզելով ազատուիլ այդ անկոչ կարեկցութիւնից՝ շտապով հարցրեց.

—Հրամանքդ որ կողմն էք մտադիր գնալ, ես հակառակը կերթամ:

Միստէր Տիգգը աշխատում էր Մարտինին հաւատացնել, թէ ինքը վերջնապէս կտրել է իւր յարաբերութիւնները յայտնի Ֆօքսի հետ, բայց տեսնելով, որ այս փորձն էլ անգոր էր Մարտինի որոշումը փոխելու, առանց այլևայլութեան դիմեց իւր խօսակցութեան նպատակին.

—Չնայելով ձեր բոլոր անբարեմիտ վարմունքին դէպի ինձ, ասաց նա, ես այնուամենայնիւ քիչ ու միչ յոյս ունիմ, որ դուք միանգամայն կը հաւանէք իմ առաջարկն ու ինձ կգոհացնէք ձեզ ցոյց տուած համեստ ծառայութեանս համար: Ես յանցաւոր չեմ, որ դուք, պարոն, սառնութեամբ ընդհատեցիք այն խօսակցութիւնը, որ ես այնքան բարեկամաբար սկսեցի ձեզ հետ: Ուստի ես երբէք անպատուութիւն չեմ համարի, եթէ դուք ինձ իբրև տոկոս մի կէս կրօննոց վճարէք, որ ես կաշխատեմ բարի գործի համար գործածել:

Մարտինը շարժեց նորան պահանջած դրամը, իսկ Տիգգը Մօնտէգիւն ձեռքը մեկնելով բռնեց շարտած փողը, և ձեռքին շուռ ու մուռ տալով մի գուցէ կեղծ դրամ լինի, յարգանքով գլխարկը վեր քաշեց և ուռած փքուած գնաց իւր բանին:

Հիւրանոց գնալուց լետ Մարտինի առաջին գործն եղաւ գրել Թովմաս Պինչին, որ ուղարկէ իրան Լօնդօն՝ մնացած շորերն ու այլ իրերը: Այդ ամենը կարգի դնելով՝ սկսեց հարց ու փորձ անել Սմերիկա ուղևորուող առևտրական նաւերի տեղը: Առաւօտից մինչև մութ նաւահանգստներն ու նաւարաններն էր չափչփում, մտնում էր նաւային միջնորդների գրասենեակները, յուսալով մի կերպ աւրանքի գործակալի պաշտօն գտնել նաւի վերայ, և այդպիսով առանց վճարի հասնել Սմերիկա: Քանի մի օր անյոյս պտտելուց լետ մի յայտարարութիւն տպեց լրագիրներում, ուր մի քանի բառով իւր միտքը յայտնեց, կարծելով թէ միանգամից քանի մի տասնեակ ամենաշահաւէտ առաջարկութիւններ կընդունէ. սակայն այդ էլ չօգնեց: Պէկսնիֆի մօտ մնացած իրերն երբ ստացաւ՝ ջոկեց ամենից անհրաժեշտ շորերն, իսկ մնացածները գրաւ դրեց լուծայափոխի մօտ: Տարօրինակ էր թւում նորան, թէ ինչպէս կարող էր շուտով իւր նախկին դիւրագրգռութիւնն և ինքնասիրութիւնը կորցնել: Առաջ նա իրան թոյլ չէր տալ մտքովն անգամ անցկացնել լուծայափոխների ու հնոտիավաճառների հետ հաշիւ ունենալ: Սկզբում նա ամօթ էր համարում

փողոցներում աննպատակ թափառող համարուել, ամաչում էր համեստ հիւրանոցում լինել,—այժմ դրանք բոլորովին օրինաւոր էր համարում: Ո՛ւր մնաց նախկին հպարտութիւնը: Ամբողջ հինգշաբաթ այսպէս անցկացրեց Լօնդօնում: Կրամականն օրէցօր սպառուում էր և նորա վիճակը յուսահատական էր դառնում:

Մի անգամ, երբ նաւահանգիստներում ու գրասենեակներում ապարդիւն քաջ գալուց լետ՝ տխուր ու սոված տուն դարձաւ, հիւրանոցի տէրը զմուռով կնքած մի ծրար տուեց նորան, որի հասցէն գրուած էր Մարտինին անձանօթ ձեռքով: Նամակը բացարեց և մէջը գտաւ քսան ֆունտ ստերլինգ արժողութեամբ մի դրամատոմս<sup>1)</sup> անանուն և առանց որ և է բացատրութեան: Մարտինը վերին աստիճանի յուզուած այս առատ տուրքի առթիւ, յիշեց սակայն, որ վաղուց է կուշտ հաց չի կերել և ամենից առաջ որոշեց մի լաւ ճաշել: Գնեց հաց, ապուխտ, կարագ և սառն ըօստբիֆի կտոր, բերեց տուն և ուրախ հացի նստաւ, իսկ հիւրանոցի տէրը բարուք համարեց մի բաժակ ընտիր գինի դնել նորա առաջ: Հագիւ թէ գինին մօտեցրել էր բերանին՝ սանդուղքից վեր ելնող ոտնաձայն լսեց և մի տղամարդ մտաւ նորա մօտ:

—Պատիւ ունիմ ներկայանալ, ասաց նա, Մար-

<sup>1)</sup> Ֆունտ ստերլինգը անգլիական ոսկէ դրամ է մօտ 6 ուրլի 30 կ. արժէքով:

կոս Տէպլի: Երևի կյիշէք Վիշապի դռնապանին:

—Ի՛նչպէս չէ, գոչեց Մարտինը: Ո՞ր կողմից եկար սենեակս:

—Նախասենեակով, ապա սանդուղքից:

—Իսկ տեղս քնչպէս իմացար:

—Մի քաղցած ծխնելոյզ-մաքրողի հետ նայում էի այն խանութի լուսամտից, ուր դուք առնում էիք այդ ապուխտը:

—Յետո՞յ, հարցրեց Մարտինը կարմրած:

—Եկայ ձեր ետեկից:

—Ուզո՞ւմ ես նախաճաշել:

—Երբ կաւարտէք:

—Ո՛չ, այժմ իսկ ինձ հետ:

Մարկոս Տէպլին մարդավարի ուտել սկսեց:

—Իսկ քնչ ես շինում Լօնդօնում:

—Ոչինչ. տեղ եմ որոնում:

—Մեղքս գալիս ես:

—Ես կցանկայի ծառայել մի ամուրի մարդու, շարունակեց Մարկոսը.—իսկ եթէ այդ պարոնը ճանապարհորդ լինէր՝ առաւել լաւ,—ճանապարհորդութիւնը՝ իմ սիրած բանն է: Ռոճկի բանը հեշտ է:

—Եթէ ինձ ունիս աչքի առաջ...

—Հէնց ձեզ, տէր:

—Լա՛ւ, բայց ես կարո՞ղ եմ քեզ սահել: Վերջապէս ես շուտով Ամերիկա պիտի գնամ:

—Ի՛նչ կայ, տէր: Ամերիկան ուրախ երկիր է: Հէնց իմ տեղն է: Ես, ուղիղն ասած, երկու շաբաթ է ձեր ետեկից ման եմ գալիս և նկատում

եմ, որ վերջերումս գործերդ ինչ-որ լաւ չեն գր- նում: Առաջին տարին ռոճիկ չեմ պահանջում, որովհետեւ «Վիշապում» ինձ համար քիչ ու միջ բան լետ գցեցի: Համաձայն էք ուրեմն, որ ինձ էլ ձեզ հետ վերցնէք:

Մարտինը դժուարանում էր պատասխանել:

—Մտածեցէք, տէր, շարունակեց Մարկոսը: Սխար ես էլ իմ հաշիւներս ունիմ: Իոուք ձեր ընդունակութիւններով անշուշտ մի ելք կգտնէք ձեզ համար Ամերիկայում, իսկ եթէ դուք յաջողութեան մէջ լինէք՝ ես էլ վատ օրի չեմ լինի: Համաձայն էք: Ձեզ համար դա մի մեծ բան չէ, իսկ ինձ համար, այո՛, մեծ է. չէք բարեհաճի հարցիս պատասխան տալ:

Մարտինը չափազանց գոհ, որ առիթ է ունենում խնամակալի դեր կատարել, մանաւանդ ինքնասիրութիւնից այնքան զիջողութիւն անելուց լետու, մարդասիրաբար ասաց.

—Ես քիչ շատ տեղեկութիւն ունիմ ճարտարապետութիւնից, իսկ Ամերիկայում լաւ ճարտարապետների սով է, յոյս ունիմ որ գործերս լաւ ընթանան:

—Ուրեմն գործը վերջացած կարելի է համարել, նկատեց Մարկոսը:

Միւսնոյն օրը Մարտինն իւր արկածքի բոլոր գաղտնիքը յայտնեց Տէպլիին, հարեանցի լիշելով իւր և ծերունի Չուզլիտի նորատի ուղեկցուհու յարաբերութիւնները: Բայց պատմութեան այդ մասն այն-

պէս հետաքրքրեց Մարկոսին, որ քանի մի անգամ ընդհատեց զանազան հարցերով, որովհետեւ միսս Մէրիին տեսած էր «Վապոյտ Վիշապ» հիւրանոցում:

—Ի՞նչ պատուական աղջիկ է, ի՞նչ քաղցրաբարոյ, հիացած ասում էր Մարկոսը:

—Իոու նորան անբաղտ ժամանակն ես տեսել, նկատեց Մարտինը. հապա առաջ տեսնէի:

—Արդարեւ, նա փոքր ինչ գունատ էր և կարծես տխուր սակայն, Լօնդօն գալուց լետ անշուշտ լաւացած կլինի:

—Մի՞թէ Լօնդօնումն է, սքանչացած գոչեց Մարտինն ու տեղից վեր թռաւ:

—Լօնդօնումն է, հանգիստ պատասխանեց Տէպլին:

—Ի՞նչ տեղից գիտես, բարեկամ. ինչ որ պապիցս հեռացել եմ, էլ աչքով չեմ տեսել նորան:

—Ինչտեղից գիտեմ: Ես չէի, որ ծերունի պապիդ փողոցումը տեսայ և Տօջէրսի առևտրական հիւրանոցից հետեւեցի մինչև իւր կացարանը: Ես չառաջարկեցի նորան, որ ինձ ծառայ վերցնէ իւր մօտ: Նա պատուիրեց որ մի շարաթից լետ գնամ պատասխան ստանամ: Ես գնացի: Եւ, ի՞նչ էք կարծում, ի՞նչ պատասխան տուեց: Ես, ասում է, ամենևին ոչ ոքի չեմ հաւատում: Ձեզ ի՞նչպէս է թւում այս:

Այնուհետև Մարկոսը պատմեց, թէ ինքը կարողացաւ տեսնել նա և Մէրիին, որ «Վապոյտ Վիշապից» ծանօթ լինելով իւր հետ՝ հարցրեց Մար-

տինի մասին, ասաց թէ ստացել է նորա նամակը, որի մէջ գրուած է Ամերիկա գնալու զիտաւորութեան մասին, և իրանից՝ Մարկոսից խօսք է առել, որ անպատճառ գտնէ իւր փեսայուին ու նորա մօտ ծառայութիւն մտնի:

—Բայց թէն էս կարծում, կարելի է նորան նամակ հասցնել, հարցրեց Մարտինը:

—Ո՛նց թէ կարելի է, գոչեց Տէպլին:—Նստեցէք, և գրեցէք:

Եւ նոր սպասաւորը փութով վառարանն ածեց ճաշի մնացորդները, թանաքաման բերեց, աթոռը մօտ քաշեց և Մարտինին նստեցնելով՝ գրիչը ձեռքը կոխեց:

—Գրեցէք, տէր, ասաց նա խիստ ոճով. իսկոյն գրեցէք: Եւ կարելուցն չափ քնքոյշ...:

Մինչև Մարտինը կգրէր, Մարկոսը, միանգամայն ընտելանալով իւր նոր վիճակին սկսեց սենեակը կարգի դնել:

—Էհէ, փնթփնթում էր նա դասաւորելիս.— վատ բնակարան չէ: Ոչինչ. բաններս շատ լաւ կերթայ: Ջէննի, իմ գեղեցիկ, ձայնեց նա վերևից աղախնին,— պարոնին մի բաժակ խմիչք բերէս,— նամակ է գրում... դուք ձեր գործին կացէք, տէր:

Շուտով նամակը յանձնուեց Մարկոսին, որը տեղ հասցրեց ու երեկոյեան ուշ յետ դարձաւ, պատասխան բերելով, որ մատաղահաս միսը առաւօտեան ճիշտ ութ ժամին կսպասէ Մարտինին Սէն Ջէմի անտառակում: Որոշեցին, որ Մարկոսն առաւօտը

վաղ սպասէ Մէրիին նորա բնակարանին մօտիկ, հասցնէ նորան մինչև անտառակն ու լետոյ ճանապարհ գնէ մինչև տուն:

Թէ ինչպէս տեղի ունեցաւ այս հրաժարական տեսակցութիւնը, հասկանալի կլինի ամենքին, ով գտնէ մէկ անգամ կեանքում հրաժեշտ է տուել իւր սիրեցեալին:

Մարկ Տէպլին երբ նորատի օրիորդին տուն հասցրեց և դարձաւ հիւրանոց, Մարտինին տխուր մտածման մէջ գտաւ, վառարանի ծխոտած վանդակապատի առջև:

—Ի՞նչ կայ, Մարկոս:

—Ոչինչ, տէր: Օրիորդին տուն հասցրի: Նա անթիւ գեղեցիկ բաղձանքներ ուղղեց ձեզ և պատուիրեց որ այս ձեզ յանձնեմ իբրև յիշատակ:

—Աղամանդներ, գոչեց Մարտինը, երբ տեսաւ մատուցած մատանին:—Շատ տարօրինակ մարդ է, ճշմարիտ, պապս: Անշուշտ նա է ընծայել նորան այս մատանին:

Մարկոսը լռեց: Նա լաւ գիտէր, որ նորատի օրիորդը զիտամբ գնեց մատանին, մտածելով, որ այս արժէքաւոր իրը, երբ և իցէ, սև օրին, իւր բարեկամին նեղութիւնից կփրկէ:

Նոյն օրը Մարտինը նամակ ուղարկեց Պինչին: Նա գրում էր Թովմասին իւր անյետաձգելի ուղեւորութեան մասին և նորա խնամքին ու պաշտպանութեան էր յանձնում իւր սիրեցեալ հարսնացուին և խնդրում էր ճշտութեամբ տեղ հասցնել այն

նամակաները, որոնք ուղղուած կլինին նորա Հասցէին: Վերջը Մարտինը շնորհակալութիւն էր յայտնում իւր բարեկամին նորա վեհանձն օգնութեան համար, որ և վերադարձնում էր անկեղծ երախտագիտութեամբ:

Օրուայ մնացեալ ժամերը Մարտինն ու սպասաւորը նուիրեցին ճանապարհի պատրաստութեան:

Միւս առաւօտ նոքա արդէն նաւի վերայ էին: Մարտինը քիթ ու պոռնոզը կախել էր, իսկ Մարկոս Տէպլիի դէմքը, սւրախութիւնից փայլում էր, և նորա շրթունքները, կարծես, շշնչում էին.

«Զուարճալի է:»



Շատ Մարդիկ կան, որոնք իրանց օջաղում նրատած՝ մեծ սէր ունին ազատ ժամերին երևակայել մրրկայոյզ և վտանգներով լի ծովային ճանապարհորդութիւններ: Վառ երևակայութիւնը պատկերացնում է նոցա առաջ կեանքի ամենազբաւիչ տեսարաններ բաց ծովի վերայ, լի բազմազան արկածներով. բայց երբ այս կախարդական երազները կենդանի իրականութեան են փոխուում, անակնկալ փոփոխութիւն է տեղի ունենում երազողների աչքի առջև: Նոյնը պատահեց և երիտասարդ Մարտինին, որ Մարկոս Տէպլիի հետ ուրիշ բազմաթիւ ճանապարհորդների ընկերակցութեամբ երրորդ շաբաթն էր որ տանջւում էին «Վինտ» փոստանաւի

վերայ, Սմերիկայի ճանապարհին: «Ծովային հիւանդութիւն» — երկու բառեր, որոնք լիակատար և պարզ հասկացողութիւն են տալիս այն բոլոր նեղութեանց մասին, որ Մարտինը ստիպուած եղաւ տանել իւր անհեռատես ճանապարհորդութեան հէնց սկզբին: Թերևս ուրիշ հանգամանքներում նորա դրութիւնը կարող էր աւելի թեթեւ լինել, բայց այն նաւախուցը, ուր Մարկոս Տէպլիի հետ զետեղեցին նորան, մութն էր, ցածր և ծանրահոտ, մէկ մէկու վերայ լցրած բազմաթիւ թախտերով սոքա լիքն էին այլ և այլ տեսակ չքաւոր ու հիւանդ մարդկանցով, կանանցով ու երեխաներով. թախտերի վերայ տեղ չկար, այս պատճառով ամբողջ ներքին տախտակամածը անկողիններով ու պատուտած շերերով լիքն էր, այնպէս որ յարմարութեան, մաքրութեան և մարդավարութեան հետք էլ չէր մնացել: Այս տեսակ հանգամանքները ոչ թէ միայն տեղ չէին թողել ուղևորների մէջ փախադարձ սիրոյն, այլ, դորա հակառակ, կարող էին ամէն մէկին կամակորութիւն ու կոպիտ կամայականութիւն ներշնչել:

Տասն և չորս օր նաւը լողաց ովկիանոսի վերայ, երբեմն բարձրանալով լեռնակուտակ ալիքների գագաթներին, երբեմն էլ քիթը սաստկապէս ընկղմելով եռացող փրփրադէզ կոհակների մէջ:

Լինում էին օրեր, երբ նաւն այնպէս ուժգին էր տատանւում, որ փորձառու նաւաստին անգամ հազիւ էր կարողանում ոտի կանգել: Մութը, գար-

շահոտ նաւախորշերում զգեստն ու կարասին իրար էին խառնուել և լսում էին Հասակաւորների ողբերն ու մանկանց լացի ձայները: Անյովոր մարդ կարող էր յուսահատուիլ, բայց Մար'ոս Տէպլին չէր վհատուում:

— Մարդը նա է, որ այսպիսի տեղ չէ լքանում, փսփսում էր նա, գլուխը ձեռքով բռնած՝ անողորմ օրօրուելուց յառաջացած խիստ ցաւի պատճառով: — Իսկ գոնէ մի իմարական է: Զեր քաջութիւնը ինքն իրան վարձատրում է:

Պէտք է նկատել, որ Մարկոսը ոչ մի ուղևորից պակաս չ'օրօրուէր: Բայց, ինչպէս ինքն ասում էր, նա աշխատելով գլուխ դուրս հանել դժուար հանգամանքներից, նաւախորշի հոգին էր կազմում, իւր օրինակով կենդանութիւն էր պարգևում բոլոր բնակիչներին և իւր քաղցր բարքով ու կամակատարութեամբ հիացնում էր կանանց ու երեխաներին: Մանաւանդ առանձին ուշագրութիւն էր նուիրել մի Հիւանդ կնոջ, որ երեք մանր երեխաներով գնում էր որոնելու իւր մարդուն, որը երեք տարի առաջ տեղափոխուել էր Ամերիկա. Մարկոսը լողացնում էր երեխաներին, կերակրում, հագցնում. զբաղեցնում էր տեսակ տեսակ խաղերով և երգում նոցա համար: Այս ամենը չէր դուր գալիս Մարտինին, որ արդէն բաւական տանջուած լինելով ծովային հիւանդութիւնից և այն բարոյական նեղասակրութիւններից, որ կրում էր զանազան խեղճ ողորմելի մարդկանց հետ ընկերակցութեան ստի-

պուելով պատճառով, այդ թշուառ կնոջ ու նորա զաւակների վերայ այնպէս էր նայում, ինչպէս կեղտոտ բոշաների խմբի վերայ: Նա քանի մի անգամ փորձեց Մարկոսին նկատողութիւն անել այդ առթիւ, բայց սա կրկնապատկելով իւր ջանքը իւր տիրոջ խնամելու վերաբերմամբ, աւելի ևս, ի'նչքան միայն կարող էր, աշխատում էր օգտակար լինել տարաբաղոտ կնոջ, այն ինչ Մարտինը շարունակ անքում էր ու ախ քաշում իւր ճօճի մէջ:

Հասաւ, վերջապէս, վաղուց ցանկացած ժամը. հորիզոնում երևեցաւ մշուշով պատած երկրի մի աղօտ շերտ: Նաւի մէջ իրարանցում ընկաւ, որովհետև Նիւ—Յօրկը շատ հեռու չէր: Ամենքը սկսան պատրաստուիլ ափը փոխադրուելու և ապրանքը դարսելու պատրաստութիւն տեսնել: Հիւանդներն սկսան կազդուրուել, առողջները զուարթանալ: Տախտակամածի վերայ երևեցան պըճնուած կանայք, նոյն իսկ մի ամերիկացի, որ մինչև այդ ժամանակ մորթու և խէժլաթի մէջ փաթըթուած պարկած էր նաւախորշում, յանկարճ դուրս թռաւ վերև պճնազարդ գլխարկը գլխին և դիտակը ձեռքին: Մի անգլիացի, որի մասին խիստ կասկածում էին, թէ բաւականին դրամ յափշտակելով մի դրամատնից փախչում էր, մի ջերմ անսովոր ճառախօսութիւն էր սկսել մարդկային իրաւունքի ու ազատութեան մասին, և շարունակ երգում էր վերին աստիճանի զրբող բնաւորութեամբ մի երգ: Միով բանիւ «Վ. ինտի» վերայ ամեն ինչ կեն-

դանութիւն էր զգեցած: Շուտով խարխսխ ձգեցին և մօտ եկող մի շոգենաւ կենդանի ապրանք ընդունեց նորանից: Այդ ապրանքի մէջ էր Մարկոսը, որ առաջուան պէս հովանաւորում էր խեղճ կնոջ ու նորա երէք մանկիկներին, և Մարտինը, որ վայելուչ հագնուած էր, վրայից էլ ձգած հին ու կեղտոտ մի վերարկու, սպասելով այն վայրկենին, երբ պիտի հրաժեշտ տար ուղեկիցներին: Անիւնները շարժուեցան և շոգենաւն ուղղուեցաւ դէպի մի պատուական ծովածոց. շատ չանցած ուղևորներն իրանց առջևը քանի մի թումբ ու կղզի տեսան և ափի երկայնութեամբ ձգուած մի քաղաք:

Այս էլ ձեզ ազատ երկիրը, — ասաց Տէպլին, երբ շոգենաւը ափին մօտեցաւ. — Ի՞նչ գեղեցիկ է: Եստ ուրախ եմ: Ամեն մի երկիր պէտքէ հաճելի երևի ջրի վերայ այսքան երկար ճանապարհորդելուց յետոյ:

Նա իջաւ նաւահանգիստը, օգնեց խեղճ կնոջը ծանրոցը դուրս հանելու. բարիերթ մաղթեց, երեխաներին համբուրեց և մի արծաթ դրամ տուեց:

Մարտինը իւր հաւատարիմ ծառայի օգնութեամբ հազիւ կարողացաւ ճանապարհ բանալ նաւահանգստի վերայ խռնուած արմկայուզ ամբոխի միջից: Նոքա իրանց նիւթականի համապատասխան մի հիւրանոց վարձեցին և որովհետև դեռ բաւական ժամանակ կար մինչև ճաշը, Մարտինը գնաց քաղաքը շրջելու, իսկ Տէպլին յետ դարձաւ նաւահանգիստը

իմանալու թէ խեղճ կինն ինչ է մտադիր անել:

Չի կարելի ասել, որ նոր երկրի փողոցները մի առանձին ախորժ տպաւորութիւն գործեցին Մարտինի վերայ: Անգամ շատ քիչ էին գրաւում նորան անծանօթ երկրում առաջին անգամ նորա աչքին ընկնող նոր առարկաները. հետաքրքրում էր լուրջ փողոցներում խռնուող ամբոխի փութաջանութիւնը. նորան թւում էր, թէ ամեն մի անցորդի ներսը մի մի շոգեշարժ է բանում. նա սարսափում էր, երբ նկատում էր, թէ ինչպէս անցորդները հրում էին միմեանց, իւրաքանչիւրը հոգալով իւր սեպհական բարիքի համար՝ դրամի և շահաստացութեան ձգտումով: Մարտինն այս աղմուկից յոգնած լետ դարձաւ հիւրանոց: Բայց հազիւ թէ մօտեցել էր նոր կացարանի դռան՝ ներսից զանգակի ղողանջիւն լսեց: Հէնց որ այդ հնչիւնները հասան նորա ականջին՝ անմիջապէս նկատեց, որ անցորդներն ամեն կողմից խռնուում էին դէպի հիւրանոց, և կատաղի ներս թափուում: Մերձակայ փողոցներից ևս լցւում էին թէ մարդիկ և թէ կանայք:

— Տէ՛ր Աստուած, այս ի՞նչ է, մտածեց Մարտինը. — մի գուցէ տունը կրակ է ընկել:

Սակայն տանը ո՛չ ծուխ կար, ո՛չ բոց, — հրդեհի և ո՛չ մի նշոյլ: Մարտինն էլ շտապեցրեց քայլերը, բայց ոտը խփեց քարայտակին, նորա մօտից դարձեալ մի քանի ջէնտմէն անցան յուզուած կերպարանքները դէպի հիւրանոցի դռներն

ուղղած: Այնտեղ նոքա մի անսպասելի արգելքի հանդիպեցան. բայց հերոսական քաջութեամբ ճեղքելով խոռոկած խիտ ամբոխը, որ կատաղի կերպով բռնած ունէր անցքը, այնուամենայնիւ նպատակին հասան և մտան նախասենեակը: Մարտինն անզօր գտնուելով հետաքրքրութիւնը զսպելու՝ սկսեց վազել, բայց քիչ էր մնում, որ վայր ձգէին նորան երկու ուրիշ յափշտակուած ջէնտլմէններ, որոնք վազելով սալարկից՝ ցած գցեցին նորան:

—Ո՛ւր, գոչեց Մարտինը հեւալով, մի անխի պէս սև նեզրին, որ հանդիպեց նախասենեկում:

—Սեղանատուն, տէր: Պարոնս ձեզ համար աթոռ պահեց:

—Ի՞նչ աթոռ:

—Ճաշելու, տէր:

Մարտինը նայեց նեզրին և մի կուշտ ծիծաղեց. նա էլ, որ բնութեամբ բարի էր, նոյնպէս կրճտացրեց իւր սպիտակ ատամները: Երևաց, որ այս բոլոր իրարանցումն առաջացրել էր ճաշի ժամն աւետող զանգահարութիւնը: Մարտինը մտաւ սեղանատուն ու տեւաւ մի բազմամբոխ ընկերութիւն, որ եռանդով գործում էր զանակներով ու պատառաքաղներով: Կարծես ամեն մէկը վերջին անգամ էր ճաշում իւր կեանքում, իսկմիւս օրը աշխարհիս սով պէտք է տիրէր: Ամենքը լուռ ու շտապ ուտում էին: Հաւեղէնը, որ ուտելիքի գլխաւոր մասն էր կազմում, այնպէս շուտով անհետացաւ, որ կարծես թիւեր առաւ ու մարդկային ստամոքսը մտաւ: Մզած տաքտեղով

համեմած ոստրէներից տասնեակներով կուլ էին գնում ներկայ գտնուողների բերաններում: Սմե- նակծու համեմները քաղցրաւենու պէս էին ուտւում և ոչ ոք երեսը չէր կնճռոտում: Կերակուրը մեծ մեծ պատառներով էր լափւում: Չարհուրելի տեսարան էր:

Ճաշը վերջացաւ թէ չէ՝ դահլիճը գրեթէ մի վարկեանում դատարկուեց: Աեղանի մօտ մի հիւր էլ մնաց, միջահասակ թուխ տղամարդ, որ նոյն իսկ ճաշի սկզբից իւր բաց և ազնուատես դէմքով գրաւել էր Մարտինի ուշադրութիւնը: Նա քաղաքավարի կերպով թոյլտուութիւն խնդրեց Մարտինից նորա կողքին նստելու և սկսեց հետը խօսել:

—Ձեմ հետաքրքրում, թէ ինչպէս է դուր գալիս ձեզ իմ հայրենիքը, —ասաց անծանօթը.—ես կարող եմ կատարեալ գաղափար կազմել ձեր զգացածների մասին:

—Ձեր խօսքերից եզրակացնում եմ, որ դուք ամերիկացի չէք, պատասխանեց Մարտինը, բոլորովին գոհ, որ վերջապէս գտաւ մի մարդ, որի առջև կարող էր բաց անել իւր սիրտը:

—Սխալւում էք, տէր, ժպտաց անծանօթն ու ասաց.—ես այնտեղ եմ ծնած և մեծացել եմ Մասսաչուզէտտում, ուր և ապրում եմ մինչև օրս: Այնուամենայնիւ ես մեր շտատը օրինակելի չեմ համարում, թէպէտ պարտական եմ հայրենիքիս պատիւը պահել և պաշտպանել օտարների անարդար յարձակումնքների դէմ: Բաց ասեմ, այստեղ մի

շարք այնպիսի եկուորներ ունինք, որոնք մասամբ իրանց, մասամբ էլ դժբաղտ Հանգամանքների շր- նորհիւ Եւրոպայում որ և է գործի կայսելու ամեն յոյսից զրկուած՝ եկել են մեզ մօտ, այն Հաստատ յուսով, որ Սմերիկացի փողոցներում ոսկի է շաղ տուած, իսկ իւրոտ պատառն ինքն իրան լծուում է ցանկացողի բերանը: Այդ թշուառականները ծա- նըր զնով են տուժում իրանց սխալները. մշտատե կարօտութեան մէջ են ընկնում. միւսնոյն ժամա- նակ, բոլորովին խաբուած իրանց ակնկալութեանց մէջ, կորցնում են Հոգու արիութիւնը, և աղքա- տութեան ու նախատինքի մէջ շաղախուած՝ քիչ է մնում, որ իրանց ցաւալի գոյութեանը վախճան դնեն փողոցներում: Շատ սակաւներն այդ ողորմե- լիններից միջոց են գտնում Հայրենիք դառնալու: Սմերիկան այս բանում Հարկաւ մեղաւոր չէ, բայց կան շատ գործակալներ, որոնք եւրոպական երկր- ներում խաբում են թեթեամիտներին, ոսկէ Հան- քեր խոստանալով նոցա մեր կողմերը: Բացի դորա- նից այս ողորմելիներին Հրապուրում է և այն, որ քանի մի չքաւոր զաղթականներ լիրաւի մեծ կարողութիւն են ձեռք բերել մեզ մօտ: Բայց սո- քա լոկ բացառիկ դէպքեր են, իսկ բոլոր յոյսները դիպուածի վերայ դնելը՝ վերին աստիճանի անմը- տութիւն է: Ես այն կարծիքի եմ, որ թէ Եւրո- պայում և թէ Սմերիկայում միատեսակ կարող է ելք գտնել իւր Համար ամեն մարդ, ով Հաստատ կամք ունի և սիրտը է աշխատել:

Այս իրաւացի փաստերը չափազանց ազդեցին Մարտինի զգայուն բնութեան վերայ. նա տխրեց և քանի մի անգամ ծանր Հառաչեց:

— Երևի դուք էլ բաղտ որոնելու էք եկել, — քաղցրութեամբ շարունակեց անծանօթը. — շատ ցաւում եմ, որ առաջին անգամ իսկ սթափեցնում եմ ձեզ. բայց տարիքով ես մեծ եմ ձեզանից և, գուցէ, պատահած ժամանակ կարող եմ նաև օգ- նել իմ խորհրդներով, ի հարկէ, — ոչ շատ նշանա- ւոր գործերում:

Անձանօթի ձայնը Հնչում էր այնպէս բարե- սրտութեամբ ու ջերմաւիտ, որ Մարտինը չէր կա- րող Հաւատ չընծայել այդպիսի քնքոյշ կարեկցու- թեան և ուղղակի պատմեց նորան իր Սմերիկա գալու նպատակն ու նոյն իսկ խոստովանեց իր չքաւորութիւնը, որքան էլ ծանր էր այդ նորա Համար: Բայց երբ խօսքը եկաւ շինարարական գոր- ծի առթիւ ունեցած դիտաւորութեանց մասին՝ անծանօթը դէմքը նշանաւոր կերպով դուրս ցցեց: Նա շտապեց Հաղորդել Մարտինին, որ ամերիկա- ցիք չափազանց ինքնուրոյն ժողովուրդ են և սի- րում են տներն իրանց սեպհական ճաշակով ու Հաճօյքի պէս շինել. իսկ ինչ վերաբերում է Հա- սարակական մեծ շինութիւններին, դոքա կառու- ցանում են մրցումով <sup>1)</sup>, որ մրցանակը միշտ բա-

1) Մրցում կոչուում է սովորաբար բանի մի ան- ձանց Հետամտութիւնը մի պաշտօնի կամ պարգևին: Երբ շինութեան գործի մասին մրցում է յայտարարուում

ժին է ընկնում բնիկ ամերիկացիներին: Սակայն, երիտասարդ գաղթականին փոքր ինչ քաջալերելու համար՝ նա ասաց, որ թէպէտ այդ ըուպէին ի նկատի չունի որևէ շինութեան գործ նորա համար, բայց հարցուփորձ կանի, և հէնց որ դէպք կլինի՝ սլատրաստ է ձեռքից եկածն անել: Այնուհետև նա յայտնեց Մարտինին, թէ իւր անունը Բիվէն է, և արհեստով բժիշկ է, թէպէտ շատ հազիւ է սլարապում դորանով:

Այս խօսակցութեան վերջը Մարկոս Տէպլին երևաց դռանը:

— Հա՛, Բնչ եղաւ բարեկամուհիդ, հարցրեց Մարտինը:

— Բանը լաւ է:

— Գտա՛ւ իւր մարդուն:

— Ի՛նչպէս չէ, տէր, դոնէ նախկին մարդու ստուերը: Իսկ խեղճի այդ մնացորդին էլ ցնծութեամբ փարուեցաւ: Ահա՛ թէ Բնչ վախճան ունեցաւ նորա տենչը դէպի այս ազատ երկիրը:

— Գետին չէ՛ր առել իւր համար, հարցրեց Բիվէնը:

— Այո՛, առել էր. և մինչև անգամ տուժել, պատասխանեց Մարկոսը: — Գործակալները հաւա-

այդ արուեստին հմուտ մարդիկ ներկայացնում են առանձին առանձին յայտարարած շինուածքի յատկագիծը և նորա արժողութեան նախահաշիւը: Առաջարկած մակարդակներից ամենալաւը ստանում է մրցանակը (պարգևը):

չտացրել էին թէ տակը ոսկի կայ: Բայց մէջ տեղը ոչին ոսկի չէ դուրս եկել. բայց միայն ճահիճ, և որ կողմը նայես ջուր ու ջուր անյատակ:

— Երևի Միսսիսիպի կամ Միսսուրի մասը կլինէր, — նկատեց Բիվէնը:

— Ինչ էլ որ է. սակայն նա կնոջ ու որդւոց համար էր եկել, բայց այսօր նոքա միասին շոգենաւով ճանապարհ ընկան դէպի իրանց աւետեաց երկիրն այնպէս երջանիկ, կարծես երկինքն էին թռչում. մարդու չափազանց նիհար կերպարանքին նայելով ես հաւատացած եմ անգամ, որ նոքա շատ շուտով միւս աշխարհը կերթան:

Երբ մ. Բիվէնը դուրս գնաց՝ Մարկոսն առաջարկեց Մարտինին քաղաքը ման գալ, բայց սա սաստիկ վշտացած բոլոր լսածներից՝ մերժեց և տըխրադէմ նստած էր սեղանատանը մինչև լաւ կմըթնէր, երբ Տէպլին մօտեցաւ ու թևից շարժեց, կարծելով թէ քնած է:

— Ժամանակ չէ՞ քնելու, — ասաց Մարկոսը և ոլոր մոլոր երկայն սանդուխներով տարաւ իւր տիրոջը մինչև նոյն իսկ կտուրի տակ գտնուած մի փոքրիկ ննջարան, սիրուն զարդարած ամերիկական ձևով, ուր երկու նեղկակ մահճակալ ու մի լուացարան կար:

— Այստեղ կարծես ընդունուած է ցամաք թաշկինակով լուացուել, նկատեց Մարկոսը, նայելով ջրշէշի չափ փոքրիկ դոյլին: Երևի թէ ջրավախուժիւնից տանջուած եմ:

Մարտինի տրտմութիւնը ժամ առ ժամ աւելանում էր:

—Օ՛հ Պի՛նչ, Պի՛նչ.—ասաց նա մտահոգ՝ մեկնելով ճանչնող մահճակալի վերայ.—ինչ ասես կտայի, միայն թէ մօտդ նստէի և քո ձայնը լսէի, թէկուզ հէնց Պէկսնիֆի զղուելի տանը:

—Օ՛հ Վիշապ, Վիշապ,—ուրախ ուրախ կըրկնեց Տէպլին.—ես էլ նոյնը կրկնէի, եթէ մեր մէջ այսքան ընդարձակ ջուր չը չլինէր և լետ դառնալն էլ ամօթ: Բայց ես Սմերիկայումն եմ, սիրելիդ իմ Կասյոյտ Վիշապ, և տիրոջս հետ հարստութիւն պէտք է ձեռք բերեմ. ով բարձրանում է լերան գլուխը, ստորին աստիճաններից չպէտք է ցած դայ, այլապէս—երբէք գազաթին չի հասնի:

—Շատ սիրուն է ասած, Մարկոս, ձայն տուեց Մարտինը.—վստահ նայենք դէպ յառաջ: Գուրս գնանք շուտով Նիւ-Յօրկից ու գնանք մի լաւ գաղթավայր: Վաղն և եթ գործի կկենամ ու կը սկսեմ աշխատել: Բարի գիշեր, Մարկոս:

—Ձեզ լոյս բարի:

Գաղթականներն անուշ քնեցին:

Հէնց որ առաւօտը լուսացաւ, Մարտինն սկսեց թափառել Նիւ-Յօրկի փողոցները, մի գրասենեկից միւսն էր վազում, մէկ այս գործակալի հետ էր խօսում, մէկ միւսի հետ, և աշխատում էր մի այնպիսի գաղթավայր գտնել, որ ամենից շահաւէտ տեղ կարող էր լինել մեր գաղթականի համար: Բոլոր առաջարկութիւններից նա ընտրեց «Յգեմի

Հովիտը»: Միստէր Բիվէնը, որի հետ այդ օրը միջոց ունեցաւ նա խորհրդակցել, այդ տեղի մասին հաստատ տեղեկութիւններ չունէր, սակայն լսել էր, որ դա լոյս է տալիս ժամանակով ամենաճարկածներից մէկը դառնալու:

—Յոյս ունիմ, որ կաշխատէք ամեն զգուշութիւն գործ դնել այդ քայլն անելիս, ասաց միստէր Բիվէնը, երբ որոշուած էր որ Մարտինը գետին պիտի առնէր Նգեմում.—Յգեմի հովտում գետիններ առնելու գլխաւոր գործակալութիւնը գրտնւում էր Ֆիւլլինգտօնում—գնացքն երեկոյին է դուրս գնում այնտեղ:

Որովհետև Նիւ-Յօրկի թագաւորութիւնն զգալի կերպով ճնշել էր Մարտինի նիհար քսակը, ուստի որոշեց հէնց նոյն օրը քաղաքից հեռանալ: Ի սրտէ բարեաւ մնա՛ս ասելով մ. Բիվէնին, խօսք տուեց իւր մասին տեղեկութիւններ հաղորդել հէնց որ կհաստատուէր իւր նոր տեղում: Միստէր Բիվէնն էլ խոստացաւ խօսքով ու գործով օգնելու Մարտինին:

Այն գնացքը, որով ճանապարհ ընկան ապագայ կալուածատէրերը, երեք ահագին կառքերից էր բաղկացած. կանանց, ջէնտրմէնների և նեգրների համար. վերջինս սև գոյնով էր ներկուած, որ սըխալմունք տեղի չունենար:

Մարտինն ու Մարկոսը նստեցին առաջին կառքում, որ ամենից յարմարն էր, և ուր ի թիւս այլոց թոյլ տուին նոցա ևս նստել՝ երկրորդում տեղ

չլինելու պատճառով: Նոքա կողք կողքի նստեցին և անձնատուր եղան լուրջ խօսակցութեան:

— Գէ՛հ, ինչ կասես, Մարկո՛ս, հարցրեց Մարտինն իւր ուղեկցին, երբ գնացքը տեղից շարժուեց:— Գո՛հ ես, որ Նիւ-Յօրկից ելանք և Եդեմի Հովիտն ենք գնում:

— Շատ գոհ եմ, տէր, — պատասխանեց Մարկոսը:— Եւ մե՛թէ կարելի է որևէ տեղին Եդեմի Հովտից լաւ անուն տալ: Բայց որովհետև ինձ պատմեցին, թէ այդ երկիրն ամբողջապէս օձերով լիքն է, կասկած չկայ ուրեմն, որ մենք շատ ուրախ կլինենք:

Եւ ուրախութեան ժպիտը վալլեց Մարկոսի երեսին:

— Ումե՛ց լսեցիք այդ, — խնդութեամբ հարցրեց Մարտինը:

— Մի վաճառական պատմեց հիւրանոցում: Նա եղել էր այդ կողմերը: Խօսում էինք հնչաւոր — օձերի մասին: «Երբ այնտեղ անկողին կմտնէք», ասաց նա, «զգուշութեան համար անշուշտ մի մի կացին դրէք կողքներիդ»:— Ի՞նչու համար, հարցնում եմ. — որ եթէ պատահի գիշերը զարթնէք և մահճի մէջ օձ տեսնէք, խցահանի պէս նստած և ձեզ նայելիս, իսկոյն կացնով սատկացնէք, որովհետև թունաւոր է»:

— Լա՛ւ, ինչո՛ւ վաղօրօք չասիր, — աղաղակեց Մարտինը զարհուրած:

— Ամենևին մտքովս չանցաւ: Սակայն, վաճա-

ռականը կարծեմ ուրիշ գաղթավայրիցն էր, և երևի ցանկանում էր, որ իւր Եդեմը գնայինք, և ոչ մերը:

— Կարելի է, նկատեց Մարտինը: Պարզն ասեմ, ես սրտով ուզում եմ, որ քո գուշակութիւնը արդարացի լինի:

— Ես հաւաստի եմ դորանում, ասաց Մարկոսը բոլորովին անվրդով. բայց և այնպէս պէտք է ապրել:

— Ապրե՛լ. հե՛շտ է ասելը: Բայց եթէ պատահի, որ քնած լինենք, իսկ հնչաւոր օձը խցահանի պէս բարձրանայ մեր մահճակալների վերայ, տներս կքանդուի:

Մարտինը տխուր մտածմունքի մէջ ընկաւ: Մարկոսն էլ ինչ-որ մտածում էր: Շուտով երկուսն էլ քուն մտան, ջնայելով ոչ շոգեկաւքի կատաղի սուլելուն և ոչ կառքերի յաճախակի և ուժեղ դղրոցին, որոնք կատաղութեամբ սահում էին որպէս և իցէ դարսած ընկնների վերայ:

Այժմ տեղափոխուենք Լօնդօն:

### Է.

Ծերունի Էնտօնի Չուզլլիտը իւր որդու և զառամեալ գործակատարի հետ նստած թէլ էր վայելում: Նա քիչ էր խօսում ու ցած և երբեմնակի նայում վառարանում այրուող ածուխի վերայ: Քանի մի շաբաթից ի վեր նա այնքան էլ ա-

ուող չէր. նորա ծերացած գունատ դէմքը, որ առաջ էլ մի առանձին կենդանութիւն չուներ, վերջին օրերում աւելի ևս գունատուել էր, հանգել, և օրէցօր կորցնում էր լսողութիւնը: Ի գուր խեղճ Զօֆֆին աշխատում էր մխիթարել իւր մեծաւորին, հաւատացնելով որ դա լոկ մըսելու հետևանք է և շուտով կանցնի, սակայն Էնտօնին գլուխը թափ էր տալիս միայն և պնդում, թէ իւր բանը պըրծած է, և թէ ժամ է արդէն տեղի տալ երիտասարդներին: Զօնսը թագուն ուրախութեամբ դիտում էր իւր հօր օրէցօր նուաղելը, թուելով իւր մտքում այն բազմաթիւ փայլուն ձեռնարկութիւնները, որ կարող էր ի կատար ածել ծերունու մահից և հարուստ ժառանգութիւնը ստանալուց լետոյ: Այս քաղցր ցնորքների մէջ էր հայրասէր որդին՝ երբ դուռը բաց եղաւ և անակնկալ կերպով մտաւ մ. Պէկսնիֆը:

— Զգիտեմ այդ դժբ էք, թէ ձեր ուրուականը, զարմացած հարցրեց Զօնսը: Ի՞նչն է ձեզ քաշել դէպի մեզ:

— Չնչին, բայց մի և նոյն ժամանակ բաւական նշանաւոր մի գործ, պատասխանեց հիւրը:

— Հէնց այդքան: Շատ գեղեցիկ: Լսում էք, հայրիկ: Պէկսնիֆն այստեղ է: Լսում էք, կրկնեց նա, ծերունու ուսը թօթուելով. Պէկսնիֆն այստեղ է:

Ծերունին ցնցուեց, ողջունեց հիւրին և թէյ առաջարկեց, իսկ Զօնսը պատճառելով թէ գործ

ունի՝ դուրս գնաց, խոստանալով շուտ վերադառնալ:

— Այժմ, իմ անգին Զուզլվիտ, մենք ու մենք ենք, ասաց Պէկսնիֆը. ասացէք խնդրեմ ի՞նչ բանով կարող եմ օգտակար լինել ձեզ: Ես չափազանց զարմացայ, երբ ստացայ ձեր նամակը, որով հրաւիրում էիք զալ ձեզ մօտ մի շատ նշանաւոր գործի մասին խորհրդակցելու:

Էնտօնին նսրից մտածմունքի մէջ ընկաւ և չպատասխանեց, չնայելով, որ ճարտարպետը նորան հասկացնելու համար թէ ժամանակը թանգարժէ և թէ կարող է Զօնսը վրայ հասնել, մերթ դունին էր նայում, մերթ ժամացոյցին:

Ծերունին լուռ էր և անտարբեր. բայց յանկարծ նորա մեռելային դէմքը կենդանութիւն ստացաւ. բռունցքով պինդ խփեց սեղանին ու գոչեց.

— Զի՞ կարելի որ լսէք և ինձ թոյլ տաք խօսել: Զեր աղջիկը յարուել է իմ Զօնսին, որ իմ հարստութեան ժառանգն է: Սա հրապուրում է ձեզ, չէ: Դուք այդ գիտէք, Պէկսնիֆ, որովհետև խորամանկ Հին աղուէս էք: Խնդրեմ մի հակաճառէք, ես լաւ եմ հասկանում ձեզ, Հին կեղծաւոր ու խաբէրայ... լսում էք, սյ, որդիս, աւելացրեց նա ցածր ձայնով, դուան կողմը նայելով, և նորից դառնալով Պէկսնիֆին՝ նախկին ձայնով ասաց.

— Ի հարկէ, որդիս կարող էր կուսակցութիւն ունենալ և այն՝ հարուստ. բայց ես կարծում եմ,

որ ձեր աղջիկը կարող է նորան լետ կասեցնել զուարճութիւններից ու շուայլութիւններից: Նա էլ երեխայ չէ, և մանտաւանդ փորձուած ընտանիքումն է մեծացած: Պէտք է Ջօնսի համակրութիւնը գրաւէք, չէ որ հին խորամանկն էք և անշուշտ գիտէք, թէ ինչպէս պիտի վարուել որդուս նման երիտասարդների հետ:

—Սակայն ցանկալի էր իմանալ, մտածեց Պէկսնիֆը, շեղակի նայելով իւր խօսակցին, հէնց այս էր ինձ ասելիքը:

Ծերունին կամացուկ փնթփնթում էր, ձեռքերն էր շփում և զանգատուում ցրտից, լետով կրակին աւելի մօտենալով մէջքը Պէկսնիֆին զարձրեց, գլուխը ցաւագին խոնարհեց և բոլորովին մոռացաւ ինքն իրան: Այս գրութեան մէջ մնաց նա մինչև որդու գալը:

—Իարձեալ քնած է, ասաց Ջօնսը, երբ մըտնելով տեսաւ իւր հօրը, լսում էք, ինչպէս խըւմփում է:

—Իիտէք, միտէր Ջօնս, կամացուկ նկատեց Պէկսնիֆը, ինձ թւում է, չվախենաք խնդրեմ, որ ձեր հայրը զգալի կերպով նուազում է: Ես այնպէս եմ նկատում, որ նա խիստ փոխուել է:

—Այդպէս էք նկատում, հարցրեց Ջօնսը սարսափած: Դատարկ բան է, նա մեզանից աւուղջ է: Ի՞նչ նոր բան կայ ձեր տանը, ի՞նչ է անում միսս Գրայիան:

—Փառք Աստուծոյ, ամենքս լաւ ենք, աղ-

ջիկս ողջունում էր ձեզ: Բայց ի՞նչ աղմուկ է:

—Երևի ժամացուցի մի տեղը խարաբ է եղել, պատասխանեց Ջօնսը և նայեց պատի ժամացուցին:

—Տարօրինակ ժամացոյց է, նկատեց Պէկսնիֆը: Այդ միջոցին ծեր Զօֆֆին ողբալի ձայներ արձակեց և մեր խօսակիցները լետ նայելով՝ ծեր Զուզլվիտին փռուած տեսան գետնին՝ կեանքի հազիւ նկատելի նշույններով: Հաւատարիմ գործակատարը առջևը ծունկ չոգած՝ դիտում էր նորա թոյլ շնչառութիւնը:

Հիւանդին բարձրացրին, բժիշկ կանչեցին. սա արիւն թողեց, դեղեր գրեց, բայց կաթուածն այնպէս երկարեց, որ հազիւ կէս գիշերին նորա չարած անզգայ մարմինը դրին մահճի մէջ:

—Ինձ մենակ մի թողնէք խնդրեմ, մեռելանման Ջօնսը շնչաց Պէկսնիֆին: Իմ բաղտս էր, որ դուք այստեղ գտնուեցաք, ապա թէ ոչ կը կարծէին թէ ես եմ պատճառը:

Ի՞նչպէս թէ դուք էք պատճառը, գոչեց Պէկսնիֆը:

—Ձեզ յայտնի է, որ երբեմն կատակ էի անում, բայց սրտով երբէք չեմ ցանկացել դորա մահը: Մի գնաք, Պէկսնիֆ, ի սէր Աստուծո ինձ մենակ մի թողնէք:

Ջարհուրելի էր այդ գիշերը: Լուսադէմ էր, երբ ճարտարապետը հիւանդին ծեր Զօֆֆիի խնամքին յանձնելով մի փոքր ազատ շունչ առաւ և

Չուզլվիտի ննջարանից Ջօնսի ընդունարանն իջաւ.

— Վճռուած է ուրեմն, ասաց Ջօնսը. դուք ինչ մօտ կմնաք, մինչև տեսնենք ինչ է լինում: Եստ անպիտաններ կան, որոնք նախանձից զանազան անբարեմիտ լուրեր են տարածում իմ մասին:

Պէկսնիֆը Համաձայնեց, բայց յանկարծ նորա աչքին սոսկալի տեսարան բացուեց: Ջօնսը մի ճիչ արձակեց և երկուսն էլ երկիւղից յետ յետ գնացին. սենեկի մէջ տեղը, մի ձեռքը սեղանին յեցած, իսկ միւսն իւր միակ Հաւատարիմ բարեկամի ուսին կանգնած էր ծեր Էնտօնին, իւր սովորական Հին զգեստով: Նորա նիհար մթազնած դէմքի վերայ յաւիտենականութեան աջը դրօշմել էր «մահ» օրհասական խօսքը:

— Սա լաւ է, շատ լաւ է, պնդում էր ծեր Չօֆֆին: Նստացրէք բազկաթոռի մէջ, շուտով կլսուանայ: Ես դորան ասացի, որ անհանգիստ չը լինի. դեռ երեկ ասացի, որ ամեն ինչ կանցնի:

Հիւանդին նստացրին բազկաթոռի մէջ բաց լուսամտի առաջ առաւօտեան թարմ օդը շնչելու, բայց էլ ոչինչ ջանք կարող չեղաւ ծերունուն կեանք պարգևել. հոգին մարմնից բաժանուեց և ամեն հաշիւ գոցեց կեանքի հետ:

Պէկսնիֆը Ջօնսի խնդիրքով թաղման պատրաստութիւններն սկսեց տեսնել, և ամենից առաջ մի հասակաւոր կին գտաւ, որին և յանձնեց հսկել

Հանգուցեալին: Միտորիսս Գէմպը, այս էր յարգելի կնոջ անունը, առհասարակ հիւանդապահի պաշտօն էր վարում, բայց չէր մերժում նաև այնպիսի յանձնարարութիւններ, որ առաջարկել էր նորան ճարտարապետը: Նա բնակւում էր մէկ ինչ-որ Սվիդլապայլի մօտ, որ չափազանց տարօրինակ անուան հետ, մի և նոյն ժամանակ պարապում էր երգող թռչունների առևտուրով և սափրչութեամբ: Այնտեղից Պէկսնիֆը գնաց յուղարկաւորութեանց կապալառու միտքեր Մօուլդուի մօտ և յայտնեց, որ Հանգուցեալ Չուզլվիտի որդին ոչինչ ծախք չէ խնայում, միայն թէ արժանաւոր կերպով յարգուի իւր ամենասիրելի հօր յիշատակը կարելին շքեղութեամբ տնօրինելով նորա թաղումը:

Անմխիթար որդին փափագում էր բազմաթիւ հրաւիրագրեր ցրուել, բայց մտածելով, որ վաղուց իւր հայրը յարաբերութիւնը կտրել էր ամենի հետ՝ թողեց այդ մտադրութիւնը: Աւստի վճռեցին, որ եթէ թաղմանը քիչ մարդ գայ՝ մ. Մօուլդուին առաջարկեն մարդիկ վարձել:

— Բժշկին չմոռանա՛ք, ասաց Ջօնսը ճարտարապետին:— Նա անշուշտ պիտի լինի, որովհետև ամեն ինչ գիտէ, և որ ես անմեղ եմ այս գործում:

— Սակայն, ո՛ւր է մեր սիրելի Չօֆֆին.— յեղծ կարեկցութեամբ հարցրեց Պէկսնիֆը, նայելով իւր շուրջ և կարծես որոնելով սենեկում:

— Այնտեղ է, նորա մօտ,— վշտահար պատաս-

խանեց Ջօնսը, ձեռքը մեկնելով դէպի վերնայարկ տանող սանդուխը:— Իմ կարծիքով լաւ կլինէր նոյն իսկ, որ մեռելապահի եկած ժամանակ այդ հինաւուրց ծերին այստեղ բերէինք, թէ չէ, Աստուած գիտէ, ինչ լիմարուժիւններ կարող է անել:

Պէկսնիֆը բարձրացաւ Չուզլվիտի ննջարանը, ուր մեռնողի գլխավերևը, ձեռները ջերմեռանդութեամբ խաչած և գլխիկոր նստած էր հաւատարիմ գործակատարը. նա չնկատեց Պէկսնիֆին և հեծում էր ցած ձայնով. բայց երբ վերջինս նորա ձեռքը բռնեց, հեզութեամբ տեղից վերկացաւ և թոթովեց մեղմօրէն.

— Եօթը տասնեակ և էլի մի տասնեակ— այս ամենը միայն մի ութանոց է կողքին էլ մի զրօ: Ուրիշները ինն տասնեակ էլ են ապրում: Ինչո՞ւ աւելի չապրեց սա: Ես սիրում էի սորան. թուաբանութիւնը մենք միասին ենք սո՛րբել:

— Եկէք ինձ հետ, միտէր Չօֆֆի, ասաց Պէկսնիֆը. արհայցէք:

— Լա՛ւ, շատ լաւ, այս ըոպէիս, պատասխանեց ծերուկը:— Մ՛հ, Չուզլվիտ և Որդի, հին հաստատութիւն: Ձեր միակ որդին է, մ. Չուզլվիտ, ձեր հարազատ որդին:

Նա լռեց. դէմքը սովորական անտարբեր արտայայտութիւնն ստացաւ: Նա համբերատար ողբով թոյլ տուեց Պէկսնիֆին, որ իրան ցած տանի ընդունարանը, ուր և կամաց նստեց աթոռի վերայ նոյն իսկ անկիւնում, ուր նստում էր միշտ: Ամեն ինչ

լռեց տան մէջ, միայն խեղճ Չօֆֆին ծանր հառաչանքներով ընդհատում էր երբեմն գերեզմանական լռութիւնը:

Ջօնսը թաղուած էր տխրութեան մէջ: Մինչև թաղումը կարծնէր՝ նա շարունակ մտատանջութեան մէջ էր այն զարհուրելի զգացմունքով, որ նա դեռ տանն էր: Դուռը փոքր ինչ ձայն կհանէր՝ դողը բռնում էր և իսկոյն գունաթափ ու վախեցած լետ էր նայում, կարծէք ուրուական էր դուռը բացանում. կրակը ձայն կհանէր վառարանում, ուսի վրայից լետ կնայէր, վախենալով, թէ մի գուցէ սոսկալի պատկեր պիտի տեսնէ, որ սպիտակ պատանով շարժւում է ածուխի վերայ: Ամենափոքր ձայնը աղմուկում էր նորան. մի գիշեր գլխավերը ոտնաձայն լսելով՝ բարձր ձայնով գոռաց, կարծելով, թէ մեռելը դադաղից վեր է կացել և ման է գալիս սենեկում:

Վերջապէս ծերունի Չուզլվիտի մարմինը սառը հողին լանձնելու օրը հասաւ: Մ. Մօուլդը կաշուից դուրս էր եկել և հանդէսը փառաւոր անցաւ, իսկ հանդիսականները, որոնք հետաքրքրութեամբ բերանաբաց նայում էին պճնազարդ դիակառքին ու նորա չորս սևազգեցիկ ձիերին, բարձրաձայն յայտնում էին իրանց հաւանութիւնը: Դադաղի ետևը՝ ամենից առաջ, աչքերը համեստութեամբ խոնարհած գնում էր մ. Մօուլդը, ետևից երկու անյայտ ջէնտլմէններ քաշ էին տալիս վշտազգեաց միստրիս Գէմպին: Սև մահուդ կպցրած

մի կառքում նստած էին՝ Զօնսը, Պէկսնիֆին ու բժիշկը, որ խէրէսի ու զուարճութեան սիրահար էր: Նոյնտեղ, անկիւնում կուչ եկած, Հեկեկում էր խեղճ Զօֆֆին, որ թաշկինակը տանը մոռացած՝ բռունցքով էր սրբում աչքերը, և թէպէտ այդ հանգիստւոր ընդէին՝ նկատեցին նորան այդ վարմունքի անմարդավարի լինելը, բայց նա ոչինչ չը լսեց. և երբ գերեզմանատանը դադարը գոյցեցին, ծերուկը, գերեզմանի առջև ծունկ չոքած՝ իւր բարձրաձայն հեկեկանքը միացրեց թարմ խոնաւ թումբի հետ:

—Սրի՛ ու վայելուչ հանգէս կազմիր,—գժգոհութեամբ նկատեց մ. Մօուղի:

—Վեր կացէք, մ. Զօֆֆի, չէք ամաչում, աւսաց բժիշկը:—Սլստեղ խոնաւ է: Նայեցէք մ. Զօնսին. նա որդի է, բայց և այնպէս վայելուչ է պահում իրան:

—Ես սիրում էի, գոչեց զառամեալ գործակատարը: Նա բարի էր և ինձ չէ անսլատուել: Ո՛վ իմ խեղճ հին բարեկամ և տէր: Որդի՛դ. միակ ուրզիդ:

—Գիտէ՛ք, այնքան էլ խելօք չէ դա,—գունաթափ Զօնսը դիմեց Պէկսնիֆին ու բժիշկին, ձեռքը դէպի Զօֆֆին մեկնելով:—Ականջ մի դնէք խրնդրեմ: Ինձ չի զարմացնի, եթէ մի որ և է խոշոր լիմարութիւն դուրս գալ դորա բերանից: Հայրըս դորան իմ խնամքին յանձնեց, և ինչ էլ խօսի՛ այնուամենայնիւ կխնամեմ դորան:

Զօնսի վեհանձն խօսքերը մեծ տպաւորութիւն գործեցին լսողների վերայ, և մ. Մօուղի հրաւիրած անձանօթ անձերից, որոնք պատել էին գերեզմանը, հաւանութեան ձայներ հնչեցին: Իսկ Զօֆֆին անխօս՝ իւր սիրտը ծածկեց և նորից կուչ եկաւ սգաւորների կառքի միջին անկիւնում:

Գերեզմանատունը դատարկուեց: Վերջին անգամն էլ ճռնչացին դռների ժանգոտ կոճակները. թաղման պարագաները ժողովեցին. ձիաներն ախոռը տարան. բժիշկն ուր-որ հարսանիք գնաց: Ամեն ինչ սովորական շաւղի մէջ մտաւ. Զօնսի վերջին օրերն ընդունած արտասովոր մռայլ տեսքըն անցաւ, և այդ փառաւոր թաղումից մնացին միայն Մօուղի երկար բարակ հաշիւները:

Երկու օրից լետ Զօնսը Պէկսնիֆին իւր հաճութիւնը յայտնեց՝ փեսայանալու նորան, և օժտի մասին կարճատեւ, բայց տաք խօսքուզրուցից լետ՝ արժանաչարգ ճարտարապետի հետ դէպի Վայտշիր ուղևորուեց: Պէկսնիֆը հեռատեսութեամբ կարողացաւ կանխաւ տեղեկութիւն տալ աղջկանցը փեսացուի գնալու մասին և տնային համեստ աշխատանքի միջոցին՝ այդ անսպասելի հանգիստումը խիստ հաճելի տպաւորութիւն գործեց նոցա վերայ: Նորատի օրիորդները թանկագին հիւրի ներկայութեան շնորհիւ չափազանց կենդանութիւն էին ստացել և —որ շատ հագուազիւտ բան էր նոցա մէջ—շատ

քնքշոյշ ու սիրային ուշադրութիւն էին ընծայում միմեանց: Գոյրերի այս փայլուն տրամադրութիւնը այնքան քաջալերեց Ջոնսին, որ առանց երկար մտածելու, յայտնեց, թէ եկել է իւր ձեռքն ու սիրտը միսս Գրացիային առաջարկելու նպատակով: Սա առաջուայ պէս պատուեց նորան խրտուիլակ, հրէշ և այլ շատ թէ քիչ սոցա նման փաղաքշական անուններով. բայց այս բոլոր մանր բաներն ամենևին արգելք չեղան իւր կատարեալ հաճութիւնը տալու Ջոնսին: Գործի այս կերպարանքը փոքր ինչ շփոթեց միսս Սառային. սա վշտացած էր երևում և իրան փոքր ինչ անտարբեր էր պահում զէպի հիւրը, որ և ստիպեց Գրացիային իւր մարդուն պաշտպան հանդիսանալ: Այս հանգամանքը մի այնպիսի փոթորկայից խռովութեան մէջ գցեց քոյրերին, որին վերջ դնել անկարող եղան նոյն խկ ինքն արժանայարգ և կեանքի ամեն զէպքերում խորագէտ մ. Պէկսնիֆը: Կռիւր հետզհետէ սաստկացաւ և վերջապէս միմեանց գլխին մի շարք տաք տաք նախատինքներ թափելուց յետոյ, քոյրերն արտասուակից աչքերով վազեցին վերև իրանց սենեակները: Ընտանիքի յարգելի պետը աչքերի արտասուքը մաքրելով վշտահար հառաչ արձակեց:

— Ի՞նչ էք կամենում, — հարցրեց նորան Ջոնսը կոպիտ կերպով:

— Ուղիղն ասեմ, այս վայրկենիս իմ հոգին սլացել էր զէպի մեր սիրեցեալ ազգակիցը՝ ձեր

հանգուցեալ հայրիկը, վեհանձնաբար պատասխանեց Պէկսնիֆը:

Ջոնսը գունաթափ աղաղակեց.

— Լռեցէք և չհամարձակուէք երբէք ոչ իմ և ոչ ուրիշ մէկի մօտ՝ այդ առարկայի մասին խօսել: Ճարտարապետն անյապաղ խօսքի նիւթն ուղեց փոխել, բայց մի ոտնաձայն լսեց, և Պինչը հեալով ներս վազեց սենեակը: Նա խիստ յուզուած էր, բայց նկատելով, որ իւր վարպետը կողմնակի մարդու հետ է խօսում, սաստիկ վախեցաւ, թէ պէտ նորա զէմքից նկատելի էր, որ մի խիստ անյետաձգելի բան ունէր ասելու, և այդ յարգելի պատճառ էր ներողութիւն խնդրելու յանկարծակի մտնելուն համար:

— Մ. Պինչ, ասաց Պէկսնիֆը. ներեցէք, շատ անվայել էր ձեր այստեղ մտնելը:

— Ներեցէք, տէր, որ դուռը չբաղխեցի. ես այնքան զարմացայ, երբ նոցա այստեղ տեսայ, մանաւանդ այնպէս շտապում էի, որ...

— Ասացէք, վերջապէս, թէնչ էք ուզում, — անհամբերութեամբ ընդհատեց Պէկսնիֆը:

— Իսկոյն եկեղեցումն էի և երգեհոն էի նուագում, — սկսեց Պինչը, շունչը լետ բերելով և ամօթից գդակը շարժելով: — Յանկարծ լետ նայեցի ու տեսայ, որ ականջ են դնում մի տարիքով տղամարդ և մի նորատի կին: Սկզբում չկարողացայ նոցա մթնում ճանաչել, բայց առաջարկեցի նստել: Նոքա մերժեցին և երաժշտութեան համար շնոր-

Հակալ լինելով՝ ինձ Հարցրին, այսինքն կինը Հարցրեց.— կարճեմ դուք միտեք Պէկանիֆի մօտ էք բնակու՞մ:— Ես պատասխանեցի, որ այ՛ո՛, պատիւ ունիմ նորա մօտ լինելու, և մինչև անգամ ինձ թոյլ տուի աւելացնել, որ դուք իմ բարերարն էք և թէ շատ եմ պարտական ձեզ: Յետոյ նորից Հարցրին, այսինքն՝ դարձեալ կինը, և ոչ թէ մարդը. որ կողմից կարող ենք կարճ ճանապարհով մ. Պէկանիֆի մօտ գնալ, առանց Վիշապի կողմը պըտոյտ գալու:

Ճարտարապետն ուշադրութիւնը լարեց և ահանջները լաւ սրեց:

— Յետո՛յ:

— Ես պատասխանեցի, թէ բաղդաւոր կհամարիմ ինձ ուղեկցել իրենց: Ուղարկեցին պարսպի առջև սպասող կառքի ետեւից, իսկ իրանք ինձ հետ այտեղ եկան: Ես առաջ վազեցի, որ ձեզ իմաց տամ. նոքա էլ իսկոյն այտեղ կլինեն:

— Ո՞վքեր պիտի լինեն, — ասաց Պէկանիֆը մըտախոհ:

— Տէր իմ Աստուած.— գոչեց Պինչը.— կարճեմ արգէն ասացի թէ ո՞վքեր են: Մարդն այն ծեր ջէնտլմէնն է, որ լիշնւմ էք, հիւանդ պարկած էր Վիշապում, և նորատի օրիորդն էլ, նորան խնամողը:

Թովմասը սարսափեց և մի քանի քայլ յետ գնաց դէպի դուռը, այն արտայայտութիւնից, որ ստացաւ մ. Պէկանիֆը վերջին խօսքերի վերայ: Այն

երկիւղը, որ կարող էր ծեր Մարտինի բարեհաճութիւնից զրկուել՝ նորան ատելի Ջօնսի իւր տանը լինելու պատճառով, այն Հանգամանքը, որ իւր ապագայ փեսացուն առանց մահուցափ վիրաւորելու՝ չէր կարող ճանապարհ դնել կամ գոնէ մի կերպ ծածկել, իւր տան մէջ ծագած խռովութիւնն ու նորան մի բարեյաջող ելք տալու հնար չունենալը, — և այս բոլորի հետ ծեր Չուզլլիտն ու նորա սանուհին դռան շէմքում.— անբարեյաջող Հանգամանքների այսպիսի զարհուրելի կապակցութիւնը մեծ ճարտարապետին կատարեալ յուսահատութեան մէջ ձգեց:

— Աստուած իմ, այս ի՞նչ արեցի.— ճչաց Թովմասը, իւր վարպետի դրութիւնը տեսնելով:— Ես կարծում էի, թէ ուրախութիւն պէտք է պատճառեմ. . .

Բայց այդ միջոցին դուռը սաստիկ բաղխեցին: Սպասելու ժամանակ չէր, պէտք էր մի կերպ կարգադրել: Պէկանիֆն ինքն իրան զսպելով Պինչին ուղարկեց իւր դուտորներին նախազգուշացնելու որ աղմուկ չանեն, որովհետև հիւրեր են գալիս, Ջօնսին էլ աղաչեց մի փոքր սպասի, մինչև կխօսէ հիւրերի հետ դործով: Իսկ ինքը ծածկեց իւր լայնանիստ գլխարկն և ձեռքին առնելով պարտիզի բահը՝ առաջ գնաց մինչև բակի դուռը հիւրերին դիմաւորելու, ուրախ երգ երգելով:

— Դ՛ուք էք, մ. Չուզլլիտ, աղաղակեց ճարտարապետը, դռները բանալով:— Ձե՛մ հաւատում աչքերիս: Ի՛նչ բաղդաւոր ժամ: Աղաջում եմ ներս

Հրամայեցէք: Դուք ինձ պարտիզպանի շորով էք տեսնում, բայց հաւաստի եմ, որ չէք բարկանայ: Այգեգործութիւնը Հին պարապմունք է: Ադամը առաջին այգեպանն էր. իսկ իմ Եւան այս աշխարհում չէ այլ ևս:

Եւ Հիւրերին ներս տարաւ իւր ընտիր ընդունարանը:

— Աղջկերքս ուրախութիւնից կցնդուեն, — շարունակեց նա. — նոքա շատուց այսպիսի մի ախորժելի դէպքի էին սպասում ձեզ հետ ծանօթանալու, սիրելի Միսս Մէրի:

Պէկանիֆի խօսելիս ծեր Մարտինն ակնապիշ դիտում էր նորան, բայց ոչ սովորական խիստ հայեացքով:

— Պէկանիֆ, ասաց նա՝ դէպի պատուհանը տանելով: Ինձ չափազանց յուսահատեցրեց եղբօրս մահը: Երկար տարիներ օտարացած էինք մենք: Աստուած հոգին լուսաւորէ: Կեանքը շատ փոքր միջիթարութիւն պարգևեց նորան:

Պէկանիֆը ծերունուն այդպէս հեզահամբոյր դրութեան մէջ տեսնելով՝ Զօնսի ներկայութեան առթիւ ունեցած երկիւղը փոքր առ փոքր նսեմացաւ նորա սրտում:

— Ներեցէք, տէր, — ասաց նա. — կարող եմ հաւատացնել, որ էնտօնին իւր վերջին օրերին երջանիկ էր իւր որդու, այդ օրինակելի որդու անկեղծ սրտակցութեամբ: Որբացած երիտասարդը ներկայումս իմ տան մէջ է որոնում իւր վշտերի սփոփումը: Ներեցէք ակամայ վարմունքիս, սիրելի եղ-

բայր, — աւելացրեց Պէկանիֆը արտասուքն աչքերին ծերունու ձեռքը սեղմելով. — բայց ես ուղիղ մարդ եմ և պարտական եմ լիակատար իրաւունք շնորհել խեղճ որբին:

— Այստեղ է, ա՛յս տանը, — շնչաց ծեր Զուզլվիտը, ապշած նայելով Պէկանիֆին, բայց ապա սթափուելով գոչեց.

— Ցանկանում եմ տեսնել նորան:

— Անշուշտ բարեկամութիւնից դրդուած, — վրայ բերեց Պէկանիֆը: — Ներեցէք, բայց նա իմ հիւրս է...

— Ասացի, որ ուզում եմ նորան տեսնել: Եթէ ես թշնամական դիտաւորութիւն ունենայի, կպատուիրէի աչքիցս հեռացնել:

— Ուրեմն կրկանչեմ, և նա իսկոյն կգայ:

Պէկանիֆը գնաց Զօնսին կանչելու և հազիւ քառորդ ժամից վերադարձաւ նորա հետ: Իսկ մինչև դոցա գալը երևացին Պէկանիֆի հակառակօրդ դուստրները և սեղանը բացարին թանկագին հիւրերին հիւրասիրելու համար:

Որքան էլ Պէկանիֆն աշխատում էր համոզել Զօնսին թէ անհրաժեշտ է, որ լարգանքով պահէ իրան հօրեղբօր առջև, այնուամենայնիւ երիտասարդի վարմունքն ու ձևերը ընդունարանը մտնելիս՝ չափազանց անհամակրելի էին:

— Որդեակ, — ասաց ծերունին. — ես լսեցի, որ դու լաւ որդի ես եղած:

— Ինչպէս առհասարակ կվայելէ որդուն, ՚ի

Հարկէ, — պատասխանեց Ջօնսը: — Ոչ լաւ և ոչ էլ վատ ուրիշներից:

— Ի ու, ասացին, օրինակելի որդի ես եղել, շարունակեց ծեր Մարտինը, նայելով Պէկսնիֆին:

— Ես նոյնպիսի լաւ որդի էի, ինչպէս և դուք բարի եղբայր:

— Իս խօսքերը խիստ են, բայց վշտացած ես, — նկատեց Մարտինը կարճատև լռութիւնից յետոյ: — Տուր ինձ ձեռքդ:

Ջօնսը կատարեց նորա ցանկութիւնը: Մի անպատշաճ լռութիւն տիրեց: Մ. Պէկսնիֆի ոչ անհոգ ուրախութիւնը, ոչ էլ յօժար ցանկութիւնը կարող չէղան այդ խմբակի Հակառակորդ կողմերը Հաշտեցնելու մօտեցնել: Սառայի կրծքում սփռուած անչափ նախանձն ու ատելութիւնը չէր շիջանում և յաճախ այն աստիճան յուզուում էր, որ նորա քնքոյշ Հայրն անգամ յուսահատուում էր: Մէրի Գրէգէմի ներկայութիւնն իսկ (ծեր Մարտինը այս անունով էր ծանօթացրել իւր սանուհուն Պէկսնիֆի ընտանիքի Հետ), չնայելով նորա Հեզ ու խաղաղ դրութեանը, գիւրութիւն չպատճառեց. մ. Պէկսնիֆի դրութիւնը խիստ ծանր էր: Ոչ մի անգամ նա իրան այնպէս թեթև չէր զգացել, ինչպէս այն ժամանակ, երբ ծերունի Չուզլվիտը վերջապէս ժամացուցին նայեց ու յայտնեց, որ տուն զնալու ժամանակ է:

— Մենք Վիշապ Հիւրանոց ենք իջևանած, ասաց Մարտինը. — կարելի էր ոտով գնալ: Եղանակը

լաւ է, բայց մթնում է: Միտէր Պինչ, խնդրեմ ճանապարհ դրէք մեզ:

— Մեծ յօժարութեամբ, — պատասխանեց Պէկսնիֆը: Միտէր Պինչ, բարեկամ, լապտերը վերցրէք և զգուշութեամբ առաջնորդեցէք:

Թովմասն այդպիսի մի խորհրդի կարիք ունէր, որովհետև նորա ջղերը ցնցուել էր այդ երեկոյ գլխովն անցած ալեկոծութիւնից՝ և այնպէս դողում էր, որ Հազիւ էր լապտերը բռնել:

— Ուրեմն, մ. Պինչ, բոլորովին գոհ էք ձեր ներկայ կացութեամբ մ. Պէկսնիֆի մօտ. — Հարցրեց Մարտինը ճանապարհին:

Թովմասը մեծ Հիացումով պատասխանեց, թէ ինքն այն աստիճան պարտական է Պէկսնիֆին, որ Հազիւ թէ իւր ամբողջ կեանքում կարող լինի իւր երախտիքն արտայայտել:

Պինչի՛ ազնիւ վարպետի գովեստին շուայած խօսքերն ամենևին դուր չեկան ծերունի Չուզլվիտին, որ Թովմասի Հիացումը շինծու համարեց և լոկ Պէկսնիֆին հաճելու համար: Ծերունին շատ վշտացաւ այս բանի վերայ, առաւել նորա համար, որ Պինչը առաջին անգամն իսկ հաճելի թուաց նորան իւր անկեղծութեամբն ու միամտութեամբ:

— Ի ու էլ ուրիշներից աւելի չես եղել, մտածեց նա. — կամեցար խաբել ինձ, և լոկ չափազանց եռանդից ծառայութիւն անել ցանկացար Հովանաւորիդ:

Ամբողջ ճանապարհին էլ ոչ մէկը չխօսեց: Վի-

շապի դռանը նոքա բաժանուեցան: Թովմասը հառա-  
չեց, լապտերի մոմը հանգրեց և ազարակովը տխուր  
լետ դարձաւ դէպի տուն:

Տան մօտակայ խաչփողոցում ճանապարհը կըտ-  
րեց մի սնծանօթ: Թովմասն սկզբում զարմացաւ,  
բայց տեսնելով որ Ջօնսն է,

— Ախ, դուք էք, միտէր Ջօնս, հարցրեց: Ո՞ր-  
տեղից լոյս ընկաք:

— Ձեր գործը չէ, — պատասխանեց Ջօնսը: — Կո-  
րէք ինձանից:

— Շատ մարդավարի էք, — նկատեց Թովմասը:

— Ձեզ հետ չեմ, — վրայ բերեց Ջօնսը: Դուք  
նվ էք:

— Ես մարդ եմ, և նոյնքան իրաւունք ունիմ  
քաղաքավարութիւն պահանջելու, որքան և ուրի-  
շը, — հեզութեամբ պատասխան տուեց Թովմասը:

— Դուք ստախօս էք և չարժէ ձեզ հետ խօ-  
սել, — բարկացած գոչեց Ջօնսը: Խորհուրդ եմ տա-  
լիս լուէք և չխառնուէք իմ և ազգակիցներիս յա-  
րաբերութեանց մէջ: Երբ շունը բարձրանում է,  
ուր նորան չեն հրաւիրում, զազանակով են ծե-  
ծում: Հասկացա՞ք:

— Հասկացայ. սողայն խնդրում եմ թոյլ տուէք  
անցնեմ:

— Կանցնէք, երբ կամքս լինի: Կցանկայի իմա-  
նալ, թէ այդ ինչեր էք սարքում մեր բարեկամ մի  
շրջմովիկի հետ:

— Ես ձեր բարեկամ շրջմովիկների հետ ծանօ-

թութիւն չունիմ, — քաջութեամբ աղաղակեց Պինչը:  
— Իսկ ես ասում եմ, որ ծանօթ էք:

— Եթէ ձեր հօրեղբօր մասին էք խօսում, թոյլ  
տուէք նկատել, որ նա շրջմովիկ չէ, — պատասխա-  
նեց Թովմասը: — Այժմ էլ չէք ցանկանայ ճանապարհ-  
տալ ինձ:

— Տեղից չը շարժուէք, մինչև ես իրաւունք  
չտամ, — մռնչաց Ջօնսը և ձեռնափայտը բարձրաց-  
րեց Պինչի գլխին, բայց սա ճարպիկութեամբ թե-  
քուեցաւ և մի վայրկենից նոյն ձեռնափայտը չգի-  
տեմ ինչ հրաշքով այնպիսի յաջողակ հարուած տուաւ  
նոյն իսկ Ջօնսի ճակատին, որ սա գլխիվայր ընկաւ  
առուի մէջ: Արիւնն աղբիւրի պէս սկսաւ հոսել  
պատուած քունքից: Ջօնսը թաշկինակով ծածկեց  
վէրքը, ոտի կանգնեց և ուզում էր գնալ, բայց  
տատանուեց:

— Վիրաւորե՞լ եմ ձեզ. — վախեցած հարցրեց  
Թովմասը: — Շատ ցաւում եմ. բայց պատահմամբ է-  
եղել. ես միայն ուզում էի ձեռնափայտը ձեռքիցդ  
խլել: Թեք ընկէք իմ ուսի վերայ, ես կը բռնեմ.  
ձեզ, մինչև որ փոքր ինչ կազդուրուէք:

Ջօնսը լուեց, բայց ցաւից ու չարութիւնից  
խանդարուած դէմքը ցոյց էր տալիս, որ իւր կեան-  
քում երբէք մոռանալու չէ այդ դէպքը:

Ճանապարհին մինչև տուն հասնելը երկուսն  
էլ լուռ էին: Ջօնսն առջևից էր գնում, իսկ Թով-  
մասը քանի մի քայլ հեռու նորա ետևից, տխուր  
մտածմունքի մէջ, թէ ինչպէս կվերաբերուի իւր

բարերարն այս անահնունելի արկածքին: Երբ Զօնսը դուռը բաղխեց, խեղճ Թովմասի սիրտը սաստիկ զարկեց, բայց այդ զարկն աւելի արագացաւ, երբ Գրացիան դուռը բացեց և իւր փեսայուի երեսն արիւնոտած տեսնելով՝ բարձր ճիչ արձակեց:

— Զայն մի հանէք, խնդրեմ, — ասաց Զօնսը զայրացած, երբ ամենքն ընդունարանը մտան: — Չընչին բան է. մութը գիշեր էր, և ծառի ճիւղին դիպայ. ուրիշ բան չկայ:

— Գրացիա, զաւանկս, սառը ջուր, 'ի սէր Աստծու, ջուր, աղաղակում էր շփոթուած Պէկսնիֆը նշանուած փեսայի կողքին: — Մկրտան ուր է: Նուտով մաքուր լաթ բերէք:

Գրացիան վերքը լուաց: Պէկսնիֆը քնքշութեամբ բռնած ունէր ասպաղայ փեսայի գլուխը, իսկ Պինչը, կատարելապէս զգալով իւր յանցանքը, եռանդով խառնում էր հոլլանդական կաթիլների սրուակը: Վերջապէս վերքը կապեցին, հիւանդին պարկայրին մահճի մէջ, և տանը ամեն շշունչ լռեց. բայց Պինչի քունը չտարաւ և երկար ժամանակ մահճակալի մօտ նստած մտածում էր, և աշխատում արժանապէս գնահատել այդ սարսափելի օրուայ իւր գործողութիւնների եղանակը: Խեղճ Թովմաս: Նա իբան կտտարելապէս յանցաւոր էր համարում:

Բ.

Վերջապէս ուշ գիշերով, լուսնի պայծառ լու-

սի տակ, երերուն երկաթուղիով յոգնեցնող ու երկիւղալի երկօրեայ ճանապարհորդութիւնից յետ՝ երիտասարդ Մարտինն ու Մարկոս Տէպլին հասան այն վայրին, ուր պէտք է գետին գնէին: Գնացքը կանգ առաւ, և ճանապարհորդներն երկար նստելուց թրմրած ոտները հագիւ շարժելով՝ դուրս եկան շոգեկառքից: Նոյն իսկ երկաթուղու գծի մօտ հպարտ բարձրանում էր մի վիթխարի սպիտակ շինուածք, որ իւր տգեղ տեսքով չափազանց նման էր հիւանդանոցին: Այդ շինութեան հէնց տանիքի տակ կրպցրած վերնագրի վերայ սպիտակ մեծ տառերով նկարուած էր.

«Ազգային հիւրանոց»:

Որովհետև այս հիւրանոցն, 'ի միջի այլոց, մօտ էր երևում այն նաւահանգստին, ուր կանգնում էին Եդեմ գնացող շոգենաւերը, ուստի Մարտինն ու Մարկոսը որոնեցին այնտեղ իջւանել: Մի սենեակում տեղաւորուելուց և փոքր ինչ հանգիստ վայելելուց յետ նոքա կարճատև խորհրդակցելով որոշեցին վերջնապէս 'ի յայտ բերել իրանց բոլոր առձեռն միջոցները: Երևաց, որ Մարկոսը քառասուն և վեց ֆունդ ստերլինգ ունէր, իսկ Մարտինի բոլոր կարողութիւնը ութից չէր անցնում: Սա այն հետևանքն ունեցաւ, որ Մարտինն օգտակար համարեց առաջարկել իւր աւելի հարուստ ուղեկցին, որ միասին մի բան ձեռնարկեն «Մարտին և Տէպլին» անունով: Այս վեհանձն առաջարկութեան նա կցեց, որ Մարկոսը, իւր դրամը գնելով այդ հիմ-

նարկութեան մէջ որպէս լրացուցիչ դրամագլուխ, կտանայ սմեն տեսակ եկամուտների կէսը. իսկ ինքը, Մարտինը, մէջ կը բերէ իւր ընդունակութիւնները և ճարտարապետական հմտութիւնները: Խեղճ Մարտինը դեռ էլի այն համոզմունքի էր, թէ ժամանակով կարող էր հովանաւորել Մարկոսին և առատ վարձատրել նորա ջերմեռանդութիւնը:

— Զգիտեմ, ինչպէս շնորհակալ լինեմ ձեզանից, տէր, — ասաց Տէպլին: — Սուրը ձեռքիս կաշխատեմ ձեզ համար: Իսկ իմ անունս հանեցէք. ես այդ բաներից միւսնոյն է բան չեմ հասկանում. ես միմիայն ընկեր կլինիմ: Սյդպէս էլ գրեցէք, «Մարտին և ընկ.»:

— Ինչպէս կամիս, — պատասխանեց Մարտինը ծանր կերպով. իսկ այժմ խմենք նոր ձեռնարկութեան յաջողութեան կենացը. մտիք խնդրեմ ճաշարան և երկու բաժակ խերէս բեր:

Մարտինն արդէն մոռացել էր, որ Մարկոսն էլ ծառայ չէր, այլ ընկեր, բայց Տէպլին իւր սովորական ժրութեամբ հնազանդուեցաւ: Քնելուց առաջ միմեանց խօսք տուին, որ առաւօտը միասին գնան գետին վաճառող գործակալին:

Գործակալը, որ լափշտակչի տեսք կրող մի նիհար մարդ էր, կանաչ համազգեստ հագին և գըլխին լայնանիստ յարդի գլխարկ, որ ծալած էր ծոծրակի վերայ, բնակւում էր մի փոքրիկ պահականոցում և շատ նման էր անտառապահին: Անունը միստէր Սկեզեր էր: Նա շէմքում հանդիպեց այցե-

լուներին և երբ իմացաւ նոցա գալու նպատակը, ներս հրաւիրեց «գրասենեակը»:

— Սակայն կարելի՞ է իմանալ թէ դա ի՞նչ է, — գոչեց Մարտինը ներս մտնելով պահականոց և մի հայեացք ձգելով մի մեծ յատակադժի վերայ, որ բռնել էր գրասենեկի ամբողջ պատը:

— Եդեմն է, պատասխանեց Սկեզերը:

— Ես չեմ կարող երևակայել, թէ դա քաղաք է:

— Մի՞թէ: Այո՛, քաղաք է և այն՝ ընդարձակ:

Եւ ճշմարիտ, մակարդակի վերայ մեծ ճշտութեամբ նշանակած էին եկեղեցիներ, շուկաներ, հիւրանոցներ, ապրանքի պահեստներ, հոյակապ խանութներ, հրապարակը, թատրոնը — միով բանիւ ամեն տեսակ մասնաւոր և հասարակական շինուածներ, և մինչև անգամ բանտերը:

— Վահ, շատ նշանաւոր տեղ է, — գոչեց Մարտինը: Բայց վախենում եմ, թէ ինձ պատշաճ ոչ մի գործ չի գտնուիլ այնտեղ:

— Ի՛նչ էք հրամայում, քաղաքի դեռ կէսը հազիւ է կառուցուած. գործ ի՛նչքան կուզես:

Մարտինը ազատ շնչեց:

— Ա՛յ էս հրապարակը կարծեմ դեռ աւարտած չէ, — ասաց նա ցոյց տալով մակարդակի վերայ:

— Ո՞րը, — հարցրեց գործակալը: Սա՛: Ո՛չ, դեռ ծախուած էլ չէ:

— Սկզբում սա կարծեմ բաւական լաւ գործ կլինի. դու ի՛նչ ես կարծում, Մարկոս, — շշնջաց Մարտինն ընկերին՝ արմուռնկը խփելով նորան:

—Շատ պատուական,—խոնարհ պատասխան տուեց Մարկոսը, որ աչքը Սկէզզէրից ամենեւին չէր հեռացնում:

—Բայց կարելի է այնտեղ բաւականաչափ ճարտարապետներ կան,—հարցրեց Մարտինը գործակալին այնպիսի մի ձայնով, որ կարծես թէ վախենում էր այդպիսի յաջող դէպքը ձեռքից փախցնել:

—Ընդհակառակն,—հանգստացրեց նորան Սկէզզէրը.—ներկայումս փորձուած ճարտարապետների կատարեալ բացակայութիւն է այնտեղ: Խորհուրդ եմ տալիս որ շտապէք:

Մարտինը գոհ այս բացատրութիւնից՝ որոշեց առանց յետաձգութեան գործը սարքել և իւր ուրնկերով իբրև կատարեալ սեպհականութիւն ձեռք բերեց մի մեծ կտոր գետին, վճարելով ընդամենը հարիւր դոլլար\*), մի գին, որ ժամանակին համեմատ, ինչպէս հաւաստիացնում էր գործակալը, անհաւատալի արժան էր:

—Իսկ սրտեղ է նշանակած մակարդակի վերայ այդ գետինը,—հարցրեց Տէպլին գործակալին:

—Մակարդակի վերայ,—հարցը կրկնեց սա: Խնդրեմ...

Եւ միտէր Սկէզզէրը շուռ եկաւ մակարդակի կողմը, բաւական ժամանակ մեծ ուշադրութեամբ նայեց և կարծէք թէ գտնելով մատը զարկեց գլխաւոր ծովեզրի հէնց մէջ տեղը:

\*) Դոլլարը՝ արծաթ դրամ է 1 ուրբի 33 4. արժէքով:

—Ս.հն այստեղ է, ասաց նա յարգանքով.—Նայեցէք խնդրեմ: Սակայն, գուցէ դուք կասկածում էք նաև, պարոններ, թէ կոյ աշխարհումս և նոյն իսկ Ամերիկան,—աւելացրեց Սկէզզէրը վըշտադէմ.—եթէ այդպէս է՝ ի գուր էք ժամանակ կորցրել այստեղ գալու:

Մարտինը մի նախատալից հայեացք ձգեց Մարկոսի վերայ, իսկ Սկէզզէրը սկսեց ծախած գետնի չճարի ստացականը գրել: Երբ թուղթը պատրաստուեց և մի տարօրինակ ստորագրութեամբ կնքուեց՝ գործակալը տուեց Մարտինին ու ասաց.

—Գործը վերջացած էմ համարում: Ծնորհաւորում եմ և ցանկանում ամեն յաջողութիւն:

Մարտինն ու իւր ուղեկիցը այսպէս մի կտոր գետնի տիրացած ընդարձակ Եդեմ քաղաքում, հրաժեշտ տուին մ. Սկէզզէրին և դարձան հիւրանոց: Բայց հէնց որ «Ազգային հիւրանոցում» լուր տարածուեց, թէ երիտասարդ անգլիացին գետին է առել Եդեմում և առաջին իսկ շոգենաւով մտադիր է ճանապարհ ընկնել, հիւրանոցի բոլոր բնակիչները շտապեցին ծանօթանալ այդ բաղտաւորի հետ: Ամեն մէկը շնորհաւորում էր այդ նշանաւոր մարդուն և սեղմում նորա ձեռքը: Մարտինը օրուայ հերոսն էր դարձել: Նա ամբողջ օրն անցկացրեց նոր ծանօթների հետ, որոնք կատարեալ հիացմամբ գովում էին նորա ձեռնարկութիւնը և հանգամանքներից օգտուելու ընդունակութիւնը: Այս բոլոր գովասանքները նա ընդունում էր ինչպէս մի

կարևոր բան և զրգուռումէր նորա ինքնասիրութիւնը: Այն ինչ Մարկոսը բոլոր պատիւն ու փառքն ընկերին թողած՝ մինչև երեկոյեան մութը պարապած էր ճանապարհի պատրաստութեամբ և այլ կարևոր իրեր գնելով, որոնք փորձուած մարզկանց խորհրդով անհրաժեշտ էին ասպագայ տնտեսավարութեան համար Եդեմի Հովտում: Այսպէս անցաւ չորս օր:

Սուսուտ էր: Մեր երևելի հողատէրերը հրաժեշտ տուին յարգողներին ու շոգենաւը մտան: Տախտակամածը լիքն էր գաղթականների խիտ ամբոխով: Այնտեղ կային և ասպագայ երկրագործներ, որոնք երբէք արօր չէին տեսել, և փայտատներ, որոնք մանկութիւնից կացին չէին առել ձեռքին, կային նաև ճարտարապետներ, որոնք ընդունակ չէին մի հասարակ որջ յարմարացնելու: Երկրորդ զանգը հնչեց, և Մարկոսն ինչ-որ լիշեց ու վազեց մ. Սկէզզէրի գրասենեակը. սա կանգնած իւր պահականոցի շէմքում, երբ տեսաւ գէպի ինքը վազող Մարկոս Տէպլիին՝ ձայնեց.

— Ինչ էք անում: Մեծ անխելքութիւն է երկրորդ զանգից լետ շոգենաւից դուրս գալ: Ի՞նչ էք կամենում:

— Ուզում եմ ձեզ մի բան հարցնել:

— Խնդրեմ:

— Ի՞նչէ նշանակում այն իրարանցումը, որ տեղի ունեցաւ այստեղ մեր առևտուրի առթիւ, և ին-

չո՞ւ ամենքն այգպէս շտապում են շնորհաւորել ընկերակցիս:

Գործակալը մտածեց, ձեռները դարսեց լայն անդրավարտքի գրպանները և թքեց մի կողմ.

— Տեսէք, շոգենաւին կուշանաք, ասաց նա անտարբեր:

— Հէնց դորա համար էլ խնդրում եմ ձեզ, որ շուտ պատասխանէք: Ես ոչ մի կերպ ընկերիս մենակ չեմ թողնի որ Եդեմ գնայ: Պատասխանեցէք շուտով. ի՞նչ է նշանակում այս իրարանցումը:

— Նշանակում է, որ ձեր ընկերին յարգում են, պատասխանեց Սկէզզէրը նենգ ժպիտով, — և նորան այստեղ նայում են ինչպէս մի հերոսի վերայ:

— Ինչո՞ւ համար:

— Երբ կը գնաք ձեր տեղն՝ այնտեղ կիմանաք: Սակայն լս՞ում էք: Երրորդ զանգն է:

Շոգենաւը մօտ էր և Մարկոսը լսում էր Մարտինի գոռալու ձայնը, թէ շոգենաւը կերթայ, եթէ չշտապէ: Ուստի Մարկոսը մտածելով, որ բանը բանից անցել է, շտապով Սկէզզէրին ստահակ անուանեց, և մի թռիչքով շոգենաւը մտաւ:

— Մարկոս, Մարկոս, — գոռում էր Մարտինը շոգենաւից:

— Այստեղ եմ, ուրախութեամբ պատասխանեց Մարկոսը, թռչելով շոգենաւի մէջ: — Ես գո՞հ եմ: Ամեն ինչ յաջող է գնում: Յառաջ:

Շոգենաւի ծխնելոյզից կայծեր բարձրացան, և սկսաւ արագ ընթանալ լայն գետի հոսանքի հա-

կառակ ուղղութեամբ, մուգ ջրի վերայլայն փրփր-  
րալից հետք թողնելով ետևից:

Այս նաւորութեան սկզբին՝ շոգենաւն օրը  
երեք անգամ կանգ էր առնում նաւահանգիստնե-  
րի մօտ, ուղևորներ իջնում էին ցամաք և նորերը  
մտնում նաւի մէջ. բայց քանի առաջ էր գնում,  
այնքան ուշ ուշէին հանգիստում նաւահանգիստներ,  
այնքան գետեզրը անմարդաբնակ էր դառնում: Ամ-  
բողջ ժամերով նաւից ոչ մի բնակավայր չէր նըշ-  
մարւում, բացի փայտատների հիւղերից, որոնց մօտ  
շոգենաւը հանգիստ էր առնում վառելիք ընդու-  
նելու: Օրերն անցնում էին մէկը միւսի ետևից. եր-  
կինք, անտառ և ջուր—ահա՛ թուրքը, ինչ որ պատ-  
կերանում էր գաղթողների յոգնած աչքերին, որոնք  
թուլացած էին տաժանելի ձանձրոյթից ու անտա-  
նելի խորշակից. բայց շոգենաւն՝ առաջ էր գնում,  
այնպէս որ այլ ևս անհնար էր թւում լետ դառ-  
նալը, իսկ հայրենիքը նորից տեսնելու յոյսը իբրև  
անիրագործելի երազ էր ներկայանում: Ուղևորների  
թիւը մի քանի օրում նշանաւոր կերպով պակա-  
սեց: Ել չէր լսում ոչ երգի ձայն, ոչ կատակ. ոչ  
մի տեսակ խօսք ու զրոյց էլ չէր կրճատում ձանձ-  
րալի ժամերի երկարութիւնը: Եւ որքան նոքա մօ-  
տենում էին ուղևորութեան նպատակավայրին, այն-  
քան խիտ անտառները քշանում էին ու ցած աւա-  
զուտ ափերի երկայնութեամբ ձգւում էին ընդար-  
ձակ ճահիճներ:

Շոգենաւը կանգ առաւ վերջապէս Եդեմի հան-

դէպ: Կարծես նոր էր այդ երկիրը մերկացել Հա-  
մաշխարհային Ջրհեղեղից, այն աստիճան տղմով  
ծածկուած էր այդ գգուելի ճահիճը, որ այդքան  
հրապուրիչ անուն էր կրում: Որովհետև ջրի սա-  
կաւութեան պատճառով չէր կարելի նաւահանգս-  
տին մօտենալ, ուստի Մարտինին և Մարկոսին իրանց  
ծանրոցի հետ մակույկով փոխադրեցին այնտեղ: Մը-  
թին ծառերի մէջ երևացին քանի մի ողորմելի  
խրճիթներ, որոնցից իրանց մեծութեամբ որոշում  
էին երկու կեղտոտ գոմեր: Ոչ թատրոններ, ոչ էլ  
հասարակական ուրիշ շինուածներ նկատելի չէին,  
ուստի և անդիւացիք ենթադրեցին, թէ հասած չեն  
բուն քաղաքին, այլ դեռ գտնւում են արուարձա-  
նի մօտ:

— Ահա՛ Եդեմի բնակիչ է գալիս, — ասաց Մար-  
կոսը: — Սա կօշնէ մեզ իրերը տանելու: Մի վհա-  
տուիք, տէր: Ե՛լ, պապի:

Մթնում, կաղալով և փայտի վերայ լենուելով  
առաջ էր գալիս Եդեմի գունատ և ուժասպառ  
բնակիչը, որի աչքերը փոս էին ընկել, կոպիտ ցնցո-  
տիների մէջ պատասպարուած, բոբիկ և գլխաբաց:

— Օտարակոն էք, — զոչեց նա:

— Այո՛, — սիրով պատասխանեց Մարտինը: Ի՞նչ-  
պէս էք:

— Վատ եմ, տէր, — թույլ ձայնով ասաց եդե-  
մացին: Տենդը սարսափ է ձգել վրաս, ոտներս գրե-  
թէ իմս չէ. — այժմ հազիւ եմ մանգալիս: Այս ծան-  
րօցը ձերը չէ՞, պարոններ:

—Մերն է, — պատասխանեց Մարկոսը: Իսկ չէք կարող ցոյց տալ մէկին, որ օգնէր մեզ մինչև քաղաքը հասցնել:

— Իմ մեծ որդին կանէր, եթէ կարողանար, բայց խեղճը նա էլ տենդով պարկած է, իսկ փոքրս անցեալ շաբաթ մեռաւ:

— Հոգևով ցաւում եմ, պապի, — ասաց Մարկոսը, գաղթականի ձեռքը սեղմելով: — Սակայն, անհանգիստ մի լինէք: Թոյլ տուէք՝ ձեռքիցդ բռնեմ և տուն հասցնեմ: Մեր ծանրոցը չի կորչի, շարունակեց նա, խօսքը Մարտինին ուղղելով: Երևի թէ ոչ ոք չկայ դորան տիրացող. շուրջը մարդ չկայ. գոնէ դա մխիթարական է:

— Այստեղի մարդկանց ահա՛ ինչ տեղ պէտք է որոնել, — ասաց ծերունին, ձեռնափայտը գետնին զարկելով. — կամ այն էն մացառների ետև: Մեծ մասին թաղեցինք: Միւսները ցրուեցան այս ու այն կողմ, իսկ որոնք մնացին այստեղ, վախենում են երեկոները տանից դուրս գալ:

— Երևի գիշերուայ օդը շատ վնասակար է:

— Կատարեալ թոյն:

— Մարկոսն ամենևին չյուզուեց: Ձեռքից բռնեց և սկսեց հարց ու փորձ անել, թէ՛ սրտեղ է գանուում իրանց գնած գետինը: Ծերը պատասխանեց, թէ շատ հեռու չէ, և սահմանակից է իւր սեպհական ամբարանոցին. ապա բացատրեց, թէ մի փոքր առաջ ինքն է թաղել այդ գետնի նախկին տիրոջը: Այս էլ անտարբերութեամբ լսեց Մար-

կոսը: Կարճ ասենք, հիւանդ գաղթականը տարաւ նոցա մի սողորմելի խրճիթի մօտ, որ խարխուլ շինուած էր հաստ, անտաշ գերաններից, առանց դռների և լուսամտի ապակիներն էլ կոտրած: Մտնելով այդ հիւղը Մարտինը յուսահատ վայր ընկաւ հողէ յատակի վերայ և դառնութեամբ հեկեկալ սկսեց:

— Աջն ու Խաչը ձեզ, ինչ էք անում, — գոչեց Մարկոսը: Թողէք, ՚ի սէր Աստծու. այդ տեսակ միջոցներ ոչինչ չեն օգնի:

— Ներիր, սիրելի Մարկոս, — ասաց Մարտինը տնքալով ու արտասոււքն աչքերին, բայց ես, ուղիղն ասեմ, չեմ կարող ինձ զսպել, թէկուզ սպանիր, բայց չեմ կարող:

— Ի՞նչ էք անում, տէր: Դուք վաճառատան տէրն էք, և ձեր աշխատակցից ներողութիւն էք խնդրում, ասաց Մարկոսը և սկսաւ ճանապարհի պարկը բացանել: — Դա լինելու բան չէ, քանի որ գործներս դեռ լաւ են ընթանում, և մեր վաճառատան անուներ չի պայթիլ: Հանգստացէք, խընդրեմ: Նայեցէք այստեղ, ի՞նչ ասես չունինք: Այս խոզապուխտ, պաքսիմատ, այս էլ վիսկի \*). և ինչ պատուական, — առաջին տեսակիցն է: Ահա՛ թէյամանը, վերմակը, հա՛ ՚ի դէպ և կացինը: Տեսէք է,

\*) Օղիի մի տեսակն է, որի հետ ջուր ու շաքար խառնելով՝ պատրաստում են զրօզ, նաւաստիների մէջ տարածուած մի ըմպելիք:

ինչպիսի գրոգ եմ պատրաստում ձեզ համար: Հա-  
ւատացէք, փառաւոր ընթրիք ենք ունենալու:

Այսպիսի մի պատուական երիտասարդի ընկե-  
րութեամբ ուղիղ որ չէր կարելի բոլորովին յուսա-  
հատութեան մէջ ընկղմուել: Մարտինը պարկի  
կողքին նստեց, դրպանից դանակը հանեց, և սկսեց  
եռանդով կլանել այն ամենը, ինչ որ այդպէս սի-  
րայօժար առաջարկում էր նորան Մարկոս Տէպլին:

— Տեսնում եք, ինչպէս քաղցրացաւ, — ասաց  
Մարկոսն ընթրիքից յետոյ. — այժմ կսկսենք մեր  
ննջարանը զարգարել: Այս վերմակը դանակներով  
կը մեխենք այնտեղ, ուր օրինաւոր մարդկանց  
տանը դուռն է լինում: Բաւական տեղ է բռնում,  
չէ: Իսկ ներքևի բաց տեղը որ քամին չփչէ, գերանով  
կը փակենք: Դա էլ վատ չի լինի: Այս ձեր վեր-  
մակը, այս էլ իմը: Այժմ ձեզ եմ հարցնում, տէր,  
ինչը կարգելէ մեզ մի լաւ քնել այստեղ:

Չնայելով ուրախ խօսքուզրուցին՝ երկար ժա-  
մանակ Մարկոսի քունը չտարաւ: Նա փաթթուե-  
ցաւ վերմակի մէջ, պարկեց հէնց դռան մօտ և  
մտաբերելով օձերը՝ կացինը դրաւ կողքին: Խեղճ  
կացութեան նորութիւնը, ապագայ կեանքի միջոց-  
ների անյայտ լինելը — այս ամեն զարհուրելի յուզ-  
մունք առաջացրին նորա սրտում: Որքան էլ Մար-  
տինն աշխատում էր ցոյց տալ թէ քնած է, սա-  
կայն Մարկոսը հակառակն էր համոզուած, և ա-  
մենևին չէր կասկածում, որ նա էլ միևնույն տը-  
խուր մտածմունքներին է անձնատուր: Սա ամե-

նից վատ բանն էր, որովհետև վհատութիւնը ու-  
րիշ բոլոր պատճառներից աւելի է նպաստում վնա-  
սակար կլիմայի ազդեցութեան: Ոչ ոք դեռ այն-  
պէս չէր ուրախացել առաւօտը բացուելու վերայ՝  
ինչքան Մարկոսը, որին կոտրած լուսամտից ներս  
թափանցող արևի պայծառ շողքը զարթեցրեց խան-  
գարուած քնից:

Նա կամաց դուրս գնաց, որովհետև արդէն  
իր ընկերը քուն էր մտել: Լուացուեց խրճիթի մօտ  
վազող առուակի ջրով և սկսաւ Եդեմը դիտել:  
Ընդամենը մի երկու տասնեակ խրճիթ էր երևում,  
որոնց կէսն անմարդաբնակ. բոլորն էլ փթած և  
կիտաւեր: Այստեղ այնտեղ նկատուում էին երկիրը  
մաքրելու ջանքեր. մի տեղ միայն դաշտի նման  
բան էր երևում, և այնտեղ, ծառի այլուած կոճ-  
ղերի մէջ բնում էր փոքր քանակութեամբ սի-  
մինդր: Ուր-որ մի քաղցած շուն էր ոռնում: Գետ-  
նից բարձրանում էր խեղտող, տաք և հիւանդոտ  
գոլորշի և նստում էր շրջակայ բոլոր առարկանե-  
րի վերայ. Մարկոսի ոտի հետքերում ճահճուտ հո-  
ղի վերայ սև տիղմ էր երևում:

Նորեկ անգլիացիների կալուածները գրեթէ  
միմիայն անտառներն էին կազմում: Ծառերն այն-  
պէս խիտ էին այնտեղ, այնպէս մօտ մէկմէկու, որ  
քիչ էր մնում խեղտէին միմեանց. նոցա արմատ-  
ների վեր և ծառերի միջի փոքրիկ տարածութեան  
վերայ բսած էր ճահճային բարձր խոտ, ահագին  
փիլիկներ և մաշուած թփեր:

Մարկոսը գնաց նաւահանգիստ, ուր նախընթաց երեկոյին թողել էին իրանց իրերը. այնտեղ քանի մի գունատ ու նիհար մարդիկ տեսաւ, որոնք սիրով օգնեցին ծանրոցը նոր բնակարանը փոխադրելու: Նոցա ասելով ով քիչ շատ միջոց ունէր՝ թողեց տունը տեղն ու փախաւ իսկ Նդեմում մնացողները զրկուեցան կնոջից, զաւակներից, եղբայրներից, բարեկամներից և իրանք էլ շատ նեղութիւն կրեցին: Ոմանք տակաւին հիւանդ էին: Նոքա մաքուր սրտով առաջարկեցին Մարկոսին իրանց օգնութիւնը և խորհուրդներն ու առ ժամանակ թողնելով նորան՝ տրտմութեամբ ցրուեցան իրանց բանին:

Մարտինը զարթել էր. այդ մէկ գիշերուայ մէջ նա մեծ փոփոխութիւն կրեց: Դժգոյն էր, լոգնածութիւնից և տեսութեան թուլութիւնից գանգատուում էր և մինչև անգամ խօսելը դժուարանում:

Մարկոսը եռանդով սկսել էր նոր բնակարանը կարգի բերել: Փոքր առ փոքր նա դարսեց և կարգի դրեց հետը բերած ամեն բան, բարձի թողի արած տներից մէկում մի բաւական լաւ դուռը գտաւ ու դրեց այնտեղ, ուր այդ գիշեր կախել էր վերմակը: Մի ուրիշ աւերակ տնակից բերեց մի անտաշ աթոռ, որի վերայ դարսեց թէյամանը, անագէ դոյլը և քանի մի անօթներ: Յետոյ սնդուկից շորերը հանեց և պատերի մեխերից ու սեպերից կախեց: Վերջապէս մի ուրիշ սնդուկից հանեց

մի նշանակ, որ Մարտինը շինել էր իւր ձեռքով տակաւին Ազգային Հիւրանոցն եղած ժամանակ և ամբարցեց տան դրսից ամենաերևացող տեղը: Նորա վերայ խոշոր տառերով գրած էր.

Մարտին եւ ընկ.

Ճարտարապետներ եւ երկրաչափներ:

Չնայելով շոգին՝ Մարկոսն այդ առաւօտ շաւրան շինեց, և թէպէտ քրտնքի մէջ ողողուել էր, բայց ամեն ջանք գործ դրեց, որ իւր օրինակով խրախուսէ վհատուած ընկերոջ: Մարտինը նստած էր տխուր, յօնքերը կիտած և լուռ: Մարկոսը տեսնելով, որ իւր բոլոր ջանքը Մարտինի տրամադրութիւնը փոխելու անօգուտ է անցնում, թողեց աշխատանքը, մօտեցաւ ընկերոջն ու ասաց.

—Մի վհատուէք, տէր: Թողէք վիշտը և մի բանով պարապեցէք:

—Ինձ համար մի հոգար, Մարկոս, պատասխանեց Մարտինը: Եուտով ինձ հարկաւոր չեն լինիլ այլ ևս և ոչ մէկի աշխատութիւնը: Թող Աստուած օգնէ քեզ շուտով տուն դառնալու, և թող ներէ նա ինձ, որ ես քեզ բերի այստեղ: Ինձ վիճակուած է այստեղ մեռնել—ես այդ նախազգացի հէնց երեկ գիշեր, երբ ոտք կոխեցի այս չարագուշակ ավիը:

—Հիւանդ էք ի՞նչ է, վրայ բերեց Մարկոսը քնքշութեամբ: Ձերմ ունիք: Ե՛հ, ոչինչ բան է, կանցնի: Իսկ ես ձեռաց կվազեմ հարևանների հետ խորհրդակցելու, նոքա անշուշտ միջոցներ

կունենան տեղական հիւանդութեանց դէմ, և կը տեսնէք, վաղը դուք բոլորովին առույգ ու առուջ կը լինիք:

—Մի վախենաք, աւելացրեց նա դուրս գնալով սենեկից:

Անգին Մարկոսը մի վայրկեան կանգ առաւ, յետ նայեց ու փոքր ինչ մտածեց:

—Է՛հ, միտտէր Տէպլի, ասաց ու խփեց իւր կրծքին.— այժմ, կարծես, մեր բանն այնքան էլ... այ թէ երբ պէտք է մարդու քաջութիւնը երևայ:

Նա վաղեց մերձակայ խրճիթն ու դուռը բաց արաւ. բայց դեռ ոտքը դռան շէմքը չկոխած՝ լըսեց մի ձայն, որ իր անունն էր կանչում, և՛ միւլենոյն ժամանակ զգաց, որ երկու տղայ թափուեցան իւր վերայ: Սոքա նոյն երեխաներն էին, որոնց նա շուտ շուտ լողացնում էր և կերակրում արագընթաց «Վինտ»ի վերայ:

—Այս ի՛նչ հրաշք է: Մի՞թէ սա իմ ուղեկցուհին է իւր փոքրիկ աղջկանով.— ուրախ ուրախ աղաղակեց Տէպլին, և հիացած խեղճ կնոջ ու նորա զաւակների տեսնելով՝ յետ ու յետ գնաց:—Եւ նոյն իսկ տէրն էլ հետը. ահա և իմ ընտիր բարեկամները, շարունակեց նա յուզուած ձայնով և փաղաքշական ակնարկ ձգելով տղաների վրայ.—Ի՛նչ պէս պատահեցանք. ես ամենևին չէի սպասում:

Նորա լեզուն կապուեց: Խեղճ կինը՝ ուրախութիւնից լաց էր լինում, մարդը պինդ սրղ-

մած ունէր Մարկոսի ձեռքը, երեխաները թռչկոտում էին նորա շուրջ և անխելքի պէս աղմուկ էին ձգել, մինչև անգամ հիւանդ աղջիկը մօր գրկին, տենդով բռնուած, մեկնում էր նորան իւր տաք թաթիկները և խռպոտ ձայնով թոթովում էր իրան ծանօթ անունը: Այո՛, դա Մարկոսի ծանօթ ընտանիքն էր: Բայց ի՛նչպէս էր փոխուել Եդեմի Հովտում կարճատև բնակութիւնից: Մօր հանգած տեսքը, չափազանց նիհար երեխաները, նոցա բոլորի երեսին դրոշմած անյուսալի դրութիւնը.—այս բոլորը սաստիկ ազդեցին Մարկոսի զգայուն հոգու վերայ, բայց նա թագցրեց իւր թախիծը և նախկին ուրախութիւնը պահպանեց:

—Այստեղ քնչպէս ընկաք, հարցրեց տէրը:

—Երէկ երեկոյին շոգենաւով, պատասխանեց Մարկոսը: Իսկ դուք քնչպէս էք:

—Շարունակ հիւանդ, պատասխանեց խեղճ կինը: Սակայն, Աստուծով, կլաւանանք, երբ կընտելանանք երկրին:

—Ա՛յ էդ լաւ է, — ուրախ նկատեց Մարկոսը.— իսկ գլխաւոր բանը նա է, որ չը պէտք է յուզուէք. և ամեն ինչ կարգի կընկնի: Ի դէպ՝ բոլորովին մտիցս ընկաւ, դարձաւ նա տիրոջ. ընկերս հիւանդացել է, չէ՞ք մտնիլ տեսնելու, թէ քնչ է պատահել, գուցէ մի խորհուրդ էլ տաք:

Հարևանը կնոջից լսած լինելով, թէ ինչ մեծ ծառայութիւն է մատուցել իւր ընտանիքին բարեսիրտ Մարկոսն Ամերիկա գալիս, իսկոյն գնաց

Հիւանդին այցելութիւն: Մարտինը գետնի վերայ պարկած էր հաստ վերմակի տակ, խիստ ցնորքի մէջ: Հարեանը Հիւանդի վերայ մի հայեացք ձգելուց յետ անմիջապէս յայտնեց Մարկոսին, որ ընկերը սաստիկ ջերմ ունի, և որ օրէցօր կվատանայ նորա վիճակը: Նա ասաց, որ ինքը երկար ժամանակ տանջուել է այդ Հիւանդութիւնից, և շնորհակալ է Աստուծուց, որ կենդանի մնաց:

Մարկոսի սնդուկում քանի մի դեղորայք գրտնուեցաւ: Փորձառու հարեանը ցոյց տուեց նորան թէ ինչպէս գործ դնէ, ինչ չափով, և թէ առհասարակ ինչպէս թեթեւացնէ Հիւանդի չարչարանքը: Նա ամեն կերպ աշխատում էր օգնել. խնամք էր տանում Հիւանդին և ՚ի միջի այլոց օգնում էր Մարկոսին տնտեսական աշխատանքների մէջ: Բայց տարուայ վատառողջ ժամանակն էր, և Մարտինի դրութիւնը շատ քիչ էր յոյս տալիս մխիթարական վախճանի: Երբ Մարտինը հիւանդացաւ, միւսնոյն երեկոյեան հարեանի աղջիկը վախճանեցաւ, և Մարկոսն առանց ընկերոջ յայտնելու այդ՝ թշուառ հօրն օգնեց երեխան թաղելու ծառի տակ:

Օրերն անցէին կենում: Մարտինի դրութիւնը չէր լաւանում, և առողջանալու յոյսը փոքր էր: Մարկոսի խեղճ բարեկամներն, իրանց հոգսը թողած, խնամում էին նորան ինչպէս իրանց հարազատին: Մարկոս Տէպլին այնքան աշխատում էր, որ հալից ընկնում էր. ցերեկով երկիրն էր մշակում—գիշերն Հիւանդի մօտ նստում: Մարմնով յոգ-

նած ու վշտահար՝ չէր գանգատուում և չէր յուսահատուում: Նա մինչև անգամ մոռացել էր, թէ ինչպէս հպարտ ու ինքնասիրութեամբ էր վարուում իւր հետ Մարտինը մինչև Հիւանդանալը. այժմ իւր ուղեկցի լոկ բարի յատկութիւններն էր մտաբերում և նուիրել էր նորան և՛ իւր աշխատութիւնը և՛ իւր ամբողջ սիրող հոգին:

Անցան շաբաթներ: Մարտինի առողջութիւնն անքան միայն լաւացաւ, որ կարողանում էր մի կերպ շարժուել փայտի օգնութեամբ և յենուելով Մարկոսի ուսին. բայց ընդհանրապէս նորա կազդուրումը շատ դանդաղ էր առաջ գնում, առողջարար օդի ու սննդարար կերակրի անբաւարարութեան պատճառով: Նա դեռ շատ թոյլ էր, երբ մի քամբաղդութիւն պատահեց նորան, որից միշտ վախենում էր. Մարկոսը հիւանդացաւ: Երկար ժամանակ յամառութեամբ կռւում էր այդ քաջ տղամարդը հիւանդութեան հետ. բայց նորա ջանքն անօգուտ էր,—հիւանդութիւնը ում ասես չի յաղթում:

— Սկսում է, մտածեց նա մի առաւօտ, փորձելով վերկենալ և սովորականից դուրս վատ զգալով իրան: Յաղթուեցայ, տէր, ասաց նա վերստին մահճի մէջ ընկնելով.—կեցցէ: Կեցցէ Եդեմը:

Եթէ Մարկոս Տէպլիի բարեկամները սրտանց խնամք էին տանում Հիւանդ Մարտինին, քսան անգամ աւելի էին աշխատում նորա Մարկոսին խնամելու: Այժմ Մարտինի հերթն էր աշխատել,

և ամբողջ գիշերներ անախտ աչքը կայցնելու նըստել հիւանդի գլխալերէն, ականջ դնելով այդ արտուր ու անմարդաբնակ վայրի ամեն մի ձայնին, իսկ խեղճ Մարկոսը զառանցում էր տենդի մէջ. երբեմն Վիշապի տիկնոջ հետ էր խօսում, երբեմն կոնախաղ էր խաղում և բարձր ձայնով յաղթանակը տօնում. երբեմն Թովմաս Պինչի հետ թափառում էր Վայտչիբի շրջակայքում, երբեմն ծառի կոճղերն էր դարձնում Եդեմի Հովտում:

Երբ Մարտինը գեղ էր տալիս կամ ջուր էր մօտեցնում նորա բորբոքած շրթունքներին, միով բանիւ, ամեն անգամ, երբ Մարտինը խնամում էր նորան, կամ երբ վերջինս ծանր աշխատանքից լետ տուն էր դառնում, — հիւանդի գէմքը զուարթանում էր ու գոչում.

— Փառք Աստուծոյ, ես ուրախ եմ և գոհ:

Հիւանդին խնամելը, մանաւանդ նոցա մօտ անցկացրած երկար անբուն գիշերները յաճախ լուրջ մտածմունքներ են ծնում մարդու մէջ: Մարտինը վախից մի գուցէ իւր ընկերը մեռնի, գիշերը նորա մահճի մօտ նստած յաճախ հարցնում էր ինքն իրան, կատարել է արդեօք իւր պարտքը դէպի Մարկոսը և արժանի է կացուցել իրան՝ նորա անբուն խնամատարութեան և ջերմ անձնուիրութեան: Նա իւր լիշողութեան մէջ մէկ մէկ թուեց վերջին տարուայ իւր բոլոր գործերը, և զգաց, որ ինքն արդարացի չէր և իւր պապի հետ ունեցած յարաբերութեան մէջ, և կարող էր այլապէս վա-

րուել, գոնէ ի պատիւ նորա սպիտակ մազերի: Երբեմն նա մտաբերում էր իւր ճանապարհորդութիւնը ծովի վերայ, և թէ ինչ ուշադրութեամբ ու սիրով օգնում էր Մարկոսն անօգնական կնոջ. դորա հետ նորա մտքով անց էր կենում, որ մի և նոյն հանգամանքներում Թովմաս Պինչն էլ անշուշտ այդպէս կը վարուէր: «Ինչո՞ւ այս մարդիկ այդպէս նման են միմեանց, մտածում էր նա, և ամենեւին ինձ չեն նմանում»:

Մարտինն ի բնէ անկեղծ և վեհանձն էր. բայց նա դաստիարակուած էր պապի տանը, որի կասկածելի և յամառ բնաւորութիւնը անցել էր նորան: Մարտինը գեռ երեխայ ժամանակ մտածում էր. «պապս այնչափ շատ է հոգում իւր մասին, եթէ ես էլ նոյնը չանեմ՝ ինձ մարդատեղ չեն դնի»: Եւ ինքնասէր դարձաւ: Բայց այդ երբէք չէր զգում, և պատրաստ էր վիճել նորա հետ, ով փորձէր մեղադրել նորան այդ յանցանքի մէջ:

Եդեմը ծանր դաս տուաւ Մարտինին: Խիտ անտառները, ճահիճները, վարակիչ օդն անգամ շատ պարզ դաստիարակ էին նորա համար: Մարտինը վճռեց փոխուել, ինքնասիրութիւնը դէն ձրգել սրտից, և լցնել նորանում սէր և ողորմածութիւն: «Տէր, փրկիր մեզ, աղօթում էր նա գիշերը. — մի կորցնի մեզ հայրենիքից հեռու»: Ահա թէ որ աստիճան ստորացրել էր այդ մեծամտին Եդեմի Հովտի կեանքը, — և թէ որքան բարձրացրել էր նորա ինքնաճանաչութիւնը:

Անցաւ բաւական ժամանակ: Մարկոսն սկսաւ քիչ քիչ լաւանալ, և թէպէտ դեռ երկար ժամանակ խօսելու ոյժ չունէր, բայց Մարտինին սիրտ տալու համար՝ երբեմն զողբոջուն ձեռքով գրում էր քարէ տախտակի վերայ. «առողջ եմ և ուրախ»: Եւ երբ այքան առողջացաւ, որ առանց յոգնելու խօսում էր, Մարտինը որոշեց խորհրդակցել նորահետ մի գործի մասին, որ մի քանի ամիս առաջ կարող էր ինքն անել, առանց ում և իցէ հաւանութեան կարիք զգալու:

— Մեր գրութիւնը յուսահատական է, ասաց Մարտինը: Մենք իսպառ խաբուած ենք. մեր երկկիրն ամենեւին բանի պէտք չէ, և ծախելու էլ ոչինչ յոյս չկայ, թէկուզ հէնց աննշան գնի: Մենք խելացնորի պէս թողինք Անգլիան, և մնում է մեզ՝ ինչ էլ որ լինի վերագառնալ տուն:

— Հէնց անգլիացի: Իսկ փող:

— Ամբողջ Ամերիկայում ինձ թւում է, թէ միայն մի մարդ կայ, որ կարող է մեզ օգնել, եթէ ցանկանայ, — դա միտէր Բիվէնն է:

— Ես այդ մտածեցի, երբ դուք հիւանդ էիք:

— Ի՞նչ ես կարծում, Մարկոս. մի նամակ չը գրենք նորան:

— Կարելի է, — այդտեղ ոչինչ երկիւղ չկայ. շատ շատ պէտք է մերժի կամ չպատասխանէ:

Մարտինը ցոյց տուեց ընկերոջ կանխաւ պատրաստած նամակը: Իսկ շատ պարզ էր և չէր ծածկում նոցա յուսահատ գրութիւնը, իսկ նպատ:

ինդըրում էր նորանից ազնիւ ու համեստ կերպով: Մարկոսը խիստ հաւանեց նամակի բովանդակութիւնը և որոշուեցաւ ուղարկել առաջին իսկ շոգենաւով, որ փայտի համար Եդեմ պէտք է գար:

Մի ամբողջ շաբաթ անհամբեր սպասում էին շոգենաւին: Վերջապէս մի առաւօտ վաղ զարթեցրեց նոցա փայտի համար Եդեմ եկած շոգենաւի նաստիկ փնչոցը, որ արձակում էր աւելորդ շոգին թողնելիս: Երկուսն էլ շտապեցին նաւահանգիստը և յաջողեցան նամակը շոգենաւին յանձնել:

Երկու ամսից առաջ պատասխան ստանալ կարելի չէր, ուստի պարապ ջննալու համար նոքա մնացած բոլոր ոյժը գործ դրին երկիրը մշակելու. անտառը կտրեցին, կոճղերը դարձրին և առունքը փորեցին:

Շատ անգամ երեկոները՝ ցերեկուան աշխատանքից յետ անկողին մտնելով զրոյց էին անում հայրենիքի և ծանօթների մասին, — երբեմն վերստին տեսնելու յուսով, երբեմն էլ թախծալի անյոյս զգացմամբ: Մարկոս Տէպլին զարմանքով նկատում էր, որ Մարտինը սաստիկ փոխուել է: «Ինչորովին ուրիշ մարդ է դառել, մտածում էր նա գիշերը. — առաջուայ կէսի չափ էլ չի մտածում իւր վերայ: Կաշխատեմ մէկ էլ հարցուփորձ անել»:

— Քնած էք, տէր, հարցրեց Մարկոսը:

— Ո՛չ, Մարկոս, քունս չէ տանում:

— Դարձեալ Անգլիայի մասին էք մտածում:

— Այն:

— Ես էլ: Պինչը միտս ընկաւ: Արդեօք թնչ է անում:

— Խեղճ Թովմաս, ասաց Մարտինը ցաւակցելով:

— Նա թոյլ մարդ է, տէր,— ձրի երգեհոն է նուագում, և իւր մասին ամենեւին չէ հոգում: Նորան ամենքը ծաղրում են:

— Չձմարիտ ես ասում, Մարկոս. ես այդ լաւ գիտեմ, ասաց Մարտինը այնպիսի թախծութեամբ, որ ընկերը լռեց: Յետոյ Մարկոսը հառաչեց ու ասաց.

— Ա՛խ, տէր, շատ վստահ վարուեցաք այն օրիորդի հետ:

— Գիտե՞ս ինչ կայ, Մարկոս, տաքացած գոչեց Մարտինը, անկողնից վերկենալով:— Նա շատ ապաբաղտ է: Նա իւր հոգու հանգստութիւնը զոհեց ինձ համար— նա չի կարող ամեն ինչ թողնել և փախչել, ինչպէս ես արի: Նա ստիպուած է ամեն բանի համբերել, Մարկոս: Ես հաւաստի եմ, որ նորան աւելի վիշտ է վիճակուած, քան ինձ:

— Իսկ լիշնձ ես մատանին, Մարկոս, հարցրեց Մարտինը կարճատև լռութիւնից յետ:

— Ի՞նչ մատանին:

— Թանկագին ակնով, որ նա հրաժեշտի ժամանակ ուղարկել էր ինձ: Նա գնել էր այն, գիտենալով, որ ես չքաւոր եմ ու հպարտ, և որ դրամի պէտք ունիմ...

— Այդ ո՞վ ասաց ձեզ, տէր:

— Ես գիտեմ որ այդպէս է: Շատ եմ մտածել այդ մասին, բարեկամ, երբ դու հիւանդ պառկած էիր: Եւ ես բոլորովին հանգիստ կրում էի մատիս: Սակայն դու յոգնեցար, Մարկոս, քնենք, բարի գիշեր:

— Քնեցէք, տէր, ասաց Մարկոսը անվրդով պայծառ դէմքով և շուռ գալով միւս կողքի վերայ փաթթուեցաւ վերմակի մէջ: Եւ նախ քան քնելը մտածեց. «սակայն սա խաբէութիւն է նշանակում և ոչ ծառայութիւն անել.— մի մեծ քաջութիւն չէ ուրախ լինել, երբ ամեն ինչ յաջող է»:

Ժամանակն անցնում էր: Մի քանի շոգենաւեր եկան Եգեմ, իսկ նամակ չկար: Անձրևային եղանակ սկսուեցաւ. խեղտող շոգն ու նաստակար շոգիներն իրանց մահաբեր գործն սկսեցին. ընկերները նորից վատառողջ զգացին իրանց, և սարսափահար մտածում էին տենդի կրկնուելու վերայ:

Մի առաւօտ վաղ երբ ձանձրացած երկար սպասելուց և զրեթէ պատասխան ստանալու յոյսն իսպառ կորցրած, պատրաստուում էին աշխատելու գնալ, հարևանը լուր տուաւ, թէ ափին մօտեցած է մի շոգենաւ, որ երբէք դեռ Եգեմ չէ եկած: Նոքա շտապեցին նաւահանգիստը: Սյնտեղ Մարտինը մի նամակ ստացաւ: Դողդոջուն մատներով կտրեց ծրարի կնիքը և նորա աչքերում յոյսը վերստին աւկայծեց:

— Ի՞նչ ծանր է, ասաց նա և բանալով գտաւ

մէջը մի ստուար կապ դրամ: Թէ այնուհետև ինչ մտածեցին, խօսեցին կամ շինեցին,— ո՛չ մէկը նոցանից չէր հասկանում և չէր մտաբերում: Մարկոս Տէպլին վերջերում պատմում էր, թէ երբ ինքը ուշքի է եկել՝ անմիջապէս լետ է արել նաւահանգստից փայտատի մակուկը և նորանով զննացել է շոգենաւի մօտ ու հարցրել, թէ վերջինս երբ նորից կվերադառնայ Եդեմ: Պատասխանել են՝ տասն կամ տասներկու օրից լետույ:

Չնայելով այդչափ երկար ժամանակամիջոցին՝ նոյն օրը Մարտինի Հետ շտապեց ունեցած չունեցածը կապկպել: Բայց երբ այս տենդային գործունէութեան առաջին սաստկութիւնն անցաւ և նորից սպասելու ձանձրութիւն վրայ հասաւ՝ նոցա թրւում էր, թէ շոգենաւի վերադարձից առաջ պիտի մեռնեն: Սակայն այդ տեղի չունեցաւ և երեք շաբաթից լետ աշնան մի թարմ առաւօտ կանգնած էին «Միութեան Փառք» կոչուած մի կեղտոտ ու անճուռնի շոգենաւի տախտակամածի վերայ, որ սպասուած էր նաևել չարագուշակ Եդեմի Հովտից, ուր այդքան վիշտ ու նեղութիւն կրեցին:

Վերջին զանգը հնչեց. շոգենաւը խարսխից անջատուեց, անիւները շառաչեցին և սկսաւ լողալ հոսանքի ուղղութեամբ: Ափի մօտ պահականոցի դռանը ցցուած էր մռայլ, անխօս փայտատը. նա ծխում էր և անտարբեր մէկ այս կողմն էր նայում, մէկ այն. նոյն նաւահանգստում արտասուալից աչքով կանգնած էր Մարկոսի խեղճ բարեկամուհին

իւր մարդու և երեխաների Հետ, որոնք երեսները իրանց կեղտոտ թաթիկներով ծածկած՝ բարձր ձայնով հեկեկում էին: Այս թշուառներին նայելով Մարտինի սիրտը ճմլուեց,— նա ծանր հառաչեց, իսկ քաջ Տէպլի բորբոքուած այտերի վրայից արտասուքի խոշոր աղնիւ կաթիլներ գլորուեցան:

— Դեռ շատ պէտք է քարշ գան խեղճերը, մտածում էր Մարկոսը նայելով ափին.— Ո՞րը պէտք է վերջինը լինի: Միայն ծնողներին առաջ մի սպանիր, Տէր: Սպա թէ ոչ թէնչ կլինի մանր որբիկների դրութիւնը:

— Մի վհատուէք, սիրելիք, աղաղակեց Մարտինը, գլխարկը շարժելով նաւահանգստում կանգնած խղճուկներին.— Թէ Աստուած կամենայ՝ հայրենիքում նորից կտեսնուենք:

Շոգենաւն առաջ անցաւ, իսկ նաւահանգստի ափին տակաւին կանգնած էր թշուառ ընտանիքը: Խեղճ մանկիկների բարձրաձայն անյոյս լացը, որոնք ընտելացել էին Մարկոսին ինչպէս իրանց ծնողին, դեռ լսում էր ափից և մորմոքում էր ուղևորների հոգիները, որոնք տախտակամածի բարձրից լսու և վշտահար հետևում էին թէ ինչպէս սկզբում աղօտանում էին ու լետույ աստիճանաբար անհետանում.— անակները, փայտատի պահալնոցը, և վերջապէս նաւահանգիստը իւր անմխիթար գաղթականներով: Վերստին սկսուեցան միօրինակ ճահճային եզրներ, և Եդեմի լոկ տխուր լիշատակները մնացին: Բարեկամները սրտապինդ գրկեցին միմեանց:

Առանց աւելորդ բառեր շուայլելու նոքա իրար հասկանում էին և մտքով շնորհակալ լինում Աստծուն՝ հասցրած օգնութեան համար:

Նոքա հետզհետէ հեռանում էին վշտերի ու տանջանքի տեղից: Ըստ երևութին Մարտինը կատարեալ իրաւունք ունէր ուրախ լինելու, բայց տխուր նստած նստարանի վերայ, դառնութեամբ նայում էր աւազուտ ավերին և հազիւ զսպում էր արտասուքը: Մարկոսը նշմարում էր Մարտինի նորոգուած սրտի մէջ անցածը և դիտում էր իւր բարեկամին գաղտնի հրճուանքով, որ յետոյ հիացման փոխուեցաւ, երբ յանկարծ Մարտինը ուրախ դէմքով տեղից վեր թռաւ, ձեռքը ընկերոջ թիկունքին խփեց ու բարձր ձայնով գոչեց.

—Ուրախ կաց ու քէֆ արա, բարեկամ: Կարծես թէ միջոցը գտնուած է մեր խեղճ բարեկամներին փրկելու:

—Ապրի՛ս, մտածեց Մարկոսը:—Ահա՛ թէ ինչ կնշանակի նեղութիւն կրել:

Յետոյ հարցրեց.

—Կարելի՞ է իմանալ՝ այդ ինչ միջոց է:

—Անշուշտ, պատասխանեց Մարտինը, և խույն Մարկոսի ականջին փսփոսաց իւր միտքը, որից լետ բարեկամներն ամենաուրախ տրամագրութեան մէջ էին. նոքա թուշկոտում էին, բարձր ձայնով ծիծաղում, և առհասարակ այդ օրն այնպէս անհոգ և ուրախ էին ինչպէս գայրոցի աշակերտներ:

Չնայելով իւր մեծահնչիւն անուան «Միու-

թեան փառք» շոգենաւը շատ վատ էր լողում, բայց ուղեւորներն ուրախ յոյսերով ոգևորուած և կատակի ու կենդանի խօսակցութեան մէջ՝ չնկատեցին թէ ինչպէս անցաւ ժամանակը, և շուտով Փիւլլինգտօն հասան, ուր նոքա երբեմն բաղտ ունեցան գնել այնպիսի պատուական պողպատեքեր երկիր: Նիւ-Յօրկ գնացող երկաթուղու գնացքին երկու ժամ էր մնում: Նոքա աշխատեցին կարելին փութով ծանրոցը երկաթուղու կայարանին յանձնել, իսկ իրանք շտապեցին Սկէդդէրին իրանց յարգանքը և շնորհակալութիւնը յայտնելու նորա արած անմոռաց ծառայութեան համար:

Գործակալն, ըստ սովորականին, ծխամորչը բերնին կանգնած էր «գրասենեկի» շէմքում և սպասում գնողներին: Երբ անգլիացիներին նկատեց՝ ռանգը թռաւ.—այն աստիճան վատ տպաւորութիւն գործեցին նորա վերայ, որովհետև հէնց այն օրը, երբ այդ վաճառքը գնեցին, նա մատը թափ էր տուել նոցա վերայ, ենթադրելով, որ վերջին անգամ է կենդանի տեսնում նոցա: Որչափ մեծ եղաւ նորա զարմանքը, երբ իւր կենդանի թաղած անձինք դէմ առ դէմ հանդիպեցան նորան, թէպէտ և սաստիկ տանջուած նորա բարեացակամութեան շնորհիւ, բայց այնուամենայնիւ կենդանի, և ինչպէս նորան թուեցաւ, պատրաստ ամեն տեսակ վրտանգաւոր գործ կատարելու:

Ի՞նչ էր նոցա ցանկութիւնը: Ինչո՞ւ Սկէդդէրը իրան նեղ տեղն զգաց, երբ յանկարծ Մարտինի

յարձակումից կուչ եկած՝ պինդ կպաւ գրասենեկի ետևի պատին, և թնչ նպատակով Մարկոսը, որ ընկերոջ ետևից տուն վազեց այդ խանութը, այնպէս պինդ և հեռատեսութեամբ դուռը կողպեց իւր ետևից: Այս ամենը մ. Սկէզզէրը շատ շուտով հասկացաւ, որովհետև ստիպուած նոցա արած բաւական խիստ նկատողութիւններից ձեռք բերած գետինների ընտիր յատկութիւնների և վաճառման բարեխիղճ եղանակի առիթով, այլև բոլորովին անպաշտպան և մատնուած տեսնելով իրան հակառակորդների ձեռքը՝ յարգելի օրէնսգէտը ակամայ կամօք ՚ի ցաւ սրտի ստիպուած էր վերադարձնել այն բոլոր գումարը, որ ստացել էր պատուական գետնի փոխարէն:

Մարտինն անվրդով փողը դրեց գրպանը և Սկէզզէրին մենակ թողեց Մարկոսի հետ, որը ընկերոջ դուրս գնալուց լեա զարմանալի արագութեամբ խաբեբայի ձեռները կապեց և լրագրի թըղթից մի ահագին կտոր ճխտեց նորա բերանը:

— Այս ձեզ նուէր եղեմից, ասաց նա գործը աւարտելուց լետոյ, — իսկ այժմ պատիւ ունիմ ողջունելու: Բաղտաւոր լինիք:

Եւ շտապով դուրս գնալով գրասենեկից՝ դուռը պինդ փակեց ու գնաց կայարան ընկերին սպասելու: Ետ չանցած Մարտինն էլ եկաւ:

— Հա՛, թնչ արիր, Մարկոս. — գրատուեցա՞ր աւագակի հետ:

— Օրինաւոր կերպով — մենք այժմ հաւասար

ենք, պատասխանեց Մարկոսը: Իսկ ձեր գործերն թնչպէս են, հարցրեց նա իւր հերթին. — փողն ուղարկեցիք:

— Ամեն ինչ պատրաստ է. փոստը վաղը չէ միւս օրն է գնում եղեմ, և յոյս կայ, որ մեր խեղճ բարեկամները մէկուկէս շաբաթից փողը կստանան:

— Այն էս անգլիական է, գոչեց Մարկոսը, ուրախ հրասույրով և պինդ սղմելով ընկերոջ ձեռքը: — Աստուած տայ միայն, աւելացրեց նա լետոյ լուրջ կերպով, — սր մինչև փողը տեղ հասնի՝ նոքա կենդանի լինին:

Քառորդ ժամից լեա ընկերները սլացան դէպի Նիւ-Եօրկ:

### Թ.

Միստրիս Գէմպը տակաւին Ջօնս Չուզլիտի տանն էր մնում և նորա բացակայութեանը խնամք էր տանում Չօֆֆիին: Գիշերը նա գնում էր քաղաքի հեռաւոր խուլ թաղը հսկելու մի ուրիշ հիւանդին, որ պարկած էր մի տգեղ հիւրանոցի փոքրիկ սենեակում, որի ճակատին ծիրանեգոյն եզն էր նկարուած:

Մի երեկոյ նա պարկացրեց ծեր գործակատարին, սաստիկ պատուիրեց չվերկենալ մինչև առաւօտ, իսկ ինքը տուն գնաց իմանալու, թէ իւր բացակայութեանը առանձին բան հօ չի պատահել և թէ ձանձրոյթ չէ գրացել մ. Սվիդլալայր: Երբ ա-

մեն ինչ կարգին տեսաւ և իւր տէրը առաջուայ նման կերակրում էր թռչուններին, սափրում էր ջէնտլմէնների մօրուքներն և առհասարակ ուրախ էր և գոհ՝ տիկին Գէմայը վերցրեց այլ և այլ պաշարով լի կապոց, որ անհրաժեշտ էր հիւանդի մօտ երկար գիշերն հսկելիս և ճիշտ Տ ժամին հասաւ Վճիռանեգոյն Եգ-ին:

Երբ բազը մտաւ՝ հիւրանոցի տէրը, տիկինն ու աղախինը նախասենեկում տաք-տաք խօսում էին մի երիտասարդի հետ, որ կարծես պատրաստուում էր դուրս գնալ: Խօսքը խեղճ վարձաբնակի մասին էր, և մ. Գէմայը կանգ առնելով՝ սկսաւ ականջ դնել:

— Ուրեմն ասում էք լաւութեան նշան չկայ, հարցրեց երիտասարդը:

— Ընդհակառակն. օրէցօր վատանում է, պատասխանեց հիւրանոցի տէրը:

— Վայ խեղճ, ասաց երիտասարդը. — ցաւում եմ, սաստիկ ցաւում. ամենից վատն այն է, որ չգիտեմ նորա ազգականների տեղը: Նոքա դպրոցական ընկերներս են, թէպէտ այնուհետև միայն երկու անգամ ենք տեսնուել: Այն նամակը, որ նորա սեղանի վերայ գտաք և որից իմացած էք իմ հասցէն, — իմ պատասխանն էր մի ուրիշ նամակին, որ նա ինձ գրել էր նոյն իսկ հիւանդանալու օրը և որով ինձ հրաւիրում էր մի շատ կարևոր գործի համար մտնել իրան մօտ:

Այր և կին սկսան նամակը կարդալ: Աղախինն էլ նոցա ետևից կարողացաւ քանի մի բառ որոշել:

— Ստու՛մ էք, որ նա շատ քիչ կարասիք ունէր, հարցրեց երիտասարդը, որ ինքը Ջօն Վէստլօին էր և փողն էլ ընդամենը մի քանի ֆունտ էր: Դա վատ է: Սակայն, առ այժմ կ'բաւականանայ. — բժշկին ու հիւանդապահին ինքս կ'վճարեմ:

— Ա՛խ, գոչեց միստրիս Գէմայը, աղերսական ժպիտն երեսին առաջ ընկնելով. — դուք պատուական տղամարդ էք: Թոյլ տուէք ինձ ծանօթացնեմ հրամանոցդ. — զիշերուան հմուտ հիւանդապահ, եկել եմ փոխելու տիկ. Պրիգին, որ այստեղ հսկում է ցերեկով: Մենք փոքր վարձ ենք ստանում և ամեն ջանք գործ ենք դնում բարեխիղճ կերպով կատարել մեր ծանր պարտքը:

Եւ ամենքին գլուխ տալով՝ տիկ. Գէմայը նեղ սանդուղքով բարձրացաւ ամենավերին յարկն ու մտաւ հիւանդի սենեակը, ուր վաղուց անհամբեր սպասում էր փոխուելուն միստրիս Պրիգը, մի թիկնաւէտ ու տղամարդի ձայնով կին:

— Ես կարծում էի, թէ էլ գալու չէք, ասաց նա դժգոհութեամբ:

— Ներեցէք, գնացել էի բաներս վերցնելու, արգարացաւ ներս մտնողը. այնուհետև թագուն հարցրեց հիւանդի դրութեան մասին:

— Ոչինչ, պատասխանեց Պրիգը բարձր ձայնով և հանգստացնող կերպով. — անզգայ պարկած է և անմիտ բացականչութիւններ է անում:

— Ուրեմն նոր ոչինչ չկայ:

— Ոչինչ: Սակայն, լաւ ձուկն են տալիս. գա-

րեջուրն էլ բաւականաչափ:

Մ. Գէմպը ուրախութիւնից ժպտաց:

— Գեղը այն էն թարեքի վերայ է գրած, ընդ-միջելով շարունակեց Պրիգը: — Կարգադրեցէք, ինչ-պէս գիտէք, իսկ ես գնամ հանգստանամ: Վերջին անգամ եօթ ժամին եմ դեղ տուել: Յտեսութիւն: Հն. քիչ էր մնում մոռանայի. բազկաթուռը շատ կոշտ է— չմոռանաք բարձ գնէք վրէն:

Տիկին Գէմպը շնորհակալ եղաւ տուած խորհրդի համար, քաղցր քուն ցանկացաւ իւր նախորդին և ճանապարհ դրեց մինչև դուռը, ապա զանգը քաշեց:

— Գիտես ինչ, սիրելիս, խիստ քնքոյշ եղանակով ասաց նա ներս մտնող աղային: — Խնդրեմ բեր ինձ ձուկն պղպեղով, մի կտոր փափուկ հաց, կարագ և էլի մի ուրիշ բան, հո՛ լաւ միտս եկաւ՝ չմոռանաս մի բաժակ բրայտոնի գարեջուր: Բժիշկները շատ են գովում այդ խմելիքը և ասում են, որ նա շատ է օգնում հիւանդի մօտ գիշերն անքուն հսկողներին: Իսկ զրօգը մի փոքր ուշ կ'բերէք:

Պահանջն անմիջապէս կէտ առ կէտ կատարուեց և հիւանդապահը մեծ ախորժակով սկսաւ ընթրիք վայելել, չմոռանալով պատշաճաւոր լանգանք տալ նաև բրայտոնի հռչակաւոր գարեջրին. երբ այս գլխաւոր նախապատրաստական միջոցները կանոնաւոր ճշտութեամբ կատարուեցան, նոր միտն եկաւ, որ պէտք էր և հիւանդին նայել:

Դա մի թուխ տղամարդ էր խիտ ու սև մազերով. անշարժ պարկած էր, աչքերը կիսաբաց: Նորա տոչորուած գլուխը օրօրուում էր ճխուլած բարձի վերայ: Երբեմն տնքում էր, արտայայտելով խոնջութիւն և զարհուրելի տանջանք:

Միտարիս Գէմպը հիւանդի առաջները միջից ներս կոխեց դեղով լի գդալը. բայց դորանով չմեղմացաւ հիւանդի ցաւը, այլ շարունակ զառանցում էր նա և հեծում: Տիկ. Գէմպը երեսը դարձրեց սեղանին, քամեց բաժակը, սպասեց մինչև զրօգը բերեն, այն էլ դատարկեց. լետոյ երկու բազկաթուռից ու բարձից բաւական հանգիստ անկողին յարմարացրեց, յօրանջեց, մէջը պարկեց, կապոցից հանած վերմակի մէջ փաթթուեց և խոմփոցը վերելաւ սենեկի մէջ: Բայց նորա քունը հանգիստ չէր: Յանկարծ խիստ վախեցած զարթեց— ով-որ վայրենի ձայնով գոռում էր. «Չուզլվիտ, Չուզլվիտ»:

Երբ այդ ծանօթ անունը լսեց և տեսաւ, որ հիւանդը նախկին դրութեամբ պարկած է, կարծեց, թէ փողոցում կռիւ կայ: Լուսամուտը բացարաւ որ իմանայ թէ ինչ կայ. բայց փողոցը մութն էր ու դատարկ, միայն հեռու տեղ շներն էին հաչում: Լուսամուտը փակելով նորից պարկեց և պինդ փաթթութուեց վերմակի մէջ. բայց դեռ աչքը չը կպցրած՝ նորից նոյն զարհուրելի ողբը լսուեց. «Չուզլվիտ, Չոնս Չուզլվիտ: Ո՛ւր ես, չարագործ»:

Այս անգամ արդէն աղաղակը պարզ հիւանդի անկողնից էր հնչում: Հիւանդապահն ահուդողով

վեր թուաւ անկողնից և մօտեցաւ հիւանդին, որ թէպէտ դադարել էր բարձրաձայն գոռում գոչումից, բայց տակաւին յոգնած ձայնով նոյն անուէն էր կրկնում: Ետ մտածեց տիկին Գէմպլը, թէ ինչ յարաբերութիւններ կարող էին կապել այս դժգալտ մարդուն Չուզլվիտի ընտանիքի հետ, բայց ինչքան էլ աշխատեց գաղտնիքը պարզել, ոչ մի եզրակացութեան չեկաւ և վճռեց սպասել, մինչև ասպզան ցոյց տայ: Այն ինչ հիւանդն այն աստիճան հանգստացաւ, որ անգամ ամենեւին չէր շարժում: Այս հանգամանքն օգնեց հիւանդապահին անխռով քնել մինչև առաւօտ:

Հարևանի ժամացոյցն ութը զարկեց երբ մ. Պրիզն եկաւ գիշերապահին փոխարինելու: Տիկ. Գէմպլը գնաց Ջօնս Չուզլվիտի տուն, ուր հէնց նոր նամակ էին ստացել, թէ երեկոյին գալու են նորապսակներ Ջօնսն ու իւր ամուսին—միսս Գրաջիա Պէկանիֆը:

Նշանակած ժամին ամուսները յոգնած ու ջարդուած տուն հասան: Մ. Գէմպլը պատշաճաւոր յարգանքով դիմաւորեց դռան մօտ, վառած մոմը ձեռքին, բայց չարժանացաւ իւր պարօնի առանձին ուշադրութեան, որը սեպհական կոպտութեամբ յայտնեց նորան, որ չերևայ իւր աչքին, այլ քաշուի վերևը «Հին շերեփի» մօտ:

—Ի՞նչ ես լռել, փնթփնթաց Ջօնսը, երբ կինն ու ինքը մնացին: Սա էլ ինչ նոր բան է,—կամ գուցէ այս տեղը չէ՞ դուր գալիս քեզ:

—Այն. ճշմարիտ որ ձանձրալի տեղ է, պատասխանեց Գրաջիան, անխռով ցոյց տալով իրան:

—Սպասիր, սիրելիս, լետոյ էլ այդպէս կասես, նկատեց Ջօնսը աչքերը շուռ տալով: Լաւ է, ասելիք չունիմ, շարունակեց նա բարկացած.—ինձ հրաշալի է համարում, իսկ դեռ ոտքը տանս շէմքը չկոխած՝ քիթ ու մուռթը կախել է: Չանգը քաշիր ընթրիք բերեն, իսկ ես կերթամ կօշիկներս կհանեմ:

Միտորիս Չուզլվիտը նայեց մարդու ետևից, ասպա շտապեց նորա պատուէրը կատարել: Այդ միջոցին մօտեցաւ նորան Չօֆֆին և իւր նիհար չմշկած ձեռքը կամացուկ դրեց նորա ուսին.

—Գուք դեռ ամուսնացած չէ՞ք նորա հետ, հարցրեց նա քնքոյշ ցաւակցութեամբ.—դեռ մարդու չէ՞ք գնացել նորան:

—Ամբողջ մի ամիս է ամուսնացած ենք. բայց, տէր իմ, այս ինչ է նշանակում:

Ծերունին պատասխանեց թէ՛ ոչինչ, և շուռ եկաւ գնաց. բայց Գրաջիան նկատեց, որ նա իւր դողդոջուն ձեռները գլխից վեր բարձրացրեց և լսեց նորա դժգոհ շշուէջը. «խղճալու է, խղճալու այս անիրաւ տունը»:

Ահա թէ ինչպէս ողջունեց նորատի տանտիկնոջ՝ իւր նոր բնակարանը...

Այն օրուանից, երբ երիտասարդ Մարտինը Հանդիպեց լօնդօնցի լուծալափոխ Տիգ Մօնաէզիւին, բաւական ժամանակ էր անցել, և յայտնի Փօքսի բարեկամը արտաքուստ մեծ փոփոխութիւն էր կրել: Նա սկսել էր Հագնուել վերջին տարազով, թանկագին շղթայ ու կօճակներ էր գործ ածում, իսկ մատներին շարել էր թանկագին մատանիներ: Արդեօք թնջ կախարդական զօրութիւն էր օգնել նորան նախկին ծանր Հանգամանքներն ուղղել: Ինքը բաղան էր օգնել: Նա երկու Հազար Փունտ ստէրլինգ ժառանգութիւն ստացաւ: Այս անակնկալ Հանգամանքն այնպէս ուժեղ կերպով ազդեց նորա վստահ բնութեան վերայ, որ միացաւ այն՝ մ. Գէլիդի Հետ, որի մօտ մի ժամանակ շապիկն էր գրաւ դնում, հրաւիրեց մասնակցելու և՛ մի քանի ուրիշներին, որոնք այլ և այլ անազնիւ միջոցներով Հարստացել էին, և Հիմնեց մի նոր Հաստատութիւն «Անգլօ-Իէնգալեան Կեանքի ապահովութեան և Փոխատուութեան Անշահասէր Ընկերութիւնը», որի նախագահն ինքը ընտրուեցաւ միաձայն բոլոր մասնակցողներից թէ՛ իւր արտաքին տեսքի և թէ՛ անսովոր ճարպիկութեան պատճառով զանազան խաբէական գործերում\*):

\*) Ապահովութիւն կոչուում է այն գաշնագիրը, որով մի որևէ անձ կամ Հասարակութիւն առնում է իւր վերայ պարտականութիւն, տարեկան մի տուրք ստանալով, վարձատրել վճարողին այն վնասների փոխարէն, որ կրում է նա կանխապէս որոշած մի աւքա-

Ընկերութեան գլխաւոր գրասենեակը Լօնդօնի Հէնց կենտրոնումն էր, ամենաբազմամարդ փողոցներից մէկում, ուր մի ընդարձակ տան ամբողջ երկրորդ յարկն էր բռնած: Դռան գլուխը զարդարում էր մի մեծ ու փառաւոր նշանակ: Գրասենեկի դահլիճները փայլում էին Հայելիների ապակիներից: Գեղեցիկ կահկարասիքը, լուսամուտների կերպասեայ վարագոյրները, մարմարիոնէ վառարաններն իրանց շքեղութեամբ աչքի էին ընկնում ամենքին: Սեղանների ու գրասեղանների վերայ դարսած էր Հաստափոր Հաշուէմատեաններ կանաչ կազմերով և կարմիր կողքերով: Պատերի մօտ շարուած էին երկաթէ պահարաններ: Պճնուած գործակատարներն այցելուներին ընդունում էին խիստ քնքոյշ ձևերով, իսկ ամեն կողմ կախած յայտադիրներն աւելի պարզ ցոյց էին տալիս, որ Անգլօ-Իէնգալեան ընկերութիւնը բացառապէս միայն Հասարակութեան օգտի Համար էր Հիմնուած, որ մայրաքաղաքի ամենահաստատուն Հիմնարկութիւններից մէկն է այն, և որ ոչ ոք չի կարող խաղ խաղալ նորա Հետ: Միով բանիւ, ամեն ինչ Հաստատ Հիմքի վերայ էր

տութեան պատճառով, օրինակ, հրդեհից, նաւաբեկութիւնից յառաջ եկած ապրանքի կորուստից և այլն: Կեանքի ապահովութեան ժամանակ տարեկան վճարն առնուում է ապահովող անձի առողջութեան ու Հասակի համեմատ, իսկ վարձատրութիւնը այդ դէպքում տրուում է այն անձին, որի օգտին ապահովացած է կեանքը:

դրած, վասնզի Տիգզը շատ լաւ հասկանում էր, թէ ինչպէս պէտք էր որսալ դիւրահաւան մարդոց: Այդ ձեռնարկութիւնը մեծ աղմուկ հանեց և փայլուն յաջողութիւն ունեցաւ, որին պակաս չէր օգնում և գրասենեկի դռնապանը: Մի ահագնատես ու անձնեղ աղամարդ էր դա, լայն կարմիր բաճկոնակ և ոսկեզօծ կոճակներով բաց մեխակի գոյն սլոշազգեստ հագած: Նորա արտաքին տեսքը ակամայ յարգանք էր դարձեցնում մարդոց մէջ: Նորա ահագին տեսքն ամեն տեսակ գրած ու տպած թղթերից աւելի ճարտար համոզում էր նոյն իսկ ամենակասկածոտ մարդկանց: Ով որ մտնում էր գրասենեակը մի հազար ֆունտով կեանքն ապահովելու, դռնապանի Հետ խօսելուց յետոյ՝ արագ փոխում էր նախկին մտադրութիւնն ու ապահովում էր երկու հազարի:

Իրանց ընդարձակ ձեռնարկութեան աւելի կշիռ տալու համար մ. Տիգզը կեանքի ապահովութեան պայմանաւորութեանց ներկայ լինելու համար հրաւիրեց մի շատ յարգուած ու հռչակուած բժիշկ, որ արդէն ծանօթ է ընթերցողին իւր Հմտութեամբ հանգուցեալ Կնտօնի Չուզլվիտի տանը. նա էր բժշկում և այն առասպելական հիւանդին, որ սարկած էր «Ծիրանեգոյն Եգն» հիւրանոցում: Այս բժիշկը մի գեղեցիկ օր պ. Մօնտէգիւի մօտ բերեց Զօնս Չուզլվիտին, որը ցանկութիւն յայտնեց որքան կարելի մեծ գումարով ապահովել իւր կնոջ կեանքը: Նոր ծանօթները շատ դիւր եկան մէկմէկու: Սկըզբում Զօնը թարգմտեց իւր նախանձն ու այդ շա-

հաւէտ գործին մասնակցելու ջերմ ցանկութիւնը, բայց վերջը ձեռաց համաձայնեցաւ ինքը Տիգզը, և յափշտակուած սորա սիրային վարմունքով, միանգամ մի ուրախ ճաշից յետոյ, վերջնապէս ընկաւ այդ ճարպիկ աւագակի ճանկը: Հէնց որ Զօնսն այս սարսափելի ճաշից յետ հեռացաւ պատրաստակամ տիրոջ մօտից, ընկերութեան պատուական կառավարչին ներկայացաւ մի մութ անձնաւորութիւն, որ համարում էր ընկերութեան գլխաւոր գործակալ և մ. Նէջէտ էր կոչուում: Այս տգեղ և բաւական վատ հագնուած պարոնը զարմանալի ընդունակութիւն ունէր զանազան միամիտ մարդոց որսալու Տիգզի ու նորա արժանաւոր ընկերակիցների հիւսած ցանցի մէջ: Նա յամառութեամբ հետևում էր իւր զոհերին, ամենուրեք հասնում էր և ճիշտ դիտէր, ինչ որ լինում էր քաղաքում, ամենանշանաւոր տներից սկսած մինչև Լօնդօնի ամենախուլ մասերի կեղտոտ վերնատները:

Տիգզը յանձնեց նորան Զօնսի տյցետոմսն ու սասց.

— Ինձ շատ կպարտաւորէք, մ. Նէջէտ, եթէ այս սագով զբաղուէք: Հետևեցէք սորա բոլոր գործերին և ինչ որ նկատէք՝ բոլորը շուտ շուտ ինձ հաղորդեցէք. բայց միմիայն ինձ, և ուրիշ ոչոքի:

Գործակալը ակնոցը դրեց, խիստ ուշադրութեամբ կարդաց այցետոմսի վերայ գրած անունը, յետոյ խնամքով պահեց այդ տոմսն իւր լիշատագրի մէջ և գլուխ տալով անխօս հեռացաւ:

Օրուայ մնացեալ մասը նորաբաց Հիմնարկութեան ներկայացուցիչն ընթացիկ գործերով զբաղուեցաւ: Նորա առջև գրած էր թղթերի մի մեծ կոյտ, որ սէտք է իւր ստորագրութեամբ վաւերացնէր: Ընկերութիւնն իրաւամբ կարող էր պարծենալ իւր ներկայացուցչով, և կարող էր շարունակել իւր գոյութիւնը կատարեալ յուսով. գործերը շատ լաւ էին գնում և փողը ջրի պէս ստացուում էր ամեն կողմից:

Ժ.

Ծեր Մարտինը իւր սանուհու հետ Գապոյտ-Վիշապուում ապրելով՝ դարձեալ յաճախ տեսնուում էր Պէկանիֆի հետ և համեմատաբար աւելի հակամէտ էր դառել այն երեկոյից, երբ այնպէս անակնկալ ներս ցցուեց ճարտարապետի տանը: Նա ծերացել էր, նուազել և թէպէտ արտաքուստ փոխուած չէր, բայց էլ այնպէս չէր տեսնում ու լսում, ինչպէս առաջ: Նորա բնաւորութիւնը հետզհետէ մեղմացել էր, գրեթէ անզգայ անտարբերութեան էր հասել գէպի ամենքը, բացի Պէկանիֆից: Երբեմն նա չէր նկատում, թէ ինչ էր պատահում իւր շուրջ, և յաճախ ամբողջ օրերով լռում էր: Այս ամենը չէր կարող Պէկանիֆի սրատես աչքերից թաքչիլ, որը Էնտօնի Չուզլվիտի վերջին վայրկեանները մտաբերելով՝ ապահով էր, որ Մարտինն էլ երկար չի ապրի:

Մի մարդու համար, որ այնպիսի քնքոյշ զգացմունքներով էր օժտուած, ինչպէս էր Պէկանիֆը, ընտիր ազգականի աստիճանաբար մարող տեսարանը շատ ցաւալի էր ՚ի հարկէ: Նա վախենում էր, որ զառամած ծերունին ճարպիկ խաբէբանների զոհ դառնայ, և վերջնիս բոլոր կարողութիւնը անարժան ձեռքերին մատնուի: Այսպիսի դառն ապագան այնպէս յուզեց նորան, որ վերջապէս որոշեց Մարտինի բոլոր հարստութիւնը ձգել իւր ձեռքը, ՚ի բաց վանելով հարուստ Մառանգութեան միւս բոլոր ազահ որոնողներին: Այս փայփայած միտքն իրագործելու համար՝ նա միտքը գրեց ամբողջովին ազգել ծերունու վերայ: Հէնց երեկոյին, երբ նա հանդիպեց հին ջէնտլէնին զբօսնելիս և սովորական ողջոյնը տալուց յետ՝ նկատեց, որ բաւական լաւ տրամադրութեան մէջն է ու խօսելու ախորժակ ունի, ճարտարապետս յաջող գէպքից օգտուելով մի մտերմական զրոյց սկսեց իւր ազգակցի հետ.

— Զարմանում եմ, յարգելի բարեկամս, ասաց Պէկանիֆը. — ինչո՞ւ դուք չէք կամենում ինձ մօտ տեղափոխուել: Հաւաստի եմ, որ իմ խաղաղ տանն աւելի դիւրութիւններ կը գտնէք, քան հիւրանոցում: Ներեցէք, անգին եղբայր, ինձ թւում է, թէ ինչքան էլ որ լաւ լինի «Վիշապ»-ը, դժուար թէ գիւղական համեստ ճաշարանը պատուաւոր տեղ լինի միսս Գրէգէմի համար:

Մարտինը փոքր ինչ մտածեց և Պէկանիֆի ձեռքից բռնելով՝ ասաց.

— Արգանքն ճշմարիտ էք ասում:

— Հէնց միայն կոնախաղ տեսնելն անտանելի է օրինաւոր մարդու համար:

— 'Ի հարկէ. կոնախաղը ռամիկների զբաղմունք է:

— Ինչո՞ւ ուրեմն վաղն և եթ չփոխուէք ինձ մօտ: Տունս ընդարձակ է. միսս Գրէգէմը Գրացիայի սենեակում կմնայ, դուք կընտրէք որը կամենաք. մէկ խօսքով չենք վիճի:

— 'Ի հարկէ:

— Մենք մէկմէկու շատ լաւ ենք հասկանում, գոչեց Պէկսնիֆը, սղմելով ծերունու ձեռքը: — Այժմ իմն ես, մտածեց նա գոհ սրտով:

— Իսկ ձեր պայմանները, հարցրեց Մարտինը. — կամ գուցէ ինձ կ'ընդունէք վարձատրութեան չափը որոշել:

— Մի՞թէ կարելի է դրա մասին խօսել, վիրաւորուած ձեւացրեց իրան Պէկսնիֆը:

— Ասում եմ որ ինքս կը որ շեմ վարձատրութիւնը, զայլացաւ ծերունին իւր նախկին յամառ ձեռով:

— Եթէ անպատճառ ցանկանում էք...

— Ոչ միայն ցանկանում եմ, այլ և պահանջում: Ես միշտ սովոր եմ ծառայութիւնը վարձատրել — դա իմ կանոնս է:

Հետեւեալ առաւօտ միստէր Չուզլվիան ու միսս Գրէգէմը տեղափոխուեցին մեծ ճարտարապետի հիւրընկալ յարկի տակ, որ այդ օրուանից կրկնապատ-

կեց իւր ջանքը, և կարճ միջոցում այն աստիճան իշխեց ծերունու վերայ, որ վերջինս միայն նորան էր լսում և հաւանութիւն տալիս նորա ամեն ասածին ու արածին: Մի հանգամանք, որ նոյնպէս պակաս կարեւորութիւն չունէր, յուզում էր Պէկսնիֆին — այդ Մէրի Գրէգէմի ներկայութիւնն էր իւր տան մէջ, որ քաջ տեսնում էր նորա բոլոր խաբէութիւնները, թէպէտ և չէր ցոյց տալիս, թէ նկատում է որևէ բան. բայց, որքան էլ զօռ էր տալիս իւր խորագէտ գլխին՝ ոչինչ որոշ եզրակացութեան չէր գալիս՝ ապագայում իրեն բռնելիք զիրքի մասին: Սկզբում մտածեց մի փորձ անել, կարող էր արգեօք Մէրիին իւր կողմը ձգել: Այս միտքը դիւր եկաւ նորան, և գանազան ակնարկներով իւր ջերմ յարգանքն սկսաւ ցոյց տալ նորատի օրիորդին. բայց այս միջոցը չ'օգնեց. միսս Գրէգէմն այնպէս էր ձևանում թէ ոչինչ չէ հասկանում: Այնուհետև նա իւր միտքը պարզ յայտնեց և օրիորդին հասկացրեց, թէ իրան աշխարհիս երջանկագոյն մարդը պիտի համարէ, եթէ համաձայնի իւր կինը լինել, բայց սա շնորհակալութիւն անելով այդպիսի ուշադրութեան համար, բացէիբաց մերժեց և աւելացրեց, որ եթէ Պէկսնիֆը երբ և իցէ թոյլ կտայ իրան այդ անհաճոյ խօսակցութիւնը երկրորդել, անմիջապէս կգիմէ մ. Չուզլվիտին: Մի անընշան որբի այդպիսի չլսուած յանգագնութիւնը կարեւոր խոցեց ազնիւ ճարտարապետի սիրտը, որին ուրիշ բան չէր մնում, բայց միայն սպասել, մինչև

որ միջոց գտնէ մի որև է գարշելի զբարտու-  
թեամբ ծերունու ձեռքը մատնել օրիորդին. իսկ  
Չուզլվիտի հաւատը դէպի իւր սանուհին խախտե-  
լու այսպիսի միջոցն ամենամեծ զգուշութիւն էր  
պահանջում Պէկանիֆի կողմից: Հարկաւոր էր Պին-  
չի մասին էլ մի բան կարգադրել, որը իւր անկեղ-  
ծութեամբ և տեղի անտեղի պարզմտութեամբ  
կարող էր ոչ միայն վնասել, այլ և բարոյովին փչաց-  
նել Պէկանիֆի սկսած այնքան երջանիկ մեծ գործը,  
որ էր ծեր Մարտինին ազատել բազմաթիւ ազգա-  
կիցների շահադիտական որոգայթներից: Նա սկսեց  
ամեն քայլափոխին կռուել իւր օգնականի հետ,  
կարծելով որ այս կերպ կստիպէ նորան մի անկար-  
գութիւն անել, բայց այսպիսի վարմունքն երբէք  
չվիրաւորեց միշտ հանգիստ ու քաղաքավարի  
Թովմասին: Ի՞նչ պէտք է անէր խեղճ ճարտարա-  
պետը: Քսնի քանի անգամ մտածում էր, որ իրան  
ծայրայեղ երջանիկ կհամարէր, եթէ մի գեղեցիկ  
առաւօտ նորա օգնականը վերցնէր իւր պաշտօնակն  
ու ռազ լինէր իրանից ո՛ւր և կամենար: Այս միտ-  
քը քանի մի օր զբաղեցրեց Պէկանիֆին, մինչև որ  
վերջապէս մի հասարակ դէպք օգնեց նրան ամեն  
արգելքների յաղթելու և կատարեալ յաղթանակով  
դժուարութիւններից դուրս գալու:

Մի խիստ շոգ օր, ճաշից յետոյ զբօսնելու ժա-  
մանակ՝ ճարտարապետի խելքը փչեց զերեզմանա-  
տուն գնալ: Սակաւ ինչ շիրիմների մէջ ինքն իրան  
խօսելուց և յուշարձանների քանի մի զգայուն ար-

ձանագրութիւններ կարգալուց յետոյ՝ լսեց եկեղե-  
ցում նուազող երգեհոնի հնչիւնները: Թէպէտ և  
երաժշտութիւնը լոկ ժամանակ անցկացնելու մի  
չնչին բան էր համարում նա, սակայն երբեմն պա-  
րապ ժամանակ կարելի էր ականջ դնել: Նա զնաց  
դէպի եկեղեցին, լուսամուտից ներս նայեց և տե-  
սաւ, որ Պինչը մեծ զգացմունքով երգեհոն է նուա-  
գում: Եկեղեցին հին էր, և ցուրտ. հաստ՝ բարձ-  
րաբերձ սիւները, սալարկը, խորհրդաւոր մթու-  
թիւնը—այս ամենը խօստանում էին զուարթու-  
թիւն: Բայց այս տաճարի մենից հրապուրիչ տեղը  
փափուկ բարձերով նստարանն էր, որի վերայ կիւ-  
րակի օրերը նստում էին շրջակայքի ամենից աչքի  
ընկնող մարդիկ, որոնց թուին պատկանում էր և  
ինքը մ. Պէկանիֆը: Այդ բազմոցը գտնուում էր միւս  
նստարաններից հեռու և ըստ ինքեան մի լայնար-  
ձակ անկիւն էր ներկայացնում: Որոշեց հանգստա-  
նալ այնտեղ: Պինչից աննկատելի ներս սպրդեց եկե-  
ղեցին և աթոռի բարձր յենարանի ետև թախ-  
կացած նստեց մի հաստափոր աղօթագրքի առ-  
ջև: Զբօսանքից ու շոգից խոնջած՝ շուտով ննջեց.  
սակայն անմիջապէս մի ծանօթ ձայն զարթեցրեց  
նորան: Զգուշութեամբ պտտի կողքից վեր նայելով՝  
տեսաւ Թովմաս Պինչին Մէրի Գրէգէմի հետ խօ-  
սելիս և զուշակելով խօսակցութեան առարկան՝ մեծ  
ուշադրութեամբ ականջ դնել սկսեց:

—Ո՛չ, ասում էր Թովմասը. — ես Նիւ-Յօրկից  
նամակ ստացայ: Գորա համար դուք մի վրդովուէք-

գուցէ մէկ այնպէս հեռու տեղ են գնացել, ուր փոստն անկանոն է գնում: Նա մինչև անգամ գրել էր, թէ ինչ-որ Եղեմ քաղաքը պիտի գնայ:

—Ո՛վ բարի միտէր Պինչ, ասաց Մէրին.— գուք միշտ ճրգնում էք հանդարտացնել ինձ, և այս ձեր կողմից մեծ ազնուութիւն է: Դուք ինձ այնքան լաւութիւն էք արել և ուշադրութիւն նուիրել, որ ճշմարիտ չգիտեմ, թէ երախտագիտութիւնս ինչպէս յայտնեմ:

—Ի սէր Աստուծոյ ինձ մի վիրաւորէք, ժըպտաց Պինչը.— ես շատ անգամ եմ ցանկացել խօսել ձեզ հետ մեր բարեկամի մասին. բայց դուք աշխատել էք առհասարակ առիթ չտալ ինձ խօսելու, իսկ ես երբէք չէի ցանկայ անգամ մի անհանգիստ օր պարգևել ձեզ:

—Բոլորովին հաւատացած եմ. բայց վախեցել եմ կռուացնել ձեր վարպետի հետ: Ինձ միշտ այնպէս է թուացել, թէ նորան երբէք հաճելի չէ, որ դուք սէր տածէք դէպի Մարտինը:

—Մ. Պէկսնիֆին, հարցրեց Թովմասը չհաւատալով նորան.— նա երբէք չի էլ մտածում մեր խօսակցութիւնների մասին: Հո, գիտէ՞ք, միսս Գրէգէմ, որ նա աշխարհիս երեսին ամենալաւ մարդն է, շարունակեց Թովմասը յափշտակուած: Նորա կողմից երկիւղ չկայ: Նա լրտես չէ:

—Մ. Պինչ, դուք սխալուած էք, նկատեց Սէրին:

—Երբէք, երբէք, պնդեց Պինչը եռանդով.

—ընդհակառակն, դուք սաստիկ սխալուած էք: Շատ տարի է նրան ճանաչում եմ, և բացի բարութիւնից՝ ուրիշ բան չեմ տեսել նորանից: Ես չեմ հասկանում, աւելացրեց նա.— թէ ինչիցն է, որ ոչ ոք չի կամենում այս վեհանձն մարդու արժանիքը գնահատել:

—Ես կլուէի, մ. Պինչ, ասաց Մէրին կարճատև լուութիւնից լետոյ.— բայց խիստ յուզում եմ, երբ Պէկսնիֆի մասին է խօսք լինում: Դուք շատ գիւրահաւան էք, սէտք է փոքր ինչ զգուշ լինել:

Պինչը լուռ ու սարսափահար նայում էր իւր խօսակցին:

—Այն մարդը, որին դուք աշխարհիս բոլոր մարդկանցից լաւագոյնն էք համարում... ասաց Մէրին արհամարհական հայեացքով և նորա ձայնը տատանւում էր յուզմունքից:

—Սխալ Աստուած, ընդհատեց Պինչը.— Սխարքնչ է արել նա:

—Ամենաստոր, նենգաւոր, շահասէր, ամենախտասիրտ մարդն է աշխարհիս երեսին:

Եւ նորատի օրիորդը մանրամասնաբար պատմեց Պինչին իւր բոլոր գիտողութիւնները Պէկսնիֆի վերջերում կատարած բոլոր զեղծումների մասին: Երբ խօսքն աւարտեց՝ տաճարի դռան ետևից ոտնաձայն լսուեց և խօսակիցները ստիպուեցան հրաժեշտ տալ միմեանց: Թովմասը մնաց եկեղեցում միայնակ, բոլորովին դալկացած. Պէկսնիֆը՝ նորա կռուքը վայր էր ընկած նորա աւջև՝ լու-

սափալ բարձրութիւնից գահավէժ:

Ճարտարապետը, որ հասկանում էր, թէ ինչ կարող էր տեղի ունենալ ազնիւ երիտասարդի սըրտում, մեծ հետաքրքրութեամբ դիտում էր նորան իւր դարանից:

Սկզբում Թովմաս Պինչն սկսեց արագ քայլերով անցուգարձ անել եկեղեցում, յետոյ նստեց նստարանի վերայ, և երկար ժամանակ անխօս նըստելուց յետ՝ յանկարծ սկսեց հեկեկալ. «Պէկսնիֆ, Պէկսնիֆ, պնդում էր նա. — Թնչպէս շատ ընկար իմ աչքից: Ես ամեն ինչ կզոհէի աշխարհիս երեսին, միայն թէ կարողանայի քեզ վերայ ունեցած նախկին հաւատս վերստին ձեռք բերել»: Խեղճի ցաւն այն չէր, որ Պէկսնիֆը դադարել էր իւր երևակայած մարդը լինելուց, այլ այն էր, որ երբէք նա այն չէ եղել, ինչ որ ինքն է կարծել: Ինչքան որ քիչ առաջ մեծ էր Թովմասի կուրուլթիւնը իւր խնամակալի վերաբերութեամբ, նոյնքան էլ, եթէ ոչ աւելի, կատարեալ էր այժմ նորա սթափուիլը: Վերջապէս նա վերկացաւ, աչքերը սրբեց և դռանը կողպէք դնելով շտապով հեռացաւ տաճարից: Կալանաւոր Պէկսնիֆը փոքր ինչ սպասելուց յետ՝ զգեստատունը մտաւ, բացարաւ լուսամուտը և առանց որևէ արկածի՝ դուրս սլքուեց այնտեղից:

Տուն գնալիս ճանապարհին նա ինքն իրան ծիծաղում էր և գոհ սրտով ձեռները շփում, բայց մ. Զուզլվիտին երևալու համար՝ իւր կերպարանքին սոյն արտայայտութիւնը տուեց, որպէս թէ սաստիկ

վշտացած է. նորա ազնուաշուք այտերից արտասուքի կաթիլներ գլորուեցան: Կամայ ներս մտաւ սենեակը և ձերունու կողքին նստեց:

— Ի՞նչ է պատահել, Պէկսնիֆ, արտասովոր տխրութեամբ հարցրեց նա իւր ազգակցին. — Թնչ կայ:

— Ինչ համար մահ է ձեզ անհանգիստ անել, սիրելի մ. Զուզլվիտ, պատասխանեց Պէկսնիֆը վըշտագին. բայց ինչ ամենից շատ տխրեցնում է ձեզ մօտ գալուս պատճառը. ինչ դաւաճանած են, ես կատարելապէս խաբուած եմ, իմ պատիւս անարգուած է: Եւ ումից: Սոյն Թովմաս Պինչից, որին ես հաւատ եմ ընծայել, որին սիրել եմ հարազատ որդուս պէս: Ո՛ր, սարսափելի է, սարսափելի:

Սրտասուքը խեղտում էր ազնուագոյն ճարտարապետին. նա անկարող էր խօսել: Ծերուկին զմայլած նայում էր նորան, անգամ ջուր առաջարկեց և համոզիչ կերպով խնդրեց պատմել վերջապէս սոյնքան նենգամիտ դաւաճանութեան մանրամասնութիւնները:

— Ամեն բան կիմանաք, ասաց Պէկսնիֆը, — բայց ամենից առաջ, ներեցէք, ես պարտական եմ կատարել իմ պարտքը մեր ամենքիս վերաբերութեամբ:

Զանգը զարկեց. սպասուհին եկաւ:

— Իմացիր, մ. Պինչը վերադարձել է թէ ոչ և կանչիր այստեղ:

Թովմասը տխուր ու դալկացած ներս մտաւ:

Վարպետը մի բազմախորհուրդ հայեացք ձգեց մ.  
Չուզլվիտի վերայ, կարծէք ուզում էր ասել. «ինք-  
ներդ դատեցէք»: Եւ դարձաւ Պինչին այս խօսքե-  
րով.

Ես խորանի լուսամուտը բաց թողցցի: Խընդ-  
րեմ գնաք և փակէք, իսկ յետոյ ս. տաճարի բա-  
նային ինձ կ'յանձնէք:

— Խորանի լուսամուտը, հարցրեց Պինչը:

— Կարծեմ ինձ հասկացաք, պատասխանեց  
վարպետը: Յաւ է ինձ, բայց ստիպուած եմ հա-  
ղորդել ձեզ, որ ես զբօսանքից յոգնած՝ մտայ ե-  
կեղեցի: Այնտեղ ականջիս քանի մի խօսքեր հա-  
սան այն խօսակցութիւնից, որ տեղի ունէր ձեզ  
քաջ յայտնի անձերի մէջ: Պ. Պինչ, գոչեց ճար-  
տարապետն ազնիւ արհամարհանքով. — և դեռ քա-  
ջութիւն ունիք ուղղակի աչքերիս նայելու:

Թովմասը սակայն առաջուայ պէս աչքը չէր  
հեռացնում իւր ազնիւ վարպետից:

— Անցեալի մասին չեմ խօսիլ, շարունակեց  
Պէկսնիֆը, բայց ես չէի ցանկալ առանց բանի է-  
ութիւնը պարզելու բաժնուել ձեզանից:

— Պէկսնիֆ, ինչ էք խօսում, խօսքը կտրեց  
ճեր Մարտինը: Մի շտապէք — լետոյ կզղջաք:

— Ո՛չ, տէր, պատասխանեց ճարտարապետը.  
Ես պէտք է պարտքս կատարեմ և, ներեցէք, կը  
կատարեմ ինչ էլ որ լինի: Այսպէս ուրեմն, մ.  
Պինչ, այն խօսակցութիւնից, որ ես հէնց այժմ  
լսեցի եկեղեցում, իմացայ, որ դուք, մոռանալով

թէ քաղաքավարութիւնը և թէ հիւրընկալութեան  
քօլոր սրբութիւնը, թոյլ էք տուել ձեզ անպա-  
տուել իմ անգին հիւրիս, վստահացել էք միսս  
Գրէգէմին ամուսնութեան առաջարկութիւն անել:

— Թովմասն անխօս նայում էր նորան կարե-  
կից հայեացքով:

— Այդ չէք հերքում, հարցրեց Պէկսնիֆը,  
գարսելով սեղանի վերայ մի ֆուստ, երկու շիլլինգ  
և չորս պէնս արծաթդրամ:

Թովմասը լուռ էր:

— Չէք հերքում, կրկնեց ճարտարապետը, մի  
գննական հայեացք ձգելով մ. Չուզլվիտի վերայ. —  
նեղութիւն կրեցէք ուրեմն, մ. Պինչ, այս փողերը  
նորից համարել և ստացական տուէք ինձ:

Թովմասը չդիմադրեց. նա իրան բոլորովին  
արգար էր համարում և հասկանո՞ւմ էր, որ այդ  
քօլոր գարշելի զրպարտութիւնները հնարուած են  
Պէկսնիֆի կողմից այն միակ նպատակով, որ ինչ-  
քան կարելի է շուտ ազատուի իրանից՝ Պինչից:  
Նա հաւատացած էր, որ Պէկսնիֆն օգուտ է քա-  
ղում իւր լուութիւնից, վասն զի եթէ խօսէր եկե-  
ղեցում պատահած անցքի մասին՝ անշուշտ աւելի  
պէտք է գրգռէր ճերունի Չուզլվիտին երիտասարդ  
Մարտինի ու խեղճ Մէրիի դէմ:

— Ազնիւ բան էք համարում ձեր վարմունքը,  
հարցրեց ճարտարապետը:

— Միանգամայն, պատասխանեց Պինչը:

— Խոհանոցում մարդ կայ, որ ձեր իրերը կը

տանի, ուր որ կցանկաք, յարգանքով վերջ տուեց  
 իւր խօսքին Պէկանիֆը: Անք իսկոյն պիտի ան-  
 ջատուինք: Բանալիները շնորհեցէք: Այժմ մեր մէջ  
 ամեն հաշիւ գոցուած է. դուք բոլորովին ազատ  
 էք, իսկ ինձ խնդրեմ ընդ միշտ օտար համարէք:

Թովմասը գլուխ տուեց մ. Չուզլվիտին և մի  
 արհամարհական հայեացք ձգելով ողորմելի խաբե-  
 բայի վերայ՝ սենեակից դուրս գնաց, առանց մի  
 խօսք ասելու: Նա բարձրացաւ աշակերտական սե-  
 նեակը, պատից ցած բերեց Հին ջուժակն ու դրեց  
 սնդուկի մէջ՝ զրքերի, փոխնորդի և էլի ուրիշ քա-  
 նի մի շորերի հետ: Յետոյ գլխարկը ծածկեց, ձեռ-  
 նափայտը վերցրեց և ուզում էր դուրս գնալ, բայց  
 շէմքի մօտ կանգ առաւ. նա ցաւում էր այդպէս  
 յանկարծ իւր Հին բնակարանից բաժանուիլ, ուր  
 անցրել էր իւր աշխատանքի ամենընտիր տարիները:

Գրեթէ կէս ժամից յետ նա հասաւ Վասպուր  
 Վիշապին մի մարդու ուղեկցութեամբ, որ ետեւից  
 տանում էր սնդուկը: Միտորիս Լիւպէնը, ճարտա-  
 րապետի ծառաներից քիչ թէ շատ իմացած լինե-  
 լով պատահած անցքը, արտասովոր անքերին դռան  
 առաջ հանդիպեց իւր վաղեմի ծանօթին: Այնտեղ  
 էին նաև մնացեալ ծեր ու ջահել մարդիկ: Այս  
 պարզ մարդոց անքերից նկատուում էր, թէ ինչքան  
 ծանր էր բաժանուիլ այն մարդուց, որին նոցանից  
 իւրաքանչիւրը ճանաչում էր որպէս ամենաազնիւ  
 և ամենաբարի տղամարդ ամբողջ թաղում: Նոքա  
 անընդհատ աշխատում էին մխիթարել իրանց սի-

քելին, և կարեկից սրտով հարց ու փորձ էին ա-  
 նում դուրս գալու պատճառները: Հազիւ հազ կա-  
 քողացաւ նա բաւարարել ամեն կողմից տեղացող  
 հարցերին: Աերջայէս, ամենքի ձեռքերը սեղմե-  
 լուց, հրաժեշտ տալուց և հարևաններին՝ ցոյց  
 տուած սիրոյ և համակրութեան համար շնորհակալ  
 լինելուց յետ՝ նա խնդրեց տանտիկնոջ իր բաները  
 պահել մինչև որ յետ դառնար, կամ կապսպարէր:  
 Տիկնոջ հաճութիւնն առնելուց և գիւղացիներին  
 նորից ողջունելուց յետ՝ կամաց կամաց իւր քայլե-  
 քը դէպի Սելիսբիւրի ուղղեց: Երբ այդ առանին  
 հասաւ՝ նստեց Լօնդօն ուղևորուող փոստային  
 կառքն ու գնաց որոնելու Ջօն Վեստլօկին, որի  
 վերայ նա դրել էր իւր բոլոր յոյսը, այն հաստատ  
 համոզմունքով, թէ Հին բարեկամը յօժարութեամբ  
 կօզնէ նորան այսպիսի դժուար կացութեան մէջ:  
 Բացի դորանից Լօնդօնում Պինչին գրաւում էր և  
 մի ուրիշ հանգամանք. այնտեղ ապրում էր նորա  
 քոյրը, որ դաստիարակչուհու պաշտօն էր վարում  
 մայրաքաղաքի մի հարուստ ընտանիքում: Նա ջերմ  
 սիրում էր իւր «փոքրիկ Հուսթին» և յաճախ մտա-  
 բերում էր, թէ ինչպէս ցաւ ի սիրտ ստիպուեցաւ  
 բաժանուել նորանից, երբ դառը կարիքն երկուսին  
 էլ ստիպեց զանազան կողմեր ընկնել օրական պա-  
 րէն վաստակելու: Այժմ, երբ ոչինչ պարտականու-  
 թիւն չէր կապում նորան օտարի հետ և երբ նո-  
 րա անսահման յարգանքը դէպի նախկին բարե-  
 րարն ընդ միշտ պաղել էր, իւր բոլոր մտածմունքն

այն բանին էր ուղղել, որպէս զի նորից միանայ անգին քրոջ հետ, կամ գոնէ նորա հետ միևնոյն քաղաքում ապրի: Այս աւետաւոր ցնորքը ստիպեց նորան մի առ ժամանակ մոռանալ այն բոլոր տանջանքները, որ կրել էր այդ օրհասական օրուայ ընթացքում: Այս ցնորքը վերածնեց նորան նոր կեանքի համար ի սէր փոքրիկ Հռութի, վերածնեց աշխատութեան ու կռուի համար: Առաւօտը, երբ կառքը կանգնեց Լոնդօնի փոստատան սրահի առջև, Պինչի դէմքի վերայ նախընթաց օրուայ կրած լուղձունքի նշույն էլ չէր մնացել, յոյսը փայլում էր նորա բարի աչքերում, — և նա անվկանդ զնաց որոնելու իւր բարեկամին:

Ջօն Վէստլօլը բաւական հեռու էր կենում փոստի կայարանից և նորա բնակարանին հասնելու համար՝ Թովմասը ստիպուած եղաւ մի ամբողջ ժամ քայլել: Նա բարձրացաւ երկրորդ յարկը և սենեկի դուռը բաղխեց: Պատասխան չկար: Կարծելով, թէ բաւական վստահութեամբ չէ բաղխել լոնդօնացու պէս, կամեցաւ նորից բաղխել. բայց այդ միջոցին մէկը մօնջաց ներսից. — «ներս հրամայեցէք»:

Երբ Թովմասը ներս մտաւ և հազիւ մի հալեացք էր ձգել այն պարոնի վերայ, որ լրագիրը ձեռքին նախաճաշի էր նստած, սա վրայ ընկաւ նորան և երկու ձեռքով գրկեց.

— Թովմաս, հոգիս, գոչեց ջէնտլմէնը:

— Միստէր Վէստլօլ, ինչքան ուրախ եմ...

հապճեպով պատասխանեց Պինչը:

— Միստէր Վէստլօլ: Այդ քնչ նորութիւն է: Անուես մոռացել ես, ինչ է:

— Ո՛չ, Ջօն. քնչպէս կարելի է: Ի՞նչ նոյն բարի ու պարզ մարդն ես:

— Իսկ դու քնչպէս ես: Վաղո՞ւց է Լօնդօն ես: Նստի՛ր. անուշ արն: Չը գիտէի թէ կգաս, — ապա թէ ոչ ըստ այնմ նախաճաշիկ կպատրաստէի: Սակայն, ոչինչ, ճաշներս փառաւոր կլինի: Առանց այլևայլութեան: Հապա խերէս անուշ արա, վաղեմի բարեկամս: Բարով եկար:

Ջօնը ձեռք ու ոտք էր ընկել. վազվզում էր սենեկում, պահարանին էր վրայ ընկնում, ուտելիք էր բերում, զանակներն ու պատառփոցները թափում էր գետնին, մի լիքը բաժակ թէյ շուռտուեց սփռոցի վերայ, և առհասարակ, ուրախութիւնից խելքը գլխին չէր:

— Ի հարկէ ինձ մօտ կիջեանես, անկասկած, ասաց նա մի փոքր շունչ առնելուց յետ: Յաւում եմ միայն, որ երգեհօն չունիմ քեզ համար:

— Հարեաններդ քնչ կստէին, նկատեց Թովմասը մտախոհ:

Եկաւ նաև գործի մասին խօսելու ժամանակը և Թովմասը մանրամասն պատմեց այն ամենը, ինչ որ տեղի էր ունեցել Պէկսնիֆի տանը վերջին օրերում:

— Փառք Աստուծոյ, ասաց Ջօնը, մտադրութեամբ սկանջ դնելուց յետոյ. — Վերջապէս հա-

մոզուեցար: Մատուց պէտք էր թողնել այդ անպիտանին, — այժմ ես ու գու ուրիշ կերպ կապրենք: Դու միայն թող որ ես կարգադրեմ, մնացածը ես գիտեմ, թէ քեզ ինչ է պէտք: Առաւօտներդ անշուշտ քրոջդ հետ կանցնես, ճաշին յետ կգառնաս այստեղ, իսկ առ այժմ մոռացիր ամեն ինչ և մի կուշտ կեր:

Թովմասն, ինչպէս մի հնազանդ երեխայ, իսկուժեամբ հետևեց Ջօնի խորհրդներին — կերակրմեց կշտացաւ, իսկ Ջօնը նրան նայելուց չկշտացաւ — գրկեց և ուսին խփում էր նորան: Նախաճաշից յետ հիւրը հրաժեշտ տուեց ջերմեռանդ ասպնջականին, խօսք տուեց անշուշտ ճաշին գալ, և հոգու ամենաընտիր տրամագրութեամբ գնաց քրոջը որոնելու:

Բաւական աշխատութիւնից և Նօնդօնի բազմամարդ թաղերում երկար թափառելուց յետ՝ Պինչը գտաւ Վերջապէս այն հարուստ վաճառականի տունը, որի մօտ ապրում էր նորա փոքրիկ Նուութը: Նա խեղճ խեղճ զանգը քաշեց: Դուրս եկաւ մի հասարիկ դռնապան:

— Այստեղ է բնակուում միսս Պինչը, հարցրեց Թովմասը՝ ոտքը ներս դնելով շէմքից:

— Այստեղ է. միայն չէ բնակուում, այլ ծառայում է, խրատական ձայնով սխալն ուղղեց հասարիկը:

— Այդ միջոցին սանդխտի գլխին մի պճնուած սեղանապետ երևեցաւ, որ բարձր ձայնով գոչեց.

— Ե՛յ, երիտասարդ, ինչ էք ուզում:

— Կցանկայի միսս Պինչին տեսնել շնորհ արէք խնդրեմ իմաց տալ նորան:

— Նրամանքդ ո՞վ էք:

— Նղբայրն եմ:

— Հա՛, ներս եկէք, բայց առաջ ոտներդ լաւ մաքրեցէք, գորգերը չկեղտոտէք:

Պինչը իսկուժեամբ կատարեց սպասաւորի ցանկութիւնը, որ ըստ երևութին զգացուած նորա անդիմադրելի հնազանդութիւնից՝ գնաց դաստիարակչուհուն եղբօր գալը յայտնելու:

— Բայց ինչ անքաղաքավար մարդիկ են այստեղ, մտածեց Թովմասը. — մի գուցէ Նուութի հետ էլ այդպէս են վարուում:

Նորա մտածմունքն ընդհատեց մի աղմուկ, որ լսուեցաւ հարևան սենեկից: Թուում էր, թէ մի տաք վիճաբանութիւն կար այնտեղ և մեծ կռիւ պիտի դառնար: Յանկարծ ամեն ինչ լռեց, դուռը բաց եղաւ, և Նուութը կարմրատակած Թովմասի գիրկն ընկաւ: Դժուար է նկարագրել, թէ որպիսի ուրախութեամբ ընդգրկեց նա եղբօրը երկարատև անջատումից յետ. բայց աւելի դժուար է արտայայտել այն արհամարհական գայրոյթը, որ տիրեց Պինչին, երբ քրոջից իմացաւ, որ իւր փոքրիկ Նուութին ամեն քայլափոխում վիրաւորում են, և որ նորա վիճակն այդ հարուստ ու ճոճուան տանը սաստիկ աննախանձելի է: Ո՞վ կարող էր սպասել, որ միշտ հեզ, դէպի ամենքը զիջող Թովմասն

ընդունակ լինէր միանգամից յարձակուել իրան բոլորովին անծանօթ, հպարտ տանտիրոջ վերայ և բացատրութիւն պահանջել իւր քրոջ հետ վատ վարուելու համար: Բայց Պինչը հէնց այդպէս էլ վարուեցաւ, — վարուեցաւ նորա համար, որ հարկաւոր էր պաշտպանել սիրելի քրոջ: Եթէ գործը իւր անձին վերաբերէր, նա անշուշտ կլուէր և համբերութեամբ կտանէր ամեն վիրաւորանք: Վառուած Թովմասն այն ժամանակ միայն փոքր ինչ հանգստացաւ, երբ իւր խորհրդով քոյրը հրաժարուեցաւ պաշտօնից, ստացաւ իրեն հասանելիքն ու իւր բան ու մանր հաւաքելով՝ պատրաստ էր հետևել եղբօրն ամեն տեղ, ուր սա կցանկար: Հանդիսաւոր կերպով դուրս տարաւ նա փոքրիկ Հռութին այդ ատելի տանից, ջանալով նորան ցոյց տալ, թէ ամենևին հիմք չկայ երկիւղ կրել ապագայից, երբ նոքա միասին կսկսեն աշխատել, իսկ վիշտն ու ուրախութիւնը հաւասար կը կիսեն:

Սյուպէս խորհրդածելով հասան փողոցի վերջին: Հռութը մտածմունքի մէջ ընկաւ և քնքոյշ ձայնով հարցրեց.

— Իսկ ո՛ւր պիտի գնանք այժմ, սիրելի Թովմաս:

— Ուր պիտի գնանք, հարցրեց իւր կողմից եղբայրը և կանգ առաւ, կարծես մի բանի վերայ մտածելով. ինքս էլ չգիտեմ:

— Ի՞նչպէս: Իսկ ո՛ւր ես կենում դու:

— Ա. ու այժմ ոչ մի տեղ, պատասխանեց Թով-

մասը. — Ես դեռ այսօր եմ եկել. պէտք է բնակարան որոնել:

— Բայց քնչտեղ, նորից հարցրեց քոյրը և աննշմարելի կերպով սլքացրեց եղբօր գրպանը մի փոքրիկ քսակ:

— Ուր աւելի արժան կլինի, նկատեց Թովմասը մտախոհ: — Արուարձաններում որոնենք:

Հռութը բոլորովին համաձայն էր նորա հետ: Երկար թափառեցին մայրաքաղաքի թաղերում: Մօտ երկու ժամ անցել էր, երբ քոյր ու եղբայր բաւական յոգնած՝ հասան հեռաւոր նեղկակ փողոցներին, ուր նոցա կարծիքով բնակարանները թանգ չպիտի լինէին: Երեք չորս փողոց անցան, շատ տներ տեսան, բայց ոչ մինը նոցա ճաշակին կամ միջոցներին չէր յարմարուում: Ի վերջոյ նեղ ու խաւարչտին փողոցի խորքում մի հնաշէն տանը յաջողեցան արժան բնակարան գտնել բազկացած երկու մանրիկ ննջարաններից և մի երրորդ սենեկից, որ թէպէտև եռանկիւնի էր, բայց զարդարած բաւական մաքուր ու պարզ կարասիքով: Նոքա մի շաբաթուայ քրեհն սկզբից վճարեցին և անմիջապէս իրանց ձեռքի տակ առան նոր կացարանը:

Սյս նշանաւոր խնդիրը կարգի գնելուց լետ՝ եղբայր և քոյր մերձակայ խանութը գնացին մի քանի բան գնելու ապագայ համեստ տնտեսավարութեան համար. բայց այնքան դրամ չունէին, և ստիպուեցան բաւականանալ միայն ամենաան-

հրաժեշտներով: Ի միջի այլոց ճաշի համար ձեռք բերին գառան ոտներ և յետ դարձան իրանց եռանկիւնի հիւրասենեակը, բոլորովին գոհ և երջանիկ: Արդէն ուշ էր, և Թովմասն յանկարծ յիշեց, որ խոստացել էր անշուշտ Ջօնի մօտ լինել այդ օրը: Ուստի քրոջն համոզեց որ չվախենայ իւր բացակայութեան միջոցին և սպասէ իրան երեկոյեան ինն ժամի մօտերքը, և գնաց, որ այդ օրն իր գլխին եկածը պատմէ Վեստլօկին:

— Այ հիմի ընտանիքի տէր մարդ եմ, մտածում էր Պինչը ճանապարհին. իմ սեպհական խուցն ունիմ: Մէկ պարապմունք էլ գտնեմ—այ էն ժամանակ լաւ կապրենք ես ու Հռութը: Սակայն չը պէտք է վհատուիլ, ինչպէս և իցէ գործը կարգի կընկնի, չէ որ Ջօնն էլ պատրաստ է—երևի մի գործ կը գտնի ինձ համար:

**ԺԱ.**

Ջօնս Չուզլվիտին յաջողել էր արդէն անձամբ մասնակցել Անգլո-Բէնգալեան ընկերութեան գործերին, ուր և կառավարչի պաշտօն էր ստացել: Մ. Նէջէտը նախագահի խորհրդի համեմատ անվրէպ հետևում էր նոր կառավարչի ամենափոքր գործողութիւններին: Նա դիտում էր նորա ելումուտը ընկերութեան գրասենեկում. հետևում էր նորան փողոցում կրնկի վերայ. ականջ էր դնում նորա խօսակցութեան, և իւր բոլոր գիտողութիւն-

ները արձանագրում էր յիշատակարանում: Բացի դորանից գործակալը հնարեց թէ մի արտասովոր անբուժելի հիւանդութիւն ունի, որի համար սկսաւ բժշկուել մ. Ջօբլինգից, այն բժշկից, որ բժշկում էր ծերունի Չօֆֆիին, և թէպէտ բժիշկն ամենեւին չկարողացաւ որոշել, թէ իսկապէս ինչ էր Նէջէտի հիւանդութիւնը, բայց վերջինս պնդում էր, որ իւր լեարգը սաստիկ փչացած է: Եւ բժշկի միջոցով իմանում էր այն ամենը, ինչ որ Ջօնսի տանը պատահում էր: Այս բոլորը մի գաղտնիք էր, որ Նէջէտը խնամքով ծածկում էր, և որի մասին Ջօնսն ամենևին չէր կասկածում:

Այն առաւօտ, երբ Թովմաս Պինչը Լօնդօն եկաւ, գործակալը յանկարծ լյս ընկաւ մ. Մօնտէգրի մենարանը:

— Հը', ինչ նոր բան կայ, հարցրեց Տիգզը:

— Սի փոքր գործ կայ, որ հետաքրքրութիւնից գուրկ էլ չէ, պատասխանեց գործակալը կիսաձայն:

— Շատ լաւ. ես կարծում էի, թէ դուք կորցրել էք արդէն Հոտտելու ընդունակութիւնը:

— Ընդունակութիւնը, փնթփնթայ Նէջէտն ու ակնոցը քթին գնելով՝ Հաստափոր թղթակալից մանր գրուած թղթի կտորտանք հանեց:— Ահա, չէք կամենայ ժամանակ անցկայնել, ասաց նա վեհ արտայայտութեամբ և թղթի կտորտանքից մէկը տուեց Տիգզին:

— Ի՛նչ սիրում էք երկար գրել: Կարծէք թէ

բերանացի չէք կարող հաղորդել ինչ որ ուզում էք, անտարբեր նայելով թղթի կտորի վերայ, ասաց նա:

Սակայն, քանի մի տող կարդալուց յետ՝ այդ տոմսակի բովանդակութիւնը խիստ հետաքրքրեց մ. Սօնտէգիւին, նորա դէմքի արտայայտութիւնն զգալի կերպով արթնացաւ: Գործակալը մեծ ուշադրութեամբ հետևում էր նորան:

— Այս էլ ձեզ երկրորդ համարն, ասաց նա, հետևեալ կտորը տալով և յետ դարձրած ա. համարը պահելով թղթակալի մէջ. — մինչև վերջը կարդացէք, այժմ բանը կը պարզուի:

Նախագահը շարունակեց ընթերցումը, կարգաց նաև երրորդ ու չորրորդ համարները: Տիգզի հետաքրքրութեան հետ նոյն չափով աճում էր գործակալի գաղտնի բաւականութիւնը: Նա ինքնագոհ նայում էր նախագահին:

— Ձարմանալի մարդ էք, ասաց մ. Սօնտէգիւն:

— Կարծեմ վատ գործ չէ, ասաց Նէջէտը, թղթի կտորներն ընդունելով. — մեծ աշխատութիւն եմ գործ դրել սոցա համար:

— Եւ ձեր աշխատութիւնը, հաւատացած կացէք, չի կորչի, նկատեց Տիգզը. — լաւ վարձատրութիւն կստանաք:

Գործակալն անխօս գլուխ տուեց: Այդ իսկ վայրկենին լուր տուին Ջօնսի գալու մասին, որ անմիջապէս ներս հրաւիրուեցաւ: Նոր կառավարչի

դէմքից նկատելի էր, որ հոգու ամենավատ տրամադրութեան մէջ է:

— Ձեզ հետ լրջօրէն խօսելիք ունիմ, դրան շէմքը չկոխած աղաղակեց Ջօնսը. — ես խիստ դժգոհ եմ մեր գործերի դրութիւնից:

— Գժգոհ, հարցրեց նախագահն անվրդով, — կարծեմ փոզն աւազի պէս է գալիս:

— Գալիս, ծաղրեց Ջօնսը. — ո՛ր է, թոյլ տուէք խնդրեմ հարցնել: Փողի բոլոր իրաւունքը ձեր ձեռքին է. մի գեղեցիկ առաւօտ կարող էք բոլոր դրամակողը սրբել և արտասահման փախչել, իսկ ես անխելքի պէս պիտի նայեմ ձեր ետևից: Բաւական է, տէր, ինչ խաղ խաղացիք — ժամ է գործին վախճան տալ:

— Ցաւում եմ, որ այդպէս յուզուած էք այսօր, կարեկցութեամբ նկատեց Տիգզը, իսկ ես մըտադրուել էի ձեր իսկ օգտի համար առաջարկել որ ձեր ազատ դրամագլխի մի մասն էլ մէջ բերէիք:

— Ճշմարիտ այդպէս էիք մտադրուած. ինչքան սիրելի բան:

— Այո, միտէր Ջօնս, և միևնոյն ժամանակ ցանկանում էի յիշեցնել ձեզ, որ դուք այնպիսի բարեկամներ ունիք, որոնց մենք ամենայն սիրով մասնակից կանէինք մեր գործին:

— Գուք շատ բարեմիտ էք, միայն նախազգուշացնում եմ ձեզ, որ մի ընդհարում տեղի չուներ:

— Ի՞նչպէս, ասաց Մօնտէգիւն, խոնարհելով նորա առջև և ուղղակի խօսակցի աչքերին նայելով: — Անդհարու՞մը յաճախ, սիրելիդ Չուզլվիտ, բըղխում է ամենաանհաւատալի իրերից: Մենք, օրինակ, գաղտնի ճանապարհով իմանում ենք երբեմն ամենագարմանալի բաներ:

Եւ Տիգգը նշանացի հասկացրեց Ջօնսին, որ սա աթոռն աւելի մօտ քաշէ: Յետոյ նայեց իւր շուրջ, կամենալով ցոյց տալ թէ մի երրորդ անձ էլ կայ, և իւր խօսակցի ականջին քանի մի խօսք փոփսաց: Միայն մի քանի խօսք էր նորա ասածը, բայց այդ մի քանի խօսքից Ջօնսն սկզբում գունաթափուեց, իսկ յետոյ կարմրեց: Շուտով նորա ամբողջ երեսը քրտնքի խոշոր կաթիլներով պատեյ և առհասարակ, Ջօնսի տեսքը վերին աստիճանի սարսափ, կատաղութիւն և յուսահատութիւն էր արտայայտում: Այն ինչ մ. Մօնտէգիւն անտարբեր հրճում էր այդ փոփոխութեան վերայ:

— Ուրեմն, սիրելի Չուզլվիտ, սիրտ առնենք մի քիչ էլ, քնքշութեամբ հարցրեց նախագահը:

— Ջօնսի գունատ շրթունքները դժուարութեամբ արտաբերեցին «այո՛» խօսքը:

— Եւ շատ էլ լաւ, նկատեց Տիգգը: Այժմ լըսեցէք. դեռ երեկ մտքովս անցաւ, որ ձեր աներն երևի թէ երբեմն լսում է ձեր խորհուրդներին գրամական գործերում, և եթէ դուք կհամոզէք նորան ինչպէս հարկն է, նա էլ անկասկած մերը կլինի, նա փող կը գտնի: Լաւ չէ՛:

— Կիրճեմ, ինչ որ կարող եմ, պատասխանեց յետին ծայր ստրջացած Ջօնսը:

— Հազար շնորհակալութիւն, մ. Չուզլվիտ: Իսկ այժմ գործի գնալուս ժամանակ է: Մ. Նէջէտ, միասին գնանք, եթէ ուզում էք:

Երեքով դուրս գնացին: Որքան էլ Ջօնսը համոզուած էր, թէ բոլորովին ընկել է Տիգգ Մօնտէգիւի թաթերի մէջ, և այժմ էլ վերջնապէս կորստեան ամենախոր վիճն է ընկած, — սակայն չէր կարող կարծել, թէ իւր բաղբն ամբողջապէս կախումն ունէր իրան հետևող ցնցոտիներ հագած մուլլ անձնաւորութիւնից:

Եւ անկիւնի հիւրասենեակը փոխադրուելուց երեք օր յետոյ նոր վարձաբնակները առաւօտունից խիստ զբաղմունքի մէջ էին: Նոքա սպասում էին ճաշի Ջօն Վէստլօկին, և փոքրիկ Հուլթն առաջին անգամ իւր կեանքում հարկադրուած էր բոլոր շնորհքը ցոյց տալ խոհանոցի գործի մէջ: Նա շատ վաղ վերկացաւ, շտապ հագնուեց, սենեակը կարգաւորեց և սկսեց թերթել կերակրեղէնի հաստափոր գիրքը, համեղ կերակուրներ ընտրելու միջից. բայց մի քանիսը շատ թանկագնի էին երեւում, այլք չէին համապատասխանում նորատի տանտիկնոջ համեստ գիտութեան ու փորձառութեան. Երկար մտածելուց յետ որոշեց մսի պուրդինգ պատրաստել, թէպէտ դա շատ չարչարանք էր պահան-

ջում, իսկ մէկը չկար, որին օգնութեան կամ խորհրդի դիմէր: Ամբողջ տանը կենում էին միայն՝ մի խուլ պառաւ և տանտէրը—մի խորհրդաւոր մարդ, որ առաւօտից ուր-որ կորչում էր և գրեթէ երբէք չէր երևում կենողների աչքին: Սյնուամենայնիւ Հռութը եռանդով սկսեց իւր գործը: Թովմասն այդ առաւօտ պարապած էր լրագրական մի յայտարարութիւն պատրաստելով, որով առաջարկում էր մարդկութեան իւր ծառայութիւնը: Թովմասի առաջը դրած թերթիկի վերայ արդէն գրուած էր. «Մի 30 տարեկան գաւառացի երիտասարդ...»: Բայց այս աշխատութիւնը առաջ չէր գնում, որովհետև ծանուցման մէջ լիշած երեսնամեայ երիտասարդն անկարող էր իւր գմայլած հայեացքն հեռացնել սիրելի քրոջից, որ աշխատութեան հետքն երեսին՝ անխոնջ աշխատում էր, վազվզելով այս ու այն կողմ, մէկ դէպի խոհանոց, մէկ այնտեղից դէպի այլուր: Յանկարծ նա հիւրասենեակը վազեց, կարմրափակած, և բաց դռներից մէկի ետև թագկացաւ: Թովմասի դողը բռնեց. ներս մտաւ Ջօն Վէստլօկը, որին Թովմասն ամենեւին այդպէս շուտ չէր սպասում, որովհետև մինչև ճաշ գեռ շատ ժամանակ կար:

—Ջօն, սիրելի հիւրս, ինչպէս պարտաւորացրիր, գոչեց Պինչը, և առաջ վազելով՝ պինդ սեղմեց նորա ձեռքը: Յայտարարութիւն եմ պատրաստում, չեմ օգնի: Հա՛, խնդրեմ ծանօթանաս—սա Հօմթն է՝ քոյրս:

Ջօնը Թովմասի ցուցմամբ մօտեցաւ դռանը՝ տանտիկնոջ բարևելու, բայց սա վիրաւորուած՝ իւր փոքրիկ խմորոտ ձեռքը՝ գոգնոցի տակ թագցրեց: Սյս բանի վերայ ամենքն էլ մի կուշտ ծիծաղեցին, իսկ փոքրիկ օրիորդը մինչև ծածկեց իւր յուզմունքը:

Երբ առաջին ծանօթութիւնն այսպէս շողկապուեց, հիւրը յայտնեց կանուխ այցելելու նպատակը:

—Եկել եմ մի նորութիւն յայտնելու, սիրելիս, ասաց նա.— և այնպիսի պատուական նորութիւն, որ, յուսամ, մեծ բաւականութիւն կը պատճառէ քեզ:

Թովմասը լուռ ու զարմացած նայում էր բարեկամին, չիմանալով թէ ինչ ասէ:

—Լօնդօնում շատ բարեկամներ ունիս, հարցրեց Վէստլօկը:

—Ոչ մէկ հատ բացի քեզանից, Ջօն, պատասխանեց Պինչը.— իսկ դու չունիս, Հռութ:

—Ամենեւին:

—Սակայն ողջը մէկ է, պատասխանեց Վէստլօկը: Բանը տես ինչումն է. նախաճաշի եմ նստած այսօր, մէկ էլ տեսնես, դուռը ով-որ բաղխում է...

—Եւ դու ձայն տուիր.— հրամայեցէք:

—ձշմարիտ է. ներս է մտնում հասակաւոր, լուրջ կերպարանքով մի պարոն: Ի՞նչ էք, հարցնում է, միտտէր Վէստլօկը:

—Իսկ և իսկ, ասում եմ. ինչ ծառայութիւն

կհրամայէք ինձանից: Խնդրեմ նստէք:—Նա թաշ-  
կինակով աթոռի թողը սրբեց և ուղղակի հարցրեց.  
«Ի՞նչ քանակ էք միստէր Թովմաս Պինչի հետ»:

—Թէ Աստուած սիրես:

—Ուղիղ բան եմ ասում. հէնց այդ խօսքե-  
րով հարցրեց:—Ի՞նչպէս չէ, շատ մօտիկ: «Զգիտէք  
թէ նա այժմ ո՛ր է»:—Լօնդօնումն է:—Ուրեմն  
միստէր Պէկսնիֆից դճուր է եկել:—Այո՛, դուրս  
եկաւ: «Պարապմունք գտնելու կարիք չունի»:—  
Անգամ մեծ կարիք, ասում եմ ես:

—Վահ, ձօն:

—Այնուհետև բացատրեց, թէ իւր բարեկամ-  
ներից մէկը քարտուղար ու գրապահ է որոնում:  
Սկզբում մեծ ռոճիկ չի ունենայ—ընդամենը տա-  
րին հարիւր Փունտ առանց բնակարանի ու սնուն-  
դի, բայց ծառայութիւնն էլ այնքան մեծ չի լի-  
նիլ:

—Հարիւր Փունտ տարին, գմայլած գոչեց  
Թովմասը, Շիտակ բարերարութիւն է: Լսում ես,  
չուսւթ, հոգիս: Հարիւր Փունտ:

—Բայց ամենից տարօրինակն այն է, շարու-  
նակեց ձօնը,—որ նա կարծես ամենեւին չէ ճանա-  
չում քեզ, Թովմաս, և իմ բոլոր հարցուփորձին,  
որ անշուշտ ձանձրացրեց նորան, չոր ու ցամաք  
պատասխանեց, թէ անկարող է որ և է բացատրու-  
թիւն տալ, իսկ մեզ առաջարկում է մտնել իւր  
մօտ խօսելու որքան կարելի է շուտ: Այս էլ նորա  
հասցէն:

—Օրուտին Ֆիպս», կարգաց Թովմասը, իրեն  
մատուցած և յուզմունքից դողդոջուն մասներով  
բռնած այցետոմսի վերայ:—Ի՞նչ տարօրինակ ա-  
նուն է: Սակայն, այսպէս թէ այնպէս, չգնանք  
իսկոյն նորա մօտ:

—Ձօնն էլ նոյն կարծիքի էր, և երկուսն էլ  
գնացին որոնելու խորհրդաւոր մ. Ֆիպսին:

Ճանապարհին նոցա խօսակցութեան նիւթն  
այն էր, թէ Պինչը պաշտօն ստանալուց լետ քնչ-  
պէս պէտք է ապրէ քրոջ հետ և թէ Ինչքան լաւ  
է առ հասարակ աշխարհում բարեկամներ ունե-  
նալը: Այս խորհրդածութեանց միջոցին նոքա ան-  
զգալի կերպով հասան մ. Ֆիպսի բնակարանին, որ  
գտնուում էր քաղաքի կենտրոնի մերձակայքում,  
չքաւոր բնակիչներով լիքը մի տան մէջ, մուտ  
սրահի վերջում, ուր դրան ապակիի վերայ մակա-  
գրած էր «Գրասենեակ»: Կիսամուտ սենեկում զե-  
տեղուած էր սեղանը, գրասեղանն ու երկու երեք  
ոտը կոտրած աթոռներ: Բացի դոցանից մի ան-  
կիւնում յատակի վերայ ահազին սև բիծ կար, կար-  
ծես հին ժամանակներում այգտեղ մորթած լինէին  
որ և է մի գրագիր, որից արեան փոխարէն՝ թա-  
նաք լինէր հոսած:

Միստէր Ֆիպսը, կարճահասակ, մօրուքը սափ-  
րած մի ծերունի, սնգուրած կեղծամը գլխին,  
բարձր փողպատը վզին և կրեայի ոսկրէ ծխատու-  
փը ձեռքին, դրականապէս հարցրեց ձօնին՝ թէ  
նոյն մարդուն է բերել, որի մասին առաւօտը խօ-

սուեցաւ, իսկ Պինչին՝ թէ ցանկանում է արդեօք առաջարկած պաշտօնն ընդունել թէ ո՛չ, և երկուսից ևս ամենաբաւարար պատասխաններ ընդունելուց յետ՝ յայտնեց.

— Ինձ յանձնարարողը ներկայումս Լօնդօնում չէ, և յայտնի էլ չէ, թէ երբ կլինի այտեղ. բայց ես հաւատարմագիր ունիմ նորանից, և մենք, մ. Պինչ, անմիջապէս պայման կը կապենք: Պարապմունքն այժմէն իսկ կցոյց տամ, իսկ ռոճկի համար ամեն շաբաթ ինձ կղիմէք: Այժմ խնդրեմ, պարոններ, ինձ հետ շնորհ բերէք: Զգոյշ եկէք, այստեղ մուժն է, խօսքին վերջ դրեց ծերունին, առաջնորդելով նոցա դէպի սրահը և դուռը փակելով նոցա ետևից. — խնդրեմ այս պահարանից հեռու — կարող է վայր ընկնել:

Ս. Ֆիպսը Պինչին ու նորա բարեկամին տարաւ աղմկալի փողոցով, ապա խուլ նեղ փողոցներով, այնուհետև կանաչ խոտով ծածկած բակերի միջից և դադարելով անմարդաբնակ փողոցներից մռայլագոյն ու չարագուշակ տեսքով մի տան առջև՝ հրաւիրեց բարձրանալ իւր հետ ոլոր մոլոր սանդուղքով մինչև ամենավերին յարկը: Եւ կանգ առնելով սանդուղքի գլխին հին դրան առջև, շօշափեց անդրավարտիքի գրպանը, բաւական դժուարութեամբ միջից ժանդոտած բանալիների մի մեծ կապ հանեց և անվրդով ու անտարբեր սկսեց բանալիներից մէկը պատշգամբի տախտակին զարկելով միջի կեղտերը դատարկել:

— Լաւ կանէք որ այս բանալիի համար խցան շինէք, որ ծակը կեղտով չլցուի, ասաց նա Թովմասին նայելով, և փչեց բանալիի մէջ:

Թովմասը շնորհակալ եղաւ այդպիսի թանկագին խորհրդի համար. մ. Ֆիպսը դուռը բացարաւ և բանալին հանելով Թովմասին յանձնեց:

— Սակայն: Այստեղ մի բան կայ, մտածեց Պինչը և ահ ու դողով մուտ գործեց այդ միջին բնակարանը:

Ծերունին շտապով ներսի փեղկերը բացարաւ: Յերեկուայ ճառագայթների ամբողջ շեղջ մի ակնթարթում սենեակը լուսաւորեց, և այցելուների աչքերին պատկերացաւ աներևակայելի խառնաշփոթութեան մի թագաւորութիւն: Թափփած կարասիքը խառնիխուռն ածած էր մոմի արկղների, շիշերի կողովների և ամեն տեսակ չուլ ու փալասների հետ, սկսած հնոտի ջարդուած պատկերներից մինչև մկրակած գլխարկներն ու կօշկաներիով լիքը սրուակները: Յատակի վերայ բոլոր սենեակներում թափուած էին բազմաթիւ գրքեր, որոնց թիւը մի քանի հարարի էր հասնում. մի մասը կապկպած էր դարուած, միւսներն ուղղակի շաղ էին տուած, ինչպէս պատահել էր, այն ինչ պատերի մօտ դրուած էին դատարկ պահարաններ ու դարագներ:

— Սմենից առաջ, մ. Պինչ, սէտք է սոցանով պարապէք, ասաց մ. Ֆիպսը, ցոյց տալով գրքերը: Այս բոլորը կարգի բերէք, դարսեցէք պահարան-

ներում ու դարագներում և գրացուցակ կազմեցէք, պարապմունքը հէնց վաղուանից կարող էք սկսել:

Թովմասն ուրախութիւնից ձեռները շփում էր, կանխապէս ապագայ սլարապմունքի հաճոյքն զգալով, որ շատ համապատասխան էր նորա ճաշակին: Ծերուկը մանրամասն խրատներ տուեց, թէ ինչպէս դուռը փակէ և յայտնեց, որ բանալու ամենահեշտ եղանակն այն է, որ կողպէքը իւրով օժէ: Եւ այնուհետև գրապահին կատարեալ յաջողութիւն մաղթելով նոր պաշտօնի մէջ, ողջունեց ու դուրս գնաց:

Թովմասը բոլորովին տխուր ու վշտահար փոշոտ կեղծամ կրողի վարմունքից՝ երկար ժամանակ կանգնած էր մտածման մէջ ընկզմուած, մի ձեռքին գլխարկը, միւսում բանալին բռնած: Զօն Վէսալօկը, որ բոլորովին ալեգարդուել էր խառնակոյտի փոշուց և մինչև այդ ժամանակ հազիւ էր ծիծաղը զսպել, վրթկաց: Այս ծիծաղը Թովմասին էլ անցաւ:

— Ինչ լինելու է թող լինի, ասաց նա, բայց ես ոչինչ չեմ հասկանում:

— Հասկանալու բան էլ չկայ այստեղ, գործը սկսիր ու աշխատիր, վրայ բերեց Զօնը: Միթէ չը նկատեցիր, որ չիմարի մէկն էր. մետաքսէ գուլպաներն ու փոշոտ կեղծամը հօ տեսար:

Ճաշի ժամանակը մօտենում էր: Թովմասը Զօնի հետ դուրս եկաւ սենեկից և մ. Փիպսի խրատի պէս՝ դուռն զգուշութեամբ փակեց, բանալին,

ստուգութեան համար, կրկին անգամ դարձնելով: Պէտք չէ աւելացնել, որ այսպիսի ուրախառիթ առաւօտից յետ մեր բարեկամները արժանաւոր յարգանք մատուցին նշանաւոր պուգդինգին և մինչև երկինք բարձրացրին փոքրիկ Հուլի տնտեսական ընդունակութիւնները:

Միւս առաւօտ Թովմասը գնաց իւր նոր պաշտօնի: Գործն առաջ էր ընթանում: Նա անձանձիր աշխատում էր, կատարում էր և՛ այն, ինչ որ պայմանի մէջ չէր էլ մտել: Ընդամենը երկու օր էր անցել, և այդ լքուած սենեակը չէր կարելի ճտնաչել, — այնքան փոխուած էր ամեն ինչ: Մաքրած ու վայելուչ տեսք տուած կարասին կարգին դարսած էր. աւելորդ խառնակոյտը, թողն ու աղբը էլ չկար, իսկ քանի մի օրից յետոյ նոր գրապահը սկսեց արդէն տեսակների բաժանել զրքերը, բաժանմունքների վերածել և մուծել գրացուցակի մէջ: Նա արդէն սպասում էր գործատիրոջ, բայց վերջինիս իզն ու թողը չկար: Թովմասը գլուխ էր պատռում մտածելով, թէ ո՞վ կարող էր լինել իւր անյայտ հովանաւորը, մինչև որ մի չափազանց տարօրինակ հանգամանք նորա մտածմունքը առաջնորդեց դէպի բոլորովին ուրիշ կողմ:

Իւրաքանչիւր օր աշխատանքի գնալիս, ուր ինն ժամին պէտք է ներկայ լինէր, Պինչը իւր քրոջ տանում էր հետն զբօսնելու: Մի առաւօտ 9 ժամին նաւահանգստի մօտ էին գտնուում, դուր գործունէութիւնը եռում էր ամենայն ուժգնութեամբ:

նաւաստիները, բեւանակիրները հասցնելով աշխատում էին ափերին. մակույկների վերայ ճռնչում էին բարձրացող ճախարակները, լուում էր պարանք բարձելու ճռճոռոցն ու ճայթիւնները. շոգենաւերի սև ծխնելոյղներից թանձր ծուխ էր բարձրանում. նոցանից մի քանիսը ճանապարհի պատրաստութեան մէջ էին: Մուտքերի, նաւամատուցների և ամբողջ ծովեզերքի վերայ խռնուած էր ուղևորների ու ուղեկցողների ստուար բազմութիւն: Մանաւանդ խիստ նեղուածք էր մերձակայ շոգենաւի վերայ, որ նոյն իսկ նաւամատուցի մօտ էր: Ամեն կողմից խմբուող ամբոխից նեղուած՝ Թովմասը կանգնած էր ծովեզրին, քրոջը ձեռից բռնած և չէր նկատում իւր ետևը կանգնած մի չափահաս կնոջ, որ վիթխարի հովանոցը ձեռքին՝ չզիտէր ինչ անէր: Հովանոցը ծուռը կոթ ունէր և Թովմասն այդ շատ շուտ իմացաւ, վասն զի առաջ կինը նորա օձիքից բռնեց, իսկ լետոյ սկսեց մէջքին զարկել: Թովմասը լետ նայեց ու տեսաւ որ հաստիկ կինը գայրացած էր նեղուածքից քրոնած ու մինչև ծոճբակը իջած հուպ տուած գլխարկից: Կինը ջանք էր անում ճանապարհ բա՛ւալ հովանոցով ու բռուկնքով և մօտենալ շոգենաւին:

—Ո՛ւր է ոստիկանութիւնը, գոչեց նա գայրացած.—էլ ինչքն է նայում—մարդ կարող է խելագարուել նեղուածքից:

—Ի՛նչ էք կամենում, քաղաքավար հարցրեց Թովմասը: Գուցէ կամենում էք շոգենաւը մտնել,

եթէ այդպէս է՝ մենք կօգնենք ճանապարհ բա՛նալ, միայն մի բարկանաք այդպէս:

—Ասացէք խնդրեմ, այս անիծեալ հրէշներից որն է Սնտվերպէն ճանապարհ ընկնում, անհամբերութեամբ աղաղակեց կինը, հովանոցը շոգենաւների կողմն ուղղած:

—Ա՛յ ամենից մօտ կանգնողը, նաւամատուցի մօտ:

Միտրիս Գէմպը (նա էր այդ կինը) փոքր ինչ մեղմացաւ և առաջ անցնելով լեցաւ ծովեզրի վանդակապատին, աչքը շոգենաւին գցած: Բարեսիրտ Հուրթը սիրային կարեկցութեամբ հարցրեց նորան, թէ մի՞ գուցէ՝ որ և է ազգակցին ճանապարհ գնելու է եկել:

—Ո՛հ, չէ, սիրելիս, վշտագին պատասխանեց մ. Գէմպը: Ես ճանապարհ եմ գնում մի մատաղահաս, շատ թոյլ անձնաւորութիւն... Ի՛նչպէս պէտք է նա տեղ հասնի:

Գէմպը ախ ու վախ՛ մէջ ընկաւ և սկսեց աւելի մտադրութեամբ նայել անսովերպէնեան շոգենաւի կողմը. բայց յանկարծ սարսափ տիրեց նորան և աղաղակեց.

—Բայց ահա և ինքը: Ա՛խ, խեղճը: Այնպէս է գնում, ինչպէս ոչխարը գէպի գէնումն:

—Այն տիկնոջ մասին էք խօսում, որ գնում է ա՛յ էն փաթթուած ջէնտլմէնի հետ թև թևի տուած, հարցրեց Հուրթը, մատնացոյց անելով մուտքի ուղղութեամբ:

— Հն, որ փաթթուում է, — ամօթ չէ: Տեսնում էք, ինչպէս է քարշ տալիս:

— Այո, տեսնում եմ: Երևի թէ շատ է շտապում:

— Այժմ նաւախուցն է քաշ տալիս նորան, երևի ուզում է ապականութեան մէջ խեղտել: Ա՛խ չարագործ, չարագործ:

Թովմասն այս խօսակցութիւնը չլսեց, որովհետև խօսակցութեան հէնց սկզբին նկատեց, որ մէկը իւր ուսը թօթուեց: Յետ նայեց ու տեսաւ իւր տանտիրոջ, որ միշտ այնպէս ծածկամիտ էր թւում և ուշ ուշ էր երևում կենդանների աչքին:

— Ներեցէք, մ. Պինչ, շնչաց նա ականջում. — Ես խիստ յոգնած եմ և լաւ չեմ տեսնում: Ձէք նկատում այս շոգենաւի վերայ երկայն վերարկուով մի պարոն մի տիկնոջ հետ թե թե: Տիկինը երեսկալ ունի և սև շալ ծածկած:

— Երկայն վերարկուով, կրկնեց Թովմասը. — Ես տիկինը սև շալով, կարծեմ այդպէս ասացիք: Կացէք, լաւ նայեմ: Ժողովուրդ շատ կայ — միանգամից չի կալելի որոշել: Կացէք, կացէք, նա չէ, որ նաւախուցն է մտնում:

— Հէնց նա է, պատասխանեց տանտէրը: Մի լաւութիւն արէք, մ. Պինչ, մեծ լաւութիւն. խընդրեմ այս նամակն այն պարոնին յանձնէք: Տուէք, ուրիշ ոչինչ: Շատ հարկաւոր նամակ է, անհամբեր սպասում է սորան:

Թովմասը պատրաստակամ սրտով ընդունեց նորա խնդիրը, քրոջն ասաց, որ իսկոյն լետ կգայ, ամբողջ ճեղքելով շոգենաւին հասաւ և ցած գնաց ուղևորներով լի նաւախուցը, ուր մի փոքր ջանք գործ դնելուց լետ գտաւ փաթթուած պարոնին: Երևակայեցէք Պինչի զարմանքը, երբ տեսաւ, որ այդ մարդը Ջոնսն էր, Գրացիա Պէկանիֆի մարդը: Առաջ Թովմասը հայհոյանքի ձայներ լսեց, ապա հազիւ լսուող մի ձայն, թէ ինչ է կամենում:

— Ես իսկապէս ոչինչ չեմ ուզում, պատասխանեց Պինչը, բայց ինչ խնդրեցին այս նամակը ձեզ յանձնել, ես չգիտեի, թէ ձեզ պէտք էր հասցնել:

Ջոնսը ծրարը բաց արաւ: Նամակը հակիրճ էր, բայց կայծակի պէս ազդեց. նա տատանուեց: Պինչն զմալլած կանգնած էր նորա առաջ, կարծես մեխուած տախտակամածին: Վերջին զանգը հնչեց: Վերևից մէկը խուստ ձայնով կանչեց. «ովքեր ափին էք՝ շտապեցէք: Աւելորդ մարդիկ շոգենաւից հեռացէք»:

Ջոնսը ներս վազեց կողքի նաւախուցը և ձեռքից բռնած դուրս կորցեց այնտեղից վախից գունաթափ Գրացիային: Սա ճանաչեց Պինչին. բայց ժամանակ չունեցաւ խօսելու — մարդը կատաղած քարշ տուեց նորան դէպի վեր:

— Ի՞նչ կայ, ո՞ւր ենք գնում, ա՛հ ու գողով հարցրեց կինը, երբ նոքա բարձրացան ամենավերին տախտակամածը:

— Մնում ենք—միտքս փոխեցի: Անկարող եմ գնալ: Մի հարցնիր պատճառը, ապա թէ ոչ կը սպանեմ քեզ էլ, մի ուրիշին էլ: Ե՛լ դուք, նաւահանգստում եղողներ, մուտքը բաց արէք, թողէք ափ դուրս գանք:

Թովմասը նոցա հետևեց: Ջօնսը ափը դուրս եկաւ, այս կողմ այն կողմ նայեց, ում-որ ամբօխի մէջ պտրտում էր. լետոյ չնայելով որ շտապում էր, դարձաւ դէպի Պինչը, չարութեամբ սպառնաց բռունցքով ու հարցրեց.

—Ո՞ր է նա:

Տակաւին Թովմասը չպատասխանած այս անհասկանալի հարցին՝ մի շքեղ հագնուած պարոն մօտեցաւ Ջօնսին:

—Սիրելի Չուզլվիտ, ասաց նա մտերմական ժպիտով և գլխարկը վերցնելով ողջունեց Ջօնսի կնոջ: Հազար ներողութիւն: Ներեցէք, որ խանգարեցի ձեր զբօսանքը,—ի՛նչ սքանչելի եղանակ: Կարծեմ հրամանքներդ արտասահման էիք ուղևորւում: Յոյս ունիմ, կծանօթացնէք ձեր ամուսնու հետ:

—Մ. Մօնտէգիւն է, փնթփնթաց Ջօնսը, շփոթուած նայելով իւր կնոջ:

—Ուրեմն, դուք ինձ մէկ էլ կներէք: Սյժմ չէք ցանկալ, մ. Չուզլվիտ, ինձ հետ գալ: Ես կառք ունիմ:

—Հապա կի՞նս ինչ անեմ, հարցրեց Ջօնսը, կատաղած նայելով Տիգգին:

Անմիջապէս օգնութիւն հասաւ միստրիս Գէմ-

պը, և նորան յանձնուեցաւ երկիւղից կէս-կենդան Գրացիային տուն հասցնել: Իսկ Ջօնսը Տիգգի հետ դուրս պրծաւ ամբօխի միջից և իւր ուղեկցի հետ նստեց վերջնիս կանխաւ պատրաստած կառքը:

Թովմասը նաւամատոյցի մօտ կանգնած կարծէք երազումն էր, և քրոջ բոլոր հարցերին անկարող որ և է բացատրութիւն տալու: Ի դուր աշխատում էր տեսնել ամբօխի մէջ իւր տանտիրոջ, որ անհետ կորել էր:

Գնաց արգեօք ալդ առաւօտ բժիշկ Նէջէտի մօտ—յայտնի չէ, բայց ասում են, նորան տեսել են Անտվէրպէնի շոգենաւն ուղեկցող ամբօխի մէջ:

### ԺԲ.

Մ. Մօնտէգիւն փախստականին տարաւ «Անշահասէր Ընկերութեան» գրասենեակը, որ նաւահանգստի մերձակայքումն էր: ձանապարհին ոչ մէկն և ոչ միւսը ձայն չհանեցին: Տիգգն անխօս զուարճանում էր իւր զոհի տանջանքով, իսկ Ջօնսը, տակաւին կատաղութիւնից խելքը կորցրած, բռունցքներն էր հուպ տալիս և առամները կըրճտացնում: Երբ նախագահի պաշտօնական մենարանը մտան, փախստականը փոքր ինչ ուղղուեցաւ, որովհետև կարծում էր, թէ Տիգգ Մօնտէգիւն ուրիշ տեղ պիտի տանէր իրան: Նախագահը թեք ընկաւ բազմոցի վերայ: Ջօնսը կանգնեց լուսամու-

տի մօտ և խիստ հայեացքով նայում էր անցորդներին:

— Տգեղ բան է, պատուելի, շատ տգեղ բան է, խօսեց վերջապէս նախագահը երկարատե լուսթիւնից լետ:

— Իսկ թնչ էիք ուզում դուք ինձանից: Ի՞նչ էիք սպասում:

— Կարծեմ արդէն մէկ անգամ ասացի, և այժմ էլ կրկնում եմ, որ ինձ յաջողեց այս օրերս քանի մի բան իմանալ ձեր մասին:

— Լուեցէք, զարհուրած շնչաց Ձօնսը դէպի դուռը նայելով:

— Լաւ էք մտածում, անտարբեր նկատեց Տիգ֊  
գը, նոյնպէս դրան նայելով. — զգուշութիւնը վնասաբեր չէ: Եթէ ես ոստիկանութեանը յայտնեմ այն ամենը, ինչ որ իմայել եմ ձեր մասին, հազիւ թէ ինձ մի օգուտ լինի դորանից: Ես, այո՛, սպասում էի, թէ դուք նրա փոխարէն, որ խորհուրդ եմ պահում ձեր գաղտնիքը, կօգնէիք ինձ ձեր աներոջ փողերին տիրանալու, իսկ դուք լաւ համարեցիք փախչել:

— Ո՛չ թէ փախչել, այլ լոկ գնալ, որպէս զի բացակայութեամբ պայմանաւորուեմ ձեզ հետ:

— Կարծես երեխայի տեղ էք դնում ինձ:

— Ինչպէս հաճելի է ձեզ: Ես չեմ հետաքրքրուի, թէ որտեղից գտաք այն դեսպանին, որ տոմսակը բերեց ինձ, բայց հին հաշիւներս տակաւին չեմ աւարտել նորա հետ, և յոյս ունիմ ինձ

չէք խանգարի, որ այդ անսխտանի հետ վարուեմ ինչպէս կամենամ:

Նախագահն, ինչպէս երևում էր, կամ չէր հասկանում, կամ ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում, թէ ո՛ւմ մասին է Ձօնսը խօսում, սակայն պատասխանեց.

— Ինչպէս գիտէք այնպէս արէք — դա իմ բանս չէ:

— Մի հարց ևս, շարունակեց Ձօնսը դառն ժպիտով. — Ինքներդ արիք այդ մեծ գիւտը, թէ մի ուրիշին էլ յայտնի է:

— Ոչոքին, կեղծեց Տիգ֊գը: Ես դարձեալ կրկնում եմ. ինձ թնչ օգուտ, եթէ գաղտնիքն ուրիշն էլ իմանայ:

— Սյուպէս է, նկատեց Ձօնսը, փորձելով ծիծաղել, բայց նորա կոկորդը ցամաքել էր, ուստի չյաջողեց — միայն մի տգեղ ձայն լսուեց: Ուրեմն ես կապացուցանեմ, որ վատասիրտ չեմ: Ուզո՞ւմ էք հէնց այսօր կերթամ Պէկանիֆի մօտ:

— Շատ լաւ կանէք: Ի դուր չպէտք է ժամանակ կորցնել:

— Ես արդէն վաղուց ուզում եմ ձեռք առնել այդ հին խաբեբային:

— Շատ գեղեցիկ, այժմ ես ձեզ հասկանում եմ: Ձեռքդ ինձ տո՛ւր, բարեկամ:

— Դուք էլ հետս կգաք, նկատեց Ձօնսը: Անհրաժեշտ է որ մի լաւ շէնք ու շնորհքով գնանք, և ձեզ կմնայ դիւթել նորան ձեր հարստութեամբ և

սիրային վարմունքով: Այդ սագին այնպէս էլ հեշտ չէ խաբել, ինչպէս թւում է:

Տիգրը մտածմունքի մէջ ընկաւ: Առաջարկութիւնը շատ անսպասելի էր և նորան շատ էլ դիւր չեկաւ:

— Ուրեմն գնում ենք միասին: Ես միայնակ չեմ կարող գնալ:

— Սակայն, եթէ այդքան անհրաժեշտ է այդ, հրամեցէք, պատրաստ եմ ձեր ցանկութիւնը կատարել:

Գործը վճռուած էր: Խօսակիցները ձեռքերը միմեանց մեկնեցին և հրաժեշտ տուին, պայման դնելով, որ երեկոյեան ինն ժամին կառքը պատրաստ լինի:

Ճիշտ նշանակած ժամին «Անշահասէր Ընկերութեան» ներկայացուցիչները ճանապարհ ընկան: Գուրսը տօթ էր. խիտ ամպը պատել էր. ձիերն անդադար դողդողում էին, ծիծեւնակները ճչալով թռչկոտում գետնի վերայով: Այդ բոլոր նշաններից ճանապարհորդները գուշակում էին, որ այդ գիշեր խիտ փոթորիկ պիտի բարձրանար:

Մութը հետզհետէ աւելանում էր: Կայծակի լոյսը ժամանակ առ ժամանակ լուսաւորում էր սև հորիզոնը: Չարագուշակ ամպերը մթագնած և դանդաղ շարժւում էին խաւարչտին երկնից մէջ: Գոբա կանգ առան, և տեղի տուաւ հանդիսավեհ լռութիւն: Անձրև վրայ տուեց խո-

շոր կաթիլներով: Ամպի գորգոռոցը լսում էր հեռուից:

Ուղևորներն արդէն անցել էին Լօնդօնի արուարձանները, անցել էին անգամ քաղաքից դուրս գտնուած իջևանն, ուր առաւօտները մայրաքաղաք մտնող կանաչի ծախողները առուտուրն սկսելուց առաջ սուրճ էին խմում: Երևալ սկսան քաղաքից դուրս տներ, այգիներ, ծառաստաններ... Այդ միջոցին խաւար պատեց ամբողջ երկրին և անձրևն հեղեղի պէս սկսաւ թափուիլ երկնքից: Գոռոցի ձայնը հետզհետէ մեծանում էր, կայծակն աւելի պայծառ էր փայլատակում և աւելի կատաղի. յանկարծ Տիգրի վախեցած երևակայութեան առջև մի տեսարան ներկայացաւ, որ մի պայրկեանից անմիջապէս չքացաւ: Նորան երևեցաւ, որպէս թէ Ջօնսը վեր էր քաշել իւր ձեռքը՝ մի շիշ բռնած ինչպէս մուրճ, որով ուղում էր նրա գլուխը ջարդել: Նոյն վայրկենին նա նկատեց (կամ կարծում էր թէ նկատեց) իւր դրացու դէմքի վերայ վայրենի ատելութեան և երկիւղի արտայայտութիւն:

Տիգր Մօնտէգիւն հագիւ կարողացաւ զսպել իւր սարսափը:

Կառքը սաստիկ ուժգնութիւնից ճօճուեց. տեսիլն անյայտացաւ: Ջօնսը ճաշակեց շշից, նաւաստիի երգերից հատուկտոր գոռալ սկսեց և պահանջում էր, որ իւր անխօս ուղեկիցն էլ անշուշտ զուարճանայ իւր հետ: Սակայն Ջօնի ուրախութիւ-

նը այնպիսի յուսահատ սանձարձակ յատկութիւն ունէր, որ առանց այդ էլ բնութիւնից բաւական երկչոտ Տիգզին ստիպեց խիստ կուճ գալ այն մարդու առջև, որին հլու գէնք էր դարձրել իւր նենգաւոր նպատակների համար: Բայց և այնպէս Տիգզ Մօնտէզիւն հաստատ միտքը դրեց այդ քաջ տղամարդին մի լաւ հուպ տալ, երբ գործը բարեյաշող ընթացք կստանար: Իսկ յետոյ, մտածում էր նախագահը, երբ ամեն բան, ինչ որ կարելի է, կհաւաքէ, կարելի է ծլկուել ովկիանոսից գէնը. յետոյ կտեսնենք, ո՞վ աւելի ուրախ կլինի և աշխատած:

Ահա թէ Ինչպիսի մտքեր բուռն էին զրել Տիգզի խորամանկ գլխում երկարատև ճանապարհորդութեան միջոցին, մինչդեռ ուղեկիցն առաջուան պէս շիշով էր զբաղուած և երգեր էր ճղաւում: Նոքա խօսք կապեցին որ Սելիսբիւրի օթեանն և միւս օրը ներկայանան Պէկանիֆին: Պատուելի ճարտարապետին խաբելու միտքը անպատմելի հիացում պատճառեց փեսային:

Արհաւիրքը փոքր առ փոքր դադարեց, էլ այնպէս յաճախ չէր փայլատակում. բայց անձրևը չէր կտրուում: Ուղևորները ճանապարհի գրեթէ երկու երրորդ մասն անցել էին, երբ յանկարծ ձիերը, ինչից որ վախենալով, կատաղութեամբ ընթացքը փոխեցին և կառքը քարշ տուին լեռնակողմը, գէպի մի ծուռն և մուռը բլուր, կառապանին ցած գլորեցին, փոսն ընկան և կառքը շուռ տուին:

Իժուար է նկարագրել կառքի վիճակը. բա-

ւական է ասել, թէ լոկ ծամուտած կողքերը մնացին, իսկ ոտքը բոլորովին պոկուեց: Ամենից առաջ Ջօնսը ոտքի ելաւ: Նա գլխի ու ոտքերի ցաւ զգաց, և ստիպուեցաւ լենուիլ մերձակայ ցանկապատին, որ վայր չընկնի: Սակայն, շուտով ուղղուեցաւ ու յանկարծ նկատեց, որ Տիգզ Մօնտէզիւն անզգայ վայր է ընկած գետնին կառքի առջևի ակնի ու ձիերի ետևի սմբակների մէջ տեղը:

Մի անակնկալ միտք ծագեց չարագործի գլխում: Նա վրայ ընկաւ վայր ընկնող ձիերին, սանձը բռնեց, և ամբողջ ուժով քաշելով ստիպեց աքացել ու ոտները գետին զարկել այնպիսի ուժգնութեամբ, որ ամեն նոր փորձի ժամանակ պայտերը գիպչում էին անզգայ Մօնտէզիւի գլխին, և սպառնում ճխլել նորա գանկը: Ջօնսը շարունակ սանձը բռնած ունէր և ձիերին սիրտ տալով՝ ուժգին մռնչում էր.

— Հապա, հապա, հոգեակներս, մի փոքր էլ:

— Ի՞նչ էք անում: Ի սէր Աստու բաւական է, աղաղակեց կառապանը, որ գետնից վերկացաւ ու ձիերի մօտ վազեց: Պարոնը կառքի տակ է—կսպանէք նորան:

Յետոյ վազեց Տիգզի մօտ, և դողալով թէ մի գուցէ իր գլուխն էլ վրան դնէ, մէկ կողմ քաշեց նորան. յետոյ նորից Ջօնսի մօտ վազեց, ապանդակները կտրտեց, մի կերպ արձակեց ձիերին և ոտքի կանգնացրեց:

— Ի՞նչ, ի հարկէ, ցանկանում էիք ձիերին

բարձրացնել, ասաց նա արհամարհելով Ջօնսին,—  
բայց քիչ էր մնում ոտնակոխ անելիք ձեր ընկերոջ։  
Երկուսն էլ նայեցին Տիգզին։

—Ի՞նչ է պատահել, հարցրեց նա թույլ ձայ-  
նով և դալկացած աչքերը դէս ու դէն ձգելով։ Ոչ  
ոք հօ չէ վիրաւորուել։

Վերկացրին Տիգզին, որ նոցա օգնութեամբ  
մի երկու քայլ դրեց։ Բարեբաղդաբար այս անգամ  
նա ազատուել էր միայն ահ ստացած և թեթև  
վերքերով։

—Հա, ի՞նչ է, յարգելի, ոսկրներդ առողջ են,  
հարցրեց Ջօնսը։ Կարծեմ առանձին վնաս չէք կրել։

—Հինգ բոպէից առաջ մի պէնս չէի տալ այս  
պարոնի գլխին, նկատեց կառապանը.— և եթէ ես  
ժամանակին չհասնէի...

Ջօնսն անիծեց կառապանին և հրամայեց լռել։  
Բայց Տիգզը, որ ուշադրութեամբ ականջ էր դնում  
այս խօսակցութեան, ձայն ծպտուն չհանեց։

Ջօնսն ու իւր ուղեկիցը այս արկածից յետ  
ստիպուած էին մնացեալ ճանապարհը մինչև Սէ-  
լիսբիւրի ոտքով քայլել։ Մութ ու անտանելի գի-  
շերը ցեխոտ ճանապարհին երկար ու ձանձրալի  
թափառելուց յետ քաղաք հասան յօգնութիւնից  
կէսկենդան։ Առաւօտը վաղ մօտեցան մի փոքրիկ  
հիւրանոցի դռան, բայց ներսն ամենքը քնած էին,  
և մեր ուղևորները երկար ժամանակ դռները ջար-  
դեցին մինչև որ վերջապէս ծառան քնից արթնա-  
ցած՝ մի կասկածաւոր հայեացք ձգելով նոցա վե-

րին աստիճանի ապականուած շորերի վերայ սիրտ  
առաւ աչքաստանարան տալ նոցա։

Դուրսն արդէն բոլորովին լոյս էր, երբ Տիգզը  
առանձնացաւ իրեն համար նշանակած սենեակը,  
հաստատ մտադրուած, որ ինչ էլ լինի առանց  
Ջօնսի ընկերութեան վերադառնալ տուն։

—Կեղտոտ գործ է, մտածեց նա.— թող Չուզլ-  
վիտն առաջ գնայ, իսկ ես կերթամ երբ խելքս  
կտրի. այսպէս լաւ կլինի։

Նա զգուշութեամբ զիտեց բոլոր սենեակը,  
մեծ զգուշութեամբ նայեց շորի պահարանը, մահ-  
ճակալի տակ, և դուռը բանալիով փակեց ու պար-  
կեց քնելու։ Սենեակը մի ուրիշ դուռն էլ ունէր  
միւս կողմից փակուած, և Տիգզն ամենևին չկա-  
րողացաւ հասկանալ, թե ինչ տեղի հետ յարակ-  
ցութիւն ունէր նա։

Քնի մէջ էլ հանգիստ չունեցաւ նա։ Երկիւղն  
ու անմաքուր խիղճը գրգռեցին նորա երևակայու-  
թիւնը, և երազի մէջ այդ դուռը երևեցաւ նորան  
ինչպէս մի դարան, ուր պահուած էր թշնամին։  
Ամբողջ գիշեր արիւնալի կերպարանքներ էին երե-  
ւում նորան. նորա կուրծքը ճնշուած էր, մի բան  
սղմում էր նորա կոկորդը և գոռալով զարթնեց...

Մահճակալի առաջ կանգնած էր Ջօնսը, իսկ  
զազտնի դուռը կրնկի վերայ բաց էր։

—Ի՞նչ էք կամենում, զարհուրած գոչեց Տիգզը,  
անկողնից վեր թռչելով։

—Ոչինչ, պատասխանեց Ջօնսը. ես կարծում

էի, թէ այս դուռը դէպի սրահն է տանում և ուղեցի գնալ նախաճաշ պատուիրել. իմ ննջարանում զանգ չկար:

Այդ միջոցին կօշիկները ձեռին ներս մտաւ ծառան, որ յայտնեց սակայն, թէ զանգ կայ Զօնսի սենեակում մահճակալի վերևը:

— Ուրեմն չեմ նկատել— աւելի ոչինչ, ասաց Զօնսն ու յետ դարձաւ իւր սենեակը:

Երբ Զօնսը շուացնելով քայլում էր իւր սենեկում, Տիգգ Վօնտէգիւն դռներին մօտեցրեց մի ծանր սեղան, ապա նստեց բազմոցի վերայ ու մտածմունքի մէջ խորասուզուեցաւ: Երևակայութիւնը հանգիստ չէր տալիս նորան և լիշեցնում էր երազում տեսած զարհուրելի պատկերները: Բայց ճարտարապետի վերայ արշաւելու ժամանակը մօտենում էր և Տիգգը շարունակ մատը շարժում էր ու մտքում կրկնում «գործը կարգի կդնենք,— յետոյ ինչ ուզում է թող լինի»: Այսպէս մտածելով մօտեցաւ լուացարանին, երեսը լուաց, սանդուղեց, և առանձին ջանքով սկսաւ հագնուել ճանապարհի պայուսակից հանած կոկիկ շորերը, ցանկալով, առաջին իսկ տեսակցութեան միջոցին Պէկանիֆի հետ, իւր աչքի ընկնող արտաքինով աւելի արդիւնաւոր տպաւորութիւն գործել այդ հին խաբեբայի վերայ:

Ախորժելի առաւօտն ու արևի պայծառ ճառագայթները շուտով գրեթէ իսպառ ցրուեցին Տիգգի անախորժ մտածմունքները. նա անգամ երգել սկսաւ կիսաձայն, թէպէտև նոյն մտածմունք-

ներից հարկադրւած երբեմն երբեմն երգի ձայնը կտրում էր և փնթփնթում:

— Նորա հետ ոչ մի պայմանով տուն չեմ գառնալ:

Այդ միևնոյն անտանելի գիշերը միտարիս Լիւպէնը նստած էր տխուր մտածմունքի մէջ իւր սեղանատանը մի սեղանի առջև: Փայլակն ու որոտումը «Վիշապի» շրջակայքում ոչնչով պակաս չէր այն փոթորկից, որ կատաղի հնչում էր Լօնդոնի ու Սէլիսբիւրի միջև մեծ ճանապարհին: Ի պատիւ որոտման տանտիկինը սեղանից մոմը վերցրեց ու վառարանի վրայ դրեց: Ընթրիքը պատրաստ ձգած էր, բայց նա տակաւին մօտ չէր գնացել: Ամեն մի աչք շլացնող փայլատակման միջոցին շնչում էր.

— Տէր, փրկիր ու խնայիր:

Լուսամուտի առջև ոտքի ձայն լսուեց. ոտնաձայնը պատշգամբի աստիճաններին մօտեցաւ, դուռը բացուեց և ներս մտաւ մի տղամարդ, նաւաստիի կաշուէ բաճկոն հագած, որի օձիքը վեր էր քաշած մինչև ականջները: Ներս մտնողը գլխին զիւղվէստի \*) ունէր ծածկած, որի երկայն ծոծրակ-

\*) Զիւղվէստիքը (բառացի թարգմանութեամբ— հարաւ արևմտեան)—բաթանէ իւղաներկ գլխարկ է ծոծրակի կողմը երկայն յաւելուածով, որ ծովագնացները ծածկում են հարաւ արևմտեան հողմի ժամանակ, որի հետ յաճախ անձրև է գալիս:

կալից ջուրը հեղեղի պէս թափւում էր մէջքի վերայ: Նա խռպոտ ու խիստ ձայնով մի բաժակ ընտիր գարեջուր պահանջեց:

— Սարսափելի գիշեր է, ասաց տանտիկինը:

Եկողը ցնցուեց շան նման, և տիկնոջ կարծիքը հաստատեց նկատելով, որ այդ գիշերը երբէք չի կարելի խորթ գիշերներէ թուում դասել:

— Լաւ չէր լինի շորերդ ցամաքեցնէիք— հարցրեց միստրիս Լիւպէնը.— խոհանոցում կրակ կայ և մի պատուական ընկերութիւն— կարելի էր հետները խօսել:

— Ո՛չ, շնորհակալ եմ: Այլ խնդրեմ ասէք, սա որ սրճանոցն է: «Վիշապը» չէ:

— Վիշապն է:

— Ուրեմն այստեղ պէտք է լինի իմ բարեկամ Տէպլին: Ե՛յ, Մարկոս, թնչ եղար: Գուրս արի:

Տանտիկինը շուռ եկաւ, որ մոմն ուղղէ, ապա տխրութեամբ ասաց.

— Ո՛չ, տէր, նա վաղուց էլ այստեղ չէ, հեռու տեղ գնաց, և Աստուած գիտէ կենդանի է խեղճը թէ ո՛չ:

— Բայց ո՛ւր գնաց:

— Ասում են Ամերիկա է գնացել: Նա միշտ բարի ու գթոտ էր, գուցէ այժմ բանտում լինի որ և է մի նեղրին պաշտպանելու համար: Ինչ հարկ կար այդքան հեռու գնալ...

Միստրիս Լիւպէնը վերստին շուռ եկաւ, որ ծածկէ իւր արտասուքը: Անծանօթը մի ակնթար-

թում օձիքը ցած թողեց և գլխարկը վերցրեց:

— Գուք երևի չէիք մերժի տեսնուել նորա հետ, ասաց նա, մօտենալով տանտիկնոջ և ձեռքից բռնելով:

— Ո՛վ Աստուած, Մարկոս. ի՛նչ բաղտաւորութիւն:

Հին ծանօթները պինդ գրկեցին մէկմէկու:

— Ի՛նչպէս չճանաչեցի, ուրախ ուրախ գոչեց միստրիս Լիւպէնը.— այժմ դու միշտ մեզ մօտ կըմնաս: Այդպէս չէ, Մարկոս:

— Գուցէ և այդպէս լինի, եթէ պսակը տեղի ունենայ:

— Մթթէ պսակում ես, հարցրեց չքնաղաղէմ տանտիկինը նենգ ժպիտն երեսին:

— Անշուշտ. այսինքն ես ուղեցի ասել, եթէ դուք կհամաձայնիք:

— Ի հարկէ կ'համաձայնիմ, ո՛վ կհամարձակուի մարդու չգնալ այսպիսի մի քաջ տղամարդի հետ:

— Ճմարթտ,— գոչեց Մարկոսը կատարեալ հիացմամբ: Ուրեմն վերջացած բան է: Զեռքդ տուր, տիրուհի: Պսակն երբ լինի:

Տանտիկինը մի կուշտ ծիծաղեց իւր նախկին դռնապանի շտապողականութեան վերայ և կատակի տեղ ընդունեց այդ: Սակայն շուտով այս ուրախ խօսակցութիւնն ընդհատուեցաւ Մարտինի մտնելով, որ վաղուց ձանձրացել էր նախասենեկում սպասելուց:

Երիտասարդ Զուզլվիտի երևալը նորից հիա-

ցում պատճառեց միտորիս Լիւպէնին, բայց ամենեւին չմոռացաւ հիւրընկալութեան պարտաւորութիւնները, ուստի և շտապով սկսեց պատրաստութիւն տեսնել թանկագին հիւրերին պատուասիրելու: Դ՛ միջի այլոց Մարկ Տէպլին նախագգուշացրեց նորան, որ լաւ կլինէր, եթէ մինչև առաւօտ ոչ ոք գիւղում իրանց գալը չիմանար:

— Խոհանոցում միմիայն մշտական հիւրերս են, պատասխանեց միտորիս Լիւպէնը. նոքա հրավառութիւն կտարքէին, եթէ իմանային թէ այստեղ էք:

— Ա՛յ հէնց այդ եմ ասում, սիրելի բարեկամ, նոցա ամենեւին չի պատկանի այսօր իմանալ, — նկատեց Մարտինը:

— Ապահով եղէք. ես իսկոյն նոցա դուրս կողարկեմ, իսկ երբ ամեն ինչ պատրաստ կլինի, խոհանոցի լուսամուտում մոմը կը դնեմ, և այն ժամանակ խնդրեմ հաց վայելեցէք:

Տանտիկինը գնաց կարգադրելու, իսկ փոքր ժամանակից յետ պատուական խուճըր խոհանոցից դուրս գնաց, մէկմէկու հաւատացնելով, թէ «Լիշապում» ժամացոյցը ճիշտ կէս ժամ առաջ է անցել: Մարկոսը լուսամուտից դիտում էր դուրս գնացողներին, քանի մի նկատողութիւններ անելով Մարտինին իրանց հին ծանօթների վերաբերմամբ: Տասնըոպէից յետ խոհանոցի լուսամուտում վաղուց փափագած ճրագը երևաց և քաղցած ուղեւորներն օգուտ քաղեցին յօժարական տանտիրոջ քաղցր հիւրասիրութիւնից:

Խոհանոցի վառարանում սիրուն կրակ էր վառած: Սեղանը պատրաստ էր: Ընթրիքը պատրաստում էր վառարանի վերայ և տանտիկինը եռանդով հոգում էր ամեն ինչ, ժամանակ առ ժամանակ սիրոյ ակնարկ ձգելով հիւրերի վերայ: Վերջապէս հանեց պահարանից մի շիլ բարկօղի, տակառից՝ մի մեծ գաւաթ վայտշիբի ընտիր դարեջուր լցրեց, դնաց ձեռները լուաց և հիւրերի հետ սեղսն նըստեց:

Ընթրիքից յետ Մարտինը տանտիկնից մանրամասն տեղեկութիւններ պահանջեց իւր պապի ու Մէրի Գրէգէմի մասին: Միտորիս Լիւպէնը հաղորդեց մանրամասնօրէն այն ամենը, ինչ որ պատահել էր Պէկսնիֆի տանը, երիտասարդ Չուզլվիտի բացա՛լայութեան ժամանակ: Նորա պատմածից համոզուելով, որ ճարտարապետը վերջնապէս իշխել է ծերունի Չուզլվիտի սրտին ու կամքին, և լսում է նաև, թէ պատրաստում է պսակուել վերջինիս սանուհու վերայ, Մարտինն սկզբում այն աստիճան բորբոքուեց և շփոթուեցաւ, որ վճռեց առանց մի վայրկեան ուշացնելու վազել Պէկսնիֆի մօտ ու «ամերիկական ձևով» վարուել նորա հետ: Սակայն Մարկոսի խելացի խորհրդների և պատուական միտորիս Լիւպէնի բարեկամական յորդորների շնորհիւ նորա բարկութիւնը շուտով մեղմացաւ, և ոչ միայն խոստացաւ իւր անվեհեր դիտաւորութեան կատարումը յետաձգել, այլ դեռ խօսք էլ տուեց առաւօտը մտնել ծերունի պապի մօտ, ներողութիւն տը

խնդրել նորանից անցած գնացածի համար և աշխատել հաշտուելու նորա հետ:

Այս պայմանի համեմատ Մարտինն առաւօտեան գնաց ճարտարապետի տուն, ուր և առանց որևէ արգելքի հանդիպելու ծառաների կողմից՝ ներկայացաւ պապին, որ այդ միջոցին ականջ էր գնում իւր սանուհու կարգալուծ. բայց այդտեղ էր նրստած և ինքը Պէկանիֆը: Այս պատուելի շէնտլմէնը վճռել էր ոչ մի վայրկեան աչք չհեռացնել իւր կենողներէից: Ո՛րքան էլ Մարտինը կատարեալ անկեղծութեամբ և եռանդով ջանաց համոզել պապին, որ բոլորովին իւր հայեացքն էլ է փոխել իրերի վերայ, իւր անցեալ վարքն ու բարքն էլ, ի՞նչ պիտի կենդանի և զգայուն գոյներով էլ նկարագրեց երիտասարդը իւր կրած տառապանքներն ովկիանոսի այն կողմը՝ ոչինչ չօգնեց: Պէկանիֆը իւր ճարտար լեզուով և անպատկառ նկատողութիւններով նպատակ էր դրել ոչ թէ միայն խախտել պապի հաւատը դէպի երիտասարդ Մարտինի խօսքերը, այլ նաև առաջուանից աւելի զրգռել ծերունուն պարզամիտ-զղջացող թոռան դէմ:

Այս մտադրութիւնը գրեթէ յաջողեց յարգելի ճարտարապետին: Ծերունի Զուզլվիտը թէպէտ ներսից բաւական ուրախ էր իւր թոռան վերադարձի վերայ, սակայն արտաքուստ ոչ մի ուրախութեան նշոյլ չէր ցոյց տալիս: Երիտասարդ Մարտինն ամեն աղաչանքին ու պաղատանքին մերժումն էր ստանում, թէպէտև երբեմն նորա խօսքերի մէջ

նկատուած էր մի փոքրիկ շարժում թոռան օգտին. բայց որովհետև Պէկանիֆը ոչ մի ըոպէ սենեկից չէր հեռանում, երիտասարդի ամեն ջանքը ներումն ստանալու և բոլորովին հաշտեցնելու իւր հետ պապին՝ անպտուղ էր մնում: Այնուհետև Մարտինն սկսեց խնդրել պապին, որ գոնէ օգնէ իրեն միստէր Բիվէնին տուած խօսքին հաւատարիմ մնալու, այն Բիվէնին, որ միջոց էր տուել իրան Եղեմի կորստեան հովտից ազատուելու: Պատմեց նա և՛ իւր խեղճ հարևան գաղթականի տխուր վիճակը: Ծերունին խստութեամբ յայտնեց, որ կը կատարէ նորա այս խնդիրը, բայց որ դա թո՛ղ վերջինը լինի, և պատուիրեց սանուհուն արձանագրել թէ Բիվէնի հասցէն, և թէ նորանից պարտք առած փողի գումարը: Այս է բոլորը, ինչ որ Մարտինը կարողացաւ շահուել իւր պապից, որ չորս կողմից շրջապատած էր ճարտարապետի խարդախ ցանցով: Նա և մերի Գրէգէմը երկար ժամանակ թախծալի հայեացք փոխանակեցին, ապա ողջունեց ծերունուն և դառն յուսահատութեամբ հեռացաւ Պէկանիֆի տանից, չգիտենալով, ինչ անէ, ուր գնէ իւր գլուխը և ինչո՞վ կերակրուի:

— Գարձեալ Լօնդօն պէտք է գնալ, մտածեց նա «Վիշապը» վերագառնալիս, ուր նորան սպասում էր Մարկոս Տէպլին:— Մէկ էլ կփորձեմ: Պինչն, ասում են, գործի է կպել.— գուցէ ինձ էլ սովորցնէ, թէ ինչպէս կարելի է օրական հաց վաստակել: Նոյն առաւօտ Ամերիկայի նախկին գաղթա-

կանները թողին Վայտշիրի խաղաղ դաշտն ու ոտով ճանապարհ ընկան դէպի Լօնդօն, իսկ այնտեղ հասնելուց երկու ժամ անց՝ կարծէք Սէլիբիւրիով անցնելով «Վիշապը» եկան Ջօնսն ու Տիգգ Մօնտէգիւն: Նոցանից առաջինն առանց ժամանակ կորցնելու, գնաց Պէկանիֆի ետեւից, հրաւիրեց նորան հիւրանոց, և այնտեղ մի շիշ գինիով ծանօթացրեց իւր աներոջ հետ երեւելի ու վստահ նախագահին: Պէկանիֆը յափշտակուած մ. Մօնտէգիւնի փառաւոր տեսքով և սիրային վարմունքով, մանաւանդ Ջօնսի խոստացած խոշոր օգտաստացութեան յուսով գրաւուած՝ խօսք տուեց անպատճառ իւր գումարները գնել «Անշահասէր ընկերութեան» մէջ: Որոշուեցաւ, որ մի օրից լետ երեքով գնան Սէլիսբիւրի, ուր պիտի կազմուէր և ստորագրուէր պաշտօնական պայմանաթուղթը, իսկ աշխատանքն աւարտելուց լետ պիտի մի լաւ ճաշէին ընտիր հիւրանոցներից մէկում: Սակայն Ջօնսը գործին այսպիսի բարեյարջող ելք տալուց լետ միւս առաւօտ, յուրախութիւն Տիգգի, Լօնդօն ուղևորուեց, անլետաձգելի գործերի պատճառով իսպառ հրաժարուելով առաջիկայ պատուական հացկերոյթից:

**ԺԳ.**

Թովմաս Պինչն ամեն օր պարապմունքից տուն դառնալիս՝ ճանապարհին մտնում էր մի խիտ ստուերաշատ ծառատունկ, ուր շարքուանի մօտ սպա-

սում էր նորան իւր քոյրը: Մի անգամ տանու գործերի պատճառով Հռութն ուշացաւ և մի փոքր ուշ գնաց սովորական տեղը, և տեսաւ որ իւր եղբայրն այնտեղ խօսում է Ջօն Վէստլօկի հետ:

—Սլոժ մեր խումբը կատարեալ է, ասաց Թովմասն, երբ երեքը միասին այգուց դուրս եկան: —Ես ձեզ ուզում եմ, Ջօն, մի տարօրինակ դէպք պատմել, որ քոյրս էլ կվիլայէ:

—Շատ լաւ, պատասխանեց Վէստլօկը, բայց ամենից առաջ թոյլ տուր մի թեթեւ բան հարցնեմ քեզ. համաձայն ես դու իմ կողմից քրոջ խնդրել, որ նա այսօր քեզ հետ մասնակցէ իմ համեստ ամուրի ճաշին: Իսկ այդ անցքի մասին մենք կխօսենք ճաշի վերայ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եղբօր ու քրոջ կողմից այդ հրաւերն արտօթ հաճութեամբ ընդունուեցաւ: Ընկերութիւնն առաջ ընթացաւ, իսկ Ջօն Վէստլօկը ճանապարհին քանի մի անգամ Պինչի ականջին փսփոսաց. «Ի՞նչ բաղոտաւորութիւն է այդպիսի սիրելի քոյր ունենալ, Թովմաս»:

Նա հիւրերին իւր փոքրիկ բայց բազմաբովանդակ բնակարանի ամենալաւ սենեակը ներս հրաւիրեց և նոցա առջև գրքեր ու լրագիրներ դարսելով երիտասարդ տանտէրը ձեռաց անյայտացաւ. փոքր ժամանակից լետոյ լետ դարձաւ ժիր սպասուհու հետ միասին, և նորա օգնութեամբ սկսեց սիւնոցը ձգել և ամանները դարսել: Շատ չանցած աւուշահոտ գոլորշիի բուրմունքով ներս եկաւ հիւ-

րանոցի սպասաւորը մի երկար արկղ գլխին, որի խուփն անմիջապէս վերառան: Միմեանց օգնու-  
թեամբ արկղից հանեցին տաք տաք համադամ կե-  
րակուրներն ու դրին սեղանի վերայ, որի շուրջն  
առանց ժամանակ կորցնելու նստեցին տանտէրն  
ու հիւրերը:

— Հապա, ես չասացի՞, որ պատուական տան-  
տէր է, — ասաց Թովմասն իւր քրոջը ճաշից յետոյ:  
Թագաւորի պէս է ապրում, և անկասկած ոչ մի  
բանի հետ չի փոխի այսպիսի փառաւոր կեանքը:

— Կարող եմ ձեզ հաւատացնել, միսս Պինչ,  
որ ձեր եղբայրը սխալուում է, նկատեց Վէստ-  
լօկը — այս մենաւոր բնակարանում ապրելը շատ  
ձանձրալի կլինէր ինձ համար և մինչև անգամ  
ծանր, եթէ այսօր յանկարծ չփայլէր յատկա-  
պէս...

— Մի հաւատար, Հռութ. կեղծում է:

Բայց Ջօնն առանց կատակի ճգնում էր համո-  
զել, որ նորա կեանքն այն աստիճան միօրինակ ու  
դատարկ է, որ դժուար թէ կողմնակի մարդ երևա-  
կայել կարողանայ և թէ մտածում է, որքան կա-  
րելի է շուտ, ընդմիջտ բաժանուել իւր խղճուկ ու  
տխուր բնակարանից:

Հռութը թոյլ տուեց իրան երկչոտութեամբ  
նկատել թէ իւր կարծիքով, միտէր Վէստլօկը պէտք  
է բոլորովին բաղտաւոր մարդ լինի:

— Սակայն քո խոստումը մոռացար, Թովմաս,  
— աւելացրեց նա, եղբօրը նայելով. — դու ուզում

էիր միտէր Վէստլօկին պատմել երեկուայ ծովա-  
փի անցքը:

— Ճշմարիտ ես ասում, սիրելի Հռութ. քնչ-  
պէս կարելի է չմոռանալ այսպիսի հիւրասիրու-  
թիւնից յետ, խոստովանեց Թովմասն ու սկսեց իւր  
բարեկամին մանրամասնաբար պատմել, թէ ինչ պա-  
տահեցաւ նաւահանգստում ընթերցողին արդէն ծա-  
նօթ առաւօտին, երբ Ջօն Չուզլվիտը կնոջ հետ  
պատրաստուում էր արտասահման գնալ: Պինչի խօս-  
քերը բաւական զարմացրին Վէստլօկին: Իւր բա-  
րեկամի պատմածից և գործող անձերի ճշգրիտ նկա-  
րագրութիւնից նա իսկոյն իմացաւ, որ այդ կինը  
միտարիս Գէմպն է եղած, որ խնամք էր տանում  
հիւանդ ջէնտլմէնին «Ծիրանեգոյն Եզն» հիւրանո-  
ցում. բայց թէ Թովմասի վարպետն ինչ տեսակ  
գործ կարող էր ունենալ Ջօնսի հետ, և թէ ինչո՞ւ  
Թովմասին ընտրեց նամակը յանձնելու, — այս բո-  
լորը խորին զաղտնիք մնաց նորա համար:

— Ի հարկէ, ես դեռ այդ առթիւ կխօսեմ  
տանտիրոջ հետ, շարունակեց Պինչը. — թէպէտ,  
ճշմարիտն ասած, նա խիստ ծածկապահ մարդ է,  
և հազիւ թէ որևէ բացատրութիւն տայ ինձ, ան-  
գամ եթէ գիտենայ նամակի բովանդակութիւնը...

— Բայց թէ նա գիտէ այդ, և շատ լաւ գի-  
տէ, — ընդհատեց Վէստլօկը — ես կը երդուեմ գորա  
համար:

— Շատ կարող է պատահել: Յամենայն դէպս,  
ես կաշխատեմ հէնց էգուց առաւօտ ճանկել նո-

րան, երբ նա ըստ սովորութեան ամբողջ օրով կորած չի լինիլ տանից, և կպարզեմ, որ նորա կողմից շատ անվայելուչ բան էր ինձ այդպիսի անախորժ յանձնարարութիւն տալը: Բացի դորանից կարծեմ լաւ կլինէր Ջօնսի կնոջ մօտ մտնել և ասել նորան գործի հանգամանքը, և որ ես այդտեղ ոչինչ զեք չունիմ: Ի՞նչ ես կածու՞մ, Ջօն:

— Ի հարկէ դա ամենից լաւ կլինի. իրան Ջօնսի հետ էլ որ խօսես՝ վատ չի լինիլ: Իմ կարծիքով այդտեղ մի բան կա: Ես մի բան եմ կասկածում այդտեղ, թէպէտ վճռական ոչինչ չեմ կարող ասել, մինչև քանի մի տեղեկութիւններ չժողովեմ:

Ճաշից յետոյ թէյ բերին: Ջօն Վէստլօկը նըստած էր Հռութի մօտ, գրեթէ կախարդուած, — այնքան գեղեցիկ էր այս սիրուն աղջիկը, որ առժամանակ տանտիկնոջ պարտաւորութիւնն էր կատարում: Երբ թէյը հաւաքեցին, և Թովմասը նըստեց դաշնամուրի առաջ իւր սիրած երգեհօնի մեղեդիները նուագելու, որոնք այնպէս յաճախ հաճօյական ինքնամուրացութեան էին առաջնորդում նորան գիւղի հին եկեղեցում, երիտասարդ տանտէրն ու Հռութը մօտեցան լուսամուտին և սկսան նայել քաղաքը ծածկող երեկոյեան վերջալուսին: Լուսամտից երևցող տեսարանը, ինչպէս առհասարակ մեծ քաղաքներում, առանձին մի բան չէր ներկայացնում: Ի՞նչն էր ուրեմն այնպիսի գեղեցկութիւն տուել նորան, որ դիտողները չնկատեցին

թէ ինչպէս թռաւ ժամանակը, մինչդեռ Պինչի մաքուր հոգին խառնու՞մ էր հրաշալի զմայլեցուցիչ ձայներին: Ի՞նչ կախարդիչ ոյժ բւեռել էր նոցա այդքան երկար ժամանակ միևնոյն տեղում:

Մի զանգակաձայն ղողանջիւն լսուեց: Թովմասը վեր թռաւ:

— Ո՛վ Աստուած, ի՞նչ անքաղաքավարի մարդ եմ, — գոչեց նա, զարթնելով յափշտակիչ ցնորքներից: — Լսի՛ր, սիրելիս, ասաց քրոջը. թող մէկ ձայնդ լսենք, — մի բան երգիր:

Ջօնն էլ իւր խնդիրքը միացրեց նորանի հետ, և այնպիսի եռանդով, որ քարէ սիրտ պէտք է ունենար մարդ այդպիսի մի չնչին բան մերժելու համար: Օրիորդը նստեց դաշնամուրի առաջ և իւր աքանջելի ձայնով երգեց եղբօր սիրած այն երգերից մէկը, որոնց երգելիս նա երբեմն խորասուզու՞մ էր երկարատե մտածմունքի մէջ: Ջօն Վէստլօկն ամբողջ երգի ժամանակ կանգնած էր Թովմասի կողքին, առանց աչքը հեռացնելու երգչուհուց, և կամացուկ շշնջում էր բարեկամի ականջին, «Ի՞նչ հրաշալի քոյր ունիս. հոգի է ուղիղ»:

Եղբօր և սրտաբաց տանտիրոջ առաջարկութեամբ, որ քիչ էր մնում խելքը կորցնէր այդ երեկոյ, Հռութը դարձեալ քանի մի երգ երգեց — մէկը միւսից լաւ: Սակայն մութը կոխեց, և հիւրերը ստիպուեցան տուն վերադառնալ:

Այս հանգամանքը, սակայն, ամենևին չտրեքացրեց Ջօնին. նա Թովմասին ու նորա քրոջ ճա-

նապարհ դրեց մինչև նոցա բնակարանի դուռը, և երբ, փոքրիկ Հուլիսը, հրաժեշտ տալով՝ անյայտացաւ իրանց եռանկիւնի հիւրանոցի մթութեան մէջ, նա պինդ սղմեց ընկերոջ ձեռքն ու մի անգամ էլ հիացած արտասանեց.

— Ի՞նչ քոյր ունիս, Թովմաս. Տէր իմ Աստուած, այս ի՞նչպիսի քոյր է:

Այդ գիշերը, մինչ Հուլիսը քաղցր քնի մէջ հանգստանում էր, Ջոնս Վէստլօկը տուն գնաց ու երկար ժամանակ մի պատկեր էր նկարում: Իսկ այն շատրուանը, որի մօտ այդ օրը հանդիպեցան երիտասարդները, ուրախ խոխոջում էր լուսնի լուսի տակ:

Թովմաս Պինչը միւս օրը սովորական պարագամունքից տուն վերադառնալուց ու քրոջ հետ ճաշելուց յետ՝ երեկոյեան ճանապարհ ընկաւ Ջոնս Չուզլվիտի մօտ, որին, չնայելով շատ ուշ էր, տանը չգտաւ, բայց նոյնքան դիւր եկաւ նորան Գրացիային հանդիպումը, որ նօտած էր ծեր գործակատարի և մի հասակաւոր տիկնոջ հետ, որին հէնց առաջին անգամից Պինչը ճանաչեց, նա այն հասուիկ կինն էր, որ յայտնի առաւօտը նաւահանգստում ամբօխի խոնուելու ժամանակ ծանօթացրեց նորան իւր ուժգին բռունցքների և կոթը կեռ անբովանդակ հովանոցի հետ:

— Ա՛խ, սի կըստասէր որ կհանդիպէինք,—

գոչեց տիկինը հիացած, վազելով Թովմասի հանդէպ և նստեց նորա մօտ:— Միտորիս Չուզլվիտ: Ես բազմ ունեցալ ծանօթանալ այս համակրելի երիտասարդի հետ ծովափում նոյն առաւօտը, երբ, լիշում էք... Ա՛խ, ի՞նչ անտանելի նեղուածք էր այնտեղ: Ձեր քոյրն առնող է, մ. Չօֆֆի, ի՞նչ էք նստել: Մէկ այս կողմ այն կողմ նայեցէք, հիւր կայ մեզ մօտ,— յարձակուեցաւ միտորիս Գեմպը ծերունու վերայ, որ անմեղ ննջում էր մթին անկիւնում:

— Ցաւում եմ, շատ եմ ցաւում, պատասխանեց գործակատարը, հանդարտ նայելով իւր բոլորտիքը:— Գիտեմ, որ ուրիշներին խանգարում եմ, բայց ինչ արած, սէր գնամ: Բայց սէր է նա:

Գրացիան իսկոյն մօտեցաւ նորան:

— Ահա նա, սիրելիս, ահա,— ասաց թշուառը, քնքշութեամբ թօթուելով նորա ուսը:— Նա երբէք ծեր Չօֆֆիին չէ վշտացնում: Խեղճ Չօֆֆի:

— Այն, սիրելիս, հառաչելով շարունակեց ծերուկը.— մի մտածէք նորա մասին (Ջոնսի մասին էր նորա խօսքը): Թէպէտ նորա համար դժուար է խոստովանուել, բայց տարին 365 օր ունի, և այդ օրերից մէկում նա ևս կարող է մեռնել: Ո՛հ, Չուզլվիտ, Չուզլվիտ, քո միակ որդե՛ր:

— Սակայն գուք, հոգիս, անտանելի ծեր էք,— նկատեց հիւանդապահը.— լուեցէք, վերջապէս:

Բայց ծերունին ամենևին ուշ չդարձնելով այդ վիրաւորական խօսքերին, յանկարծ ուղլուեց, և

ձեռքը դէպի առաստաղը մեկնելով՝ խտուրթեամբ  
հարցրեց:

— Ո՞վ կայ այնտեղ վերևը: Ի՞նչ ննջեցեալ կայ:

— Այնտեղ ոչ ոք չկայ, պատասխանեց Գրա-  
ցիան, — ամենքս այստեղ ենք:

— Ամենքն էլ: Հապա թնչ արիք իմ հին մե-  
ծաւորիս, որ միակ մի որդի ունէր: Ո՞ւր է, հարց-  
նում եմ ձեզ:

— Հանգիստ կացէք, բարեկամ, — աղաչում էր  
Գրացիան. — այդ բոլորը վաղուց անցած բաներ են:  
Միթէ դուք չէք լիշում:

— Ես ձեզ ասում եմ այստեղ ննջեցեալ կայ,  
— պնդում էր Չօֆֆին, — պէտք է տեսնել: Ո՞ւր է  
Ջօնսը:

— Քաղաքից դուրս է գնացել, պատասխանեց  
Գրացիան:

Ծեր գործակատարը կասկածանքով նայեց նո-  
րան, գլուխը թափ տուեց, և սանդուխտով վերև  
բարձրացաւ այն սենեակը, ուր երբեմն վաճառա-  
տան պետի մարմինն էր դրուած: Ճանապարհին նա  
արհամարհանքով փնթփնթում էր. «Ստոր բան է,  
սարսափելի բան է»: Յետ դարձաւ նա մի փոքր  
հանգստացած:

— Զեզ ոչինչ չեն ասել, — դարձաւ նա Գրա-  
ցիային. — ինձ էլ ոչինչ չեն ասում, բայց ես քնած  
հօ չեմ — ամեն ինչ գիտեմ: Մի վախէք, սիրելիս,  
ձեզ այստեղ ոչ ոք չի համարձակուի ձեռք տալ:

— Երբ այդպէս է, մենք գլխիդ խարանասպե-

դանի կղնենք, մէջքիդ էլ մանանեխ կկպցնենք, լե-  
տոյ կիմանաք, թէ ինչ կնշանակի դատարկ բաներ  
խօսել, դաժան կերպով շնչաց հիւանդապահ:

— Թոյլ տուէք դորան, միստրիս Գէմպ, — հա-  
մեստուրթեամբ պաշտպանեց Գրացիան. արդէն հան-  
գստացաւ:

— Ինչպէս կամիք, միստրիս Չուզլիտ, — վի-  
րաւորուած նկատեց հաստիկի կինը. — բայց իմ կար-  
ծիքս այնպէս է, որ եթէ մի կուժ սառը ջուր ա-  
ծենք դորա գլխին, վնաս չի բերի:

Լուսթիւն տիրեց: Թովմաս Պինչն օգուտ քա-  
ղեց այս իրեն համար բարեպատեհ հանգամանքից,  
և տանտիկնոջ յայտնեց իւր այցելութեան նպա-  
տակը.

— Որովհետեւ ձեր ամուսինը տանը չէ, ես նո-  
րան գրաւոր բացատրութիւն կտամ, որ ես ամե-  
նեին մեզ չունիմ, եթէ իմ ձեռքով յանձնուեցաւ  
նորան իրեն տհաճ մի տեղեկութիւն. սուրհանգակն  
էլ կարող էր նոյն դերը կատարել:

— Շնորհակալ եմ, որ եկաք ու մտաբերեցիք  
այդ դէպքը, — պատասխանեց Գրացիան: — Աստու-  
ծով գուցէ ամեն ինչ կարգի կընկնի...

Բայց հազիւ թէ տանտիկինը արտասանել էր  
վերջին խօսքը, երբ սենեկում գտնուողներն ա-  
մենքը լսեցին, որ մէկը բարկացած ջարդում էր  
դրսի դուռը փողոցի կողմից, և նախասենեկում  
ս ուեցան շտապ քայլեր:

— Ջօնսն է, — ահուգողով ասաց Գրացիան և

գնաց մարդու հանդէպ. բայց սա սենեակը մտաւ ու զգուանքով յետ փախաւ կնոջ մօտից և դառնապէս ասաց.

—Ս. խ, չգիտէի, թէ հիւրեր կան ձեզ մօտ:

Երեկոյեան մթութեան մէջ նա չճանաչեց Թովմաս Պինչին. բայց հէնց որ Գրացիան ասաց, թէ Պինչն այստեղ է, և ցանկանում է խօսել նրա հետ, նա վայրենաբար նայեց հիւրին և ուզում էր վրայ ընկնել ատուկով. բայց զարմացման ու կատաղութեան ուժգնութեան մէջ՝ առ ժամ կանգ առաւ մտածելով թէ ինչպէս վարուի թշնամու հետ:

—Սի վրդովուիք, տէր,—ասաց Թովմասը բոլորովին հանգիստ.—պատճառ չունիք այդքան սաստիկ չուզուելու. ես եկել եմ ձեզանից ներողութիւն խնդրելու, որ ձեզ հասցրի մի նամակ, որի բովանդակութեան մասին ամենաչնչին գաղափար չունէի:

—Ս. խ, աւագակ,—գոչեց Ջօնսը.—ես ձեզ հետ կտեսնուեմ այդ նամակի առթիւ, իսկ վաղուցուայ գործերիդ հատուցումն էլ իմ վզին:

—Ի՞նչ հարկաւոր են աւելորդ սպառնալիքներ, յարգանքով ասաց Թովմասը:—Կրկնում եմ, ես եկել եմ ձեզ ասելու, որ ձեր անձնական գործերը ինձ ծանօթ չեն և երբէք էլ չեմ կամենում գիտենալ, իսկ նամակի բովանդակութիւնից մինչև այժմ էլ այնքան քիչ բան գիտեմ, որքան այն՝ որ այդ նամակը ձեզ էր ուղղած: Ինձ խնդրեց...

—Լռիր, ես քեզ թիքայ թիքայ կանեմ.—կատաղած մռնչաց Ջօնսը, ատուկը ցոյց տալով, բայց այդ վայրկենին երկու հակառակորդների մէջ ընկաւ Գրացիան, և աղաչեց Թովմասին, որ շուտով տուն յետ դառնայ:

Սյս թշուառ կնոջ տանջող անհանգստութիւնը, իրան ականջ դնել ստիպելու անհնարին լինելը, վերջապէս, խիստ դժուարութիւնը հաստամարմին միստրիս Գէմպի ընդհարումներին զիմադրելու, որ իւր կողմից եռանդով մասնակցում էր այս գործում և Թովմասին յամառութեամբ դէպի դուռը մղում,—այս ամենը այն աստիճան ազդեցին խաղաղասէր Պինչի վերայ, որ շուտով թափ տուեց ոտից այս զարհուրելի տան փոշին, առանց յաջողելու գոնէ մի անգամ Նէջէտի անունը լիշել:

Եթէ գոնէ միանգամ այս անունը Ջօնսը լսէր, եթէ նա միայն իմանար, թէ ինչպիսի անկասկածելի լրտես էր հետևում նորան պճեղների վերայ, ազատուած կլինէր ծանր լանցանքից, որի կատարածելը արդէն հասունացել էր նորա գլխում.—բայց նա ինքը մեղաւոր էր իւր կորստեան համար, որ թոյլ չտուեց Պինչին վերջացնել իւր ասելիքը, և այսպիսով իւր ձեռքով գերեզման փորեց իւր համար:

Գրացիան դուռը փակեց, մօտեցաւ ամուսնուն և ծունկ չոքելով՝ աղաչեց խնայել իրան, որ արիւնյեղութիւնից վախենալով վստահացել էր միջամտել իրան չվերաբերեալ գործի մէջ: Սյու միջոցին ժամացոյցի զարկելու ձայն լսուեց: Ջօնսն սկսեց

ականջ դնել և մտածմունքի մէջ ընկաւ: Երևում էր, որ այդ ձայները զարթեցնում էին նորա սրբտուն մի ծածուկ միտք:

— Բաւական է հեծկլտաս, ինձ լսիր, ասաց նա կնոջ:— Ես ճանապարհից յոգնած եմ. չարչարուած և բաւական փող էլ կորցրած: Անկողին պատրաստիր իմ սենեկում և պատուիրը որ ընթրիքս այնտեղ բերեն: Ես ամբողջ գիշեր կքնեմ, գուցէ և վաղը ամբողջ օրը, եթէ միայն կարողանամ քնել: Տես, ինձ անհանգիստ չանեն, և ո՛չ ոք չհամարձակուի մտնել ինձ մօտ:

Գրացիան գնաց ամուսնու պատուէրը կատարելու, իսկ Զօնսը տխուր մտածմունքների մէջ ընկղմուած մանեկաւ սենեկում, մինչև որ միտորիս Գէմպը յայտնեց, թէ անկողինը ձգած է և ընթրիքը պատրաստ: Նա ուզեց գնալ, բայց հիւանդապահը նշանացի հասկացրեց որ սպասէ, մի շեշտակի հայեացք ձգեց անկիւնում թուխս նստող նիրհած անխօս Զօֆֆիի վերայ, և յայտնեց մեծաւորին, թէ նորա բացակայութեանը ինչ տարօրինակ բաների վերայ խօսեց զառամեալ գործակատարը:

— Այս լիմարն անշուշտ ցնորուել է, — նկատեց Զօնսը:

— Բոլորովին համաձայն եմ ձեզ հետ, ձայն տուեց տիկ. Գէմպը, խորին համոզման տրտայտութիւնով. — այնուհետև խորհրդաւոր և տխուր կերպով շարունակեց. — համարձակուում եմ յայտնել,

տէր, — վերջերուս մ. Զօֆֆին շատ է փչացել: Նա խիստ աչալուրջ հսկողութիւն ու խնամք է պահանջում: Ես, 'ի դէպ, մի ընկերուհի ունիմ, Բէտսի Պրիգ անունով, որ սիրով կհամաձայնի փոխ առ փոխ նայելու գորան:

— Բարևոք է, ցամաք պատասխան տուեց Զօնսը. — թող երեք օրից լստոյ գայ:

Ասաց ու իւր համար պատրաստած սենեակը քաշուեցաւ, համազգեստն ու կօշիկները հանեց և դրան ետև դարսեց. դուռը ներսից կողպեց և բանալին մէջը թողեց, որպէս զի մէկ ուրիշը չտեսնէ, թէ ներսն ինչ է պատահում: Եւ այսպէս զգուշութեան ամեն միջոց գործ դնելով վրայ ընկաւ ընթրիքին:

Այն փոքր սենեակը, ուր փակուած էր Զօնսը, ներքի յարկումն էր: Յերեկով լոյսը երկու փոքրիկ լուսամուտների անողորկ ապակիներից էր թափանցում այդտեղ: Այս լուսամուտները նայում էին դէպի բայը և գիշերը ներսից փեղկերով էին ծածկուած: Բացի դորանից սենեակը մի առանձին մուտք էլ ունէր մուժը և միշտ փակ նրբասրահից, որ դրացի փողոցն էր տանում:

Երբ լաւ կշտացաւ՝ առանց հանուելու ընկաւ մահճակալի մէջ և սկսաւ շուռումուռ գալ երբեմն մէկ երբեմն միւս կողքի վերայ, որպէս զի անկողինը տրօրէ, և երբ վերջինս բաւական անկանոն տեսք ընդունեց՝ մահճակալի տակից դուրս քաշեց մի փոքրիկ պայուսակ, հանեց միջից մի զոյգ ան-

ճոռնի ոտնաման, կաշուէ անդրավարտիք, որպիսին գիւղացիներն են հագնում, կոպիտ մահուդէ լայն բաճկոնակ և լայնաքղանց խայտաբղետ գլխարկ: Գլխարկը ծածկեց և մեխից կախած բանալին մթանը խարխաբելով գտնելուց յետ՝ ամրացրեց դրսի դրան մէջ, իսկ ինքը նստեց դրան մօտ աթոռի վերայ և սպասում էր յաջող ժամին, թէ երբ կարելի կլինէր աննկատելի կերպով դուրս սլքուել դէպի փողոց: Հակառակի պէս այդ իսկ միջոցին փողոցից անցորդների խօսակցութեան ձայներ էին լսում, իսկ ժամհարները մօտակայ զանգակատներում յայտնի չէ ինչու յուսահատ կերպով սկսեցին զանգերը զարկել:

Ջօնսը շուռնջը բռնած ու ցամաքած՝ ականջ էր դնում... Վերջապէս զանգերի ձայները դադարեցին և ամեն ինչ նախկին դրութիւնն ընդունեց: Նա մօտեցաւ դրան, բանալին շրջեց, սկզբում զգուշութեամբ դուրս նայեց, ապա դուրս զնաց և դուռը ետեւից փակեց:

Խաւար էր և մեռելային լուութիւնը տիրել էր ամենուրեք: Լօնդօնի ծուռնումուռը փողոցներով նա հասաւ քաղաքի-գծին և ճանապարհը փոխեց դէպի արեւմուտք: Երբ երկու մղոն անցաւ քաղաքից և հասաւ պանդոկի առջև կանգ առնող գիշերուայ փոստակառքին, նա սակարկեց դրսի նստարանի վարձը և միջից դուրս չեկաւ, մինչև որ իւր նպատակավայրից երեք մղոնաչափ հեռու տեղին չհասաւ: Սյսպիսով նա ամբողջ գի-

շերն անցկացրեց փոստակառքի կտրանը: Այնտեղ նորա քուռը տարաւ: Բարձր, մթին ծառերի, Աստրծու այս անխօս պահապանների միջով անցնելիս նա քնած էր, առանց վրիպելու իւր դիտաւորութիւնից: Արևի ծագելն ուրախացրեց նորան, վասն զի խուլ գիշերը երկիւղ էր ազդում այլ և այլ երևոյթներով, իսկ առաջադրած յանցագործութեան յիշատակութիւնն ակամայ սարսափի մէջ էր գցում նորան: Ծառերի վերայի ցօղը պէծպծին էր տալիս, մացառներում ճկճկում էին թռչունները:

— Է՛յ, սիրելիս, սպասիր,— գոչեց Ջօնսը կառապանին, երբ կառքը գիւղի ճանապարհին մօտեցաւ.— ես ցած եմ գալիս:

— Ինչո՞ւ: Ձէք կամենում քաղաք գնալ,— հարցրեց հարբած կառավարը:

— Այդ քո բանը չէ. կարծեմ կարող եմ ցած գալ, ուր և կամենամ:

— Այդ ուղիդ է. դ՛արդ չենք անի, միայն շուտ ուադ ըլի՛:

Կառապանը սանձը պահեց: Ջօնսը ցած գալիս մի լաւ հայհոյեց նորան,— նա մտրակը շրխկացրեց և կառքը սլացաւ: Ջօնան էլ իւր կողմից բռունցքով սպառնաց նորան, ինքն իրան շատ գոհ, որ կառապանն իրան մի կռուարար ռամկի տեղ ընդունեց:

Նա էլի երկու մղոնի չափ տեղ զնաց:

Հէնց ճանապարհի երկու կողքերին խիտ թփեր կար բուսած, դոցա ետև հաճարի ծառատունկ:

Ջօնսն այդ կողմն ուղևորուեցաւ, մօտակայ ցանկապատից մի հաստ փայտ հանեց և մի մեծ քարի վերայ նստելով՝ սկսեց դանակով դրստել և գլուխը շինել: Երկու ժամի չափ հանգիստ առնելուց յետ՝ մի նեղ շաւղով անտառի խորքը մտաւ: Ժամանակն անցնում էր: Օրը երեկոյացաւ: Արևն սկսաւ մայր մտնել:

Այս հանգարտ ու խաղաղ ժամանակ Սէլիսբիւրիից թրթրակով երկու մարդ դուրս եկան: Այս անցքը տեղի ունէր հէնց այն օրը, երբ Պէկսնիֆը խոստացաւ պայման կապել Տիգգի հետ, իսկ յետոյ՝ ուրախ սրտով լաւ քէֆ անել: Յարգոյ ճարտարապետն իւր խօսքը կատարել էր և այժմ տուն էր վերադառնում: Իսկ «անշահասէր ընկերութեան» գահերէցը նստած էր նորա հետ, որպէս զի իւր ընդարձակ ձեռնարկութեան նոր գործակցին ուղեկցելուց յետ՝ վերադառնալ քաղաք դաշտի կողմից այն սիրուն շաւղով, որ ցանկանում էր ցոյց տալ նորան մ. Պէկսնիֆը: Այս ամենը յայտնի էր Ջօնսին, որին յաջողեց ուրիշ դռնով մտնել այն պանդոկը, ուր ճաշում էին օրէնսգէտները, և մի գաւաթ գարեջրով ծառաներից տեղեկանալ նոցա դիտաւորութիւնները:

Նոքա տաք խօսակցութեան մէջ էին, այնպէս որ չնայելով թէ ակների դղրդոցին, թէ ձիերի դրօփիւնին, նոցա խօսքերը շատ հեռուից կարելի էր լսել: Երբ խօսակիցները հասան ուղեցոյց սիւնին, որտեղից սկիզբն էր առնում Պէկսնիֆի առա-

ջարկած շաւղը, սկսուեցաւ հրաժեշտի հանդէսը: Ճարտարապետը ձին կանգնացրեց:

— Ահա այս շաւղը բռնեցէք, տէր, — ասաց Պէկսնիֆն իւր ուղեկցին, երբ սա թրթրակից վայր իջաւ: — Ուղիդ գնացէք, անտառակի միջով, բայց հէնց որ փոքրիկ կամուրջը կանցնէք՝ իսկոյն ծռուեցէք դէպի դաշտ. այնտեղից մինչև մեր քաղաքն աչքերը խփած կարելի է գնալ: Յտեսութիւն:

— Յանկանում եմ ամենայն բարիք:

— Յոյս ունենա՛մ, որ շուտով կտեսնուենք:

— Հէնց որ միջոց կգտնեմ:

Պէկսնիֆը գահերէցից հեռանալով ժամանակ առ ժամանակ յետ էր դառնում ու սիրոյ ողջոյններ առաքում նորան, իսկ Տիգգ Մօնտէգիւն կանգնած էր ճանապարհին և ցնծութեամբ փոխարինում էր ճարտարապետի հրաժեշտի ողջոյններին, բայց երբ վերջինս անհետացաւ ճանապարհի պլտոյտներում, նա նստեց սիւնակի վերայ բոլորովին փոխուած կերպարանքով: Թէպէտև նորա մտքերը ամենափայլուն յաջողութիւն ունեցան, բայց նորա հոգու վերայ մի բան ծանրանում էր: Նորա դէմքը գինարբութիւնից կարմրել էր, բայց ուրախութեան ոչ մի նշոյլ չկար: Նա խիստ յոգնած էր վաղեմի խորամանկի առջև երկու օր կեղծաւորուելուց. երեկոյեան մութը մի անորոշ երկիւղ և վատթար նախազգացում էր ազդում նորան: Նա երկմտում էր. գնա՞յ արդեօք այդ ամայի շաւղով, թէ երթևեկութեան ճանապարհով յետ դառնալ,

սակայն՝ յոգնածութիւնն իրանը տարաւ և Տիգրք որոշեց օգտուիլ կարճ ճանապարհից: Եւ գնաց շաւղովը: Արևը մայր էր մտնում, շուրջը տիրում էր լուսութիւն: Երբէք առաջ ուշադիր չէր եղել նա բնութեան գեղեցկութեան, ծաղիկների անուշահոտութեան. բայց այդ երեկոյ թէ մէկը և թէ միւսը առանձնապէս գրաւում էին նորան. տեղ տեղ տակաւին կշկշում էին թռչնիկները: Գիւղական եկեղեցու տանիքի վերայ հեռուից երևցող խաչը մանկութեան անցած յիշատակներ դարթեցրեց նորա սրտում: Մի խիստ տրտմութիւն պատեց նորան. շարունակ առաջ էր գնում և վերջապէս ծածկուեցաւ անտառակի խորքում: Ոչ մի բանական հոգի էլ չէր կարող լսել նորա ձայնը, և միմիայն մի մարդուն էր յայտնի մնում նորա չարագուշակ բաղդը:

Անտառակի միւս կողմ, այնտեղ՝ ուր շաւղը խառնւում էր դաշտի հետ, վազում էր այդ մարդը, վախից այս ու այն կողմ նայելով, կարծէք հալածուած դժոխային դեերից, իսկ նորա ետևից, անտառի խորքում, գետնին տարածուած ընկած էր նորա արիւնսալի գործողութեան զօհը, հերուան աշնային տերևներով ծածկած: Մարդասպանը շտապում էր, որ Լօնդօնի ճանապարհը բռնէ: Նա չէր ցաւում իւր արածի վերայ: Նորա ատելութիւնն այնպէս մեծ էր դէպի Տիգր Մօնտէգիւն, այնպէս նեղուած էր նորա ճնշման տակ, որ չէր կարող չցանկալ ազատուիլ նորանից, թէկուզ ինչ էլ լինէր: Խղճի խայթն ու ապաշաւը

տակաւին չէին տանջում նորան, բայց առաջիկայ հատուցման երկիւղն այն աստիճան տիրել էր չարագործի երկչոտ հոգուն, որ իւր ոտնաձայնից անգամ վախենում էր:

— Ի՞նչ պէտք է անեմ, եթէ Լօնդօնում յանկարծ մէկի մտքովն անցնի անյապաղ ինձ հետ տեսնուիլ, մտածեց ահուգողով:— Ի՞նչ անեմ, եթէ սենեկիս դուռը բաղխեն՝ բայց պատասխան չտանան: Գուցէ կվախենան, եթէ ինձ մի բան է պատահել: Ի՞նչ անեմ, եթէ դուռս կոտրեն, և էլի, մարդ ենք, ներսից նրբանցքի դուռը սողնակով փակեն: Այն ժամանակ ի՞նչպէս տուն մտնեմ որ չիմանան: Կսկսեն տեղեկութիւններ ժողովել, կասկածներ տանել...

Ամբողջ երեք ժամ թափառեց նա անձանօթ վալրերում և միմիայն երբ հեռուից սուրհանդակի փողի ձայնը լսեց՝ գուշակեց, թէ մեծ ճանապարհին մօտ է գտնւում: Նա վազեց այն կողմ, որտեղից ձայնն էր հնչում, և շուտով տեղ գտաւ փոստակառքի տանիքի վրայ բացօթեայ՝ այլ և այլ ստորին դասակարգի մարդոց հետ: Նա ուշադրութեամբ սկսեց ականջ գնել իւր դրացիների խօսքերին, վախենալով, թէ մի գուցէ խօսք լինի նորա մասին, թէ անտառում մարդու դիակ է գտնուել: Թէպէտ զիտէր, որ այդ անկարելի էր, որովհետև տակաւին շատ փոքր միջոց էր անցել, բայց ուղեկիցների անգէտ լինելը սիրտ տուեց նորան, և սկսեց մտածել անգամ, որ դիակը երբէք չի գրտ-

նուրի: Չնայելով որ ամբողջ գիշեր երեակայուած թիւնը տանուամ էր նորան անտառակի ամալի խորքը, ուր կատարուել էր յանցանքը, այնուամենայնիւ լուսաբացին նա մարդասպանութեան վերայ նայում էր ինչպէս մի վաղուց կատարուած բանի վերայ, և մինչև անգամ իրան բոլորովին անվտանգ էր համարում լոյ այն պատճառով, որ իւր հետ եկող ուղևորներին յայտնի չէր կատարուած չարագործութիւնը:

Հինգ ժամը չկար, երբ փոստակառքը Լօնդօնի արուարձանին հասաւ: Ջօնսն առանց կառապանին նախազգուշացնելու որ ձիերը կանգնեցնի՝ թագուն կառքից ցած թռաւ առաջին իսկ պատահած խաչփողոցում: Կեռ բաւական ժամանակ կար, և կարելի էր առանց իմացուելու տուն սըլքուել. բայց նա ոյժ չունէր իւր լուզմունքը յաղթելու, և գրեթէ վազելով դիմեց դէպի տուն:

Զգուշութեամբ, ոտները հազիւ դիպցնելով քարէ յատակին՝ ներս մտաւ նրբանցքը, որ ուղղակի փողոցից տանում էր դէպի զարհուրելի սենեակրկանգնեց դրան մօտ, բանալին փականքի մէջ դրեց և շունչը թագցնելով՝ ականջ դնել սկսեց: Զայն ծպտուն չկար: Կողոպտուն ձեռքով բանալին շրջեց, վախենալով, թէ ևմի գուցէ հին կողպէքը խիստ ձայն հանի, և կամաց ծունկը խփեց դրան, բայց այդ միջոցին մի աննկարագրելի սարսափ տիրեց նորան... Ինչ կարող էր անել, եթէ մեռելը սենեկում հանդիպէր...

Կառն անհանգստութեամբ նայեց իւր շուրջը...

Ներս մտաւ սենեակը, դուռը կողպէքով փակեց, հանուեցաւ, շորերը կապոցի մէջ պահեց, այն մտքով, որ միւս իրիկուն Թեմզայի մէջ ձգէ. յետոյ կապոցը պայուսակի մէջ թագցրեց և վերջապէս աւարտելով այս նախազգուշութիւնները՝ մահիճը մտաւ:

Ծարաւը նեղում էր նորան. մի զարհուրելի կրակ այրում էր ներսից: Սչքին հօր ուրուականն էր երևում: Նա փորձեց աչքերը փակել. այդ էլ չօգնեց: Գլուխը կոխեց վերմակի տակ. բայց այնտեղ էլ պաշտպանութիւն չգտաւ: Սրտի ամեն մի զարկը կարծես շշնջում էր նորան. մարդասպան, մարդասպան, մարդասպան:

Օրը լուսացաւ: Տանը ժվժվոց ընկաւ: Մերձակայ խանութները բաց արին, փեղկերը բաղխում էին: Երբեմնապէս Ջօնսը լսում էր ոտնաձայն դրան ետեւից: Վերջապէս նստեց մահճակալի վերայ ու գոչեց.

— Ո՞վ է:

Եկողը կինն էր:

— Ո՞ր ժամն է:

— Տասը:

— Սակայն... մեռածի պէս եմ քնել: — Երեկ ոչ ոք չէ բաղխել դուռս:

— Ո՛չ, ոչ ոք, պատասխանեց Գրացիան:

Եթէ մի բան կարող էր մխիթարել նորան՝ այդ պատասխանն էր:

—Մ. Նէջէտը քեզ Հարցնում էր, բայց ես ասացի, թէ յոգնած է և անհանգիստ չարաւ քեզ: Այսօր առաւօտ, երբ սենեկիս յուսամուտը բաց արի՝ նա դարձեալ անցաւ մեր տան մօտից. բայց դեռ չէ մտել:

—Նէջէտը անցել է առաւօտը վաղ փողոցում,— մտածեց Ջօնսը, դողալով այն մտքից, թէ կարող էր պատահած լինել նորան տուն վերադառնալու միջոցին, և շտապով Հագաւ այն շորերը, որ դրան ետևը թողել էր. առաջին անգամ ետևի սենեակը մտնելիս:

Կինը նախաճաշի կանչեց: Նա ամթուռից վեր կացաւ և կամենում էր գնալ, բայց ծածուկ երկիւղը ստիպեց կանգնել դրան մօտ. սակայն ինքն իրան սիրտ տուեց և նախապէս Հայելիի մէջ նայելով՝ դուրս գնաց: Նա դալկացած էր և չէր վրստահանում տանու մարդոց նայել, որոնք չգիտեմ ինչու խիստ անխօս էին թւում նորան և ի Հարկէ նոքա մեղաւոր չէին, որ ինքը տանտէրն այդօրը կասկածանքով ականջ էր դնում ամեն մի չընչին ձայնին: Նա ճգնում էր միանգամայն կողմնակի իրերի վերայ մտածել, Համարում էր ժամացուցի սլաքի զարկերը, աշխատում էր անտարբեր երեւիլ, այնուամենայնիւ չէր կարողանում ծածկել իւր յուզմունքը և նորից տխուր մտածման մէջ ընկաւ, որովհետև գիտէր, որ իւր անխուսափելի պատուհասը անցնելու չէ: Այս մտածմունքը յուսահատեցնում էր նորան և խիստ ու անտանելի կերպով տանջում:

### ԺԳ.

Թովմաս Պինչը առաւօտը վաղ իւր քրոջ Հետ նախաճաշի էր նստած: Նոցա գործերը շատ կարգի էր ընկել: Հռութը գտել էր շաբաթական երկու երեք դաս և բացի դորանից խուլ Հարեանի առաջարկութեամբ ձեռագործի աշխատանք էլ էր ձեռք բերել: Նախընթաց երեկոյին նա բերել էր յատկապէս այդ բանի Համար գործած բրդեայ քսակով իւր անդրանիկ վաստակը, ուստի և առանձին ուրախ տրամադրութեան մէջ էր:

—Սակայն ինչ լիմար է մեր մեծաւորն, ասաց Թովմասը.—այս անհամ գործը գլխիս խճճեց և այնուհետև աչքիս չի երևցել:

—Հն, Թովմաս, շատ տարօրինակ բան է...

—Ուզում էի Հետը խօսել, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում ճանկել: Ես ուղղակի մտածում եմ, որ նա մի չարութիւն ունի մտքում:

Դուռը բաղթեցին:

—Ո՛վ կարող է լինել, այսպէս վաղ ո՞վ Հիւր կգայ, զարմանքով Հարցրեց Թովմասը: Խոնարհաբար խնդրում եմ ներս Հրամեցէք:

Երբ այցելուն գլուխը ներս տարաւ՝ Թովմասը չափազանց Հիացաւ և ուրախութիւնից գոչեց.

—Աստուած իմ, սամ. Չուզլվիտը չէ: Լսում ես, Հռութ, Մարտին Չուզլվիտն է,— իմ անգին բարեկամս: Այն էլ Վիշապի Մարկոս Տէպլին, շարունակեց նա, առաջ ընկնելով գէպի Մարտինի ետևը

կանգնող երիտասարդը.— այս ի՞նչ բաղտից է: Ի՞նչ պէս էք, եղբայր:

— Չափից դուրս լաւ և ուրախ, տէր.— պատասխանեց Մարկոսը և գլուխ տուեց:

— Ա՛խ, Աստուած իմ, գոչեց Թովմասը.— Ի՞նչքան ուրախ եմ, որ քո հին ձայնն եմ լսում: Ի՞նչ էք կանգնել: Նստեցէք, սիրելի Մարտինս:

Թովմասն իրան բոլորովին կորցրեց: Նա անդադար վազվզում էր Մարտինից Մարկոսի մօտ և Մարկոսից Մարտինի, սեղմելով նոցա ձեռքերն ու քրոջ հետ ծանօթացնելով: Յետոյ հրաւիրեց սեղանի մօտ, և սկսեց նախաճաշ մօտ բերել: Վազում էր սենեկում, մոռանալով թէ ինչ է որոնում. հացը կտրտում էր, թողնում. նորից իւր բարեկամների ձեռքերն էր սեղմում, նորից քրոջ հետ ծանօթացնում. միով բանիւ որ նոցա յաջող հայրենիք վերադարձած էր տեսնում, ուրախութիւնից չգիտէր ինչ անի, ինչ ասի:

Ամենից առաջ խելքը գլուխը ժողովեց Մարկոս Տէպլին: Նա իրեն միայն յատուկ անտարբերութեամբ ու խոհեմութեամբ խոհանոցը մտաւ և թէլ պատրաստեց: Երբ այսպիսով նախաճաշը նորից կարգի գրուեցաւ և բոլոր ներկայ գտնուողները կամաց կամաց փոքր ինչ հանգստացան, Մարտինը աթոռն առաջ քաշեց Թովմասի ու նորա քրոջ մօտ, և հազորդեց նոցա ինչ որ իրեն հետ պատահել էր Պէկանիֆի տանը, կարճ խօսքով պատմելով նաև այն չքաւորութեան ու սթափման մա-

սին, որ կրել էր Մարկոսի հետ՝ Անգլիան թողնելուց յետոյ:

— Չգիտեմ ինչպէս շնորհակալ լինիմ քեզանից, Թովմաս, քո բարեկամութեանդ ու խնամքիդ համար այն անձի աւթիւ, որին քո պաշտպանութեան յանձնեցի,— նա գրում էր քո մասին: Հաւատացած եմ, որ Մէրին միշտ կլիշէ քեզ շնորհակալ սրտով,— ահա բոլորը, ինչով որ կարող ենք մեր համակրութիւնն արտայայտել գէպի քեզ: Բայց եթէ գիտենայիր, Թովմաս, թէ մենք ինչ ենք ըզգում, դու կգնահատելիր:

Իսկ եթէ իրանք գիտենային, թէ ինչ էր ըզգում Թովմասը, հարկաւ նորան էլ կգնահատէին. բայց ոչ մի արարած չգիտէր:

Թովմասը խօսքը փոխեց. նա ոյժ չունէր լսելու, երբ Մէրիի անունն էին հնչում, թէպէտ նորա սրտում մի կաթիլ նախանձ կամ վիշտ չկար: Նա Մարտինին հարցրեց, թէ ինչ է մտադիր անել:

— Ամենից առաջ ուզում եմ աշխատել, որ ապրեմ, պատասխանեց Մարտինը: Արդէն մի փորձ արի գործ գտնելու Լօնդօնում,— չյաջողեց: Եթէ քո բարեկամական խորհուրդը չես մերժի,— գուցէ քանս լաւ գնայ: Ես պատրաստ եմ ամեն բանի, որպէս զի մի կտոր հաց միայն վաստակել կարողանամ: Ուրիշ ոչինչ չեմ ուզում, և սորանից դուրս ոչինչ յոյսեր չեմ տածում:

Խեղճ Թովմաս: Ի՞նչքան ցաւ էր նորա սրտին Մարտինին այսպիսի նեղ գրութեան մէջ տեսնել:

ինչքան ծանր էր այսպիսի համեստ խօսքեր լսել երբեմն այնպէս հպարտ, ինքնահաւան ընկերից:

—Այդ մասին մի խօսէք և գլուխներդ ի գուր մի կախէք, սիրելի բարեկամ, ասաց Պինչը.—գուք մեր ամենքից էլ առաջ կանցնիք: Դուք իմ «խորհուրդն էք հարցնում: Եւ միթէ կարող եմ մերժել այդ ձեզնից: Համեցէք: Ամենից առաջ ես առաջարկում եմ իսկոյն, քանի որ պարապմունքից ազատ եմ, զնանք միասին Վէստլօկի մօտ: Յիշում էք Ջօն Վէստլօկին, որի մօտ Սէլիսբերիում ճաշեցինք: Նա մեր մէջ ամենից հմուտն է և կարող է մեզ խրատել: Մարկոս, գուք էլ հետներս եկէք:

Առանց երկարաբանութեան՝ Թովմաս Պինչը գլխարկը վերցրեց, մնաս բարով ասաց քրոջն ու կարճ ճանապարհով իւր բարեկամներին տարաւ այն բարեբախտ երիտասարդի մօտ, որ, ինչպէս արդէն յայտնի է, մէնակուլութիւնից տանջուած էր:

Նա տանն էր. բայց կարծէք շփոթուեց նոցա մտնելիս, և զգուշութեամբ փակեց միւս սենեկի դուռը, ասելով Թովմասին, որ այնտեղ օտար մարդ կալ նստած: Այնուամենայնիւ նա ուրախութեամբ դիմաւորեց իւր հին ծանօթ «Վիշապի» Մարկոս Տէպլիին և Մարտինին՝ ընդունեց սովորական ողջոյնով:

—Դուք, երևի, զբաղուած էք, ասաց Մարտինը, երբ Պինչը բացատրեց տանտիրոջ իրանց այցելութեան նպատակը. թերևս թոյլ կտաք աւելի յարմար միջոցին մտնել ձեզ մօտ:

—Ես արդարև զբաղուած եմ մի շատ կարեւոր գործով, ընդհատեց Վէստլօկը,—բայց դա այնքան ինձ չէ վերաբերում, որքան ձեր ազգականներից մէկին,—աւելացրեց նա, և պատմեց բոլոր հանգամանքները, ընդ նմին և «Ծիրանեգոյն Եզն» հիւրանոցում ապրող երիտասարդի հիւանդութեան մասին, որ տակաւին նոր էր վերկացել անկողնից:

Հաղորդեց նաև նաւահանգստում պատահած անցքը, որին ականատես էր Թովմասը: Բայց Մարտինը Ջօնի խօսքերից ոչինչ չհասկացաւ, վասն զի այս բոլոր մանրամասնութիւնները, ըստ երևութիւն, միմեանց հետ ոչինչ յարակցութիւն չունէին:

Այնուհետև Վէստլօկը տարաւ նորան կից սենեակը, ուր և ծանօթացրեց Լիւսօմ կոչուած մի սևահեր, գունատ, դալկացած, անձի հետ, որը հէնց այն երիտասարդն էր, որ «Ծիրանեգոյն Եզն» հիւրանոցում անզգայ պարկած էր, տիկ. Գէմպլի քնքոյշ հոգատարութեան ներքոյ:

—Սա միտէր Չուզլվիտն է, ասաց Ջօնը Լիւսօմին, Մարտինին ցոյց տալով:—Հանգուցեալ էնտօնի Չուզլվիտը սորա պապի հարազատ եղբայրն էր...

—Պէտք է որ նորան թունաւորած լինին, խուլ կերպով խօսեց Լիւսօմը:

—Տէր Աստուած: Եւ ո՞վ:

—Գուցէ հէնց ես, դառնագին պատասխանեց

Լիւսօմը:

—Դուք, զարհուրած հարցրեց Մարտինը:

— Ես. բայց ո՛չ թէ գործով, այլ միջոցներով...

Եւ երիտասարդի խիստ հազը բռնեց: Մի բաժակ ջուր խմելուց յետ՝ նա շարունակեց.

— Ես պատրաստուում էի բժշկութեան, բայց որովհետեւ միջոցներ չունէի, — գործ ևս չունէի, իսկ հարկաւոր էր ապրել, ուստի տեղւոյս մի յայտնի բժշկի մօտ օգնականի պաշտօն ընդունեցի: Նորա մօտ ծանօթացայ ես Զօնա Զուգլվիտի հետ. նա է գլխաւոր ոճրագործը:

— Այդ ի՞նչ ասացիք, խստութեամբ հարցրեց Մարտինը. — բայց գիտէք, պարոն, որ նա այն ծերունու հարազատ որդին է:

— Գիտեմ, պատասխանեց Լիւսօմը և լռեց ու գլուխը կախ տուեց:

— Ասացէք տեսնեմ, յետո՛յ ինչ եղաւ, — միմիայն ճշմարիտն ասէք:

— Ես չէի կարող այդ բանը չիմանալ, որովհետեւ յաճախ նա ինձ մօտ ցանկութիւն էր յայտնում, որ իւր հայրը շուտ մեռնի: Ետտ անգամ գիշերները ինձ և ուրիշ ծանօթների հետ գինի խմելիս ու թուղթ խաղալիս՝ դանգատուել է, որ ծերունին բոլորովին խելքը՝ կորցրել է, որ նա թուլացել է, դժգոհ է ու ապրելով միմիայն բեռն է իրեն և ուրիշներին: Այդ էլ բաւական չէ. նա մինչև անգամ ասաց, թէ վատ չէր լինի եթէ ծերունու խմելիքի մէջ մի բան խառնուէր...

Լիւսօմը դարձեալ կանգ առաւ, և լռեց մին-

չև որ Վէստրօկը խնդրեց, որ շարունակէ: Մարտինը աչք չէր հեռացնում նորա գունատ դէմքից, և այնպէս հիացած էր ու սարսափած՝ որ չէր կարողանում ձայն հանել:

— Սկզբում մենք չէինք զարմանում, — կարծում էինք, թէ Զօնան ուղղակի խելքին զօռ է տալիս, բայց յետոյ սկսանք նկատել, որ աւելի յաճախ է խօսում դորա մասին: Պէտք է ասեմ ձեզ, որ նա խիստ յաճախ ինձ ու ընկերներիս մեծ տոկոսով փող էր տալիս: Մի անգամ, երբ ես ու նա միայն էինք, ինձ հարցրեց, թէ չէի յանձն առնի նորա համար երկու «դեղ» գտնել (նա հէնց այդ խօսքով ասաց «դեղ»), որոնցից մինը անմիջապէս մահ պատճառէր, իսկ միւսը փոքր աւփոքր, կամաց կամաց: Իմ հարցին թէ ինչք՞ համար է ուզում, նա պատասխանեց՝ մկների: Ինձ զարմացրեց, խոստովանուում եմ, այն ժամանակ, թէ ինչ հարկաւոր էր նորան մի քանի մկներին կամաց կամաց սատկեցնել, իսկ միւսներին միանգամից, — սակայն լռեցի, որովհետեւ մեծ պարտք ունէի նորան և հոգիս նորա ձեռին էր: Նա կարող էր բանտը դնել ինձ: Եւ այդ միշտ կարելի էր նորանից սպասել: Ի՞նչ պէտք էր արած: Համաձայնեցի... Պայման դրինք: Միւս օրը, երեկոյին, թոյնը իրեն յանձնեցի: Նա դրստուեց հետո, խոստացած դրամը պարտքիցս գեղջելով, և միևնույն ժամանակ խօսք տուեց պատասխանատուութեան չենթարկել ինձ և այդ միջոցները ի չարը չգործա-

ծել: Այնուհետև մենք այլ ևս չենք պատահել միմեանց... Գիտեմ միայն, որ ծերունին իմ ձեռքից մեռաւ, և որ ես անտանելի կերպով տանջուում եմ: Բայց ես արժանի էի այդ չարչարանքներին և խնդրում եմ վարուել ինձ հետ, ինչպէս ձեզ հաճելի կլինի:

Լսողները լուռ միմեանց նայեցին: Ոչ մէկը նոցանից սիրտ չէր անում վատաբաղտ Լիւսօմին անօգուտ յանդիմանութիւններով ճնշել: Մարտինի վերայ այն աստիճան ազդեց այս սարսափելի պատմութիւնը, որ երկար ժամանակ չէր կարողանում կարգին մտածել. բայց մի փոքր մտածելուց և ծովափի անցքը լիշեւուց լետ, որի մասին Վէստլօկը պատմեց, վերջինիս հրաւիրեց միւս սենեակը խորհրդակցելու Պինչի և Մարկոս Տէպլիի հետ: Պարզ երևում էր, որ Ջօնսի յանցանքը յայտնի էր նաև քանի մի մարդոց, որոնք օգուտ քաղելով այս հանգամանքից իրանց անձնական օգտի համար, ձեռք բերեցին նորա վերայ այն անբացատրելի ազդեցութիւնը, որի պատահական վկան Թովմասն եղաւ: Բայց թէ ո՞վքեր էին այդ մարդիկ, — գաղտնիք էր մնում:

Սկզբում մտածեցին բացատրութիւն պահանջել խորհրդաւոր մ. Նէշէտից, լետոյ ուղեցին ամեն ինչ յայտնել մ. Չուզլվիտին, որ Պէկանիֆի մօտ էր բնակուում. բայց այս երկու միջոցներն էլ զանազան պատճառներով անյարմար համարուեցան, մանաւանդ որ Լիւսօմի խոստովանութիւնը կարող էր

և անարդար լինել և այդ հիւանդ մարդու խանգարուած երևակայութեան ծնունդ, իսկ ծեր էնտօնին կարող էր բնական մահով մեռած լինել, էլ ինչ հարկաւոր էր այդ դէպքում աղմուկ յարուցանել և անհանգիստ անել ծեր պապին, չունենալով տակաւին ծանրակշիռ փաստեր: Եւ կթոյլ տար Պէկանիֆն ում և իցէ ծերունի Մարտինի հետ տեսնուիլ:

Երիտասարդ խորհրդակիցների գրութիւնը դժուարանում էր. բայց այստեղ խիստ յարմար եկաւ Պինչի պատմածը տիկ. Գէմպի հետ Ջօնսի տանը պատահելու և մ. Չօֆֆիի տարօրինակ վարմունքի մասին: Ամենքը միաձայն վճռեցին, որ միակ միջոցն այս մութը գործի մասին որ և է տեղեկութիւն ստանալու մնում է ծեր գործակատարից տեղեկանալ ամեն բան, ինչ որ նորա լիշողութեան մէջ մնացել է և եռում էր նորա ցաւած սրտում: Օգտակար դատուեցաւ այս առթիւ խօսել նաև միստրիս Գէմպի հետ, որին Վէստլօկը լաւ ծանօթ էր «Ծիրանեգոյն Եզն» հիւրանոցից, ուր Լիւսօմի հիւանդութեան միջոցին բազմիցս վճարած էր այդ կնոջ սպառած նիւկէստլեան ալանի սաղմոն ձկան և անքուն գիշերները նորա պահանջած Բրայտոնի գարեջրի վարձը:

Չորսն էլ անմիջապէս մեկնեցան. Ջօն Վէստլօկն ու Մարտինը շտապեցին մ. Սվիզլպայպի վարսավիրանոցը, ուր տիկ. Գէմպն էր բնակուում. Թովմաս Պինչը ծառայութեան գնաց, իսկ Մարկոս Տէպլ-

լինն յանձնեցին Վէստլօկի տանը մնալ Լիւսօմին հսկելու, որպէս զի չփախչի և այդպիսով ամենքին յիմարացնի:

Կէսօրին մօտ միստրիսս Գէմպը թէյ պատրաստեց և մտահոգ պահարանի բանալին կորցնելուն համար, ուր պահած էր օղին, անհամբեր տակն ու վրայ էր անում վարսավիրանոցին կից փոքրիկ սենեկում զանազան անպէտք իրեր: Նա սպասում էր միստրիս Պրիզին: Զանգը քաշեցին: Հիւանդաւպահը գնաց դուռը բանալու, բայց ցանկացած հիւրի փոխարէն, երես առ երես հանգիպեց նոյն իսկ սափրիչ ու թռչնապահ մ. Սվիդլայային, որ քրտնքով պատած և գլխարկը վեր բարձրացրած՝ անխօս կանգնեց տիկ. Գէմպի առաջ, չկարողանալով շունչը լետ բերել: Նա խիստ յուզուած էր և ըստ երևութիւն գլխապատառ տուն էր վազել երևելի նորութիւններ ասելու:

— Ի՞նչ է պատահել, տէր: Երկինքը հօ չի՞ պատռուել, հարցրեց հիւանդապահը, իւր մեծաւորի արտասովոր տեսքից զմայլած, որին միշտ սովոր էր վայելուչ հագնուած և լաւ սանրած տեսնել: — Ասացէք, վերջապէս, թնչ է պատահել:

— Սպասեցէք, թողէք մէկ շունչ առնեմ, աղաչում էր թռչնապահը, թուլացած ընկնելով աթոռի վերայ և ցանցանըկար թաշկինակով մաքրեց երեսի քրտինքը. — իսկոյն ամեն բան կարգով կպատմեմ... մի պարոն պատուէր տուեց ինձ մի գոյգեմեկութեան աղաւնի: Ես գնացի նորա մօտ, այնտե-

ղից մտայ մօտակայ գարեջրատուն, ուր ամենքն արդէն այդ էին խօսում...

— Ա՛խ, մ. Սվիդլայայ, թնչ տեսակ էք խօսում այսօր, — նախատելով նկատեց տիկ. Գէմպը: — Զեր քներակներին մի վեց հատ տղրուկ պէտք է կալցնել. պատմեցէք վերջապէս թնչ էին խօսում այդ ձեր գարեջրատանը:

— Վահ, լրագիրներում անգամ գրում են: Մ. Մօնտէզիւն անհետ կորել է: Իսկ միւս կառավարիչը, — եթէ չեմ սխալուում, մ. Գէվիդը, — յափըշտակում է գրամարկոյն ու նոյնպէս անյայտանում: Հ՛ը, ձեզ թնչապէս է թուում, ամբողջ օստիկանութիւնը ձեռք ու ոտք է ընկել: Վարձատրութիւն է խոստացուած, ով նորան կըռնի: Գրասենեկի շուրջն ասեղ ընկնելու տեղ չկայ, ի՞րը հայհոյում է, ի՞րը լաց լինում:

— Պարզ բան է: Ամեն մէկը կցաւի իւր կորուստի վերայ: Իսկ ոչինչ չէ լսում մ. Զօնա Չուզլվիտի մասին: Նա էլ, կարծեմ, մասն ունէր այդ ձեռնարկութեան մէջ:

— Նորա մասին զանազան ձայներ կան. ոմանք ասում են, թէ նորան խաբել են, ոմանք հաւատացնում են, թէ նա ինքն է ամենքին խաբել, — զանազան կարծիքներ կան, իսկ ապացոյց և ոչ մի:

Այդ միջոցին սափրիչի մօտ մտան երկու այցելու. Զօն Վէստլօկն ու Մարտին Չուզլվիտ կրտսերը: Նոցա դալու նպատակն արդէն յայտնի է:

Միւս առաւօտ Թովմաս Պինչը, քրոջ հետ սովորական զբօսանքն աւարտելուց յետոյ՝ զնաց իւր ամենօրեայ պարագամունքի՝ գրատունը կարգի դնելու:

— Միթէ վերջապէս չպէտքէ տեսնեմ մ. Ֆիլսոփի յանձնարարողին, մտածում էր նա ոլորուն սանդուխքը բարձրանալիս և զրպանից բանալին հանելիս:

Ներս մտաւ ամալի տան առաջին սենեակը, լուսամուտը բաց արաւ, որովհետև դուրսը պատուական եղանակ էր, և գործի նստեց: Գրքերն արդէն դասաւորել էր դարագնեցում խիստ կանոնաւոր կերպով: Գլխած թերթերն ու կազմերը նա կպցրել էր, խազխզած վերնագիրներէ փոխարէն կազմերին մաքուր թղթի կտորներ էր կպցրել զրքերի վերնագիրները վրէն գրած: Գրատունը բոլորովին այլ կերպարանք էր ստացել և Թովմասը հպարտութեամբ զուարճանում էր իւր աշխատութեան պտուղներով: Այդ առաւօտ նա սկսեց մաքուր արտագրել զբացուցակը, և իւր բոլոր ջանքն ու շնորհքը գործ գրեց, որ փառաւոր բան դուրս գայ:

Թովմասն անխոնջ աշխատել էր երկու ժամ, երբ յանկարծ ներքևում մուտքի մօտ ոտնաձայն լսեց:

Նա ահանջ դրեց. մէկը վերև էր գալիս:

— Երեսունը վեց, երեսունը եօթ, երեսունը ութ, համարում էր Թովմասը, — երեսուն և ութն աստիճանից վեր բացի ինձանից այստեղ ոչ ոք չէ բարձրանում:

Բայց այս անգամ Պինչը սխալուած էր: Բարձրացողը ուղիղ որ կանգ առաւ, բայց միայն հանգրստանալու համար, յետոյ շարունակեց իւր քայլերն ու աւելի մօտեցաւ: Վերջապէս գուռը քայուեց: Թովմասն ազահուլութեամբ նայեց նորան ու արձանացած մնաց: Նա իւր աչքերին հաւատ չէր ընծայում, այն աստիճան շէմքում կանգնողի անձնաւորութիւնը ազգեց նորա վերայ: Նորան այնպէս էր թւում, թէ ճիւղ է առջևը կանգնած, այն ինչ նորա առաջ կանգնած էր իւր իսկական մարմնով ծեր Մարտին Չուզլվիտը. բայց ոչ այն թույլ ու մեղկ արարածը, որին Թովմասը թողեց Պէկանիֆի տանը: Ո՛չ, այն ծերը, որ այժմ կանգնած էր Թովմասի առաջ, քաջաւորը էր, չնայելով ծեր հասակին, և իւր ուժեղ ձեռքը յեցած ունէր հաստ ձեռնափայտի վերայ: Միւս ձեռքով նա Թովմասին նշանացի հասկացրեց, որ չգարմանայ ու չճիւղթուի: Ծերունու զէմքն անդրգուելի հաստատամտութիւն էր արտայայտում. աչքերը վստահ ու փայլուն և Թովմասը չէր իմանում թէ ինչ մտածէ:

Այդտեղ միայն պարզամիտ Թովմասի աչքերը բացուեցաւ, այժմ միայն սկսաւ քանի մի բան հասկանալ:

— Շատ սպասեցիք ինձ, Թովմաս:

— Ինձ ասացին, թէ գրատան մեծաւորը շուտ վզայ, այն ինչ...

— Գիտեմ: Զեզ չեն ասել, թէ ով է: Այդ իմ ցանկութիւնն էր, և շատ զոհ եմ, որ այդպէս

ճիշտ կատարեցին: Սակայն՝ ես մտադիր էի աւելի վաղ տեսնուել ձեզ հետ, որովհետև առաւել վառ բան չէի կարող սպասել, քան թէ այն՝ ինչ որ նա ձեզ արեց այն օրը, երբ ես ձեզ վերջին անգամ տեսայ: Բայց սխալուեցայ:

Նա մօտեցաւ Թովմասին ու ձեռքը բռնեց:

— Ես նորա տանն էի կենում, Պինչ, և համբերութեամբ թոյլ տուի վարուել ինձ հետ, ինչպէս իւր շահասէր մտքերի գործիքի հետ, — հասկացա՞ք: Ես հարիւր անգամ աւելի կրեցի, քան կարող էի կրել, եթէ արգարև մի անպիտան խելացնոր ծեր լինէի, ինչպիսին որ նա ինձ համարում էր, ազնիւ Պինչս: Ես երբէք այսպիսի փորձանք չէի կրի, եթէ ապագայի վերայ չմտածէի...

Նա շունչ քաշեց, նորից սեղմեց Թովմասի ձեռքը և ոգևորուած շարունակեց.

— Ինչքան բաւական չարչարուեցաք այդ անպիտանի ձեռքից, պակաս չկրեցին նաև ուրիշ մարդիկ, իմ սրտին մօտիկ մարդիկ: Բայց այժմ, սիրելի Պինչ, հաշուի ժամանակը մօտեցել է (ծերունին բարեմտութեամբ ժպտաց և կռկռաց) և ամենքն իրանց վարձը կտանան...

Հասաւ այն երեկոն, երբ յայտնի պայմանի գորութեամբ պէտք է Չօֆֆին յանձնուէր երկու հիւտնդասականների կատարեալ տնօրինութեան: Ծերունին իւր քնջնում նիրհում էր: Զօնսը դառնում

թեամբ քայլում էր սենեկում, մտածելով թէ ինչպէս առաւել լաւ կարելի է փախչել: Նա տատանում էր. սպասէր արդեօք, մինչև հօնդարտի այն շփոթը, որ ծագել էր Տիգգի ու Դէվիդի անհետանալու լուրերից, առանց մէկի մէջ կասկած ծնելու, թէ առանց մի վարկեան կորցնելու Անգլիայից հեռանար, առաջին իսկ մեկնող շողենաւով: Նա երևակայում էր, որ իւր յանցանքը ոչ ոքին դեռ յայտնի չէր, և միայն մէկ միտք անհանգիստ էր անում նորան. երբ կգտնեն Մօնտէգլիւի մարմինը: Փողոցից լսուած՝ անցորդների ամեն մի չնչին ձայն սարսափ էր ազդում նորան: Մինչև անգամ մի հասարակ հանգամանք՝ իւր կնոջ բացակայութիւնը, որ այդ օրը ճաշից յետոյ ծանօթի մօտ էր գնացել, — յուսահատութիւն պատճառեց մարդասպանին: Վախենում էր, թէ Գրայիան մի բան չասի իւր վերջին օրերի խորհրդաւոր կենցաղի աւթիւ:

Նա զարթեցրեց ծեր գործակատարին ու հարցրեց, թէ ո՞ւր է իր կինը:

— Միստրիս Տօջէրսի մօտ գնաց, պատասխանեց Չօֆֆին:

Զօնսը կանչեց սպասուհուն, և պատուիրեց անյապաղ տիկնոջը գտնել: Սպասուհին ժամ ու կէսից յետ վերադառնալով՝ յայտնեց, թէ տիկինն արդէն երեք ժամ առաջ գնացել է տիկ. Տօջէրսից, բայց թէ ուր՝ յայտնի չէ:

Հազիւ թէ սպասուհին սենեկից դուրս էր գնացել, երբ ծեր գործակատարը, որ շարունակ

աչք չէր հեռացրել Ջօնսից, լանկարծ գոռուժ գոչուժով ընկաւ նորա վերայ.

— Բեր նորան. քնչ արիւր. ո՛ւր տարար նորան. ես դեռ ևս ոյժ ունիմ, — գրացիներէդ կըկանչեմ:

— Ա՛խ, խելացնոր ծերուկ: Ես քնչ գիտեմ, թէ ուր է, շշնչաց Ջօնսը, պատի պէս գունաթափ և բրդեց իրենից խեղճ ծերուկուն:

Բայց նա ձեռը չվերցրեց:

— Ո՛ւր է իմ բարի տէրս, ո՛ւր է տէրս, գոչեց նա: — Ո՛ւր է նորա հարազատ որդին, որ տակաւին երեսայ իմ ծնկներէս վերայ էր խաղում: Ո՛ւր է այն կինը, որ այս տանն այնպէս շատ էր չաց լինում գիշերները: Ի՞նչ արիւր նորան: Նա վերջինն էր, վերջինն էր իմ բարեկամներէց:

Ծերուկը դառնութեամբ հեկեկաց:

— Յիշիր, պնդում էր նա արտասուելով. — լիշիր, որ նորա գլխի մի մազին վնաս չգիպչի: Ես այդ չեմ կարող տանել... Ես ծեր եմ, ես ցնորուած չեմ, — կակազում էր թշուառ գործակատարը. — բայց երբ հարկաւոր կլինի՝ այն ժամանակ կխօսեմ: Ես ամեն բան գիտեմ:

Ջօնսն այն աստիճան վախեցաւ ծերուկնի Չօֆֆիի սպսռնալիքից, որ կորցրեց ինքն իրան, և երբ ով և իցէ դուռը բաղխում էր՝ բարձրաձայն աղաղակում էր, կարծելով, թէ իսպառ կորած է: Բայց նորա ժամը դեռ չէր հնչել. — ներս մտաւ միտորիս Գէմպը:

— Բարի երեկոյ, պարոններ, ասաց նա ոտքը:

ներս գնելով: Ի՞նչպէս է մ. Չօֆֆիի առողջութիւնը:

Հիւանդապահն էլ այնպէս վստահ չէր, ինչպէս միշտ: Փոքր ինչ շփոթուած էր, շուտ շուտ գլուխ էր տալիս և սովորականից խոնարհ, նա շարունակ դառն մօտ էր կանգնած:

Այսօր ամբողջ երեկոյ Չօֆֆին ցնորքի մէջ է, ասաց Ջօնսը: Տարէք վերև և պարկացրէք. յետոյ դարձէք — ձեզ հետ խօսելիք ունիմ:

Ծերուկն առանց խօսելու հետևեց տիկ. Գէմպին: Ջօնսը լուսամուտի մօտ գնաց և մտածմունքը պաշարեց նորան: Շուտով հիւանդապահն յետ եկաւ:

— Փառք Աստուծոյ, հանգստացաւ, — ասաց նա անորոշ մտքով:

— Միւս հիւանդապահն ուր է, կերկեր ձայնով հարցրեց Ջօնսը:

— Վերևն է. նոր եկաւ:

— Շատ լաւ: Խիստ հսկեցէք և մի հաւատաք, — նա խորամանկ է: Այժմ միւսին այստեղ կանչեցէք, ինչպէս է նորա...

— Իսկոյն:

Տիկին Գէմպը յետ ու յետ գնաց դէպի շէմքը. բայց լանկարծ կանգ առաւ, Ջօնսի անակնկալ փոխուելու պատճառով այլայլուած, որից պարզ երևում էր, որ նա դառնը մէկին տեսել էր: Մի ձեռք ուղղակի մի կողմ հրեց հիւանդապահին, և ներս մտաւ ծեր Մարտինը ծերուկ գործակատարի և Ջօն Վէստլօկի հետ:

—Ոչ ոքին դուրս չլծողնես այստեղից, — սպառնալից ձայնով գոչեց Մարտինը երիտասարդ ուղեկցին։ — Սա եղբորս որդին է։ Եթէ կհամարձակուի տեղից շարժուել կամ կվստահանայ մի ծպտուն հանել — լուսամուտը բաց է, ոստիկանութիւնը կը կանչէք։

— Դուք թնչ իրաւունք ունիք կարգադրութիւններ անել իմ տան մէջ, մի փորձ փորձեց Ջօնսը հազիւ լսուող ձայնով։

— Իսկոյն ամեն բան կյայտնուի։ Այստեղ համեցէք։

Դռներում Լիւսօմն երևաց։ Սարսափի մի ակամայ ճիչ դուրս թռաւ մարդասպանի կրծքից։

— Ես ճանաչում եմ այս անպիտանին, կեղծ քաջութեամբ մատնացոյց արաւ նա ներս մտնողի վերայ։ — անխիղճ ստախօսի մէկն է։ Հետաքրքիր է իմանալ ինչե՞ր է բարբանջել սա ձեղ մօտ իմ մասին։ Վաճառեցէք այստեղից այդ անզգամին։

— Չայն չլինի։ — գոռաց ծեր Չուզլլիտը։ Սա է այն մարդը, — դարձաւ նա Լիւսօմին, Ջօնսի մօտ տանելով նորան։

— Իրան նայեցէք, եթէ ինձ չէք հաւատում։

— Ստուա՞ծ իմ, — գոչեց ծեր Մարտինը, ձեռներն իրար կցելով, — և սա եղբորս որդին է։

Նա նստեց բազկաթոռի վերայ, շունչը լետ բերեց և վճռապէս շարունակեց.

— Սլո՞ժ հերթը ձերն է, սիրելիդ իմ Չօֆֆի. — պատմեցէք, թնչ գիտէք։ Սաացէք ամեն բան ա-

ռանց ծածկելու — ի սէր ձեր սիրոյն դէպի ծեր մեծաւորը։

— Ես միշտ լուռ թիւն եմ պահած. այդ էր նորա ցանկութիւնը, պատասխանեց գործակատարը։ Մահից առաջ նա խոստում առաւ ինձանից որ ոչ ոքին այդ մասին խօսք չասեմ. այնուհետեւ ես միշտ զսպում էի ինձ, բայց այժմ ինքներդ ամեն բան իմացել էք։ Ես լաճախ գիշերները մտածում եմ դորա մասին... Ի՞նչ արած. ծեր եմ և թոյլ — քունս չի տանում։

— Շարունակեցէք, սիրելիս, — նկատեց Մարտինը. դուք էիք եղբորս միակ ու անխարդախ բարեկամը։

Չօֆֆին ուշադրութեամբ ականջ դրեց այս քնքոյշ խօսքերին ու ժպտաց.

— Նա էլ այդպէս էր ասում ինձ, գոչեց նա տղայական հիացմամբ։ Նա ինձ երբէք չէ վիրաւորել։ Ա՛յ եղպէսի մարդ էր իմ հին մեծաւորը։ Մենք միասին էինք թուաբանութիւն ուսել... Իսկ այժմ ո՞ւր է։

Ծերուկը դառնութեամբ գլուխը թափ տուեց ու ցնցուեց։

— Ես հօ չէի կարող նորա հարազատ որդուն դաւաճանել. բայց նա լաճախ ստիպում էր ինձ այդ անել, մանաւանդ այս երեկոյ։ Իսկ ո՞ւր է նորա խեղճ կինը։

— Ես արդէն հոգացել եմ նորա մասին։ Նորան պահում եմ, որ չիմանայ թէ ինչեր է

պատահում այստեղ: Շատ ցաւ է քաշել խեղճը—  
ժամանակ է խնայել նորան:

Այս խօսքերից յետ Զօնան զգաց, որ էլ փրկու-  
կութիւն չկայ: Ծնկները ծալուեցան, և դալկացած  
ընկաւ աթոռի վերայ: Իսկ Լիւսօմն սկսեց իւր  
կուսակցի յանցանքներն ապացուցանել: Հանդարտ,  
խաղաղ, բայց անխնայ ճշմարտութեամբ՝ պատմեց  
նա ամենաչնչին մանրամասնութիւններով յուզող  
գործի բոլոր հանգամանքները:

Ծեր գործակատարն այս խոստովանութիւնը  
ամբողջապէս լսեց: Նա շեշտակի նայում էր Լիւսօ-  
մի դէմքին, և երբ սա լռեց՝ անակնկալ՝ ձեռքը  
շարժեց ու գոչեց.

—Ո՛չ, ո՛չ, դա ճշմարիտ չէ.—միմիայն ինձ է  
յայտնի ճշմարտութիւնը:

—Հա՛, —վրայ բերեց ծեր Մարտինը: Գուք  
ինքներդ չէ՞ք, սիրելիդ իմ Զօֆֆի, որ հէնց այժմ  
սանդուխտի վերայ ասացիք, թէ նա ինքը սպանեց  
իւր հօրը:

—Ճշմարիտ է: Ես այժմ էլ յետ չեմ կենում  
իմ խօսքից, —գոչեց գործակատարը կատաղած: Իր  
շատ խիստ էր, բայց ոչ այնպէս, ինչպէս դուք են-  
թադրում էք: Սպասեցէք, մտածելու ժամանակ  
տուէք—իսկոյն կիշեմ: Ահա՛ թէ ինչպէս էր գործը:  
Յիրաւի սա թոյնը այն ձևով ձեռք բերեց, ինչպէս  
որ ձեզ արդէն յայտնի է, —անգամ հէնց այնպիսի  
սրուակի մէջ—լցրեց, որի մէջ մեծաւորիս հազի դե-  
ղըն էր լինում, և թագցրեց ահա՛ այն գրասեղա-

նում, իսկ ինքը—չգիտեմ վախեցնաւ թէ սիրտը յետ  
քաշուեց, վասն զի որքան և իցէ հարազատ որդին  
է, —բայց միայն չկարողացաւ մեզնից ծածկել իւր  
չար գործը: Գրասեղանի մօտ շատ էր քրքրում, իսկ  
այդ միջոցին իւր աչքերը անհանգիստ կրակով վառ-  
ւում էին, իսկ ձեռները դողդողում էր: Հայրն  
ինչ-որ նկատեց: Մի անգամ, որդու բացակայու-  
թեան միջոցին, նա արկղը բաց արաւ, և այնտեղ  
թոյն գտաւ: Ծեր մեծաւորս լաց եղաւ ու ասաց.  
«Լսիր, ծեր Զօֆֆի, որդիս ուզում է ինձ թու-  
նաւորել»:

Զօնսը լարուած ուշադրութեամբ ականջ էր  
դնում. ազօտ յուսոյ մի նշոյլ առկայծեց նորա գլխում:

—«Ձանձրացաւ մահուանս սպասելով. ցանկա-  
նում է շուտով տիրանալ փողերիս: Ես նորան ա-  
մեն ինչ կտամ—թող սրակուռի, իսկ ես ու դու,  
հին բարեկամս, հեռանանք ու մեզ համար կամաց  
կամաց ապրենք. մեզ շատ բան չի հարկաւոր: Ես  
եմ մեղաւորը, ես մանկութիւնից ազահուլութեան  
սովորցրի: Թող կարծէ, որ թոյնը ընդունեցի, իսկ  
երբ ամենը կտանայ և զղջումը կնեղէ նորան, այն  
ժամանակ ես կասեմ, թէ ամեն բան գիտեմ, և  
կ'ներեմ: Գուցէ այնուհետև դէպի լաւը կը փո-  
խուի և իւր որդիքն իմ ձեռով չի կրթի»:

Գործակատարն այս քաշեց և արտասուքը մաք-  
րեց: Ծեր Մարտինը ձեռքերով դէմքը ծածկեց, իսկ  
Զօնան ազահուլութեամբ աչքերը չուում էր ծեր Զօֆ-  
ֆիի վերայ. նորա շրթուներէրի վերայ հազիւ նը-

կատելի մի ժպիտ անցաւ. նա հաւատացած էր, որ գործակատարի պատմութիւնը բարեխաղող ելքի կհասցնի:

— Միւս օրը ծերունի մեծաւորս ձեացրեց իրան, որպէս թէ սխալմամբ բաց է արել գրասեղանի դարագն այն բանալիով, որ յարմար էր եկել փականքին. նա մինչև անգամ զարմանք յայտնեց, որ այնտեղ դեղի թարմ պաշար էր գտել, բայց ենթադրեց, որ այդ դրուած էր սխալմամբ արկղը բաց մնացած միջոցին: Թոյնը մենք դէն ածեցինք, իսկ սրուակի փոխարէն նորը դրինք, և որդին կարծուծ էր, թէ ծերունին խմում է ու խմում թոյնը: Ես այս շատ լաւ գիտեմ, որովհետև մի անգամ մ. Չուզլվիտը կամենում էր Ջոնսին փորձել, և նրկատեց, որ դեղը մի առանձին կերպով է տալիս— և ինչ էք կարծում— իսկոյն առանց ձայն հանելու նա դուրս գնաց սենեկից: Այդ ժամանակից մեծաւորս սկսաւ թուլանալ ու նուազել: Ծանր վիշտը կտարեց խեղճին: Դեռ մահից քիչ առաջ նա ինձ ասաց. «Խնայիր նորան, Չօֆֆի, խնայիր իմ սիրու համար»: Ես էլ խոստացայ— չէ որ նորա հարազատ որդին էր:

Արտասուքը խեղտեց ծեր Չօֆֆիին. նա չկարողացաւ շարունակել և հեռացաւ իւր քունջը, ուր երկար տարիներ միայնակ նստել էր իւր անբաժան արտմութեամբ: Լուութիւն տիրեց:

— Վերջացրիք, հարցրեց վերջապէս Ջոնսը, մի լանդուզն ու հրաւիրական հայեացք ձգելով ներ-

կայ եղողների վերայ: Թէ էլի բան ունիք պահած: Իսկ ձեզ, տէր իմ, — դարձաւ նա դէպի ծեր Մարտինը, խնդրում եմ իսկոյն կնոջս ինձ ուղարկէք, ապա թէ ոչ փոխարէնը կստանաք: Դուք շատ յաջող տարաք գործը, բայց մոռացաք, որ մեզանում ընդունուած չէ մարդիկ կախել լոկ նորա համար, որ նոքա պահարանում մկների համար կէսպէնսի թոյն ունին պահած, և որ որևէ պարսպ դատարկապորտներ ուրիշի տուն ներս պրծնելով՝ մտածում են մի յիմար կատակերգ ներկայացնել:

Ջոնսի վարմունքն այն աստիճան զզուելի էր, որ ամենքն արհամարհանքով երեսը դարձրին:

Ծեր գործակատարի ցուցման տպաւորութեան տակ նա իրան արդարացրած էր զգում հայրասպանութեան ամեն կասկածից. լիջեց անտառում կատարած չարագործութիւնը, և զուր տեղը արիւն թափելու զգացմունքը վայրենի, անզուսպ յուսահատութեան մէջ ձգեց նորան:

— Լսեցիք, ինչ որ ասացի, յարձակուեց նա հօրեղբօր վերայ: Տեսնում էք այս դուռը: Համեցէք, բաց է ձեզ համար:

— Բայց դու անսնում ես այն, վրայ բերեց միւսը, դուռը ցոյց տալով: Նայիր այնտեղ:

Ջոնսը քարացաւ: Դռներում մի քանի անձանօթ մարդիկ երևացին: Ամենից առաջ մտաւ Նէջէտը:

Միւսնոյն ժամանակ փողոցից լուում էր ամբօխի խօսակցութիւնը. լուսամուտների առջև խռնուում էին անցորդները:

— Ահա մարդասպան, ասաց Նէջէտը. բռնեցէք դորան:

Երեք հոգի ներս մտան և սկսեցին Ջոնսին երկաթէ թևնոցներ հագցնել: «Մարդասպանութիւն, մարդասպանութիւն» լսուած էր փողոցային ամբոխի միջից: Այս զարհուրելի խօսքն ամենքի բերանում պտտում էր:

— Կամաց, ազգական, ասաց ոստիկանութեան սպաներից մէկը, դիմադրող յանցաւորին հանգարտեցնելով:

— Ո՞ւմն էք այստեղ ազգական անուանում, խիստ հարցրեց Մարտինը:

— Ի միջի այլոց և ձեզ, տէր. ինձ չէք ճանաչում: Ես — Ֆօքսն եմ: Միթէ, սիրելի հօրեղբայր, ցաւ չէ՞ ձեզ համար, որ ձեր յարգելի ազգութեան արժանաւոր անդամներից մէկն իւր ասրուստը ոստիկանութեան ծառայութեան մէջ է որոնում:

— Ինքդ ես մեղաւոր. քիչ գործ կունենայիր զանազան պատահական-բարեկամների հետ: Աստըժուն փառք տո՛ւր, որ այդպիսի պաշտօնում գոնէ պահում են: Այդտեղ էլ կարող է մարդ ազնիւ պահել իրան:

— Այդպէս մի վարուէք բարեկամներիս հետ: Քսկոյն ինքներդ օգուտ էիք քաղում իմ անմուսաց բարեկամ Տիգգի ծառայութիւնից: Այդ ինձ շատ լաւ յայտնի է. անգամ վէճ ունէինք այդ առթիւ:

— Նորան վարձեցի և վճարեցի դորա համար:

— Շատ էլ լաւ արիք, որ վճարեցիք — այժմ արդէն ուշ է:

— Ես միշտ սպասում էի, որ վաղ թէ ուշ բաղտը որևէ խաբէութեան առթիւ նորա հետ պիտի կապէ ինձ. բայց երբէք մտքովս չէ անցել, թէ երբ և իցէ պատիւ կունենայի նորա սպանողին բռնել:

— Սպանողին, գոչեց Մարտինը, շեշտակի նայելով ներկայ գտնուողների դէմքերին:

— Այն, համողիչ կերպով ասաց Նէջէտը. — Ես այդ մարդուն մեղադրում եմ մ. Տիգգի սպանման մէջ, որի մարմինը երեկ երեկոյ գտնուեցաւ Սէլիս-բիւրիի մօտ անտառում, և ահա թէ ինչի վերայ եմ հիմնում այս մեղադրանքը: Հանգուցեալ Մօնտէգիւն, կասկածելով Ջօնս Չուզլիտին հէնց այն գործում, որի մասին դուք, պարոններ, շատ ժամանակ չէ ինչ որ այստեղ խօսում էք, մինչ մենք կանգնած էինք դրան ետև, ինձ յանձնարարեց հսկել դորան և իմանալ յանցանքի բոլոր մանրամասնութիւնները: Ես քննեցի հիւանդապահին ու բժշկին. լսեցի պարոն Չօֆֆիի տարօրինակ խօսակցութիւնները, իմացայ թէ ինչ տեսակ խօսքեր է արտասանել այս պարոնը ցնորքի մէջ (և ցոյց տուեց Լիւսօմին): Այս ամենը մեծ համբերութիւն էր պահանջում. — դա իմ կոչումն է. բայց ես դորանով չբաւականացայ և շարունակեցի օրուգիշեր դիտել այս տունը: Այս երգիկից, շարունակեց Նէջէտը, ձեռքը դէպի փողոցի հանդիպակաց տան

տանիքը երկարացնելով, ես տեսայ, թէ ինչպէս մենակ վերադարձաւ Տիգրի Հետ կատարած ճանապարհորդութիւնից: Նոյն գիշերը, հարևան նեղ փողոցում մանգալիս ես դիտեցի դորան, երբ գիւղացու շորեր հագած՝ գնում էր դէպի արևմուտք: Ճանաչեցի և հետևեցի մինչև քաղաքի ծայրը, մինչև աչքիցս կհեռանար: Սմբողջ միւս օրը ես երգիկից չհեռացայ. գիշերը դարձեալ փողոց դուրս եկայ, իսկ առաւօտը վաղ նկատեցի, թէ ինչպէս նոյն գիւղացին տուն էր գառնում: Երեկոյեան դէմ Ջօնս Չուզլվիտն, արդէն սովորական շորերով, տանից դուրս եկաւ թևի տակ մի կապոց բռնած: Ես էլ նորա ետևից: Մօտեցաւ Լօնդօնի կամրջին, նայեց իւր շուրջը և տեսնելով, որ մօտերքում մարդ չկայ, կապոցը ջուրը ձգեց: Ես այդ մասին ոտսիկանութեան յայտնեցի: Կապոցը գտան, և նորա մէջ գտնուեցաւ արիւնի ու ցեխի մէջ թաթախած նոյն շորը, որով Ջօնսն այն առաւօտ տուն դարձաւ: Երեկ երեկոյին տեղեկութիւն ստացուեց թէ անտառում մի գի է գտնուել և քննութիւնից պարզուեց, որ եղելութեան պատահած տեղում առաւօտունից քաշ էր գալիս մի դատարկաշրջիկ և որ տեսնողների նկարագրութեան համաձայն, հէնց այն շորն ունէր հագած, որ գտնուեցաւ Թեմզայից ոտսիկանութեան ձեռքով հանած կապոցում: Այլ և կան վկաներ, որ այդ մարդը փոստակառքից իջել է նոյն իսկ միջոցին, երբ ես տեսայ տուն գառնալիս: Այս էլ դորա ձերբակալութեան:

գրութիւնը: Նեղութիւն կրեցէք ուրեմն, պ. Փօքս, ձեր պարտքը կատարելու:

Եւ Նէջէտը գնաց դէպի դուռը: Ծեր Մարտինը մի փոքր կանգնեց, կամեցաւ հրատեշտի քանի մի խօսք ասել Ջօնսին, բայց տեսնելով, որ նստած է գետնին, վայրենի հայեացք ուղղած բոլոր շրջապատողների վերայ և ատամները կրճտացնելիս, Չօֆֆիին ձեռքից բռնեց և Ջօն Վէստլօկի հետ հեռացաւ այդ չարագուշակ տնից: Նոցա հետևեց և Փօքսի օգնականը, որին յանձնուած էր յանցաւորի համար կառք գտնել:

Այսպիսով Ջօնսը մնաց Փօքսի ու մի ոտսիկան սպայի հսկողութեան ներքոյ: Սենեկում, բացի դոցանից, ոչ ոք չմնաց, միտաբիս Գէմպն էլ վաղուց արդէն անյայտացել էր օրուան անցքերի տալանորութիւնները հաղորդելու մ. Սվիզլայային ու հարևաններին, որոնք նորութիւնների սիրահար էիր: Փօքսը նստած էր աթոռի վերայ և շփոթուած սենեակին էր դիտում: Նորա աչքերը դէմ յանդիման Ջօնսի աչքերին հանդիպեցին, որ շեշտակի նայում էր նորան և շրթունքներն էր շարժում, կարծես թէ ուզում էր խօսել:

— Ձեկ, դուրս գնա փողոց և երբ կառքը բերեն՝ իմաց տուր, — դարձաւ Փօքսը սպային: — Իէհ, ինչ ունիս ասելու, աւելացրեց նա, երբ ստորագրեալը դուրս գնաց:

Ջօնսը փորձեց վերկենալ. Փօքսն էլ օգնեց: — Շուտ ասա, ինչ ես ուզում:

— Զեւքք կոխեր կողքի գրպանումս, շշնչաց Ջօնսը. այնտեղ փող կայ... Հարիւր ֆուճա... վեր ան. բայց մի ըստէ յետ նայիր:

Փօքսը մի վայրկեան մտածեց: Պէտք էր շտապել, որովհետև ոստիկանական ծառայողները կարող էին յետ գալ:

— Փախչելով չի փախչի, մտածում էր Փօքսը, Ջօնսի գրպանից քսակը հանելիս. բայց փողը— չէ որ փող է:

Նա յետ նայեց: Ջօնսը դողդողալով մօտեցաւ պահարանին և մի բան հանեց:

— Սլօժ մինչ ատրէք— պատրաստ եմ, այսպէս նա նախկին չը լսուող ձայնով:

Սլոք միջոցին վերադարձող սպաները նստացրին նորան կառքը, Փօքսը նստեց կառասպանի կողքին, իսկ օգնականները յանցաւորի կողքերին:

Ճանապարհին Ջօնսը սկզբում այս ու այն կողմն էր ընկնում, ապա դուռալով ընկաւ կառքի յատակի վերայ: Սպաները դեղձի թունդ հոտ զգացին:

— Կանգնիր, դոչեց նոցանից մէկը, անհանգստութեամբ թեքուելով դէպի յանցաւորը:— Կառքը կանգնացրէք. թունաւորութեամբ: Կառքը կանգնացրին: Ջօնսին հանեցին: Զեւքքին դողդողալով սեղմած ունէր մի փոքրիկ սրուակ: Նա արդէն աւարտել էր իւր բոլոր երկրաւոր հաշիւները, ազատուելով աւելորդ աղմուկից, երգուեալների դատարանից ու դահճից:

### ԺԷ.

Անցաւ քանի մի օր: Ծեր Մարտինը մնաց Ջօնդօնում: Նա հաստատ մտադրուել էր իւր բազմաթիւ բարեկամներին ապշեցնել իւր հին ու փայփայած մտքերը կատարելով: Մ. Պէկսնիֆը, որքան որ ծեր Չուզլվիտը նորա տանն էր, այնպէս փոխել էր իւր բնութիւնը, որ դառել էր նորա աչքում մաքմանացած ինքնասիրութիւն ու խորամանկութիւն, — և ծերունին վերջնապէս որոշել էր մերկացնել նորան ու այսպիսով այս ազնուագոյն ճարտարապետի գոհերին կատարեալ ցնծութիւն պատճառել: Միով բանիւ, նա մտադրուած էր բոլորովին ուրիշ ուղղութիւն տալ ինչպէս իւր սեպհական կեանքին, այնպէս էլ բոլոր իրեն մօտիկ ու թանկադին մարդոց գոյութեանը: Սլոք բանը մի փոքր յայտնի էր նաև Ջօն Վէստլօկին մեզ արդէն յայտնի խորհրդաւոր սրիկայ Փիպսի միջոցով: Վերջերումս Չուզլվիտը սերտ կպել էր Ջօնին, յաճախ խօսում էր նորա հետ, և սիրահարուելով նորա գործնական, առողջ մտքի և ուրախ բաց բնութեան վերայ, այս երիտասարդին հաւատաց իւր սրտի բոլոր զաղտնիքները: Հէնց նորա միջոցով իւր ջահիլ թոռնից ծածուկ, գտաւ նա Մարկոս Տէպլիին, այս անփոխարինելի անձին ամեն ծառայութեանց մէջ: Նախընթաց երեկոյին, որի միւս օրը պէտք է տեղի ունենար յարգելի մ. Պէկսնիֆի հանգիստաւոր խալտաւակութիւնը, որ վաղուց արդէն նշանակած ժամին

Լօնդօն էր կանչուած,—«Վիշապի» նախկին դռնապանին յանձնուեցաւ միւս օրը տասը ժամին հրաւիրել Թովմաս Պինչին քրոջ հետ ու երիտասարդ Մարտինին:

Այդ նշանաւոր օրը տասը ժամը զարկելուց յետ ովոր բաղխեց մ. Չուզլվիտի դուռը: Դա Տէպլին էր:

— Այ՛ ճշտութիւն դրան կասեմ, հաւանութիւն տուեց ծերը: Գնացի՛ր Մարտինի մօտ: Ի՞նչ եղաւ:

— Զարմանում է, տէր, և ոչինչ չի հասկանում, այնպէս ինչպէս և ես, խորամանկութեամբ աչքերը խփելով նկատեց Տէպլին: Ես նորան ասացի, որ դուք ինձ կանչեցիք և պատուիրեցիք որ նորան ձեզ մօտ հրաւիրեմ:

— Շատ լաւ, ասաց ծերունին: Այսօր ինձ մօտ հիւրեր կգան. դրանք չե՞ս կանգնի, որ ներս ընդունես:

— Ամենայն սիրով, տէր,— խոնարհ ծառագեմ,— պատասխանեց Մարկոսը գաղտնի հետաքրքրութեամբ, և կանգնեց դռան առջև, իսկ և իսկ դքսի դռնապանի վայել արժանաւորութեամբ:

Հիւրերն սկսան հաւաքուել: Ամենից առաջ եկաւ Ջօն Վէստլօկը: Չուզլվիտը շատ քնքոյշ կերպով ընդունեց նորան և բազկաթու առաջարկեց: Ապա եկաւ Թովմաս Պինչը քրոջ հետ. նոցա ետեւից դառնութեամբ հետևում էր երիտասարդ Մարտինը:

Ծերը ողջունեց Թովմասին, բռնեց Հուլիս երկու ձեռները և թուշը համբուրեց, իսկ Մար-

տինին անխօս ցոյց տուեց հեռու մի աթոռ:

Չուզլվիտի վերջին գործողութիւնը չվրիպեցաւ դիտող Տէպլիի ուշադրութիւնից: Նորա վերայ տրտմութիւն իջաւ: Բայց սրբան եղաւ նորա գարմանքը, երբ քանի մի ըուպէից մտաւ Մէրի Գրէգէմը միստրիսս Լիւպէնի «կապոյտ Վիշապի» պատուականագոյն տիկնոջ հետ: Նա զմայլուելուց անգամ մի փոքր տատանուեց:

Ծերը Մէրիին ևս սրտագին ընդունեց, ինչպէս և Պինչի քրոջ, և բարեկամաբար գլխով արեց նորատի սանուհու գեղեցիկ ուղեկցուհուն:

Հիւրերը զարմացած միմեանց էին նայում. ոչ ոք սիրտ չէր անում խօսակցութեան թելը բանալ: Վերջապէս ծերունին լուրթիւնն ընդհատեց:

— Մարկո՛ս, դուռը բաց թող և մօտ արի:

Մէկը արագ բարձրանում էր: Սայթաքելով ներս մտաւ Պէկանիֆը:

— Ո՛ւր է յարգելի բարեկամս, գոչեց նա, գրկակաբաց ընկնելով մ. Չուզլվիտի վերայ, բայց ծերունու հակակրող հայեացքից ստիպուած էր յետ գնալ:

— Առողջ էք, սիրելի եղբայր:

— Բոլորովին:

Ճարտարապետն այդպիսի անգորրացնող լուր առնելով մի խիստ հայեացք ձգեց ներկայ եղող ների վերայ և նախատական կերպով գլուխը շարժեց:

— Արիւնարբուներ, — գոչեց նա ագնիւ արհամարհանքով: Միթէ բաւական չէր, ինչ որ հիմնովին ապականեցիք այս պատուական ծերունու

կեանքը: Միթէ այժմ էլ, երբ իմ անշահասէր պաշտ-  
պանութեան տակ է գտնուում,—միթէ—հարցնում  
եմ ձեզ, այժմ էլ չէք թողնում ձեր ազահ գիտում-  
ները: Նա կանգ առաւ, վիրաւորուած բարերարի կեր-  
պարանք ընդունեց և խորը ախ քաշեց:

—Ս. խ, սիրելի, վեհանձն բարեկամ, դարձաւ  
նա ծերունուն, քնքոյշ յանդիմանութեամբ.—ի՞նչ  
պէս թողիք դուք ինձ, հէնց այսպէս կարճ ժա-  
մանակով: Գիտեմ, որ դարձեալ իմ օգտի համար  
հեռացաք. Աստուծո՞՞ վարձատրէ ձեզ: Բայց ինչո՞ւ  
յափշտակուելու վտանգին ենթարկուել: Ինձ համար  
շատ ծանր է, սիրելի եղբայր, այսպիսի աւազակնե-  
րով շրջապատուած տեսնել ձեզ:

Նա մօտեցաւ ծերունուն՝ սեղմելու նորա  
ձեռքը. բայց չնկատեց, որ վերջինս էլ պինդ սղմեց  
իւր հաստ ձեռնափայտը. երբ նա քաղցր ժպտան  
երեսին մօտեցաւ ծեր ջէնտլմէնին, սա երկարատե  
ճնշումից ու արհամարհանքից զահլէն գնացած՝  
վեր թռաւ և ձեռնափայտի մի ուժգին հարուածով  
գետին գլորեց նորան:

Ճարտարապետն այդ հարուածից ուշաթափ և  
առհասարակ շշկուած ազգակցական զգացմունք-  
ների այդպէս եռանդեամբ յայտնուելուն վե-  
րայ, յատակին հանգիստ նստած մի շատ ծաղրելի  
տեսարան էր ներկայացնում:

—Կորցրէք աչքիցս, աղաղակեց ծեր Մարտինը,  
դա՞գանակը շարժելով: Քանի դա այստեղ է՝ չեմ  
թողնի:

Մարկոս Տէպլին մօտեցաւ Պէկսնիֆին, յարգան-  
քով բարձրացրեց նորան և տարաւ սենեկի հանդի-  
պակաց կողմը, ուր յարգելի ճարտարապետին զգու-  
շութեամբ դէմ գցեց պատին:

—Նայեցէք,—գոչեց ծերունին,—մէկ նայեցէք  
այդ անպիտանին: Երբ միտքս դրի փորձել դորան,  
որոշեցի մինչև ծայրը հասցնել: Ես ինձ խօսք եմ  
տուել, որ չվնասեմ դորան, եթէ բարի զգացմուն-  
քի մի կայծ անգամ գտնուի մէջը: Բայց ամենևին  
չգտայ այդ անպիտանի մէջ,—և ծեր Չուզլվիտն  
արհամարհանքով երեսը դարձրեց դիմակաւոր խա-  
բեբայից:

—Իսկ այժմ, սիրելի Մարտին, արի ինձ մօտ,  
—շարունակեց ծերունին, կանչելով թոռան իւր  
մօտ: Գրկիր ինձ,—այ այդպէս, այդպէս:

Եւ ամեն անգամ այս խօսքը կրկնելիս՝ պինդ  
սեղմում էր իւր կրծքին և ճակատն ու այտերը  
համբուրում:

—Բոլոր բարկութիւնը, որ զգացի ես, երբ  
հայրենիք վերագառնալուդ միջոցին չկարողացայ  
քեզ կրծքիս կայցնել,—այն բոլոր բարկութիւնը  
միացրի այդ հարուածի մէջ: Եւ ինչո՞ւ պիտի բա-  
ժանուէի քեզանից: Ի՞նչպէս կարող էիր դու ինձանից  
փախչել:

Ս. Չուզլվիտը մի թեթեւ կնճռուեց: Սպա նո-  
րից դէմքը սլարզուեց. նա թոռան նստացրեց կող-  
քին ու շարունակեց.

—Հանգուցեալ Տիգգը մտաւ ինձ մօտ փոքր

ինչ փող վերցնելու մի հեռաւոր ազգականի համար: Տեսնեմ, խեղճը պարսպ է ման գալիս—ուրեմն ազատ ժամանակ շատ ունի: Օգնեցի ինչով կարողացայ, և պատուիրեցի որ այք ածէ քեզ վերայ: Նա ինձ հաղորդեց, որ դու այդ մարդու մօտ ես գտնուում (Պէկսնիֆին մատնացոյց արաւ): Այնուհետեւ նա քեզ պատահեց այստեղ Լօնդօնում... լիշում ես որտեղ:

—Վաշխառուի մօտ, ասաց Մարտինը:

—Այդպէս է. նա քեզ հետեւեց մինչև բնակարանդ, և այդպիսով ինձ միջոց տուեց դրամատոմսն ուղարկել քեզ:

—Մտքովս էլ չանցաւ, թէ դուք այդպէս կարեկցում էք ինձ—ասաց Մարտինը յուզմունքից գողացող ձայնով:

—Ես կարծում էի, որ դու կզղջաս և հանգիստ կվերադառնաս ինձ մօտ, — տրտմութեամբ շարունակեց ծեր պապը: Յոյս ունէի, որ վիշտն ու չքաւորութիւնը կտիպէին քեզ դառնալ: Քիչ մնաց, որ այդպիսով քեզ կորստի ենթարկէի, չնայելով որ սիրում էի քեզ: Բայց ինչ արած. անվստահութիւնն ու ինքնասիրութիւնը մէկ անիծեալի ձեռքով ծանրանում էին մեր ամբողջ գերդաստանի վերայ: Այժմ ամենքդ լսեցէք, բարեկամներ, դու էլ լսիր, անպիտան մարդ, որ կորցրիր թէ բարի անունդ և թէ փողդ:

Մ. Պէկսնիֆը ձեռքը սրտին դրեց ու գլուխը խոնարհեցրեց:

Ծերունի Չուզլվիտը պատմեց, թէ ինչպէս նա դաստիարակել էր Մէրիին, որին իւր հարազատ աղջիկն էր համարում, ինչպէս սա խնամում էր ու փալփայում իւր ծերութիւնը, և ինչպէս սկզբում դուր էր գալիս իրան, որ Մարտինն ու Մէրին մէկ մէկու սիրում էին. բայց յետոյ մտածել է, որ երիտասարդ մարդիկ ամուսնանալով իրան մենակ կը թողնեն բաղտի կամքին: Ապա ծերը պատմեց, թէ ինչպէս կշտամբում էր թոռան մոռանալով, որ երբէք նորա մօտ չի բացուել ու չի տեղեկացել նորա սրտի զաղտնիքը,— ինչպէս յետոյ, ջերմ վիճաբանութիւնից յետ նոքա բաժանուել են, և ինչպէս յետոյ էլ սիրել է Մարտինին և յոյս է ունեցել, որ նա դարձեալ յետ կդառնայ. ինչպէս, վերջապէս, երբ հիւանդ պարկած էր Վիշապում նամակ գրեց նորան, որով համարում էր իւր ժառանգը, խնդրում էր յետ դառնալ և պսակի համաձայնութիւն էր տալիս, բայց Պէկսնիֆի հետ տեսնուելունց յետ՝ նորա կասկածը սաստիկ աճելով՝ այրեց նամակը, շարունակ տանջուելով նոյն անվստահութեամբ:

Ծերունին բացատրեց, թէ ինչպէս տեղափոխուեց ճարտարապետի մօտ, աւելի մօտիկ ծանօթացաւ նորա հետ, փորձել ցանկաց, իսկ յետոյ՝ նորա բոլոր խարդախութիւններն իմանալով լռեց ժամանակով մերկացնելու համար: Պատմեց նաև, թէ իւր սանուհու հեզութիւնն ու համբերութիւնը հովացնում էին իւր սիրտը, ինչպէս նա ծանօթա-

ցաւ Պինչի Հետ և սիրահարուեց նորա պարզմտութեան ու ազնուութեան: Նա արտասուում էր Թովմասի մասին խօսելիս, Աստուծոյ օրհնութիւնն էր Հայցում նորա վերայ, և ասում, որ հոգի է այդ մարդը:

Երիտասարդ Մարտինն ու Մարկոսը մօտեցան Պինչին և սղմեցին նորա ձեռքը: Նոյնը և Մերին, իսկ սորանից յետոյ՝ Ջօն Վէստլօկը, միտարիս Լիւպէնն ու փոքրիկ Հռութը: Այս հանդիսի սկզբնապատճառն ինքը չէր իմանում, ինչ անէ ուրախութիւնից:

Այնուհետև ծեր պապը պատմեց, թէ ինչպէս յարգելի մ. Պէկսնիֆը դուրս արաւ իւր մօտից Թովմաս Պինչին, ինչպէս շարունակ Պէկսնիֆից լսում էր, թէ Ջօն Վէստլօկը շատ վատ տղայ է, բայց գիտենալով, որ Պինչի լաւ բարեկամն է, ինքը մի անմեղ խորամանկութիւն բանեցրեց, Ջօնի մօտ մ. Փիպսին ուղարկելով և ստիպելով Թովմասին այնպէս անհամբերութեամբ ընթերցարանի խորհրդաւոր տիրոջ սպասել: Վերջապէս դառնալով ճարտարապետին՝ յիշեցրեց, որ նախազգուշացրել է նորան շուտափոյթ վճիռ չդնել Թովմասի մասին. պահանջեց նորանից (գարշելի անուանելով) որ յիշէ, թէ ինչպէս անխիղճ էր վարոււմ, երբ երիտասարդ Մարտինը, երկարատև փորձից ու ներուժութիւններից յետ՝ եկաւ պապից ներողութիւն խընդբելու:

— Ահա՛ բոլորն, ինչ որ ուզում էի ասել քեզ,

Պէկսնիֆ, — աւելացրեց ծերունին. — դուռը բաց է, կարող էք քաշուել:

Ազնուագոյն, բայց ամեն կողմից անարգուած ճարտարապետին մնում էր միայն գլխարկը վերցնել. բայց դուրս գնալուց առաջ աչքը գցեց առատաղին և ճնշուած անմեղութեան զգացմամբ արտասանեց.

— Պատուարժան մ. Չուզլիտ: Երբ մտածէք անխօս ցուրտ գերեզմանի մասին, ինձ էլ յիշեցէք: Եւ եթէ կդժուարանաք շիրմի արձանագրի ընտրութիւնը, պատուիրեցէք գրել կարճ, որ *ես ներեցի* ձեզ: Իւր փքուած ճառը վերջացնելուց յետ՝ շուտով հեռացաւ:

Ծերուկը ժպտաց ետևից. բազկաթուից վերկացաւ, և կից սենեկի դուռը բանալով, ուր ճոխ զարդարուած սեղանի մօտ արձանացած էր այդ օրուան համար վարձուած ծառան, և փայլում էր մ. Փիպսի սնդուրած կեղծամն, ասաց.

— Այժմ, սիրելիք, աղատ ենք: Գործը շինեցինք— կարող ենք և նախաճաշել: Համեցէք խնդրեմ: Մարկ Տէպլի, կարգադրիր, բարեկամ, ղեկավարիր ծառաներին, և մեր ասպնջականը եղիր:

Հրաւիրուածներն էլ չսպասեցին: Սյդ առաւօտուան անցբերը, պապի ու թոռան միջև եղած թիւրիմացութիւնները, որոնք յաջող վախճան ունեցան ընդհանուր ցնծութիւն պատճառելով— չափազանց բաց էին արել ծերունի Չուզլիտի հիւրերի ախորժակը: Դանակների ու սխառաքաղների

չխչխկոց բարձրացաւ: Գինին լեզուներն արձակեց և մտերիմ զրոյց սկսուեց: Մ. Ֆիպսն ամենից զուարճախօս ծերն էր. ճառեր էր ասում, կատակներ անում Թովմասի հետ ու կոնծում:

Այս ուրախ նախաճաշից յետ՝ վերկացաւ Ջօն Վէտտլօկը, որ նստած էր Թովմասի ու նորա քրոջ մէջ տեղը, և ի զմայլումն ամենքի, ներկայացրեց ընկերութեան իւր հարսնացուին, գեղեցկադէմ փոքրիկ Հոուլթին, որով և ամենքի հաւանութեան արժանացաւ:

Երբ վերջապէս հիացման առաջին աղաղակները լռեցին, նա բացատրեց, թէ այդ օրերում ճարտարապետի պաշտօն էր ստացել գաւառում, և թէ Թովմասն էլ գնում է հետը, որ իւր հմտութեամբ ու փորձառութեամբ պիտի օգնէ իրան, իսկ վաստակը պիտի կիսեն իրանց մէջ:

— Եւ մեր տունը մի դահլիճ կլինի, վերջ դրեց Ջօնը իւր խօսքին: Իսկ այդ դահլիճում երգեոն կդնենք, որ կնուագէ իմ վաղեմի անգին բարեկամը, և փառաւոր կապրենք: Իսկ այժմ, սիրելի Թովմաս, ձեռքդ տուր—ես արդէն քո փեսան եմ:

Պինչի յափշտակութիւնը սահման չունէր, նորա սիրտն այնքան լի էր, որ անկարող էր խօսել: Բոլորն, ինչ կարող էր անել—այն էր, որ քրոջ ձեռք բռնեց ու դրեց իւր բարեկամի ձեռքում:

— Ես էլ քիչ ու միչ լսած ունիմ ձեր օյինների մասին, նկատեց պապը. ուստի իմ կողմից էլ պատրաստութիւն տեսայ:

Նա մօտեցաւ հարսնացուին, գրպանից մի շքեղ պատեան հանեց, բացարաւ և մերձեցնելով շշկած օրիորդին՝ ասաց.

— Նայեցէք, որդիս, ինչ սիրուն ապարանջան է ու մանեակ: Ի՛նչպէս է փայլում, Ընդունեցէք այս նուէրը ծերունուս ի յիշատակ, որ ամեն յաջողութիւն է ցանկանում ձեզ:

Առանց ժամանակ տալու օրիորդին, որ շնորհակալութիւն յայտնի, անմիջապէս հանեց մի ուրիշ, ճիշտ միւսնոյն տեսակ պատեան և դառնալով ամենքին՝ շարունակեց.

— Մի ապարանջան էլ ունիմ և նոյնանման մանեակ, կատարեալ հարսնացուի ընծայ: Ի՛նչ էք կարծում, պարոններ, ո՞ւմ համար են սոքա պատրաստուած:

Նա խորամանկութեամբ նայեց սեղան նստողներին և իւր հայեացքը դադար առաւ կարմրատակած Մէրիի վերայ:

— Մօտ արի, իմ հրեշտակ, ասաց նա յուզուած. — Գու էլ, Մարտին, մօտեցիր ինձ: Անցեալը մոռանանք. ինձ վաղուց յայտնի են ձեր մտքերը: Սիրեցէք. մէկմէկու, և մի մոռանաք ծեր պապին: Աստուած ձեզ երջանկութիւն և ուրախութիւն տայ շատ տարիներ:

Բայց հազիւ ծերունին ազատուել էր բերկրալից երիտասարդների գրկախառնութիւններից ու համբօյրներից, անակնկալ մի նոր զոյգ երևեցաւ նոցա առաջ:

—Յարգելի մ. Չուզլվիտ, ասաց Տէպլին, մօտ բերելով Վիշապի կառավարչուհուն: Եթէ այսօրս օրհնութեան օր է, այդ պատուին մեզ էլ արժանացրէք տիկ. Լիւպէնի հետ: Իմ կարծիքս այն է, որ Կապոյտ Վիշապի նշանակը ժամանակով նոր մակազիր պիտի ունենայ. «Ուրախ Տէպլիի իջևան» անուծով, — և տիկին Լիւպէնը բոլորովին համաձայն է ինձ հետ:

Ծեր պապը մեծ սիրով և լրջութեամբ կատարեց այդ խնդիրը: Նորից խնջոյք: Խօսեցեալ զոյգերը շնորհաւորում էին միմեանց: Բարձրաձայն խօսակցութիւնը մի վայրկեան չէր ընդհատուած: Ապագան ժպտում էր երիտասարդներին տւական երջանկութեամբ: Ել ինչ էր պակասում: Հասաւ վերջապէս մի այնպիսի ըոպէ, երբ երիտասարդութիւնը մոռացաւ նոյն իսկ այդ բաղտաւոր օրուայ գըլխաւոր հերոսին, ծեր Չուզլվիտին: Ծերունին օգուտ քաղեց այդ հանգամանքից, էլի մի նշանաւոր գործ կատարելու, և տեսնելով, որ ամենքն զբաղուած են՝ հիւրերին միտարիս Լիւպէնի հոգատարութեան յանձնեց, իսկ ինքը վերցնելով իւր հետ խոհեմ Մարկոս Տէպլիին, դուրս գնաց փողոց, կառք վարձեց և իւր ուղեկցի հետ գնաց «Առևտրական» հիւրանոցը տիկին Տօջէրսի մօտ:

Այնտեղ, մի փոքրիկ սենեկում, ուր երբեմն ազնուազարմ Պէկսնիֆը աստուածաբանական հեղինակութիւն էր կարգում, գտաւ վշտահար Գրայիային: Նա մեծ սգի մէջ էր: Նորա մօտ մի բա-

րեկամ միայն կար — մինչև վերջը հաւատարիմ ծեր Չօֆֆին: Լուռ, թախծալի ժպիտով ձեռքը մեկնեց նա ծեր ջէնտլմէնին: Սա նստեց նորա կողքին բաղմոցի վերայ, հանգստացրեց որքան կարող էր և սկսեց իւր գալու նստատակը պարզել:

— Դու մարդուցդ ու ապրուստի միջոցից գըրկուեցար: Նորա բոլոր կարողութիւնը յափշտակած դրասնեկի պարտքերի վճարմանը կերթայ: Այնտեղ կորաւ նաև հօրդ ողջ դրամագլուխը: Նորա մօտ էլ ապաստան չես գտնիլ:

— Ես ինքս չեմ գնայ և հազիւ թէ նա ինքն էլ ինձ ընդունի:

— Գիտեմ: Գոյրդ քեզ չի սիրում և ինչպէս լսեցի, շուտով մարդու կգնայ — ուրեմն՝ նա իւր հոգսերը կունենայ... Աւելի լաւ է, սիրելիս, դրանանք ինձ մօտ: Ինձ մօտ ուրախութեամբ կընդունեն — իմ շուրջն այժմ բոլորը երիտասարդներ են, ուրախ...:

— Եւ ուղիղ որ, Գրայեա՛, լսիր բարի խորհըրդին, — ասաց միտարիս Տօջէրսը, որ ներս էր եկել այս խօսակցութեան սկզբին:

— Կքաշուենք քաղաքից դուրս, շարունակեց Մարտինը, — Լօնդօնին մօտիկ տեղ կընտրենք, որ բարի միտարիս Տօջէրսն էլ շուտ շուտ կարողանայ այցելել քեզ: Մ. Չօֆֆին էլ, Աստուծով, կլաւանայ մեզ մօտ թարմ օգում:

Չուզլվիտի խնդրին իւրն էլ միացրեց միտարիս Տօջէրսը: Ծեր Չօֆֆին էլ յետ ջմնաց վերջինից:

Թշուառ այրին մի քիչ տատանուեց: Այս պարզ ու բարեկամական առաջարկութիւնը նորա համար մեծ մխիթարութիւն էր, և որովհետև ուրիշ ելք չուներ՝ ընդունեց ջերմ շնորհակալութեամբ:

Որոշեցին անմիջապէս ուղևորուիլ: Գրացիան ձեռաց հագնուեց, լաց եղաւ տիկին Տօջերսի գրկում, և վերջապէս մ. Չուզլվիտի ձեռքից բռնած, ծեր Չօֆֆիի ու Մարկոս Տէպլիի հետ՝ դուրս եկաւ տնից:

Բայց հագիւ առաջին երեքը կառք էին նրստել, «Վիշապի» ապագայ տէրը, որ պատրաստուում էր նոցա հետեւել, կանգ առաւ կառքի պատուանդանի մօտ: Նա շեղակի նայեց ուր որ տարածութեան մէջ, աչքերը շփեց և խիստ տրտմեց:

— Ի՞նչ կայ, Մարկոս: Ի՞նչ պատահեց, անհամբերութեամբ հարցրեց մ. Չուզլվիտը:

— Չարմանալի դէպք, տէր: Ես Մարկոս Տէպլին չլինեմ, եթէ սոքա մեր դրացիները չլինեն:

— Ո՞ր դրացիները: Ո՞ւր են:

— Ի՞նչպէս ուր են: Այստեղ Լօնդօնում: Ահա՛ քնջնում կանգնած են:

Մարկոս Տէպլին ձեռքով ցոյց տուեց իրան մօտեցող մարդուն ու կնոջ երկու որդևով, և վազեց ու սկսաւ մէկ մէկ գրկել նոցա:

— Ո՞ւր են դրացիներ: Ի՞նչ հարեաններ են, — գոչեց ծեր պապը, և կառքից դուրս թռաւ ու շտապեց Մարկոսի ետեւից:

— Ընտիր դրացիներ են — ամերիկական: Եղեմի

ճահճի դրացիներ և տենդի ընկերներս: Սոքա չէին խնամում մեզ, երբ տենդով պարկած էինք: Եթէ սոքա չլինէին՝ վաղուց երկուսս էլ կորած էինք. — ա՛յ ինչպիսի դրացիներ են:

Մ. Տէպլին ուրախութիւնից քիչ էր մնում պատուէր: Թուշկոտում էր խելացնորի՝ պէս, վազվզում էր մէկ գաղթականի մօտ, մէկ նորա կնոջ, երեսաներին էր վերցնում, օդի մէջ խաղացնում, բռնում էր ու համբուրում:

Մ. Չուզլվիտն իմանալով թէ ինչ մարդիկ են իւր առջև կանգնած և ինքն էլ վարակուելով Մարկոսի ուրախութիւնից, ընկաւ խեղճերի մէջ և զգացուած նոցա ձեռքերն էր սեղմում:

— Եկէք ինձ մօտ, եղբայրներ, ամենքդ, ամենքդ ինձ մօտ, գոչեց ծերունին: Կառք նստեցէք: Մարկ Տէպլի, թուիլ կառապանի մօտ: Դէպի տուն, եղբայրներ, դէպի տուն:

— Տուն, գոչեց Տէպլին և ուրախութիւնից շշկուած բռնեց ծեր ջէնտլմէնի ձեռքը. — բոլորովին համաձայն եմ ձեզ հետ: Կեցցէ՛ «Ուրախ Տէպլիի իջևանը»: Կեցցէ՛:

Գոռում գոչումով օգնեց մ. Չուզլվիտին կառքը մտնել և այնուհետև, առանց ամենեւին ուշք դարձնելու կառապանի բողոքներին, նոր հրաւիրուած ուղևորներով կառքը լցրեց, անասելի նեղուածքով, իսկ ինքը թռաւ կառապանի կողքին, գլխարկը թեք ծածկեց և մի լաւ շրխկացնելով կառավարի ուսին՝ գոչեց. — քշէր:

Անցան տարիներ: Աշուն էր: Մերկ դաշտերում ցուրտ քամին փչում էր, մօտակայ ձմրան գուշակ. բայց մայր մտնող արևի ոսկեգոյն ճառագայթները տակաւին խաղում էին թառամած մացառների ու դեղնած խոտի մնացորդների վերայ հրաշալի ելևէջներով:

Մեր առջև մի փոքր գիւղ է երևում, իսկ նորա վերջում մի թումբի վերայ ծառերի միջից գիւղական յետ ընկած տան ապակիներն են պըսպըղում: Մտնենք այդ խաղաղ տունը: Ի՞նչ հրաշալի ձայներ: Ո՞վ է այն մարդը, որ նստած է երգեոնի առաջ: Մեր հին բարեկամ Թովմաս Պինչը չէ:

Նորա գլխի մազերը վաղաժամ սպիտակել էր, բայց աչքերում առաջուկայ նման փայլում էր երիտասարդութեան կրակը: Սիրտը նոյնպէս ջերմ սիրով և հաւատով լի դէպի մարդիկ: Նա մեզ չէ տեսնում. ամբողջ հոգևով խորասուզուած է երաժըշտութեան աշխարհում, որ տանում էր հեռու, հեռաւոր քաղցր երազների մէջ: Այդ ձայները՝ նորա սրտի երաժշտութիւնն է, նորա կեանքի ամբողջ պատմութիւնը:

Բայց ինչո՞ւ յանկարծ այդ ձայներն ընդհատուեցան: Մի՞ գուցէ լիշեց այն գզգզուած ու հարբած գրագրին, որ Պէկանիֆ էր կոչւում և որ այնպէս էր ողորմութիւն հայցում իւր նախկին աշակերտից, կարծես հիմնովին բարերարուած լինէր նորանից: Եւ ամեն հանդիպողին յայտնում էր հին

մուրացկանը անսիրտ մարդոց զարմանալի անգըթութիւնը:

Ահա՛ ձայները վերստին հնչեցին: Նուազողի երևակայութեան առաջ անցնում էին մի շարք մանկական խաղասէր պատկերներ,— հնչում էր Մէրիի, Հռութի, Զօնի, Մարտինի անունները և նոցա թւում դարձեալ մէկ ուրիշի անունը, որ նոր էր աշխարհ եկել, դա Թոմիկի անունն էր...

Նոր ձայներ.— Թախծալի, վսեմ մեղեդին հոգեկան պանծալի տրամադրութեան ներքոյ կենդանացրեց ծերունու հեզ կերպարանքը, Թովմասի աչքում, որ կարծես հասկանում էր նորա բոլոր ցանկութիւնները... Ծերունին դողդոջուն ձեռքով օրհնում էր նորան մահուան անկողնում:

Թախծալի ձայները լռեցին... նորա հոգուն նորից տիրեց խաղաղութիւն և ցնծութիւն. դեղարուեստի ոգևորուած երևակայութեան առջև պատկերացաւ մի կնոջ պատկեր... դա ընտանիքի պահպան հրեշտակն էր՝ սիրունիկ Հռութը...

Սակայն դուռը բացուեց, մի գանգրահեր գլուխ երևաց ու ասաց.

— Գեռի Թովմաս, ճաշը պատրաստ է:





ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

ԵՒ ՀՐԵՏԱՐԵԿՉԻ ՄՕՑ

ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԻԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Օ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ընդարձակ աշխատութեան, 6—800 մեծադիր երես.

ԳԻՐԳԸ ԵՐ ՊԱՐՈՒՆԱԿԵ

- Ա. Կենսագրութիւն Սիմէօն Կաթողիկոսի:  
Բ. Հնգամեայ (1764—8) օրագրութիւն—քննագիրը.  
(սա մի շտեմարան է ժԸ դարու հայոց, վրաց,  
աղուանից աշխարհի, պարսից եւ տանկաց  
պատմութեան):  
Գ. Ժանօթութիւններ:

ԸՋԽ. ԳԻՒՑ ԲԵՀ. ԱՂԵՆԵԱՆՑԻ

Տպագրութիւնը կը լինի շատ շքեղ

Եթէ միջոցները ճշտեմն անեմ մի քանի անարկերով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 5 ՌՈՒԲԼԻ:

Տպագրութիւնը կը սկսուի, երբ բաժանորդները թիւը

100-ի կը հասնի:

ՀՀ Ազգային գրադարան



NL0685825

